

4040

83  
q-46


1362A











Richardson des.

Carl Rössen inc.

# Unzufriedener Hauptmann:

Bsp. p. 157.

Եղանակ  
Ի ՄԱՀՆ ԱԲԵԼԻ



Cast. Bonna inc.

8pp. 6. 242.

Ի ՎԵՐԱՏԻԿ

1835

25

25

88300

28 JUN 2005

Գ-Կ-8

ԱՐԴ ԿԵՍՆԵՐԻ

Մ.

Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ծ

Ի Մ Ա Հ Ն Ա Բ Ե Լ Ի

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ա Ա Լ

Տ Ե Ա Ա Ն Հ . Մ Ա Ն Ո Ւ Ե Լ Ի Վ .

Զ Ա Խ Զ Ա Խ Ե Ա Ն

Ի Մ Ի Ւ Թ Ա Ր Ե Ա Ն Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Կ

Գ . Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

0081

Ի - Վ Ե Ե Ե Տ Ի Կ

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Ս . Դ Ա Զ Ա Ր Ո Ւ Ի

4 3 6 2

Printed in Turkey

4040

1200509 MUL 2013

Verkäufer ist bestimmt

1300

39

2000

Printed in Turkey

# Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ի Ւ

Պ դորովաշարժ սլատկելս զոր  
աստուածայինքն նկարեն գրիչք ,  
յետ գերարտօսրալից տեսարանի  
անկման նախաստեղծից , որովար-  
տաքսեցին ընդ իւրեանս յերանա-  
ւէտ դրախտէն՝ և զզաւակ իւր-  
եանց յառաջքան զմուտ նոցա յաշ-  
խարհ , երկրորդ է գասիւ արդարոյն  
Արելի մահ նախավախճան՝ եղբայ-  
րասպան կատաղութեամբ :

Արկածիցն առաջնոց հանդիսա-  
ցաւ երգիչ գիւցազնական՝ հոչա-  
կաւորն ՚ի քերթողս Միլդոն Անդ-  
դիացի , որ նուազեացն յերգ վսե-  
մական զբաղմաղէտ թատրոն ՚ի Դը-  
րախտ իւր Կորուսեալ , ոչ անձա-  
նօթ մերոց ըստ թարդմանութեանն  
նորոգ տալագրելոյ , որով և սղամբ

արժանասղէս զոր՝ ի նմայն կորու-  
սաք դանմեղութիւն ընդ անախտա-  
կիր անմահութեան։ Իսկ որդի նո-  
ցա արդարն Աբէլ եղիտ իւր զԱռ-  
դումոն կեսնէր, հազներգու գո-  
րովասիրտ՝ ողբերգել զանպարտա-  
կանն դմահ՝ ի լուր մահկանա-  
ցուաց, որ առաջին ելոյծ զվրէժ  
պատուիրանազանցութեան մերոց  
նախ ածնողաց։

Տեսարան արդարեւ սղալի, մահ  
եղերական և սրտառուչ, քան զոր  
դիտաց հանճարել երբէք՝ ի հինսն՝  
առասպել յունական կամ հռով-  
մէական։ Վասն դի դէսլք իրացն  
եղելոց հաւաստեալք յաստուածե-  
ղէն տառից անշուշտ ճշմարտութե-  
նէ, միանգամայն և առ համօրէն  
աղգ մարդկութեանս, և ոչ առ մի  
միայն ուրոյն՝ զհայեցուածսն ունե-  
լով, հասարակաբար շարժէ զամեւ-  
նայն սիրտ մարդկեղէն՝ որ չիցէ ան-  
բաժ՝ ի մարդկավայելուչն կարեկ-  
ցութենէ։

Աստուածահաճոյքաղաքավարու-  
թիւն արդարոյն Աբելի, և անբիծ

նորայն անմեղութիւն խանդադա-  
 տեցին զսիրտ գիւրագորով հագ-  
 ներգուին : Առլեղին նախանձ և ո-  
 խակալ սրտմտութիւն եղբայրաս-  
 պանն կայենի՝ վառեցին զմիտս և  
 զամենայն կիրս նորա առ ՚ի նկա-  
 րելոյ զտեսարանս գորովական՝ ա-  
 մենայն քերթողական կենդանա-  
 ցայտ երանգօք , առ ՚ի շարժել նոյ-  
 նաբար և զընթերցանելիսն ՚ի խան-  
 դադուսէր կարեկցութիւն , և ՚ի  
 խրատ ուղղութեան անգոսնելի կը-  
 րից՝ որ մուծին յաշխարհ զմահ : Ի  
 լսել զձայն կեսների , թուփմ լսել  
 զողբ և զկական նախածնողացն ի-  
 մոց յանցուցելոց , որոց առաջին ա-  
 կանատես գոլով մահուն սպառնա-  
 ցելոյ նոցա ՚ի լալիւրեանց զանմեղն  
 որդեակ , լան առհասարակ զամե-  
 նայն զծնունդս իւրեանց զառյա-  
 պայս , և զաղէտս նոցա զանբաւ  
 մինչ ՚ի կատարած աշխարհի :

Զի՞նչ քաղցր ապաքէն քան զհան-  
 դիսակիցն լինել յայս կեսներեան  
 կենդանադիր տեսարան , յակմբի  
 անդ առաջին անմեղ դերդաստա-

նին . զնոցայն տեսանել և լսել զառ  
միմեանս զանախտ սէր խանդա-  
կաթ , զվառեալ տենչ առաքինու-  
թեան , զառ Աստուած զսէր , ըդ-  
շնորհակալու միտս առ երախտիս  
նորա , զանվկանդ ապաւինութիւն  
՚ի տեսչութիւն , զծնողագութ խր-  
նամս ՚ի գաստիարակութիւն , զցըն-  
ծութիւնն ՚ի տես առաքինութեան  
զաւակացն , դարձեալ և զտիրու-  
թիւնն ՚ի խեռութեան անդրանկին  
ստամբակելոյ , և զողոք կշտամ-  
բանս վատթարութեանց նորա :

Զի՞նչ շայեկան՝ քան տեսանել ,  
և առ նմին սարսափել ընդ ատե-  
լութեանն գարշութիւն , ընդ նա-  
խանձուն կատաղութիւն զաշացու ,  
ընդ քէն վրիժուցն , որով խիզա-  
խեաց մահ կանխել ասպատակել  
յաշխարհ , և վառել զբաղուկ եղ-  
բօրն ՚ի հեղումն արեան արդարոյն ,  
որով շաղախեալ անիծապարտ եր-  
կրի , մինչև ցայսօրյերկինս բողոքէ :

Զի՞նչ դարձեալ գորովաղէտ , քան  
լսել աստանօր զհեծութիւն յոք-  
նատխուր գերդաստանին ՚ի վերայ

Նախամեռիկ անկելոյն , զանհան-  
գիստ կշտամբանս ինքնադատ և  
ինքնահալած ամբարշտելոյն , զան-  
յիշաչար ներողամտութիւն գծնո-  
ղաց նոցա , գքերց և զուգակցաց ,  
և զամենեցուն զպազատախառն  
փոյթ իննամոց յապաշխարութիւն  
մեղուցելոյն , զորս չիք ընթեռնուկ  
՚ի կեսներեան քերթութեանս ա-  
ռանց ՚ի գորով փողձկելոյ և ՚ի նմա-  
նակցութիւն գովելի :

Յոյր օտակս և ամենայն ազգաց  
Եւրոպայ պատուասիրեալ գքեր-  
թուած մատենագրիս՝ փոխեցին  
յիւրեանց բարբառ ՚ի տիպ զանա-  
զան , և յայլ և այլ թարգմանու-  
թիւն . որում և մեր նախանձաւոր  
գտեալ ոչ անմասն ՚ի սմանէ հա-  
նել զշայտատանեայքս , ընծայա-  
բեր նմին մատչիմք յախորժ հաճու-  
թիւն . որչափ զի անցք աստուա-  
ծապատում վիպագրութեանն ըն-  
տել է լսելեաց , և մտաց դիւրա-  
տար : Երկու ինչ միայն ՚ի կարեռ-  
բացն յիշեցուցանել յանձն առ-  
նումք :

Առաջին՝ զի գերմանական բնացիր քերթուածոյս՝ գոլով արձակ շարագրածիւ, թէպէտ ներդաշնակաւոր, բայց ոչ 'ի հիւսս ոտիւք չափեալ, մեք ևս 'ի թարգմանելն 'ի բնագրէ անտի, տողեցաք արձակ, ոչ կամելով չափմամբ ոտիցն օտարանալ յոյժ յիմաստիցն :

Երկրորդ՝ զի քերթող մեր գերմանացի, իւրում քերթութեան նիւթ միայն առնու զիսկն եղելոց դոր աստուածային աւանդեն գիրք, զառտուածահաճոյ արդարութիւնն ասեմ՝ զԱբելի, զատելութիւն և զոխ նախանձոտ բարուցն կայենի, զառաջնոյն պատարագաց զընդունելութիւն, և զերկրորդին անարդումն, զքինախանդիր եղբայրասպանութիւն սորա, զիսայթ խղճին, և զպատուհասն երերածուի կենաց . զայլն ամենայն ստեղծանէ 'ի հանճարոյ մտացն ըստ բանաստեղծիցն օրինի, հաւանականօք սեթեւեթեալ կեղծեօք :

Եւ զինպատակ քերթողիս 'ի նկարագրութեան պատմական անցիցս՝

առաջի կայր ընթերցանելեացն օ-  
դուտ և խրատ ազդական , առ 'ի  
զնոսա շարժելոյ ոչ 'ի սէր միայն ա-  
ռաքինութեանն և 'ի խորշումն 'ի  
վատթարութեանց , այլ և խրատել  
դյանցաւորն 'ի յոյս թողութեան  
չարեացն գործելոց , և թէ զիարդ ա-  
մուսնաւորք կենակիցք՝ օգնել կա-  
րող են միմեանց առ 'ի դարձ զգաս-  
տութեան , այլազգ կեղծէ զսպա-  
նութիւնն որ 'ի կայենէ : Վասն զի  
ձեացուցանէ զկային ոչ այնչափ  
չար՝ որչափ տեսանի յաստուածե-  
ղէն մատենին , առ 'ի գորովել  
զգութ 'ի նպաստ նորա , և առ 'ի  
ցուցանել զելս հնարից , զոր մարթ  
իցէ յանցաւորին գտանել յաս-  
տուածային ողորմութենէն :

Դմին իրի երեւեցուցանէ զսպա-  
նութիւնն զայն՝ գործ յանկարծա-  
հաս կատաղութեան , քան մտա-  
խոհ ընտրութեան . ուր աստուա-  
ծապատում տառք զհակառակն վր-  
կայեն՝ կամաւոր խարդաւանու-  
թեամբ ձղեալ զանմեզն 'ի դաշտ ,  
և անդ 'ի կենաց զնա զբաւեալ :

Սակայն գիտէ ամենայն մտաւոր ,  
որպէս ինքնին խոստովանլինիկես .  
նէր , թէ զպատմական իրաց ճշմար-  
տութիւն , ևս առաւել դաւանդե-  
լոցն յաստուածեղէն գիրսն , չիք  
խնդրել 'ի բանաստեղծից : Յա-  
ղաղս որոյ և զայս քերթութիւն ,  
որոյ նիւթ սրբազան , ընծայեմք առ  
'ի զուարճութիւն մերասեռիցն ,  
համայն և 'ի հրահանդ մտաց և  
սրտի , լոկ իբրև ստեղծաբանու-  
թիւն ինչ սրբազան , որպէս է տե-  
սանել և 'ի թատրոնի բազումս ա-  
ռեալ պատմութիւնս յաստուածայ-  
ին մատենից , բայց զարդարեալս  
մտացածին հանգամանօք ըստ բե-  
րելոյ իրացն՝ զորս յաւելու ստեղ-  
ծիչ հանճար քերթողացն : մնայ  
մեզ ասել սակաւուր և յաղագս  
քերթողիս :

Ծնաւ Առղոմոն կեսնէր 'ի Յու-  
րիս , կամ 'ի Յուրիկօ Զվիցէրեաց  
յառաջնումն ապրիլի յամին 1750:  
Բաղումք ծաղկեցան յաղատոհմի  
սորա գիտնաւորք և մատենադիրք

զարդարել զհայրենիս իւրեանց :  
 Արուեստիւ տաղագրող էր և փորա-  
 գրող պղնձի պատկերաց : Բայց 'ի  
 բնէ սիրտ ունելով դիւրաղգած և  
 դորովական , միտս հետաքնին 'ի  
 դիտողութիւն գործոց բնութեան ,  
 և աչս խուզարկուս 'ի ղնին գեղեց-  
 կութեանց նորա , և բնակութիւն 'ի  
 զուարճադիր լեռնամայրս Զվիցէ-  
 րեաց , բոլորանուէր անձնատուր  
 եղե 'ի բանաստեղծութիւն գերմա-  
 նական , ինքնուսումն պարագմամբ  
 մշակել զայն , յորում և նշանաւոր  
 գտաւ , և պայծառացոյց ոչ զհայ-  
 րենիս միայն՝ այլ և զԳերմանիս  
 ողջոյն , և եղե նախանձելի բոլոր  
 իսկ Եւրոպայ :

Մի է սա յականաւոր բանաս-  
 տեղծիցն Գերմանիոյ . բայց քեր-  
 թուածք իւր չեն տողեալք ոտանա-  
 ւոր չափմամբ , այլ արձակ . սա  
 կայն թուաւոր իմն ներդաշնակու-  
 թեամբ այնպէս յերիւրեալ , մինչե-  
 ոչ ումեք 'ի գերմանացւոց հասա-  
 նել այնմ : Վարժապետ իւր 'ի նը-  
 կարչութեան և 'ի բանաստեղծու-

թեան՝ եղեւ բնութիւնն . ՚ի տղայութեանն զուարճանայր գործել՝ ՚ի մոմոյ արձանս մարդոյ , կենդանեաց և այլոց իրաց , և ՚ի ծախս այսպիսէաց վարէր զամենայն դրամս զորոյաւելոյր խնայութեամբ : Յաճել տիոցն՝ փոխեցաւ ՚ի նմա տղայականն ախորժակ յայլ իմն օդառակարագոյն : Տեսիլ ահաւոր լերանց , և շքեղ անտառաց , զուարճագեղ հովտաց և քարավէժ հոսանացն Զվիցէրեաց այնպէս շարժեցին զերեակայութիւն նորա և զսիրա , մինչեւ սկսաւ ծրագրել զայնս ՚ի թղթի , և նկարել՝ ՚ի տախտակի , զոր և անխոնջ դիտողութեամբ և աշխատասիրութեամբ փորագրեաց ՚ի պղինձ առ ՚ի տալազրութիւն . որով և զամենայն քերթութիւնս իւր տըպագրեաց ինքնին՝ գեղեցկագիր ինքնադրում պղնձի պատկերօք և զարդուք :

՚ի հրամանէ հօր իւրոյ նստաւ և ՚ի գրավաճառութիւն , այլ անուամբ լոկով . զի զամենայն զժամանակի իւր ծախէր յընթերցումն նա

խապատիւ մատենագրաց զոր ու  
նէր 'ի վաճառ , որով և ձաշակ իւր  
ընտրողական և ախորժակ՝ պար-  
զեալ և յստակեալ կրթեցան և ևս:  
Ետ զանձն 'ի հովուական կամ  
'ի տուարածական բանաստեղծու-  
թիւն , զոր և հասոյց 'ի ծագ կա-  
տարելութեան , մինչեւ ըստ վկայե-  
լոյ դաղղիացի և իտալացի քննո-  
ղաց , « Այ են այնք քաղցրու-  
թեամբ , և զուարթութեամբ , զող-  
տրական իմաստիւք և ախորժա-  
կօք , պէսպիսացեալք քան զթէո-  
կրիտեայն և զլաննազարին : Գուն  
դործեաց կեսնէր նկարել 'ի նոսին  
զհովուական վարուց զանմեղու-  
թիւնն և զզուարճութիւն , զսէր նո-  
ցին անախտ , զակնածութիւն որ-  
դիական և զերախտագիտութիւն » :

Յայսմ նկարագրութեան բնու-  
թեան զանցոյց նա զբազմօք , մինչեւ  
ումեմն « Մի ասել զսա 'ի սակա-  
ւուց արդի մատենագրաց , որք յիւ-  
րեանց դասակարգութեան՝ զուզա-  
կիո գտան նախնեաց » : Եւ դար-  
ձեալ « 'ի տուարածականսն նորա

փայլէ ոճ բնաւոր . ամենայն ուրեք  
լեզու բնութեանն է որ բարբառի .  
հովիւք իւր չունին երեքք ուշիմու-  
թիւն մտաց առաւելքան զհովուա-  
ցըն պատշաճական . բայց վասն  
ազնուական իմաստից առաքինու-  
թեան և բարերարութեան՝ որք հո-  
վուաց չեն ինչ արդելեալ , և վասն  
սիրալիր և սրտաշարժ յեղանակին  
որով բացատրէ զայնոսիկ , աշ-  
խարհագով առնէ զսիրտ իւր » :

Ինքնին տպագրեաց զտուարածա-  
կանսն իւր յամին 1733-77 : Բայց  
քան զամենայն Քերթուածս գեր՚ի  
վերոյ անցեալ հոչակեցաւ Մահն  
Արելի . քերթուած սիրելի . որոյ  
գողտրական է յոյժ հիւսուած , յո-  
րում և լծորդեաց՚ի մի զմեծվայել-  
չութիւն կրօնից ընդ հովուականն  
անպաճոյն պարզութեան :

Եթող առ վայր մի զիւր հայրե-  
նիս ճանապարհորդել՚ի Գերմա-  
նիա . և եղեւ ժամանակ ինչ՚ի լայփ-  
ցիկ ,՚ի Համպուրկ և՚ի Պէոլին ,  
ամենայն ուրեք վերապատուեալ՚ի  
դիտնոց : Կատարինէ երկրորդ կայ-

սերուհին Ոռւսաց յղեաց առ նա  
Միտալ ոսկի : Անուն նորա և քեր-  
թուածք՝ նախ առաջին ծանօթա-  
ցան՝ի Գաղղիաթարգմանութեամբ  
Հիւպէրայ . մինչև շարժեալ՝ի համ-  
բաւոյ և՝ի գրոց դքսուհին Շուտ-  
զէօլայ , հրաւիրեաց զնա առ իւր՝ի  
Փարէզ , խոստացեալ նմա բարձ և  
պատիւ . բայց կեսների շնորհս կա-  
լեալ , ծանոյց նմին զսէր իւր առ  
հայրենիս , և զերախտազիտու-  
թիւն միանգամայն առ դքսուհին ,  
եթէ զոր առ ինքն երախտիս՝ցուց-  
ցէ առ թարգմանիչ իւր , որով  
ինքն ծանօթացաւ նմին և Գաղղիոյ :

Այս բանաստեղծ շնորհաշուք ,  
նկարիչ բնութեան , և ախորժելի  
փորագրիչ՝ էր և երաժիշտ սրտա-  
շարժ , ընտիր քաղաքացի , բարե-  
կամ զուարթ , երդասէր ամուսին ,  
ընտիր հայր որդեսէր , անստգիւտ  
ատենակալ և անդորրասէր Փիլի-  
սոփոս . որ գոհ ընդ անձին չափա-  
ւոր վիճակ , ոչ փափաքեաց եր-  
բէք առաւելագունի բարեբաստու-  
թեան : Քանիքար նորա՝ փափաքելի

արդեօք առնէր զնա երկարագոյն  
ևս աւուրց 'ի շուք գերմանացի գե-  
ղեցիկ դպրութեանցն , բայց մահ  
կաթուածոյ յանկարծահամ՝ կար-  
ճեաց զնա 'ի կենաց 'ի հայրենիս  
իւր 'ի Յուրիխ 'ի 2 մարտի , 1787  
ամին , 'ի հասակի 62 ամաց . թո-  
ղեալ 'ի սուգ անմխիթար զիին իւր ,  
զերիս որդեակս , և զքոյր : Քաղա-  
քակիցք իւր և մտերիմք առ ան-  
ջինջ սլահելոյ զյիշատակ Առնս մե-  
ծի և բնասիրի՝ կանգնեցին նմա շի-  
րիմ , ուր խառնին 'ի մի երկու վր-  
տակք , վայր գեղեցիկ՝ զուտրճալի  
և բարեզրօս , բաղմաժողով ձեմե-  
լիք քաղաքացւոցն Յուրիխայ :

# ՄԱՀ ԱԲԵԼԻ



Ե Ր Գ Ա Ռ Ա Զ Ի Ն

**Յ**անկալի էր արդեօք նուագել ինձ  
՚ի հաղներգութիւն վսեմական՝ զմերոց  
Կտիաստեղծից զառանին արարուածս՝  
յետ ցաւագին անկման նոցա, և զնա՝ որ  
առաջին աւանդեաց ՚ի հող զիւր փոշի՝ զե-  
նեալ յերեսաց կատաղութեան եղբօր  
մովուրոյ հարազատի : Հանգիր դու ՚ի ժա-  
մուս<sup>1</sup> գեղջկականդ սրինդ հեշտալուր,  
որով երգէի երբեմն զախորժ սկարզմառու-  
թիւն՝ և զբոյս բարուց առն շնականի :  
Եկ առ իս մուսայդ գողարական<sup>2</sup>, եկ ազ-  
նուականդ ոգի գերաշխարհիկ, որ զբա-  
նաստեղծին ընուս զանձն՝ մինչդեռ ՚ի լը-  
ռիկ միայնութեան նստի մտախտհ՝ ՚ի զի-  
շերական պահուն, յորժամ լուսին աղօ-  
տափայլ լուսատու լինի զնովաւ, կամ

գեգերի նա 'ի ծմակս անտառաց , կամ առ  
 տվին մենաւոր աղբեր՝ վարսադեղ տնկովք  
 հովանաւոր : Այն ինչ տիրէ հոգւոյն Յ  
 սրբազնն յափշտակութիւն , 'ի նոյն և  
 ջեռեալ բորբոքեալ երեակայութեանն  
 խոյանայ 'ի բարձունս , և համարձակա-  
 թուիչ եղեալ մտանէ՝ թափ անցանէ ընդ  
 սահման եղականացս ամենայնի զգտեաց  
 և խմանալեաց՝ մինչ 'ի բացական թագա-  
 ւորութիւն կարելեացն , ածեալ յերեան  
 զհրաշակերտն՝ զմտաց յափշտակիչ , և ըզ  
 գեղեցիկն գաղանածածուկ : Ամբարեալ  
 'ի նոցունց գանձս բազմահարուստս , գառ-  
 նայ ասլա ընդ կրունկն հիւսել յօրինել  
 'ի մի՝ զնիւթոցն զանազանութիւն յոքնա-  
 դիմակ . ուր բանն առաջնորդական ճար-  
 տարապետէ հանդարտ , ընտրէ՝ մերժէ ,  
 առեալ միայն զոր գեղապատշաճն է : Ո՞վ,  
 զիարդ սլանան յայնժամ երագաթուիչ  
 'ի բանաստեղծէն 'ի ջերմութեան անդ  
 վաստակոց՝ ժամբն պատուականիք արժա-  
 նավայելք : Վաստանիք արժանիք քրտանց  
 և յարգանաց ազնուախոհ մտաց : Արժա-  
 նիք հսկելոյ առ գիշերային երդովք ճըսկ-  
 ուանն՝ մինչ յելս աստեղն առաւոտւ ,  
 առ 'ի զբամբ ածելոյ զաղնուագոյնն 'ի

վարձո՛ զսէր ասեմ՝ և զվարե՛ որոց միան-  
 գտութ կիրթ ճաշակելեք ընտրողականին դի-  
 տեն մեծագրել զգեղեցիկն , և առ ՚ի զար-  
 թուցանելոյ զառաքինութեանն ախոր-  
 ժակ ՚ի սիրտ դիւրազգած : Արժան և ի-  
 րաւ զինի եղելոցն մարդկան՝ զբանաս-  
 տեղծին վերասպատուել զգամբարան՝ զո-  
 րով շաղատատի բազեղն բազմամեայ , զոր  
 մուսայքն սրբեցին անձանց՝ ուսուցանել  
 նովաւ աշխարհի զանմեղութիւն և զառա-  
 քինութիւն : Համբաւ նորա կենդանի է  
 գեռ՝ միշտ ծաղկափիթիթ . ուր զընդդեմն՝  
 ախոյեանք աշխարհակալին դնին բորբո-  
 սեալք ՚ի փոշւոջ , և հոյակապ մահար-  
 ձան ապագովիշխանին՝ թերևս կայ այժմ  
 յամայութեան ուրեք ՚ի փշահեղք մա-  
 ցառս վայրավատին մամռապատ , յորում  
 մոլորաշաւիղ միայն ուղևորն՝ ուր ուրեմն  
 դադար առնու : Ասպաքէն բնութիւնն՝  
 սակաւուց միայն թես ետ ճախրել յայս  
 կատար բարձրութեան , բայց և այնպէս  
 Ճիգն է գովելի դհետ թեսակախել : Նուի-  
 րեցից քեզ՝ մուսայդ գովարական , զիմ  
 մենաշրջիկ զբօսանաց Ճեմս , և զիմոյ սպա-  
 րասլոյ զմիայնիկ ժամս :

Դարձուցանելին ժամբ կ խաղաղականք  
 զարշալոյսն վարդագոյն , և իջուցանելին  
 զշաղս ցօղոյն յերկիր նսեմաստուեր , և  
 ականն արեւու արձակեալ զառաջին ճա-  
 ռագայթսն 'ի թիկանց արջնաթոյր մայ-  
 րիցն լերանց՝ ներկաներ ծիրանափայլ  
 զամուս լուղականս յալիս աղօտադին օ-  
 դոյն : Ելաներ յայնժամ Աբել 'ի խրճթէն  
 ընդ թիրզայի մ սիրելոյ 'ի մօտալուտ հո-  
 վանոց անդր բազմաբուրեան , որ հիւ-  
 սեալն էր 'ի յասմիկ և 'ի վարդ զմիմեամբք  
 պատասեալ : Սէրն գորովական և անբիծ  
 առաքինութիւն ծաւալէին անուշակ իմն  
 ժպիտ 'ի խաժագոյն ականողիս թիրզայի ,  
 և շնորհս յանկուցիչս 'ի կարմրութիւն  
 վարդագեղ այտիցն , և վարսք գեղձան գի-  
 տակացն իջանելին զիղոսկրեայ պարանո-  
 ցաւն , ուր ծածանեալք զթիկամբք՝ զար-  
 դարելին զհասակ նորա նազելի : Երթայր  
 նա այսգունակ ընդ աջմէ Աբելի : Քաջա-  
 թուիս խոսովիք դանդրեալք՝ հովանի  
 ունելին զբարձրադիր ճակատու նորահաս  
 երիտասարդիս , և սփիւռ անկանելին զու-  
 սովք նորա : Ի քաղցր ժպիտ աչացն ե-  
 րելիր ախորժաբար և խորհրդածու իմն  
 ծանրութիւն . ընթանայր նա 'ի գեղ

շնորհաշուք՝ զօր է տեսանել 'ի հրեշ-  
 տակ ոք հոգեվլեն, յորժամ պարուրեալ 'ի  
 մարմին անդայտ՝ առ ակներև գործելց  
 զինքն մահկանացուաց, իջանիցէ սպատ-  
 գամաւոր աւետեաց բարութեան 'ի զի-  
 մաց ամենակալին՝ երեւութանալ առն առ-  
 տուածապաշտի աղօթաւորի յառանձ-  
 նութեան : Ապաքէն քօղարկեալ է նա  
 մարմնով 'ի ձև մարդկային, բայց 'ի յա-  
 փըշտակիչ գեղց մարմնոյն հրեշտակա-  
 կանն արտափայլէ բնութիւն : Ակնարկէ  
 'ի նա Թիրզա գորովաժպիտ, այսպէս  
 բարբառ արձակեալ . — « Անձկալիդ իմ,  
 'ի ժամուս յորժամ զարթնուն հաւք  
 յերգս առաւօտուս, երգեա ինձ եթէ  
 գտի շնորհս, զնոր օրհներգութիւնն զոր  
 երէկ գեղգեղեցեր յարօտս . զինչ ախոր-  
 ժական քան զփառաբանութիւն տեառն  
 երգովք օրհնութեան : Յերգել սիրելոյդ  
 որպէս յեռանդն հարկանի սիրտ իմ՝ լի  
 աստուածային զեղմամբ . զդամ յանձին  
 զասացելոցդ իմաստ, զդամ միայն՝ բայց  
 'ի բան բերել չեմ բառական » : — Առ  
 որ ետ պատասխանի Աբէլ խանդաղա-  
 տեալ զնովաւ . — « Ով իմ Թիրզա, որ  
 զինչ և խնդրեսցեն յինէն շրթունք քո ա-

նուշակը՝ տացի քեզ ամենայն . 'ի նշմարել խմում յաչս քո 'ի գեղեցիկ՝ անձուկ ինչ փափաքանաց , կատարեսցի անվրէս : 'Ստցուք արդ զփափկիկ մտմառվքս , և ես երգեցից զերդ օրհնութեանս » : — 'Ստին մօտ առ միմեանս 'ի քաղցրահոտհունոցին , զորոյ զմուտ՝ ոսկեդոյն ներկանէր արեգակն առաւօտեան . և սկսանի Աբելեղանակել զիւր օրհնութիւն :

« Տեղի տուր ովք քուն յաչաց համագոյիցս , փախերուք անուրջք խօլականք . ծագէ միւսանգամ բանն , և պայծառացուցանէ զհոգին՝ որպէս արեւ վաղորդայնի զդաշտորայս : Ողջոյն ընդ քեզ արեգակնեղ ցանկալի՝ երեւալ 'ի թիկանց մայրիցն եղենոց . դու սփուես զերփն երփն Երանդոց և զվայելըութեան 'ի վերայ համօրէն բնութեանս , և դեղեցկութիւն ամենայն ժողովի առ մեզ՝ քեւ առուգացեալ մանկութեամբ : Տեղի տուր ովք քուն յաչաց համագոյիցս , փախերուք անուրջք խօլականք 'ի ստուերս դիշերոյն : Եւ ուրիցեն ստուերք դիշերոյն : Տեղի ետուն այնք 'ի խորս անտառաց , և յանձտւս քարաժայուից՝ ուր մեզ սպասեն . կամ յանտառախիտ ջուլացեալ հովանոցս զուար-

թարար զավութեամբ 'ի տօլթաժամու մի-  
 ջօրէին : Անդ՝ ուր առաւօտն զարթոյց  
 կանխաւ զարծուին բարձրաթոիչ, որ-  
 պիսի վերածխութիւնք 'ի փողփողեալ  
 գագաթանց քարանձաւացն, 'ի նշուլս-  
 գեղ ճակատուց լերանց՝ ելանեն ծառա-  
 նան 'ի սլարդութիւն անդ առաւօտեան օ-  
 դոցն, որպէս ստեղն ծխոյն ողջակիզաց 'ի  
 միջոյ սեղանոյն : Բնութիւնն հոչակեալ  
 տօնէ զարևագալն, և մատուցանէ տեառն  
 արարածոց պատարագ գոհութեան : Ա-  
 մենայն արարածոց պարտ է և պատշաճ  
 զնա օրհնել, զնա որ ամենայնի է հաս-  
 տիչ և պահապան : Ապաքէն յօրհնութիւն  
 սորա վերաբուրեն ծաղիկք նորափթիթք՝  
 զերախայրիս իւրեանց անուշից • սմա գեղ  
 գեղեն հաւուց բազմազդի բոյլք 'ի բար-  
 ձանց օգոյն, կամ 'ի դիտակաց ծառոց  
 ընդ առաջ ճախրեալք ելից արևուն : Ի  
 փառաբանութիւն սորա ելանէ պերճ ա-  
 ռիւծն՝ արտաքս 'ի մորւոյն • խնդութիւն  
 նորա հնչեցուցանէ զանապատս 'ի մոնչիւն  
 ահեղագոչ : Օրհնեա անձն իմ զտէր,  
 օրհնեա զարարիչն և զպահպանիչ բա-  
 րեխնամ : Օրհներգութիւն մարդկան  
 բարձրասցի առ քեղ տէր, կանխեացէ առ

քեզ քան զամենայն ձեռագործացդ օրհ-  
 նաբանութիւն , մինչդեռ զքնով անկեալ  
 նոցա գնին 'ի դադարս յորժամ' և ոչ մի  
 լսելի էն տակաւին երգք 'ի դիտակաց ծա-  
 ռոց , և յորջոց անտառաց : Հնչեսցեն մե-  
 նաւոր իմ երգք , հնչեսցեն աշխարհալուր  
 'ի լսութեան անդ աշալըջոց , զի զարթու-  
 ցեր ամենայն ուրեք զամենայն արարածս  
 յօրհնաբանութիւն : Բա՛րէ . որպէս զի  
 մեծ է արարչութիւնդ , որով չարժա-  
 նեացս 'ի յայտ ածես զիմաստութիւն  
 քո և զբարութիւն : Զգայարանք իմ ա-  
 մենայն զմայլեալք յայս անհուն ծով գե-  
 ղեցկութեան , զմայլեցուցանեն զանձն իմ  
 այլ յայլմէ . զիարդ իցէ սմա զբոյդ պա-  
 ստաջել զօրհնութիւնս : Զինչ հարկեցոյց  
 զքեզ , ամենակալ Տէր , Ելանել 'ի քումմէ  
 երանաւէտ լսութենէ՝ որ դարանակալն  
 էր զյաւիտենական աթոռուվդ , առ 'ի կո-  
 չել զգոյս յանդոյից , և հանել 'ի գիշերոյ  
 զանբաւութիւն տիեզերացս : Ոչ ասկա-  
 քէն բարութիւն քո անսահման : Ո՛վ դու-  
 ցողագին առաւօտ , յորժամ յակնարկել  
 նորա ելանէ արեգակն՝ հալածական տա-  
 նել զդիշեր առաջի իւր , յորժամ բնու-  
 թիւնն փողփողէ կրկնառոյդ դեղով ման-

կութեան , և արտրածք ամենայն ան-  
կեալքն զքնով զուարթանան 'ի նորա-  
փառաբանութիւն , նկարես 'ի քեզ յայն-  
ժամ կենդանի ինչ պատկեր արարչու-  
թեան , պատկեր զայնը առաւօտուն՝ յոր-  
ժամ արարչապետն կայր սլացեալ 'ի վե-  
րայ նորաստեղծ երկրիս : Առութիւն ինչ  
անապատական թագաւորէր համատա-  
րած 'ի վերայ անբնակ երկրի . լսելի եղե  
ձայնն արարչական , և ահա 'ի նոյն բա-  
նակ ինչ խառնաձայն՝ բիւրազան 'ի ձեւ և  
'ի դեղ , խայտաճամուկ թեօք սաւառնէ 'ի  
հաստատութեան օդոց , խայտայ 'ի դաշտա-  
ծաղկածին , ճախրէ 'ի մայրիս և 'ի հո-  
վանաւոր գագաթունս . դայլայլիկք նոցա-  
հնչեն 'ի միջոյ անտառացն սքանչացելոց ,  
և օդն ձայնարձակ կրկնէ զարարչին փա-  
ռաբանութիւնս : 'Սոյն արուեստք սքան-  
չելեաց , յորժամ միւսանգամ սլանայր  
վերամբարձ 'ի վերայ երկրի՝ կոչել յա-  
նէից զսեռս կենդանեաց գնայուն 'ի նմա :  
Լսելի արար զձայն իւր և ահա նոյն հե-  
տայն փշրեցան հողակոշտք , և կերպացան  
'ի կերպարանս՝ որոց ոչ դոյ թիւ : Աստ  
շնչաւորեալ հողոյն՝ դափր հատանէ 'ի վե-  
րայ դալարեաց իբրև նժոյգ ահիպարա-

նոց, որոտալով ցնցէ զբաշս իւր խար-  
 տեաշ: Անդ կիսով չտփ հող տակաւին,  
 և կիսովի կենդանի՝ առիւծն սէգ, ան-  
 ժոյժ'ի թափել զգաւակն՝ փորձէ մանչել  
 զառաջին իւր մոնչիւն: Փոքր մի 'ի բացէ  
 խլստի բլուր ինչ, և ահա գնայ և շնչէ  
 փիղ վիթխարի: այսպէս բարբառք ան-  
 համարը ելնե միանդամայն, բարձրացան  
 առ արարիչն: Ի սոյն տիպ նմանութեան  
 զարթուցանես գու 'ի վաղորդայնէ մինչեւ  
 'ի վաղորդայն զարարածո քո 'ի նիրհմա-  
 նէ՛ որ պատկերնէ անգոյութեան: զարթ-  
 նուն նոքա, և աեսեալ զիւրեամբք զմե-  
 ծութիւն բարութեան քո, տէր, երգեն  
 զուդաշուրթն քեզ օրհնութիւնս 'ի ձայն  
 անբաւութեան: Եկեսցեն աւուրք, այժ-  
 մէն զհանդերձեալն նկատեմ, աւուրք  
 երջանիկք յորում ազդ մարդկան սիփիւռ  
 տարածեալ ընդ ամենայն երեսս երկրի,  
 կանդնեսցին քեզ յայնժամ սեղանիք սըր-  
 բութեան, կանդնեսցին 'ի վերայ ամենայն  
 բլրոց: և յորժամ արեդակն առաւօտուն  
 զարթուոցէ զաղինս, հնչեսցեն քեզ 'ի  
 բարձունս օրհնութիւնք և գոհութիւնք  
 յամենայն հովանեաց, յամենայն դաշտո-  
 ւից, յարևելից մինչեւ յարևմուտս »:

Այսպէս երգեաց Աքելնստեալ առ ըն-  
թեր սիրելւոյն , որոյ յափշտակեալ աս-  
տուածային խմն դոզցես հիացմամբ , կայր  
տակաւին յակճիռս՝ որսլէս թէ ականջա-  
լուր : Զգեալ ասլա զըռւշանագեղ բա-  
զուկսն զալարանոցաւ նորա , ակնարկէ ՚ի  
նա խանդակաթ՝ ասելով . — « Ով ցան-  
կալիդ իմ . զիարդ եռանդն ոգւոյս ՚ի վեր  
առ Աստուած ամբառնայ Երգոցդ օրհ-  
նութեամբ : Այս՝ սիրեցեալդ իմ , ոչ մար-  
մին իմ ևեթ քան զքոյն տկարագոյն դտա-  
նէ զօրավլիպն ՚ի դորովագութ խնամոցդ ,  
այլ և հոգիս բարձրաթռիչ լինի ընդ քո  
առաջնորդութեամբ : Յորժամ խոտորի  
սա ՚ի շաւիզս իւր , յորժամ մռայլ մթու-  
թեան զիւրեւ տեսանէ , և ապշութիւն  
սուրբ անկանի զսովաւ , դու յայնժամ  
ձեռն տաս սմին , դու զմութն փարատես ,  
և զանցունջ ապշութիւնն սորա փոխես  
յանազօտ և ՚ի բարձրագոյն խորհուրդս :  
Բարէ . քանիցս անդամ չնորհս մատուցի  
յաւիտենական բարութեան . . . ՚ի միայ-  
նութեանա՝ ժամ՝ ՚ի ժամ գոհաննամ զնմա-  
նէ ցնծալից արտասուօք , զի արար զքեղ  
վասն իմ , և զիս վասն քո յամենայնի հա-  
մամիտ , յամենայնի համակամ » :

Մինչդեռ այսպէսն բարբառեր նա ,  
սէրն գորովալից և մաքուր՝ հեղոյր շնորհս  
անձառ յիւրաքանչիւր վանգիւն ձայնի  
նորտ , և յիւրաքանչիւր շարժուած մար-  
մայն : Աբէլ լուռ և եթ կայր . հայէր 'ի  
նա սրտակաթ , և փղձկէր քաղցր արտա-  
սուօք . անմեղ իւր խանդաղատութիւն  
զնովաւ՝ լաւ ևս բացածանոյց զսրտին զա-  
խորժակ , քան զբարբառ բերանոյն :

Բա՛թէ . այսպիսի էր մարդոյն երջան-  
կութիւն , յորժամ կարեռաւն դոհ՝ դեռ  
ոչ ինչ խնդրէր յերկրէ՝ բայց զբէրս  
արմտեաց զոր տայր մտադիւր , ոչ ինչ  
աղօթէր յերկնից՝ բայց զառաքինութիւն  
միայն և զառողջութիւն : Դժգոհութիւն  
իւր չե ևս էր ջեռուցեալ յանյագ տըռփ-  
մունս , որք դտին յետոյ հնարեցին կա-  
րիս անհամարս , և թաղեցին զերջանկու-  
թիւն նորա ընդ շոլողուն թշուառու-  
թեամբ : Չի՞նչ յայնժամ պէտքնոցա առ  
'ի լծակցութիւն՝ երջանկադոյն զօդիւ ,  
զի՞նչ . սէր միայն , առաքինութիւն և  
վայելութիւն . իսկ այժմ զիարդ յաճա-  
խեալ առ մեօք տեսանի , զի ամոլք սրտա-  
կից առաքինեաց՝ զորս երկնից արարեալ  
է վասն իրերաց , ծիւրին 'ի սուդ և յար-

տասուս՝ յուսակտուրք՝ ի գամագիւան լիւնելոյ . կամ զի աղքատութիւն՝ թշուառութիւն սպառնայ աւուրց նոցա , և տուայտանս . կամ զի ամբարհաւաճռւթիւն և ծնողաց սուտ փառասիրութիւն , բռնաւորաբար կրծիմն ՚ի մէջ արկանեն սիրոյ նոցա :

Այսպէս նստեալ էին տակաւ առ մի մեամբք երկոքին անմեղ զուգակիցք՝ յորժամ՝ ՚ի վերայ եհաս նախահայրը ընդ նախամօր : Ունկն գնէին սոքա զան խլաբար յառաջոյ հովանոցին՝ առաւօտեան երգոցն քաղցրութեան , և որ առ միմեանս նոցին խանդաղատանաց . մտանեն ապա ՚ի ներքս , և գորովախառն գիրկս արկանեն որդեկացն : Բարօրութիւն սոցա և առաքինութիւն՝ լցին զնոսա անպատում ցնծութեամբ՝ որ կայտուէր ՚ի գէմն սիրապատար ծնողացն : Եմուտ ՚ի հովանոցն և Մեհալա<sup>7</sup> կին Կայենի . թախծութիւն ընդ ստամբակ վայրագութիւն առնն նկարեալունէր ՚ի ճակաանորա ծանրութիւն ինչ մտախոհ և ցաւագին . թալկութիւն իմն անուշակ ՚ի սեռակ աչս նորա , և գոյն գալկան ՚ի վերայ այտից՝ զորով շուրջ պսակէին վարսք

կուածոյք քաջաթուիսք : Եւ ժամուն յուրում թիրզախանգաղատեալ զփեսայիւն՝ պատմէր նմա զինգութիւն ողջախոհ սըրտին ստեղծելոյն վասն նորա , կայր նա արտաքոյ 'ի կողմանէ հովանոցին և լայր բայց 'ի նոյն սրբեալ զարտօսր երեսաց՝ մտանէ քաղցրաժամկիտ 'ի ներքս , և ողջունէ խանգաղատաբար զեղբայր իւր , և զքոյը :

Ես սմին սկահու անցեալ էր կային զառաջեաւ հովանոցին , և լուեալ նոյնակէս զերդս Արելի , և տեսեալ իսկ զհայրագորովն առ նա զրկածութիւն : Աչս արձակէ զայրագին 'ի հովանոց անդր , և ամէ . — «Ո՛րպէս այլ յայլմէ եղեալ են դոքա . ո՞րպէս գիրկս ածեն նմա վասն մրմնջելոյ նորա՝ չգիտեմ զինչ երդ : Բարւոք առնէ երդս յօրինել և գեղգեղել զայնոսիկ . ապա թէ ոչ՝ հարկ էր նմա զքնով անկանել 'ի գտատարկատորտ անգործութեանն կողմնեալ առ խաշամբք 'ի հովանուջ : Այլ ինձ որ արեակէզ լինիմ 'ի գըժովսըմբէր երկրագործութեանս , ոչ ժամ պարապոյ մնայ երդել , և ոչ յօժարամտութիւն առ այն : Յետ բառնալոյ իմ զծանրութիւն աւուրին , անդամբ մարմնոյս

վաստակաբեկք՝ հանդիսաւ խնդրեն, հանդիսաւ 'ի գիշերի. և յայգուէ վերստին ըստասեն ինձ վաստակք՝ 'ի յանդի: Խոկ գեղեցիկ պատանիդ՝ միտիկամորթ դատարկանձն, որ մեռաներ արդեօք՝ եթէ միօրեայ տաներ իմոցս քրտանց, համակեալէ զօրհանապազ յարտասուս խնդութեաննոցա, և 'ի սիրալիր գրկախառնութիւնն: Ատեայ անձն իմ զայգպիսի կանացի խանդաղատանս. բայց ... զինև՝ և ոչ մի բնաւսիրոյ առհաւատչեայ. թէպէտ զօրտ ամենայն գործեմ' զերկիր ապախտաւոր 'ի տօլթ արեգականն . . . . Ո՛րապէս բղխեն յաշաց նոցա ուրախութեան արտասուք ։ :

Այսպէս ասացեալ գնաց յառաջ յիւրանդաստան: Լսելի եղեն բանք նորա 'ի հովանոցին. Մեհալայի և ևս գալկացեալ դոյն երեսացն, անկաւ կթուցեալառ ընթէր թիրզայի լալով դառնապէս: Նոյնպէս և նախամօրն յեցեալնուտղ անձամբ զուսովք առնն՝ ողբայր զիւր անդրանիկ: Զայն եբարձ յայնժամ Աբէլ. — « Հայր իմ և մայր սիրեցեալք, երթամ 'ի դաշտ գտանել զեղբայր իմ. երթամ 'ի դիրկս արկանելնմին. տառցից նմտ զամենայն զորդիտէ ազդել եղբայրսիրութիւն. մարե-

ցայց զնովաւ, և ոչ 'ի գրկացս Ծողից՝  
մինչև խոստասցի վտարել 'ի սրաէ զամե-  
նայն դառնութիւն, մինչև խոստասցի սի-  
րել զիս : Այս այս . զննեալէ իմ զիսորս  
սրտի, հարցեալ զմիտս իմ առ 'ի գիտել՝  
իւ յանկուցից առ իս զսէր հարազատիս :  
Խորհեալէ իմ յաճախ զամենայն հնարս  
հայթայթանաց մուտ ունելոյ 'ի սիրտ նո-  
րա . յաջողեաց ոչ սակաւ արծարծանել  
զսէրն շիջեալ . բայց ով աղետիս . Ծա-  
խիծք և դժգոհութիւն միշտ անդրէն 'ի  
վերայ ածեն զիսաւար Ծանձրամած հեղ-  
ձուցանել զվառումն նորա զառկայծեալ» :

Պատասխանի ետ նմա նախահայրն վըշ-  
տագին . — « Կամիմ, որդեակ իմ, կամիմ  
Ես ինքնին երթալ առ նա յանդաստան :  
Գելո՞ւն աղիք իմ . . . ասացից նմա զամե-  
նայն զոր բաւեսցէ սէր հայրագորով, զա-  
մենայն զոր բաւեսցէ հանճար մտաց խօ-  
սել առ նա : Կայի՞ն Կայի՞ն . աւաղ . ըն-  
դէր վարակես զանձն իմ 'ի հոգս և 'ի  
ծուփս խաւարայինս : Մարթ ինչ իցէ  
կրից յարուցանել 'ի սիրտ մեղուցելոց  
մրրիկ այսպիսի ահագին, և արմատախիլ  
առնել անտի զբարութիւն և զառաքինու-  
թիւն : Եղո՞ւկ զինե . զինչ արհաւիրք աղ-

ջամդջինք արդէն զարհուրեցուցանեն ըզ-  
հայեցուած աչացս՝ զոր ձկաեցուցանեմ  
յապայս ժամանակաց 'ի զաւակ իմ բա-  
ցական : Ո՞վ մեղք , աշխարհակորոյս  
մեղք . զո՞ր ապականութիւն սարսափելի  
չածես դու 'ի հոգւոջ մահկանացուաց » :  
— Այսպէս յոգւոց հանեալ նախահօրն  
մեկնեցաւ 'ի հովանոցէն ընկզմեալ խոր՝  
'ի խորհուրդս ցաւագինս երթալ 'ի դաշտ  
առ անդրանիկ իւր : Տեսեալ սորա դդա-  
լուստ հօրն առ ինքն՝ թողու զհերկան և  
ասէ . — « Զիէ , հայր , կնճիռնդ 'ի ճակա-  
տի . ոչ դովին խատութեան դիմօք գնա-  
ցեր առ եղբայր իմ փարիլ զնովաւ . աչք  
քո այժմէն սպառնան ինձ յանդիմանու-  
թիւն » :

Առ որ ետ սպատասխանի նախահայրն  
հայրագորով աղետիւ . — « Ողջոյն ընդ-  
քեզ անդրանիկդ իմ . դու քեզէն խոստո-  
վանիս զանձն յանդիմանութեան արժա-  
նի՝ զոր աչք իմ այժմէն սպառնան քեզ :  
Այս կային՝ արժանի յանդիմանութեան :  
Տրտմութիւն որով վարակես զսիրտ հօր  
քո , տրտմութիւն ոգետանիջ՝ ած զիս առ  
քեզ » :

« Եւ ոչ լնաւ սէրն , ընդմիջեաց Կային  
2 \*

զբանս նորա . այդ ախորժակ պահետը  
է Աբելի միայնոյ » :

« Ե' է նաև սէրն՝ Կային , պատասխանի ետ նմա նախահայրն . է նաև սէրն : Վկայ են ինձ երկինք : Այս արտասուք , այս սուգ տրտմութեան , և այս հօգք անձկութեան որ զիսն հալեն և մաշեն , նոյն և զմայր որ զքեզն երկնեաց , զի՞նչ այլ իցեն՝ բայց սէր աղեկէզ . սա նսեմացուցանէ զաւուրս մեր տառապահօք . սա տայ մեզ յոգւոց հանել անդադար զդիշեր ողջոյն : Ո Կային Կային , թէ սիրես զմեզ՝ փութա սրտի մտօք չնչել զայս արտօնը յաչաց մերոց , և փարատել զայս խաւար տիսրագին որ զմեօք մածեալ : Բարեւ . թէ կայցէ տակաւին 'ի սրտիդ ... թէ կայցէ երկիւղ պատկառանաց յերեսաց ամենակալին՝ որ քննիչն է երիկամանցդ , թէ աղօտ կայծակն որդիական սիւրոյ՝ առկայծի տակաւին 'ի սրտի քում , այս՝ Երդմնեցուցանեմ զքեզ 'ի դոյն երկիւղ պատկառանաց , 'ի դոյն սէր որդիական , դարձո 'ի մեզ զմեր անդորրութիւն , դարձո զուրախութիւն վտարանդի : Մի այլ տածեր 'ի սրտի զայդ բնութիւն դառնամաղձ , զայդ հնացեալ ոխութիւն առ

քո հարազատ . որոյ ամենայն Ճիգն մտաց ,  
 ամենայն անձուեկ սիրապատար սրտին՝ խը-  
 լել միայն՝ ի սրտեդ զայդ ատելութիւն ո-  
 խակալ , զայդ որումն ապականիւ : Զի՞ է  
 որդեակ իմ՝ որ զքեզն դառնացուցանէ .  
 զի՞նչ այն՝ որ յարուցանէ՝ ի սրտիդ զայդ  
 բուռն մըրիկ : Արտասուք խնդութեանն  
 զոր բիսեմք , անսուշակ զմայլումն զոր զմայ-  
 լիմք յաղագս նորայն անբիծ աստուած-  
 ովաշտութեան , յաղագս անստգիւտ ա-  
 ռաքինութեան նորա : Զգիտիցե՞ս որ-  
 դեակ իմ . ահա և զուարթունք որ զմեօք  
 թեապարեն , ծափս հարկանեն խնդու-  
 թեամք առ ամենայն գործ բարութեան  
 զոր՝ ի մեզ նկատեն : Ամենակալն իսկ  
 գլւովին հայի ակնկառոյց յայնոսիկ՝  
 զուարթերես հաճութեամք յաթոռոցն  
 բարձրութեան : Փոխել կտմիցիս զանփո-  
 փոխ բնութիւն գեղեցկին և բարւոյն : Առ  
 այդ չեմք կարող թէ և կարող էաք որդեակ՝  
 որպիսի ցաւաղին կարողութիւն էր այն՝  
 հակառակ կալ այսմ անսուշակ ախորժա-  
 նաց , այսմ աղնուական խնդութեան՝ որով  
 յափշտակիմք՝ ի հոգեղուարձ հիացումն :  
 Որոտումն զայրագին , և փոթորիկ ահեղ  
 գիշերական՝ ոչ ծաղկեցուցանեն երբէք

Ժալիա՝ ի դէմն երեսաց . և ոչ՝ ի մըրկայոց  
հոգւոյ և յալեաց անսաստ կըից՝ բղիսէ  
երբէք՝ ի սրտի ուրախութիւն խնդռւ-  
թեան » :

Պատասխանի ետ Կային . — « Հալա-  
ծեցայց ուրեմն միշտ՝ ի կսկծեցուցիչ  
կշտամբանաց այտի : Թէ ոչ միշտ նկարի  
զշրթամբքս հաճելիդ այդ ժպիտ , կամ  
թէ ոչ միշտ արտասուք գորովականք ըզ-  
ծնօտիւքս կաթեն , միթէ վասն այդր այ-  
րական իմն բարուց ծանրութիւն՝ հա-  
մարեսցի՞ առ ձեօք վատթարութիւննով-  
կալի : Խմ արուորագոյն վիճակեալ բնու-  
թեան՝ ցանդ ընտրեցի ձեռնարկս արիա-  
գոյնս , և վաստակս գժուարըմքերս . չեմ  
ձեռնհաս հրամայել կնճռադէմ ճակա-  
տուս լուծանիլ յարտօսր , կամ՝ ի մեղկ  
ժպիտ : Միթէ մնչեսցէ՞ արծուի որսկէս  
գիւրագորովաղաւնի » :

« Խաբիս որդեակ , պատասխանի ետ  
նախահայրն լի վսեմական ծանրութեամբ .  
Խաբիս անձամբ յանձին . զթշուառու-  
թիւն քո զոր արժան էր վսնել յանձնէ ,  
խնդրես խնամով ծածկել՝ ի քէն : Կային  
Կային , չէ այդ ծանրութիւն առնացի  
հրոշմեալ՝ ի ճակատդ . դառնութիւն է .

այդ, և խէ՛մ ատելութեան երևեալ յե-  
 րեսս քո, և յամենայն 'ի գործս • գոքա  
 խաւարամած առնեն տիրութեամբ զա-  
 մենայն որ զքեւ: Ապա թէ ոչ զմէ այդ  
 քրթմնջիւն 'ի վաստակս քո, այդ գնացք  
 դառնութեան առ մեղ առհասարակ:  
 Զի՞նչ որ զքեզն արտմեցուցանէ: Զի՞նչ  
 ինչ առնել իցէ մեղ առ 'ի զտիրութիւն քո  
 փարատել: Ո՞ տայր մեղ 'ի պարզութիւն  
 յեղանակել զաւուրս քո, 'ի պարզու-  
 թիւն որպէս զգեղեցիկ առաւօտ գարնայ-  
 նոյն. յայնժամ կատարէին արդեօք ուխաք  
 սրտից կաթոգնելոց: Բայց որդեակ իմ,  
 իմ իմլիք տենչայ սիրտ քո աղմկայոյզ: Ո՞չ  
 ապաքէն բաց են առաջի քո ամենայն աղ-  
 բեւրք բարօրութեան. ո՞չ մատուցանէ  
 քեզ բնութիւն համօրէն՝ զամենայն զիւր  
 գեղեցկութիւն: Ամենայն երջանկութիւն  
 և բերկութիւն, ամենայն որ գեղեցիկն  
 է: և բարի՝ զոր շնորհէ մեղ բնութիւնն.՝  
 բանն և առաքինութիւն, ո՞չ արդեօք և  
 քեզ շնորհեցան: Բայց դու անփոյթ զա-  
 մենեքումբք արարեալ՝ ոչ 'ի նոյնս վայե-  
 լսո, և ապա ընդ թշուառութիւնդ քըրթ-  
 մընջես: Կամ թէ չես ինչ դոհ ընդ  
 բաժին երջանկութեանն զոր մասնաւո-

բեաց անկելոյն յաւիտենականն բարութիւն : Մի արդեօք ցանկանայցես հրեշտակականն երանութեան . բայց գիտասջեր , և 'ի հրեշտակս գտան անգոհք . աստուածանալ ձգտեցան , և յերկնից վրեպեցան : Տրտունջ ունիցիս ընդ բարերար առաջնորդութիւն արարչին առ մեղուցեալն : Եւ զիարդ . յանթիւ արարածոց որ զնա օրհնաբանեն , հողազանգուած ոք մահկանացու իշխեսցէ որդին անարդ՝ գըլուխ ամբառնալ 'ի փոշւոյն և քրթմնջել զնմանէ՝ որոյ տկնարկութիւն զերկինս շարժէ , զորոյ զամենակալ բարերարութիւն արարածք քարողեն , որոյ մերկապարանոց կան առաջի աչաց բաւիղք գործոց մերոց ամենայն , եղելոյն և հանգերձելոց , և որ դիտէն 'ի չարէն զբարին վերընծիւղել : Ով որդեակ իմ՝ զուարթացիր յանձն . անդրանիկ իմ՝ մի ևս դառնութիւն և ատելութիւն խաւարեցուսցեն յաշացդ զտեսիլն զայն պայծառ . մի այլ ծածկեսցէն 'ի մռայլ մթութեան զայն աղբիւր երջանկութեան » :

« Զի՞նչ օգուտ ինձ 'ի խրատուցդ , ասէ Կային սրանութեամք : Թէ՛ ձեռնհասէի լինել զուարթամիա , դիտեմ՝ և ես , ա-

մենային որ շուրջ զինև՝ խայտայր զուար-  
թանայր արդեօք, ամենայն պայծառա-  
նայր որպէս արշալոյս գեղեցիկ: Կարո՞ղ  
ինչ իցեմ հրաման տալ մըրկին՝ ոչ կա-  
տաղել, կամ գարնանազայր հեղեղին՝  
ոտնկառել: Ծնայ ՚ի կնոջէ գատապարտ  
՚ի թշուառութիւն, զմեծագոյն բաժակ  
անիծիցն՝ քամեաց տէր ՚ի վերայ անդրան-  
կիս ՚ի նմին իսկ ՚ի ժամու ծննդոցս: Ազ-  
բիւրք բերկրութեան և բարօրութեան  
յորոց դուքն յափրանայք, ոչ բղխեն  
վասն իմ, ոչ»:

Յայս գանգատ որդւոյն՝ վտակք ար-  
տասուաց խաղային յաշաց հօրն: — «Վայ  
ինձ որդեակ իմ, ձայն արձակեաց եղկե-  
լին: Շշմարիս է... և առաւել քան զջըշ-  
մարիս: Հարին անէծք զամենայն կա-  
նանցածին, բայց սիրելիդ որդեակ, միթէ-  
եհեղ տէր Աստուած անէծս ՚ի ծնունդս  
անդրանկին, քան զոր եհեղ ՚ի վերայ մեր  
յորժամ զպատուիրանաւ նորա յան-  
ցեաք: Զայդ ոչ արար նա, բնաւ և ոչ,  
որոյ բարութեան չիք սահման: Ոչ կային,  
ամենելին ոչ, չես զու ծնեալ ՚ի թշուա-  
ռութիւն: ոչ կոչէ տէր Աստուած ՚ի  
չգոյից և ոչ մի արարած առ ՚ի թշուա-

ոռւթիւն . բայց կարող է մարդ թշուա-  
 ռանալ , անտեսել զիւր երջանկութիւն ,  
 և այնպէս զանձն թշուառացուցանել : Յոր-  
 ժամ բան իւր նուածի 'ի յարձակմանց  
 բուռն կրից , և յանգունելի յանգուսպ  
 ցանկութեանց , յայնժամ հիքանայ մարդ ,  
 և ամենայն երեսյթ երջանկութիւն՝ լինի  
 պատիր թշուառութիւն : Չես կարող՝ դի-  
 տեմ , հրաման տալ մըրկին չկատաղել ,  
 և ոչ գարնանազայր հեղեղին ոտնակա-  
 ռել . բայց կարող ես որդեակ՝ զխաւար  
 մթութեան փարատել յիմացականէդ , և  
 նա ծագեսցէ 'ի հոգւո՞դ զպարզութիւն :  
 'Նորա է հրամայել տիրաբար մըրկայոց  
 ծփմանցդ լոել . նորա է 'ի քնին մատու-  
 ցանել զամենայն բերմունս ըղձից , զամե-  
 նայն փրփրագէզ յոյզս կրից . յայնժամ  
 կարկեսցին կիրք ամօթապարտք . ցանկու-  
 թիւնէք տարապարտք ցնդեսցին հալածա-  
 կան , որպէս շամանդաղ վաղորդայնոյ 'ի  
 ճառագայթից արեգական : Տեսի , որդեակ  
 իմ , տեսի երբեմն խնդութեան արտասուս  
 'ի վերայ ծնօտիցդ . յորժամ իմացական  
 քո հաճեալ հաւանէր ընդ ուղղութիւնս  
 զոր գործէիր՝ զեղոյր յայնժամ ցնծու-  
 թիւն 'ի հոգիքո և 'ի մարմին : Ասա կայ

ին . սուտ իցեն բանքս . չէիր յայնժամ  
 երջանիկ . ոչ պայծառացեալ յայնժամ  
 'ի հոգի որակէս զվճիտ արև 'ի պարզու-  
 թեան օդոց : Դարձո 'ի քեզ զայս ճառա-  
 դայթ ասառուածութեան՝ զբանն իմացա-  
 կան զուղղիչ վարուց . առաքինութիւնն  
 յայնժամ լծորդ իւր անանջատ՝ դարձուս-  
 ցէ 'ի սիրտ քո զայն ուրախութիւն , և աղ-  
 բիւր երջաննկութեան յորդեսցի զքե : Անդ-  
 րանիկ իմ սիրելի՝ լուր իրասուց հօր  
 քում : Այս եղիցի առաջին պատուեր զոր  
 քեզ հրամայէ բանն՝ հաստեալ կրկին  
 յիւր իրաւունս տիրական , վաղել 'ի գըր-  
 կախառնութիւնն եղբօր քում . զիարդ ու-  
 րախութիւննորա լուծցի յարտասուս .  
 որպիսի ովզագուրմամբ զքե փարեսցի » :  
 « Բարւոք է հայր իմ՝ ասէ Կային .  
 գիրկս արկից զնովաւ յորժամ դարձայց  
 'ի յանդոյ . առ ժամս կոչեն զիս վաս-  
 տակք : Գիրկս արկից զնովաւ : Բայց ...  
 առնացի իմ բնութիւնն ոչ գիտէ զիջանել  
 առ այդ մեղկութիւնն կանացի , որ զնա  
 քան զիս՝ այդպէս սիրելի ձեզ առնէ , և  
 որ այնչափ ինդութեան արտասուս 'ի  
 ձէնջ քամէ . առ այդ մեղկութիւնն որ թա-  
 փեաց անէծս զմեօք առհասարակ , յոր-

Ժամ՝ ի դրախտին թուլացար հեշտեաւ  
առ շիթս ինչ արտասուաց... Բայց զի՞նչ  
առնեմ եղկելիս ։ զհայրդ իմ նախատեմ:  
Ոչ, ոչ հայր իմ. պատուեմ զքեզ. համ-  
բասցի բերան իմ » : — Այսպէս ասա-  
ցեալ Կայենի՝ դառնայ ՚ի գործ մշակու-  
թեան :

Կայր արձանացեալ նախահայրն և լայր  
դառնագին. զՃակատ եհար, ձայն եղ  
զկնի որդւոյն. — « Ո՛հ. Կային Կային,  
և դու զիս նախատես ։ բարե ։ արժան  
ինձ և իրաւ. բայց մի թէ չէր արժան  
խնայել՝ ի հայր քո, և ոչ լսելի ինձ առ-  
նել զայդ նախատինս՝ որ դողացուցանէ  
զանձն իմ իրրե զշանթ որոտաձայն : Ե-  
զուկ թշուառացելոյս. ովահադին և ան-  
բերելի կանխազեկոյց գուժարկութեանս.  
այսպէս թոռունք իմ անագանք՝ յորժամ  
տղմաթաթաւ բերցին ՚ի մեղս, և պատու-  
համն անհրաժեշտ կալցի զնոսա, այսպէս  
ընդ կոլս արասցեն զհողացեալ զիմ փոշի,  
և նղովս արձակեսցեն նախայանցոյց մե-  
զուցելոյս » :

Զայս օրինակ յոգւոց հանեալ նախա-  
հօրն՝ մեկնեցաւ յանդաստանաց անտի-  
տիրագին դիմարկեալ դիմզք. պահ ընդ

սպահ յերկինս համբառնայր զաշս իւր՝  
 բարձրահառաց և ձեռս 'ի զլուխ : Հայեր  
 'ի նա Կային 'ի հետուստ . հառացէր և  
 ինքն ասելով . — « Ո՞րպէս յաւագին ծե-  
 ծէ զգլուխ իւր , որպէս ողբայ նա , որ-  
 պէս հեծէ . . . ևս ինքն նախատեցի զնա ,  
 նախատեցի կակծագին ղհայր իմ բարե-  
 գութ : Յո՞ զիս յափշտակեաց կոյր կա-  
 տաղութիւն . դժոխք կեղեքն ղփորո-  
 տիս : Ես ինքն չուառականս , ես ինքն ար-  
 կանեմ զնոքօք աղջամուղջ մշտատանջ հո-  
 գոց . թոյնս խտոնեմ դառնութեան յա-  
 մենայն 'ի բերկրութիւնս նոցա : Աւազ  
 եղկելոյս : Չեմ արժանի բնականալ 'ի  
 մէջ մարդկան . երթայց խառնիլ 'ի վոհ-  
 մակս ճիւաղաց վայրի , որ թափեն գա-  
 զանաբար յանապատս զիւրեանց կատա-  
 զութիւն : Ահա կայ նա հեռի . լսեմ տա-  
 կաւին զնորա հառաչանս . որպէս դան-  
 դացէ նա ընկճեալ առ 'ի ցաւոց . . . Եցէ  
 թէ ընթացայց զինի նորա . բուռն հարից  
 զոտիցն հայցել զթողութիւն՝ Երգմնեցու-  
 ցեալ զնա յամենայն 'ի սրբութիւնս :  
 Այս . . . քաջ իսկ տեսանեմ . թշուառու-  
 թիւն իմ չէ եկամուտ . ծնունդ է այն ան-  
 զգոյչ արտիս՝ յորմէ 'ի վեր ծխին այս ամազ-

լոսկը աղջամկնեք, և ցնդեն շանթա-  
հար զիմ և զնոցայն բերկրութիւն զամե-  
նայն: Ով բան, ու առաքինութիւն, եկայք  
դարձարուք առ իս. յաղթանակեցէք  
կրիցս բոնութեան. շիջուցէք յանձն իմ  
զայս գեհեան մրրկածուփ.... Զաւագին  
ծնող. ահա կայ հեռի, զիարդնուաղեալ  
անձամբ՝ անմուռնչ, և ձեռս 'ի գլուխ.  
Ծուի կարդալ զերկինս: Ընթացայց, ան-  
կայց գետնամած առաջի նորա: Ազյ  
թշուառականիս :

Վաղեաց կային առ հայր իւր. որոյ կը-  
թուցեալ անձամբ կայր յեց 'ի բուն ինչ  
ծառոյ՝ թաղծագին ոգւով կորաքամակ,  
յառեալ 'ի խորհուրդս թանայր զգետին  
արտասուօք: Յայս տեսիլ զդողանի հա-  
րաւ, քստմնեցան ոսկերք որդւոյն. ան-  
կաւ յերկիր առաջի նորա, փարեցաւ զո-  
տիւքն, հեղեղք արտասուաց յորդեցին  
յաչաց. համբարձ զաչան առ հայր իւր և  
գոչեաց. — « Թող ինձ հայր . . . մեղայ .  
ոչ ևս եմ արժանի լինել հայրակոչ. այլ  
սոսկմանդ արժանի և խոժոռահայեաց ե-  
րեսդարձութեան: Բայց տես աղաչեմ,  
տես զարտասուս զլջման իմոյ, հայեաց 'ի  
թշուառացեալս՝ և թող ինձ . . . Աւազ

եղկելոյս . խուլ եղէ առ խրատուցդ ունելիքը գրութիւն . բայց հայր իմ՝ յորժամ դարձար յինէն արտասուագին ձեռս ըզգլսովդ , յայնժամ դողումն կալաւ զանձն իմ , և յարոյց զիս 'ի տղմոյն՝ յոր թաւաւէի : Ահա լամայժմ . . . լամ առ ոտիւքդ . տեսանեմ ահա զամենայն զիմ դարշութիւն . և սոսկամ ընդ ապականութիւն մըտացս և սրտիս : Խնդրեմ հայր . . . խընդրեմ թողութիւն յԱստուծոյ , 'ի քէն հայր , յեղբօրէ իմմէ , և յամենեցունց զոր դառնացուցի » :

« Արի Կային , արի որդեակ իմ , արի . դիրկս արկից զքե . այսովէս պապաջէր հեկեկանօք հայրն՝ այլ յայլմէ . փարէր խանդակաթ զնովաւ : Որ բնակեալն է յերկինս՝ տեսանէ օրհնառաք հաճութեամբ զարտասուս քո զայդ . որդեակ իմ , սիրեցեալ որդեակ , դիրկս արկ զինե . . . Ո՞հ . տրտմութիւն իմ որպէս դարձաւ յուրախութիւն : Ժամանակին , ժամ միշտ օրհնեալ , յորում զաւակ իմ՝ անդրանիկ իմ պարզեւէ մեզ զիսաղաղութիւն , զանդորրութիւն և զանուշակն ուրախութիւն . յորում գորովալիր արտասուօք զիս ընդդրկէ : Դիրկս արկ միւս-

անգամ՝ ձեռն տուր ինձ որդեակ իմ. խնդութիւն տայ ինձ դեղևել. բայց մի այլ սիրելիդ իմ, մի այլ յատաղեսցուք. Երթիցուք գտանել զեղբայր .քո՝ որ նոյն պէս գիրկընդիմուն եղիցի ընդ .քեզ» :

Այն ինչ Երթային սոքտ 'ի խնդիր եղ բօրն յարօտս դաշտաց, ահա և Աբէլ առընթեր մօրն՝ ընդ Մէհալայի և Թիր զայի ելաներ ճեպով՝ի թփոց անտի մացառացն : Գնացեալ էր սոցա դաղտուկ զհետ նախահօրն 'ի լուր զանխլաբար հանդիմին : Խոյացաւ Աբէլ բաղկատարած ընդ առաջկայենի. գիրկս արկաներ զեռվաւ, ալնդէր զնա առ լանջօքն. լայր, և ոչ բաւէր 'ի բան բերել զսրտին ցընծումն : — « Եղբայր իմ՝ առէ, եղբայր իմ. այլ զձայն բարբառոյն հատանեն հեկեկանիք նորա... և դու սիրես զիս : Ո՞հ. տուր ինձ զայդ... տուր լսել ինձ 'ի քոյ շրթանց. դու զիս սիրես... Ո՞վ անձառ խնդութեանս » :

« Այս՝ սիրեմ զքեզ եղբայր իմ. պատասխանի տայր կային՝ գիրկս տծեալ նըմին ..... Ո՞հ. ներեա եղբայր... ներեսջիք և դուք իմոցս ամենայն առ ձեզ յանցանաց. ներեսջիք հիքացելոյս, որ

ընդ այսպահի ժամանակ վատրեցի ՚ի ձենջ  
զհանգիստ, լցի վշոք և արտմութեամբ  
զաւուրս ձեր: Անձն իմ որպէս զփայ-  
լակն պայծառացաւ յաղջութենէ աստի,   
և փարատեցոյց զայս մըրիկ խռովոյոյզ.  
Խլեցի յարմատոց զորոմնս զայս՝ որ  
զբարւոյն բողբոջ հեղձուցանէր ՚ի հոգ-  
ւոջս, մի ևս ՚ի վերընծիւղեացի այն: Թող  
եղբայր իմ՝ թող, մոռա ակն արկանել  
յաւաղելի մառախուզ անցելոցն»:

« Ոչ երբեք, ոչ, ասէ Աբէլ, ոչ ակ-  
նարկեացուք բնաւ, և դարձեալ խաղա-  
սպատէր զնովաւ, մի և դու, մի անձկալիդ  
իմ... թողցուք օն անդր զանցեալսն: Ո՞չ  
արդեօք մոռանամք, եղբայր, զվիշտ վա-  
ղանցուկ երազոյ վաղորդայնի, յորժամ  
զարթնումք յառաւօտ գարնայնոյն՝ յո-  
րում հրճուանք և ուղև զուարճութեանց  
սպատին զմեօք: Ո՛վկային կային, ո տայր  
ինձ զինդութեան սրտիս, զիմոյ ցնծու-  
թեան զկէսն միայն սպատմել քեզ: Պա-  
կասի բարբառ բերանոյս, լալ միայն զի-  
տեմ, փարիլ միայն զլանջօքդ, և դար-  
ձեալ լալ»:

Եբրև այսպէս եղբարքն երկոքին էին  
զմիմեամբք դրկախառնեալք, նախա-

մայրն ականատես սրտառուչ տեսաբանիս՝ ցնդէր յարտօսր դորովական և հեկայր ։ ձայն եքարձ ապա : — « Ոչ որդէակը իմ, ոչ սիրելիք իմ, ոչ զփորձ առի երբէք այսպիսում կրից ախորժելեաց՝ զորոյ 'ի պահուս զափ առնում . 'ի ժամէ անտի յորում զառաջինն լուայ զքաղցրիկ անուն մօր՝ 'ի շրթանց քոց անդրանիկդ իմ, ոչ երբէք ճաշակեցի յանձին ուրախութիւն այսպիսի : Մութն անհնարին, և հոգք լեռնացեալք՝ իսկ և խոկ փարատեցան 'ի գլխոյս . պայծառութիւն և բերկրութիւն խայտան զինե : Ամենայն ժամք անցցե՛ն ինձ յայտմ հետէ 'ի ծաղը և 'ի զուարձութիւն անպայման : Խաղաղութիւն և միաբանութիւն է 'ի մէջ նոցա որք գառէին յիմոց ստեանց : Այո՛ նմանեցի ահա այդոյ բեղնաւորի՝ որ բերէ ողկոյզս անուշակս . որ առ նովաւ անցանէ՝ օրհնէ զնա վասն բերոյ սկտղոցս քաղցրութեան : Գիրկս արկէք միմեանց որդեակը իմ. եկայք գիրկս արկէք և մօրդ . համբուրեցից զշիթս արտասուաց ծորելոց զերեսօքդ, զիւրաքանչիւր շիթ՝ անգին արտասուացդ, զոր սէրն եղբայրական բղխեցուցանէ 'ի նոսին » :

Զքանան ասաց նախամայրն , և լի ան-  
պատում հըճուանօք գիրկս ածէ զաւա-  
կացն . գիրկս արկանէ նոյնովէս Մեհա-  
լայի և Թիրզայի . նոր արտասուք խըն-  
դութեան 'ի նորանոր գրկածութեանց :  
Յայնժամ կենակից Կայենի՝ առէ ցքոյր  
իւր բերկրալից հառաջմամբ . — « Եկ սի-  
րելիդ իմ . ով մեծի խնդութեանս : Օրս  
այս մեզ՝ օր տարեկանաց : Եկ երթիցուք,  
հառաջեսցուք ծաղիկս գեղեցիկս սփռել  
'ի սեղանի ընդ հովանոցաւս . կթեսցուք  
ընտիր ընտիրս 'ի պաղոց զոր բերեն ծառք  
մեր և թուփք . օրս այս եղիցի մեզ իբրև  
զմի յառուցն եղեմական . անցցէ այս 'ի  
տօն ցնծութեան » : Փութացան նոքա 'ի  
ծաղկոցս , և 'ի մրգաբեր դարտաստանս .  
խնդութիւնն թես տայր գարշապարաց  
նոցա :

Կային և Աբէլ ձեռն 'ի ձեռն աջակ-  
ցեալք , նախահայր ընդ նախամօր առըն-  
թեր նոցին՝ արբեալք դորովախառն ըղ-  
մայլմամբ յառաջ խաղային 'ի միասին 'ի  
բլուր անդր ելանել : Իբրև հասին ժամա-  
նեցին անդ , պատրաստեալ էր քերցն եր-  
կոցունց զսեղան 'ի վարսագեղ հովանոցին ,  
զարդարեալ յազգս ազգս պաղոց՝ խառն

Ընդ քաղցրածհոտ համասպրամ ծաղկանց,  
խառնուրդ սխրալի ՚ի փաղփիւն , յերփն  
երփն երանգոց , և ՚ի հոտս անուշունս :  
Բազմեցան նոքա յայս ճաշկերոյթ հեշ  
տամատոյց • ուրախաւթիւն և զուարթու-  
թիւն և զսոյցք զուարճալիք ածին վաղ  
վաղակի զզովարար երեկոյն :

ԱՅՈ : ամառներամբ չօմ ին այլ քիչն  
ուղարկեց վեւ : ըստաթեպան ոյն յուն ուն  
անձն սկզբ մարդ սկզբուն ուղարկեց զուար-  
թութեան : առաջամայսուք քոյ մանարձն կ'  
ունած մարդու ոյս ըստուք մ' ուղարկեց զուար-  
թութեան յուն նշեած ուստ ոյս ուղարկութեան և կ'ին  
է ոյս մարդու մայստերի մեջութեան միջ  
կ' առան մարդանուի : և առաջեածը մոռ  
մաստաւուք զերարցին կ' է , ուղարկած  
զուարթութեան ոյսու ոմն մարդեւարձն  
ոյս ուղարկութեան : առաջ  
մարդու մատն կ' է առաջեածը և մայստե-  
րաւուք ունաւին ուղարկութեամ , զայտը  
ու մաստաւուք զայտը մայստերի ոյնն  
և մայստերի մ' միայրամ ջաւար զայտունն  
ունաւ մայստերի մայդ : յամայդ որբն զայտը  
ու մայդ ով յամայտապաւար ունաւ մայստե-  
րաւուք բարտապայտի մ' մայդու ընաւուք  
մաստ յայտուք ուրաս որբաւ ունաւուք բար-

# ՄԱՀ ԱԲԵԼԻ

Ե Ր Գ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

**Թ**բրե բազմեալ էին նոքա ՚ի հօվանոցին , նախահայրն մարդկութեանս բացեալ ղբերան իւր՝ ասէ : — « Ահա որդեակը իմ , ահա տեսանէք յանձինս , որպիսի ցնծութիւն զեղանի յոգիս մեր յետ ուղղութեանց ինչ զոր ուղղեմք . տեսանեմք ահա , յայնժամ միայն տիրապէս երջանկանամք՝ յորժամ առաքինանամք : Առաքինութեամբք վերաբերիմք յերանութիւն ոգւոցն մաքրոց , յերկնաւորն երջանկութիւն , ուր ընդ հակառակն ամենայն կիրք ստահակը և անմաքուրք՝ յափշտակեն զմեղ և վարեն ՚ի բաւիղ անել , ուր անհանգստութիւն և անձկութիւն , թշուառութիւն և ապաշաւ լինին մեղ դարանակալ : Եւա , ո՞ի մէնջ հաւա-

տայր՝ յորժամ ձեռն ՚ի ձեռն մեկնեցաք  
 ՚ի դրախտէն փափկութեան, թէ այսչափ  
 երջանկութիւնք պահին մեզ յայս երկիր  
 անիծակուու. (բարեւ. այս տեսարան ա-  
 ղեղողորմ միշտ նկարի աչացս գէմ յանդի-  
 ման). յայս երկիր համատարած՝ յորում  
 զառաջինն ընակեցաք միայնակ, ես և դու  
 միայն » :

Ասաց, և լոեաց նախահայրն. առ որ  
 Աբէլ. — « Հայրիկ, եհաս ահա երեկոյն  
 գեղեցիկ. թէ ոչինչ խափանէ քեզ անա-  
 գանել առ մեզ ՚ի հովանոցիս, և թէ չիք  
 հօրդ առանձնանալ ընդ մութն երեկորին  
 ՚ի խոկմունս բարձրագունիցն, լուր աղա-  
 ջանաց որդւոյդ. պատմեա մեզ միւսան-  
 գամ զարարածութիւն աւուրցն անցելոց՝  
 յորս ընակեցեր ընդ մօր մերում միայ-  
 նիկ յայս ընդարձակատարը անապատ ա-  
 մայի » :

Յայնժամ աչք ամենեցուն հայէին ՚ի  
 նախահայրն՝ լոիկ և ուշի ուշով, անժոյժք  
 ՚ի գիտել զելս խնդրուածոցն Աբելի. ո-  
 րում ետ պատասխանի. — « Եւ զիսրդ  
 հնար որդեակ՝ ժխտել ինչ քեզ յաւուր  
 ուրախութեանս մեծի : Առից պատմել  
 ձեզ զաւուրսն՝ յորս եղնն առ մարդն մե-

ղուցեալ խոստմունքն անապատում աւետեաց , և բազմադէմ անապարտական շնորհաց և փրկութեան : Ասա Եւա , ուստի սկիզբն կալոյց եղելոցն իրաց : Ի ժամէ անտի յորում աջակցեալ միմեանց՝ հեռացաք 'ի գրախտէն փափկութեան : Բայց ցանկալիդ իմ , այժմէն փղձկեալ դաշտ տեսանկեմ . . . . Սկիզբն արա , սիրելիդ իմ , ասէ նախամայըրն , 'ի տեղւոջէն՝ ուր այն յետին անդամ վերակնեալ առ դըրախտն արտասուալից վտակօք , խոնարհեցայ անկայ զլանջօքդ՝ թալկացեալ : Բայց զոր եսն յայնժամ կրեցի յանձին , թող Ազամ՝ թող . ես ինքն նկարեցից զայն . խիթամ՝ գուցէ 'ի խնայել քո յիս՝ հարեւանցի գծադրեսցես զայն տեսարան բազմադէտ » :

« Սուսեր Հըեշտակին որ վարեր զմեզ արտաքս 'ի գրախտէն՝ մարդասիրագոյն իմն կարեկցութեամբ . շողայր արդէն փայլակնաձև 'ի թիկանց մերոց . ձայն նորա յիշեցուցաներ մեզ տակաւին զիսուտումն աւետեաց , և զմեծամեծ շնորհս Աստուծոյ զոր անարգեան էաք : Արդէն իջեալ էաք յերկիր . և գնայաք ընդ անապատ մենաւոր : Անդ ոչ ես Եգիմ . եր-

Ծայալք՝ և ոչ ընդ անուշահոտ ծաղիկս,  
 կամ ընդ ցանկս դալարիս, և ընդ ծառա-  
 տունկս մրգաբերս. չերեկին այնք՝ բայց  
 աստ և անդ ցիրուցան՝ ի հող անբեր, որ-  
 պէս կզզիք սփիւռք՝ ի ծովուն։ Գնայալք  
 լոին, երեսք երկրի տմենայն ոչ այլ ինչ  
 առաջի մեր, բայց անասլատ տխուր լայ-  
 նաարած։ Գնայալք ձեռն՝ ի ձեռն, լայիր  
 անդադար յետս ընդդէմ. չիշխելի ակնար-  
 կել՝ ի դէմս՝ որ յինէն պատրեալ գնայր  
 ինձ ուղեկից, ցաւոցս և թշուառութեան  
 բաժանակից։ Քայլէր նա առընթեր իմ  
 կոր՝ ի դլուխ յերկիր. էր զի անմռունչ  
 զվայրօքն շուրջ հայէր, և էր զի զինեւ. տե-  
 սանէր զարտասուս իմ, խնոյրբերան իւր,  
 միայն արտասուագին ալնդէր զիս լանջացն  
 ՝ ի ճահ։ Հասեալք՝ ի ստորոտ բլոյ միոջ  
 որոյ կատար սկսանէր յաջացս գողանալ  
 զդրախսան բարձրաւանդակ, անդ զկայ ա-  
 ռի անբարբառ. հայեցեալ յետս՝ ի նոյն՝  
 զվայրն ամենայն հեցեցուցի՝ ի ճիչ լալսո՝  
 այսգունակ։ Աւազ, գուցէ վերջին նուագ՝  
 զի հայիմ՝ ի քեզ՝ ի դրախտ,՝ ի տեղիդ  
 իմոյ ծննդեան. յորում գու, փեսայդ սիւ-  
 րելի, սակայն թէ ներես ինձ անուանել  
 զքիզ յայս անուն, խնդրեցեր յարար-

չէդ ընկեր զոմն կենակից, և կորուստ քո  
 ծնաւ 'ի կողէդ: Ո՞ւմ այժմ բուրեսջիք  
 ծաղիկք գեղեցիկք զոր ձեռք իմ դարմա-  
 նեցին ժրաջանք: Ո՞'ի ձեր ճեմեսցի բազ-  
 մաբուրեան 'ի զովութեան ո՛ ձողաբարձք  
 հովանագեղք: Դուք մարմանդք ծաղ-  
 կափիթիթք, դուք անստառք վարսաւորք՝  
 ում փլթթեսջիք զազք ազք պտղոցդ: Ոչ  
 ևս տեսից զձեզ. այն օդ խնկահոտ՝ սուրբ  
 է՝ անշնչելի այսուհետեւ մեղսամակարդ կը-  
 նոջս. այն վայր սրբասահման՝ ինձ այլ ևս  
 անկոխելի: Վայ ինձ վայ. որպէս անկաւ  
 մարդն՝ հրեշտակաց բարեկամ, զոր այն  
 պէս անախտ ստեղծ ձեռն արարչական,  
 այնպէս երջանիկ. դու ևս անկար, դու...  
 ո՛ սիրելիդ, թէ ներես ինձ կոչել զքեզ  
 յայդ անուն, դու ևս անկար հրապու-  
 րեալ առ յինէն: Բարեկ, մի ատեր զիս,  
 մի թողուր զթշուտացեալս: Երդմնե-  
 ցուցանեմ զքեզ 'ի խոստումն մեծ զոր  
 մեզն և 'ի հասարակաց մեր յայս թշուա-  
 ռութիւն, մի թողուր զիս զթշուտառա-  
 ցեալս: Ապաքէն չեմ արժանի, բայց ա-  
 տելութեան առ 'ի քէն և նզովից. այլ  
 թոյլ արա ինձ հետեւ գարշաստարացդ

աղախնորեն , 'ի սիստմումն տառապա-  
 նացդ յորում զքեղ ընկղմեցի : Մի միայն  
 քո ակնարկիք՝ հրաման են առ իս՝ ըզ-  
 ձիցդ և կամաց յայտարար : Յոր վայր և  
 հաստատեսցես զքո բնակութիւն , ծաղ-  
 կայտառակ յօրինեցից զքոյդ հանգստա-  
 րան . շըջեցայց յառանձնոցս ամայիս՝ կը-  
 թել վասն քո պտուղս ազնիւ 'ի կերա-  
 կուր . և երանելի զանձն համարեցայց ,  
 թէ կարեկից ակնարկութիւն քո միակ՝ ե-  
 ղիցի դուղնաքեայ աղախնութեանս վար-  
 ձատրութիւն : Այսպէս բարբառեալ  
 խոնարհեցայ անկայ 'ի վերայ բազկաց նո-  
 րա . որոյ կաթոգին անձկով հանգուցեալ  
 զիս առ լանջօքն՝ ելաց 'ի վերայ պարանո-  
 ցի իմոյ ասելով . Մի սիրելիդ գորովաղէտ ,  
 մի դառն նախատանօք զմեր եղկութիւնս  
 և ևս դառնացուցանել . երկոքին ևս հասա-  
 րակարար՝ առաւելագունից արժանացաք  
 պատժոց քան զոր կրեմքս : Ոչ ապաքէն  
 դատաւոր մեր 'ի դատելն զմեզ՝ մեծա-  
 մեծս խոստացաւ մեղ աւետիս բարեաց :  
 Ապաքէն քօղարկեալ են այնք ընդ ամ-  
 պովք խորախորհուրդ իմն նսեմութեան .  
 բայց և այնպէս արտափայլէն ընդ աղօտ՝  
 նորհք նորա անսահման : Թէ զափ պա-

առևհասին չափեալ էր մեզ ըստ արժա-  
 նեացս , վայ էր անձանց մերոց , զի՞նչ ար-  
 դեօք լինէաք յայնժամ : Մի սիրելիդ իմ ,  
 մի գանգատ տարադէալ , և գառն նախա-  
 տինք՝ անարժան զմեզ կացուացեն շնոր-  
 հաց նորա , մի պղծեացեն այնք զշըր-  
 թունս մեր , այլ բացցուք զայսոսիկ 'ի խոս-  
 տովանութիւն միայն խորին աստուած-  
 պաշտութեան և յերկրապատութիւն գո-  
 հութեան : Յորոյ ոչ ծածկի յաջաց խա-  
 ւար թանձրամաճ , նոյն ինքն տեսանէ  
 զծածուկս սրտից մեղուցելոց . տեսցէ  
 զթութեամբ և զմեր թերակատար օրհ-  
 նաբանութիւն և զդոհութիւն և զառ 'ի  
 բարին ապիկար ճգունս : Մի լար Եւա .  
 ողջ լեր կենակից իմ և վատակից : Հասա-  
 րակաց մեր ձեռնտուութիւն քաղցրա-  
 ցուացէ զմեր թշուառութիւն . կռուես-  
 ցուք միաբան ընդ հասարակաց մեր թըշ-  
 նամոյն՝ ընդ մեղսն ասեմ ահադին . թե-  
 ւակովսեացուք հուապ 'ի մեր բնաւոր ոլա-  
 տիւ՝ ըստ տանելոյ բնութեանս ապակա-  
 նութեան . խաղաղութիւն և սէր գորո-  
 վական՝ անպատկաս 'ի մերում միջե . որով  
 աջակցեալ միմեանց յօգնականութիւն՝  
 տարցուք անարատում և թեթևաբեռն՝

զլուծ ծանրութեանն որ մեղ կապեցաւ ,  
և այսպէս երթիցուք ընդ առաջ մահուն  
որ խաղայ 'ի մեր վերայ , բայց յուշիկ և  
հանգարտահետ : Առ ժամս իջցուք 'ի  
ստորոտ անդր , ուր շարք կաղամախիցդ  
հանեն յայն քարաժայռ : Մօտ է երե  
կոյն , և տեղին գիտան յերեկօթս : Լու  
ցեր դու 'ի խօսիցդ , և ես սփոփեցի ըզ  
քեղ՝ սրբեալ հերուկք գլխոյս զարտասուս  
աչացս . և իջաք ապա առ ոտամբ ըլլոյն  
յերկեարդեան կաղամախիս՝ որ 'ի քա  
րաժայռն ձգելին » :

Լուաց Եւա , և ժպտեցաւ խանգաղաւ  
տարար յերեսս Ազամայ , որ այսպէս առ  
վերստին զթել պատմութեանն :

« Յառաջ խաղացաք որդեակք իմ ընդ  
կաղամախեօքս , և գտաք ընդ հովանեաւ  
նոյս փապար 'ի քարաժայռին : Տես , ա  
սոցի ես ցմայր ձեր . տես քանի զիւրու  
թիւնս մատուցանէ մեղ ընութիւնն . տես  
զայս քարանձաւ գեղեցիկ , և զաղբիւրդ  
ականակիտ կարկաջահու առ նմին : Աստ  
պատրաստեսցուք զմեր երեկորին իջա  
վանս . բայց հարկ է Եւա՝ ամբացուցանել  
զմուտդ 'ի զիշերային յարձակմանց թշնա  
մեացն : Եւ ո՞յք իցեն թշնամիքն՝ հարցանէ

Եւա ահ ընդ ահ : Եւ ոչ արդեօք միտ ե-  
 ղեր՝ ասեմ ցնա , զի հարին անէծք զամե-  
 նայն արարածս , և զի խզեցան բարեկա-  
 մութեան յօդակապք 'ի մէջ ամենայն  
 շնչաւորաց . տկարն որ 'ի նոսա՝ որս է  
 հզօրագունին : Տեսի անդ խոնարհ 'ի գաշ-  
 տի՝ զկորիւն առիւծուն պնդեալ ոխերիմ  
 մոնչմամբ զհետ ահաբեկ այծեման . աե-  
 սի թշնամութիւնս և 'ի մէջ թռչնոց 'ի  
 բարձունս երկնից : Ոչ ևս եմք տեաբք իշ-  
 խեցողք արարածոցս . բայց թէ շատ՝ նո-  
 ցին ևեթ , որոց ոյժ մերումն ոչ հանգի-  
 տաղօր : Ուրք յառաջն խտղային զմեօք՝  
 քծնիք և ընտելք , վագրն խայտաբղետ ,  
 և առիւծ երկայնաբաշ , արդ խիզախեն  
 զմեօք 'ի մռնչիւն ահեղ . կայծակունք ըս-  
 պառնալեաց հատանին յաչաց նոցա : Թէ-  
 պէտ հնար է զոմանս քաղցրութեամբ 'ի  
 մեղ յանկուցանել , իսկ 'ի բռնտղունիցն  
 ամրանալ ճարտարութեամբ մտաց , բայց  
 և այնպէս հիւսեցից ցանկապատս 'ի փշոց  
 'ի մռւտս քարայրիս : Եւ ես , ասէ Եւա ,  
 երթայց քաղել ծաղիկս և դեղ դաշտը 'ի  
 պատրաստութիւն անկողնոց , պտուղս 'ի  
 ծառոց և 'ի թփոց առ 'ի սեղան : Յայն-  
 ժամ հիւսեցի զցանկն 'ի դուռն քարան-

ձաւին . և Եւա կայր՝ ի քաղ և ՚ի կութա  
մբոց՝ լի ահեւ և հօգարկութեամբ չվրե-  
պեցուցանել զիս՝ ի տեսոյ աշացն : Դառ-  
նայ յետս , և դնէ զամենայն առաջի իմ  
՚ի մասապաբոյս դալարւոջ » :

« Բաղմեցաք յայնժամ՝ ի քարանձաւի  
անդ՝ ՚ի ծաղկանց վերայ , մատուցեալ՝ ի  
ճաշ սակաւապէտ՝ որ համեմեալ էր՝ ի  
զրոյցս զուարճալիս : Եւ ահա ամսկ երեե-  
ցաւ լժսպագին՝ խաւարել զարեգակն՝ ՚ի  
մուտս խոնարհեալ . սփուեալ տարածանի  
ահագնատէսիլ՝ զբագաթամբք մերովք ,  
և մութն տիսրագին մածանի զերեսօք երկ-  
ըի . բնութիւնն երկէր առհասարակ՝ ՚ի  
ապնասպի՝ լոիկ անձկութեամբ սպասել  
իւրում համայնաջննջ կործանման : Հողմ  
անկարծ մրկածուփ յարուցեալ յամ-  
պոյն՝ շառաչէ՝ ՚ի լեռնամէջս անդ , և տա-  
պալէ յարմատոց զանտառս . բոցք հատա-  
նէին՝ ՚ի սեաթոյր ամսպրոպացն , և կայ-  
ծակունք որոտընդոստք ճայթէին զմեօք :  
Զգողանի հարեալ մօր ձերոյ՝ խոնարհի  
անկանի զարտատրոփ լանջօքս՝ հատկլեալ  
շնչով : Գայ , ասէ , գայ դատաւորն մեր .  
որպէս զի ահեղ է նա . . . գայ սատակել  
զմեզ և զաշխարհ ամենայն՝ յաղագս իմոյ

պատուիրանազանցութեան : Ո՞վ, Աղամ  
 Ազամ... Յայս բարբառ հատաւ ձայն  
 նորա , մնաց՝ ի դովման և մածեալ զինե ,  
 Քաջալերեաց , ասեմ ցնա , սիրեցեալք  
 իմ . անկցուք՝ ի գուճս առաջի քարայրիս .  
 Երկիր պագցուք տեան որ ճեմէ ՚ի  
 թուխապս ամպոցն . առաջի հետոց նորա  
 ընթանան բոցքի և բոմբիւնք ահագինք :  
 Տէր տէր , անձառ քաղցրութեամբ աս-  
 տուածայնով կացեր իմ առաջի՝ յորժամ  
 ընդ արարչագործ ձեռամբք կերպարա-  
 նեալ բացի զաւս իմ . որպէս ահաւոր և  
 նոյն ինքն ՚ի դիմել քո առ մեզ որպէս  
 դատաւոր : Նոյնժամայն հեղաք զանձինս  
 գետնատարած առաջի այրին , գէմք դու-  
 նատեալք , ձեռք դողդոջունք մածեալք  
 զմիմեամբք՝ համբուրել զերկիր , և սպա-  
 սել երկիւղիւ մինչև ժամանեալ դատաւո-  
 րին ՚ի վերայ գագաթանց՝ գոռասցէ առ  
 մեզ ՚ի բարբառ որոտմանն . « Մեռջիք , և  
 դու երկիր ՚ի չեք գարձցիս յերեսաց  
 սրտմոռութեան իմոյ » : Ի սմին պահու-  
 երկինք ՚ի ջուր լուծանեին . բայց ոչ ևս  
 թօթափէին բոցք յամպոց , և ձայնք ո-  
 րոտմանն լսելի լինեին ՚ի հեռուստ միայն :  
 Յայնժամ համբարձեալ զդլուխ իմ ասա-

ցի . Եւա՝ անց տէր Աստուած առ մեզ +  
ոչ ևս ապականեցէ նա զերկիր , և մեք  
ոչ մեղուք այսօր + վասն զի ուր մնային  
խոստմունք իւր 'ի սատակել նորա զմեզ ,  
և 'ի մեզ զգաւակ մեր + անզեղջ է 'ի խոստ-  
մունս իւր իմաստութիւնն յաւիտենա-  
կան » :

« Դադարեցին 'ի մեզ յայնժամ ահա-  
փետք , փարատեցան ամստք , և արևն որ  
'ի մուտս՝ սփռեաց զնոքօք սքանչելի նշոյլո  
ճառագայթից + տեսարան իմն երկնային .  
իբր այն՝ յորժամ գունդք գունդք զը-  
ւարթնոց սաւառնեին յամսպս ցողագինս  
'ի վերուստ Աղինայ , և փայլ նոցա երկ-  
նային ծաւալէր բացտրձակ՝ ծիր լուսե-  
ղէն . և մէն մի յամսպոց շողայր ցոյտէր բո-  
ցանշոյլ : Այսգունակ փողփողէր յայն-  
ժամ արեմտակողմն երկնից , և դաշտա-  
վայրն տամկացեալ նոյնալէս վառ 'ի վառ .  
ամենայն երանդք գունոց՝ կենգանացայտ  
ևս փայլէն մինչև զբիթ աչաց խտալղել :  
Ծունդ կրկնեցաք բարձրելոյն անդանօր  
ընդդէմ արեւն , որ 'ի մուտս գոլով ար-  
ձակէր 'ի մեզ զվերջին ճառագայթան , և  
տօնեցաք հոգեղուարձ իմն հիացմամբ ըզ-  
բնութեան սիրալին տեսարան : Այսպէս

անց զմեօք առաջինն այն վորթորիկ : Խոկ  
 և խոկ շառագոյն կարմրութիւն երեկորին՝  
 տեղի ետ նսեմաստուեր մթութեան , և  
 լուսին եհեղ զիւր լոյս նուազ՝ ի վերայ ամ  
 պոց հերձոտելոց . յայնժամ զառաջինն  
 սկիզբն եղե մեղ զդալ՝ ի մարմնի զցուրտ  
 գիշերայնոյն , որպէս և զհասարակ աւուրբ  
 զտօթ արևուն ըստ ոչ սովորութեան :  
 Պատառեցաք զանձինս մաշկեկու՝ զոր  
 բարեգութ գատաւորին արկեալ էր զմի-  
 ջովքս յարտաքսեն զմեղ՝ ի դրախտէն ,  
 առհաւատչեայ ստոյգ՝ թէ ոչ՝ ի բաց ա-  
 րացէ՝ ի մենջ զկարեկից ձեռնառւու-  
 թիւնն՝ ի թշուառութեանս , անդ ընկողմ-  
 նեցաք յայրին՝ ի վերայ գողտրիկ ծաղ-  
 կախառն դալարեաց , սպասեալք հանգը-  
 տարարն քնոյ : Եկն սա , այլ ոչ այնպէս  
 զիւրով և քաղցրութեամբ , որպէս յա-  
 ռաջն՝ ի մերում անմեղութեան . Երկա-  
 կայութիւն մեր լի էր յայնժամ սպատկե-  
 րօք՝ միայն հեշտալեօք . և զուարթարար .  
 Խոկ՝ ի ժամուս՝ վրեպ յայնցանէ , և վո-  
 խանակ՝ անհանգստութիւն , արհաւիլք  
 և խայթոցք խղճի . յորոց և խուռն ցնորք  
 տագնապիչք՝ խօլականիք և խաւարինիք :  
 Անդորր էր զիշերս , և քուն մեր ախորժ :

սակայն որպէս աննման զուտրճալի գիշե-  
րոյն, յորում զքեզ, Եւա, ածի այն առա-  
ջին անգամ յառագաստ հովանոցին : Ծա-  
ղեկը յայնժամ զիարդ բազմաբուրեանք  
ըստ ոչ սովորութեանն . դայլայլիկը գի-  
շերախօս սոխակին որպէս գեղգեղաձայն .  
լուսին ոչ երեկը շողողեաց այնպէս սըր-  
բափայլ, որպէս յորժամ Եղեմ տօներ  
առհասարակ զմեր հարսանեաց զառաջին  
գիշեր » :

« Բայց զի՞ է ինձ 'ի ժամօւս թարթա-  
փել զպատկերօքս՝ որ զարթուցիչն են  
թմրութեան ցաւոցս : Ամբառնայր այնու-  
հետեւ արեգակն առաւօտուն ըմպել զգե-  
ղափայլ ասրափ ցողոյն յերեսաց դաշտա-  
վայրացն՝ յորժամ բացան արտեանունք  
մեր . թուչունք սակաւ ուրեք մենաւորք  
երգեին յոստս ծասոցն . զի գեռ չուներ  
երկիր զայլ կենդանիս, բայց զնոսա միայն  
որք յետ անիծից փախեան յԵղեմայ .  
վասն զի գրախտի տեառն չէր արժան տե-  
սանել յինքեան զպատկանութիւն : Ելաք  
առաջի քարանձաւին երկիր պարանել  
տեառն Աստուծոյ . և ապա ասեմ ցԵւա՝  
անցցուք յառաջ ևս . 'ի գիտել իմում  
շուրջ զանբաւութիւն կողմանցս՝ տեսա-

նեմ զի իշխանութիւն է մեզ 'ի բազմաց  
 անտի ընտրել բնակետով՝ որոյ բերք արմը-  
 տեաց առատագոյնք իցեն 'ի դարման, և  
 գեղեցկութիւնք բազմազանք առ 'ի տե-  
 սիլ աչաց : Տեսանես, ասեմ, զվարկու սո-  
 ղոսկեալ 'ի դաշտազուարձ հովախոր ·  
 բլուրն որ 'ի նմա՝ երեւցուցանէ յուս իւր  
 դաշտագեղ դարաստան ինչ տնկախիտ :  
 Զհետ եկիցքո սիրելիդ իմ՝ ուր և տար-  
 ցես զիս, ասէ Եւա՝ սեղմետլ զձեռն իմ ·  
 և գնացուք զՃանապարհ մեր 'ի բլուրն  
 կոյս: Ի սմին պահու Ետես Եւա 'ի կողման  
 ուրեք թռչուն ինչ, որ տագնապտւ իմն  
 մնչեալողբաձայն՝ Հախը առնոյր ընդ օդս  
 հուալ առ հուալ · և ապա դիզացեալ փետ-  
 րովք անկանէր անզօր, դադար առնոյր 'ի  
 մանրատունկ ինչ: Մօտ գնայ սա, և տե-  
 սանէ միւս ևս թռչնակ յորսայս 'ի դա-  
 շտարւո՞ անշարժ առաջի միւսոյն որ սը-  
 գայրն զնա: Զննէ Եւա ընդ երկար կքեալ  
 զնովաւ · 'ի վեր առնու զայն 'ի գետնոյն  
 զգաստացուցանել որպէս թէ 'ի քնոյ,  
 բայց 'ի զուր: Սա ոչ զարթնու՝ ասէ  
 սոսկմամբ, և զնէ զայն յերկիր դողդո-  
 ջուն ձեռամբ · սա ոչ ևս զարթիցէ: Յայս  
 բան լուծանի նա յարտասուս: Աւազ,

յարէ զկնի՝ զբանսն դարձուցեալ առ ող-  
բերգակ Ճնճղուկն . թերես սա իցէ քո  
վարուժան : Ես ինքն եմ, ես ինքնին տա-  
ռապեալս կին՝ որ ձգեցի անէծս և աղէտս  
՚ի վերայ երկրի , ՚ի վերայ ամենայն արա-  
րածոց . ես ինքն՝ որ տամ քեզ վատագնիւ-  
անմեղ թռչնիկ » :

« Աճեցին տրտասուք իւր բարձր կա-  
կանաւ , և դարձեալ յիս կողմն՝ ասէ .  
զինչ արկած իցէ այս + զինչ արկած ստր-  
ստիելի . ամենայն զգայութիւն պակա-  
սեալ՝ի սմա + ամենայն անդամք կարկա-  
մեալք՝ ոչ ևս պաշտեն զգործ իւրեանց :  
Խօսեաց Ադամ , մի արդեօք սա իցէ  
մահն . . . մի արդեօք ասկականութիւնն :  
Ո՞հ , ո՞հ + գողումն ունի զոսկերս ամե-  
նայն . եթէ սա իցէ մահն , եթէ այսպի-  
սի՝ որ մեզն սպառնացաւ , բարէ , զիարդ  
սարսափելի իցէ այն : Արդ եթէ սա՝ այս  
պէս մեկնեսցէ զիս ՚ի քէն , և զքեզ . . .  
ո՞հ . . . Ադամ , ահա ստրսամ . . . ոչ ևս  
ժուժամ : Յայնժամ արձակէ թառաչս եր-  
կայնս , և լի անհնարին ցաւովք տրտմու-  
թեան . թալացեալ խոնարհի յերկիր :  
Դիրկս արկանեմ ողբովք՝ ողբանուերս սի-  
րելոյն իմոյ՝ ասելով . « Միշաւելուր ՚ի

վիշտու քո և 'ի ցաւս , անպատճեացուք  
աներկմիտ յուսուվ առ նա՝ որ անբաւ ի-  
մաստութեամբ դարմանէ զամենայն . և  
յորժամ մէգ և խաւար անհասութեան  
արկեալ զիւրեաւ՝ նստի 'ի բարձունս 'ի  
բեմ դատողական , կոչէ յաջմէ իւր և  
յահեկէ զողորմութիւն և զմարդասիրու-  
թիւն : Ընդէլ իցէ երևակայութեանս ա-  
հաւորագոյն գործել զհանդերձելոցն ա-  
զլէտս , և տիրականիս մտաց ոչ յայլ ինչ  
հայել բայց 'ի մեր եղկութիւն : Այսպէս  
կոյք զկուրայն անտես արարեալ զառհա-  
ւատչիւ խմաստութեան նորա և բարու-  
թեան , խորագոյն ևս սուզանեմք զան-  
ձինս 'ի մերում թշուառութեան : Որ  
զինչ և սահմանեաց մեզ աջ նորա , ան-  
ստհման խմաստութեամբ անօրինեաց զտ-  
մենայն , և անբաւ բարութեամբ . հանգա-  
ընթասցուք աներկեան ընդ առաջնորդու-  
թեամբ նորա , և օրհնեսցուք զնա խոստո-  
վանեալ երկիւզած մտօք զանհասութիւն  
խորհրդոցն ծածկեցելոց » :

« Դարձեալ յուղի անկաք 'ի բլուրն  
կոյս . անցաք ընդ բերրի ծառատունկո՞  
որ պսակեին զստորոտ նորա . յորոյ 'ի  
գագաթան 'ի մէջ մանրասնկոց մրդարե-

բաց՝ բարձրանայր եղեին ամբարձուղէշ՝  
 և ձգտեալ տարածանէր ստորեւ զովու-  
 թիւն ինչ հեշտալի ։ ընդ հովանեաւն սա-  
 հէր աղբիւր վտակացեալ ընդ մէջ ծաղ-  
 կանց փթթեցելոց ։ Երեկո աստի սահ-  
 ման ինչ լոյնածաւալ, յորոյ ոչ ժամա-  
 նէր ակն՝ի ծիր եղերացն պատեալ՝ի մըզ-  
 տագոյն օդ ։ Ահա՝ ասացի յայնժամ, ըս-  
 տուեր ինչ դրախտին՝ բնակարան անդորր,  
 զդրախտն զայն ոչ ուրեք դացուք ։ Ըն-  
 կալ զմեզ ընդ ամրածածուկ հովանեաւդ,  
 եղեին երկնուղէշ ։ և դուք ծառք աղցի  
 աղցիք՝ ոչ անշնորհակալու ձեռօք կթե-  
 ցից երբեք դքերս պաղոցդ ։ եղիցին այնք  
 տրիտուրք իմոյս խնամոտ մշակութեան ։  
 Ամենակալ տէր, հայեաց գթութեամք  
 յերկնից տթոռոցդ՝ի մեր բնակութիւն ։  
 Ըւր ձայնից պաղատանացս, սրտեռանդն  
 պաշտամանց և գոհութեան, որ յայսմ  
 հետէ հանապազօր և յամենայն ժամու  
 համբարձցին առ քեզ՝ի միջոյ սաղարթա-  
 խիտ հովանեաց այսոցիկ ։ Քանզի աստ  
 եղիցի մեզ քրտամիք երեսաց ուտելզհաց  
 մեր ։ աստ եղիցի քեզ Եւա ընդ հովա-  
 նեօքս որդիս ծնանել երկամբք ցաւոց ։  
 աստի եղիցի սփորիլ թոռանց մերոց ընդ

Երեսս ամենայն երկրի . և ընդ ծառովքս  
գտցէ զմեզ մահն՝ ոտն առ ոտն յառաջ  
խաղացեալ առ մեզ : Խոնարհեաց հայեաց  
տէր աէր , հայեաց գթութեամբ 'ի բնա-  
կարան մեզուցելոցս » :

« Ազօթէր և մայր ձեր մօտ առ իս ,  
աչք իւր արաասուաթուրմք չերմեռանդն  
համբարձեալք յերկինս : Յայնժամ ձեռն  
'ի գործ արարի շինել խրճիթ ընդ հովա-  
նեաւ եղենոյն . վարսեցի 'ի գետին շերտս  
շուրջանակաւ , զորոց զմիջոց հիւսեցի որ-  
մաձև մորչ ոստովլք դալարւովլք : Իսկ Եւա  
յածէր աստ և անդ . էր զի ածէր զա-  
ռուակ աղբերն յուոդումն ծաղկանց . էր  
զի յանտառացեալ թփոցն՝ կողմանոցս  
կարգէր . և էր զի զգլխակոր զաննեցուկ  
ծաղիկս՝ գաւազանօք սկնդէր , և կամ  
զհասեալսն 'ի պաղոց կթէր . այն օր եղե-  
առաջինն՝ յորում կերաք զհաց մեր քըր-  
տամբք երեսաց : Երթայի յափն գետոյն  
քաղել ծղօտս եղեգանց 'ի յարկ խրճթիս ,  
և ահա տեսանեմ ոչխարս հինդ՝ սպի-  
տակս որպէս զփոքրիկ ամպս զմիջաւուրբ ,  
և խոյակ մի 'ի նոսա արօտական առ գե-  
տէղերբն : Մերձեցայ 'ի նոսա յուշիկ՝ տե-  
սանել եթէ փախիցեն յինէն որպէս վագրն

և ասիւծ, որ յառաջն քծնելին զոտիւքս, բայց ոչ փախեան։ վարեցի զնոսա առաջի իմ եղեգամբ՝ ի ստորոտ բլրոյն յարօտ դաւարեացն բարձրացելոց։ ուր Եւայի զարարովք պատաղեալ՝ ի կամարաձև յօրինել հովանոց ինչ՝ ի բարձրակախ ոստոց ծառատնկոց, չետես՝ ի սկզբան անդ ըդհօտն փոքրիկ, մինչև մայելսոցաւ ազդեաց նմա։ Դարձոյց նա զգլուխն՝ ետես զայն զիւրեւ։ Եթող խնդութեամբ պրծանիլ՝ ի ձեռաց զթեքեալ ճիւզս թփոցն, զառաջնն՝ ահ կալու զնաւ, զտեզի առնու լոիկ, այլ անդէն դոչեաց ցնծութեամբ։ վաշ վաշ, հեղիկ են սոքաւ բարեհամբոյլք որ սկզբ՝ ի դրախտին։ Բարեաւ եկիք, մնացէք առ մեզ սիրուն ընկերակիցք, այս աղաչեմ, բնակեցէք ընդ մեզ, եւ աստ արօտ բարձրացեալ, և ճարակ սիզաւէտ, և աղբիւր ականակիտ։ Ո՛րպէս քաղցրասցի մեզ կայտուալ ձեր զմեօք՝ ի մարմանդս՝ մինչդեռ պատաղեալս եմք՝ ի խնամս ծառոց և տնկոց։ Զբանան ասաց, և փայփայէր ձեռօք զասրաբոյս թիկունս նոցա»։

«Յայսմ ժամանակի կատարեցաւ հիւզն, նստաք առ մուտս նորա՝ ի հովի ապշու-

Թիւն խորհրդոց կալև կատ ուներ զմիտս  
 և զլեզուս . և ահա մայր ձեր խզեաց ըզ  
 ըսութիւնն բանիւս . Ո՛րպէս գեղեցիկ է  
 վայրս և ամենասպան . և բլուրս զիարդ  
 բազմատունկ զարդարեալ . բայց իշխա-  
 նութիւն է մեզ՝ ընտրութիւն ևս տոնել  
 տնկոց պարագայ վայրացս , փոխադրել  
 զայնոսիկ և անկել' ի բլիս . որովահ նը-  
 մանեսցի դրախտին , որպէս դրախտն նը-  
 մանէր երկնից՝ իբրև ստուեր առ Ճշմար-  
 տութիւն , ըստ որում պատմէին այցելու  
 մեր հրեշտակք : Ո՛վ . զիարդ գեղեցիկ էր  
 տօնելին այն սահման . բնութիւնն համօ-  
 րէն հեղոյր անդամօր անխնայ զքաղցրա-  
 գոյն զիւր ազգմունս . անդ ամենայն ինչ  
 ուռճացեալ աճեցուն՝ խիտ առ խիտ և  
 գեղեցկագոյն պայծառութեամբ . ազգք  
 ազգք ծաղկանց գունակ վայելըութեամբ ,  
 թուփք և ծառատունկք խայծեալք 'ի  
 պտուղ և 'ի ծաղիկ միանգամայն . սաղար-  
 թագեղ ծառոց տեսակք անհամարք ձըկ-  
 տէին անդէն զիւրեանց հովանիս . տեսա-  
 րանք անբաւք՝ ամենայնն շքեղ , ամենայնն  
 գեղածիծաղ : Բարէ . յայսցանէ յամե-  
 նեցունց զմին 'ի հազարաց տեսանեմք առ  
 տէն զմեօք . դուցէ ոչ ևս զօրէ հող անի-

ծակուռ առելի քանի զայս մատուցանել .  
և կամ խնայութեամբ իմն զայնոսիկ մա-  
տակարարէ , զանազանս առ զանազան  
բաժինս երկրի : Ո՞վ , Աղամ . տեսի ես  
այժմ իսկ՝ որպէս մահ և ապականու-  
թիւն , զի անշուշտ մի և նոյն են սոքա ,  
թագաւորեն 'ի վերայ համօրէն բնու-  
թեան . տեսի պառւղս անկեալս 'ի գետին  
և փտեալ , ծաղիկո թառամեալս 'ի ծղօտս  
իւրեանց . տեսի և ծառատունկս գոսա-  
ցեալս՝ կապտեալս թաղծագին 'ի զար-  
դուէ տերեւոյն և մրգաց : Բայց առ փտե-  
լովք վերնծիւղեալ են և այլք մատաղա-  
տունկք . պառւղք նորք փոխանակեն զան-  
ցեալսն . և սերմանիք զոր սփռեն յերկիր  
ծաղիկք թարշամեալք՝ ծաղկեցուցանեն  
առ նորօք զիւրեանց զարմ : Այսպէս է  
Աղամ . այսպէս թառամեսցուք երբեմն  
և մէք , յորոց ծաղկեսցին աստանօր զմեօք  
զաւակք » :

« Լոեաց նա . իսկ իմ յոդի խոցեալ կա-  
րեվէր՝ բացի զբերան . բարէ , անձկալիդ  
իմ . զիս այլ հոգ՝ այլ տագնապ մղձկեցու-  
ցանէ . զիարդ թեթե էր առ ինեւ , զիարդ  
մոտադիւր ախորժէի մոռացումն առնել  
բարեբաստութեանցս բոլորից զոր կորու-

սի : Բայց այս է որ զիս կտտե՛ այս . . .  
 իմ կորուստ դառնագոյն . աքսորեցայ  
 յերջանիկն 'ի վայրաց , յորում խոնար-  
 հեր Աստուած զգնալ 'ի տես աչտց երևե-  
 լի . յորում սքօղեալ զպայծառութիւն  
 աստուածութեանն՝ զգնայը 'ի մայրիս ան-  
 տառացն . յորժամ լոռութիւն ինչ պատկա-  
 ռատեսակ հոչակեր զաստուածեղէն զիւր  
 գալսւստ : Աւաղ . համարձակութիւն էր  
 ինձ անդէն խօսել ընդ նմա ստէպ գեանա-  
 տարած՝ խորին խոնարհութեամբ . և ամե-  
 նակալն քաղցրութեամբ ունկն դներ բա-  
 նից իւրումն գաստակերտի , պատասխա-  
 նի ևս առներ : Բիւր աւաղ . զայս ձիր հո-  
 գեղինացն մաքրոց՝ մեք կորուսաք : Միթէ  
 շրջեսցի՞ այլ ևս սուրբն սրբոց 'ի մէջ մեղա-  
 ւորաց . միթէ բնակեսցէ՞ յերկիր իւր տ-  
 նիծապարտ : Գիտեմ զի ակնարկէնա կա-  
 րեկցաբար 'ի մեզ յաթուոցն բարձրու-  
 թեան , և շնորհք ողորմութեան նորա 'ի  
 վեր են քան զամենայն ակնկալութիւն  
 մեր 'ի թշուառութեանս : Թուի թէ՛ և  
 կեսցեն և աստ հրեշտակք իւր առ մեզ  
 պատգամաբելք , բայց յաներեսոյթո և  
 մերկք 'ի ճառագայթից . և յետ պատգա-  
 մացն դարձցին նոյնժամայն 'ի տեղւոջէս

ապականութեան . զի անարժան էմք  
կենցազակից լինելոգւոց՝ որ ոչի բարկա-  
ցուցին զԱստուած » :

« Այսպիսի էին զբոյցք մեր 'ի ժաման  
նստեալ առ միմեամբք . և մինչ կայտքն  
յապշութիւն խորհրդոց ըմբռնեալք , և  
տիրագին տկնկորեալք 'ի գետին , ահա  
յանկարծակի ամազ ինչ լուսաւոր էջ յեր-  
կիր՝ խարիսխնորա հաստատեալ 'ի բլրին .  
պատառեցաւ ամազն , և ել 'ի միջոց անտի  
ձառագայթարձակ կերպարան ինչ երկ-  
նային՝ ժակիտ ունելով հրեշտակական : Ի  
նոյն վաղեցաք ընդ առաջ խոնարհ երկըր-  
պագութեամբ . և անդէն բարբառեցաւ  
նուիրակն երկնառաք : — « Որոյ յերկինս  
է աթու իւր , հասին բանկք ձեր յականջա  
նորա . Երթ առէ ցիս , և պատմեա վըշ-  
տագնելոցն : Զիս ոչ պարփակեն ոլորտք  
երկնից . լի է ինև ամենայն զոր ձեռք իմ  
արարին : Ո՞տայ արեգականդ ծագել զօր  
ամենայն , լուսաւորացդ ոչ կասել յըն-  
թացից : Ո՞է որ տայ երկրի պազաբերել ,  
տունջեան և գիշերոյ զմիմեանս յաջոր-  
դել : Ո՞վ այն՝ որ պահէ զկենդանութիւն  
և զըունչ արարածոց . և ո՞ զքեզ գլխովին՝  
չանկանել յապականութիւն : Ես եմ ա-

սէ տէր , ես ինքն մօտ առ քեզ . ամենայն խորհուրդք քո գաղանածածուկք՝ մեր կապարանոց կան առաջի իմ » :

« Եւ եղե յայնժամ զինև սօսափիւն ինչ ասառուածեղէն , և պայծառութիւն շըրջասփիւռ՝ բակ ունէր զանձամբս . համբարձեալ 'ի վեր ապա զշրառւցեալ աչս իմ՝ գոչեմ . — « Ո՞րպէս զի անհաս են ինամբ բարձրելոյն . ակնարկէ խոնարհ 'ի մեր թշուառութիւն , և առաքէ զհրեշտակ իւր առ մեղուցեալն : Բարե . ամաչեմյերեսաց քոց , հոգիդ լուսեղէն . ոչ ժտիմ զակն ամբառնալ առ քեզ . բայց ներեա աղաչեմ պատմել յունկն քո զանձկութիւն մառախլապատ խորհըրդոց : Այո՝ գիտեմյանձին , տեսանեմ խորհըրդոյ ակամբ և սխրանամ , զլինել արարչին Առոււծոյ համատարած յարարմծս իւր : Զիարդ լրբեսցի անձն մեղսաթաթաւ պահանջել 'ի գերամաքուր էութենէն՝ մօտագոյն ևս երևեցուցանել զերեսս իւր : Բայց երկնչիմ , գուցէ առ յասպայս 'ի բազմանալ մարդկանն՝ վատթարացեալ և ևս թշուառացին , և ծանօթութիւն գերաբուն գոյութեանն աղօտասցի 'ի նոսա , և իսպառ խաւարեսցի :

Վասն զի որպէս եսն անկայ , մարթ է ան-  
կանել և նոցա , և խորագոյնս : Յաւուր  
յորում ոչ ես եղէց ընդ նոսա՝ վկայու-  
թիւն դնել բարութեան նորա , ասլաքէն  
և փոքրագոյնն 'ի միջատս՝ քարոզեսցէ  
զայն յայտնաբարբառ . բայց ձայն բնու-  
թեանն ոչ արդեօք ծանրալուր եղիցի յա-  
կանջս խլացելոցն , յորժամ այսպէս թա-  
քուսցէ Աստուած զերեսս իւր 'ի մարդ-  
կանէ : Ո՛վ . այս խորհուրդք մտաց՝ բար-  
դին ծանրանան զինև որպէս զկոհակս լե-  
րանց » :

« Նախահայրդ ազգի մարդկան , պա-  
տասխանի ետինձ քաղցրութեամբ զուար-  
թունն աստուածառաք : « Աա՝ յորում ա-  
մենայն կեայ և շնչէ յոլորտս աինզերաց ,  
ոչ թողցե զզաւակ քո : Այո՝ բազում այն  
են , զի մեղք նոցա ելցեն առ նա դոչել  
զվրէժխնդրութիւն , մինչեւ առնուլ նմա  
'ի ձեռին զիւր շանթ կայծականց , և  
յայտնել զինքն դատաստանաւ , որով և  
մեղաւորք զահի հարեալ թաւալեսցին 'ի  
հող գետնամած՝ ասելով » . Ահաւասիկ  
Աստուած ահաւոր : « Բայց յոլովագոյն  
ևս յայտնեսցէ զանձն ողորմութեամբ  
իւրով : Յորժամ դարձյն նոքա 'ի ձա-

Նապարհաց իւրեանց չարաց , կոչեսցէ ըզ-  
նոսա բարութեամբ իւրով . յարուսցէ 'ի  
նոսա խմաստունս լուսաւորել զմիտս նո-  
ցա . դարձցին յետս յանկոխ գնացից ան-  
մտութեան և ապականութեան , և գնաս-  
ցեն 'ի շաւիղս ուղիղ բանին և արդարու-  
թեան : Բազում անդամ առաքեսցէ մար-  
դարէս՝ յայտնել նոցա զարդարութիւն ,  
կամ զշնորհս բարձրելոցն զկնքեալսն 'ի  
գանձ հանդերձելոցն բացականաց . որ-  
պէս զի տեսցեն նոքա թէ յաւիտենական  
խմաստութիւնն է անօրէն՝ անքնին կար-  
դաց տեսչութեանն : Խօսեսցի ընդ նոսա  
ստէպ և 'ի ձեռն հրեշտակաց . ստէպ ևս  
արուեստիւք ևսքանչելեօք . եղիցին ևս ար-  
դարք : առ որս իջէ ինքնին գլխովին յա-  
թոռոցն աստուածայնոց , մինչև 'ի վախ-  
ճանի յայտնեսցի ապա խորհուրդն մեծ՝  
փրկութեան ազգի մարդկան , և զաւակ  
կնոցն ջաղխեսցէ զգլուխ օձին » :

« Լոեաց հրեշտակն . ժպիտ իւր բա-  
րեհամբոյր համարձակեցոյց զիս միւսան-  
գամ 'ի հարցուած : Ո՞ բարեկամդ երկ-  
նաւոր , եթէ օրէն իցէ մեղուցելոցս՝ յայս  
անուն զքեզ անուանել . և զիարդ ոչ . մի-  
թէ ատեսցեն հրեշտակք զիա՝ զոր ոչն ա-

տէ յաւիտենականն . և որում անսահման գթութիւն տեառն՝ այսպէս յայտնէ զինքն հրաշտափառապէս , մինչև ոչ երկնից բաւել բացաձայնել զիւր հիացումն , և ոչ գետնաքարշ ոգւոյ զիւրն թոթովելգոհարանութիւն : Միթէ իցէ ինչ բարեկամդ երկնաւոր՝ եթէ համարձակեցայց հարցանել զքեզ . չիցէ քեզ արդեօք հրաման մերկանալ առաջի իմ զգաղտնութիւն խորհրդադոյն՝ ի հրաշտափառ մթութենէն՝ որով զգածեալի է : Զինչ իցէ խոստումն մեծ՝ « Զաւակ կնոջն ջաղլսեսցէ զգլուխ օձին » . և զինչ անէծքն առ մարդն մեղուցեալ . « Մահու մեռցիս » :

« Պատասխանի ետ զուարթունն . Որ ինչ հրամայեցաւն ինձ մերկանալ առ քեզ , զայն միայն ոչ թագուցից՝ ի քէն : Արդ ՚ի միտ առ , Ադամ . ՚ի վայրկենի յորումյանցեար՝ գոչեաց ձայնն աստուածեղէն յաթուոց անտի . « Մեղաւ մարդն , մեռցի » : Եւ ահա յանկարծուստ իմն մթութիւն անհնարին պատեաց զաթուով յաւիտենականին , և եղեւ լոռութիւն խոր և սոսկալի՝ ծագաց ՚ի ծագս երկնից . բայց ոչ եկաց մնաց այն ընդ երկար . փարատեցաւ յաթուոցն խաւարն թանձրամած : Ոչ

Երբէք այնպէս յայտնեալ էր Աստուծոյ  
զփառսիւր առ հրեշտակս , բայց յորժամ  
ել յաթուոյն՝ ասել ցարեգակն և ցաս-  
աեղս « Եղիջիք » . և յորժամ արարչա-  
գործ իւր ձայն ընթանայր ընդ անչափու-  
թիւն դատարկութեան : Զայն իւր ահե-  
ղագոչ որոտաց ընդ ոլորտս երկնից . « Ոչ  
դարձուցից զաչս իմ 'ի մեղուցելոյն . վր-  
կայեսցէ երկիր ողորմութեան իմում որոյ  
ոչ գոյ բաւ : Զաւակ կնոջն ջաղիսեսցէ ըզ-  
գլուխ օձին . մի դժոխք ուրախ եղիցին  
ընդ յաղթութիւն իւրեանց , և մահ կո-  
րուսցէ զիւր աւար : Երկինք , առնեցէք  
զտօն » :

« Այսպէս ասաց յաւիտենականն : Շլա-  
ցուցիչ պայծառութիւն նորա զգետնէր  
արդեօք և զպեան հրեշտակաց , թէ ոչ  
քող անգայտ՝ առժամայն արկեալ զաթո-  
ռուին մեղմէր զանչափութիւն լուսոյն :  
Տօնեցին Երկինք զմեծ խորհուրդ զանբաւ  
շնորհաց՝ զայն օր ողջոյն երկնային : Այլ  
թէ որովք զարմանալէօք հաշառութիւն  
գործիցի Աստուծոյ ընդ մեղուցելոյն , ա-  
հա այդ իսկ է խորհուրդն մեծ՝ խաւարաւ  
քողարկեալ յաջոց հրեշտակապետին  
անդամ : Մէք զիսեմք . հրաման է զիտէլ

և քեզ . կորոյս մահ զիւր կարողութիւն .  
սա 'ի կապանաց արձակեսցէ զհոգին ա-  
նեղծական . դատակնիք անիծիցն 'ի հող  
դարձուսցէ զմարմինն՝ ուստի առաւ . իսկ  
հոգին ելցէ 'ի վեր երջանկանալ որպես  
զմեզ անվախճան : Եւ արդ՝ լուր Ադամ  
զպատգամն տեառն . — « Քաւիչ եղեց  
քեզ և զաւակի քում . այս առ յինէն  
նշան ընդ իս և ընդ քեզ , որով յիշե-  
ցից զիսոստումն մեծ : Ծինեա գու ինձ  
սեղան 'ի վերայ բլրոյս այսմիկ . ամի ամի՝  
յաւուր յորում խոստացայ քեզ զայդ՝  
իջցէ հուր յերկնից 'ի վերայ սեղանոյն ,  
ուտել զգառն մատաղ զոր հանցես ինձ  
յողջակեզ : — « Ահաւասիկ յայտնեցի  
քեզ զիսորհուրդն՝ ըստ չափու հրամանին  
եղելց առ 'ի գիտութիւն հողեղինացդ :  
Առ այսուիկ հրամայեցայ 'ի բարձրելոյն՝  
միւս ևս բան 'ի ցուցակութիւն ածել  
ձեզ , մինչեւ է իմ մեկնեալ առ 'ի ձէնջ .  
իբրև զի ոչ միայնակ բնակեք դուք աստա-  
նօր . և զի յերկրիդ այդմիկ թէպէտ և ա-  
նիծեալ , հոգիք սրբամաքուրք բնակակից  
Են ձեզ , որոց հրամայեաց յաւիտենա-  
կանն հսկել առ 'ի պաշտամնութիւն ձեր  
և 'ի պահպանութիւն » :

« Անգեն և անդ մատեաւ զուարթունն ,  
մերձեցաւ յաջս մեր և բացան : Բայց ո՞ր  
բանք բաւականք 'ի պատմել զգեղեցկու-  
թիւն հրաշագեղ կերպարանացն . տեսաք  
զերկնային մանկտի՝ անհամար 'ի բազմու-  
թենէ խոնեալ սփռեալ ընդ վայրն ընդ  
ամենայն . գեղեցիկք քան զԵւա , յորժամ  
նորաստեղծեալ սորա՝ ել 'ի ձեռաց յա-  
ւիտենականին , և ախորժալուր ձայնիւն  
զարթոյց զիս առ իւրն սիրապատար ըն-  
կերութիւն : Ոմանք հրաման տայինքաղց-  
րիկ գոլոշեաց՝ ելանել 'ի ծոցոյ երկրի ,  
զորս և 'ի վեր ամբառնային 'ի թես իւ-  
րեանց հոլաթեեան՝ վայրաբերել զայնս 'ի  
ցող անուշակ և յանձրե զովարար : Այլք  
հանգչեին առ կարկաջասահ վտակօք ,  
հսկեալզե մի ցամաքեսցի ակն աղբեր , և  
պակասեսցի բուսոց՝ սնունդ իւրեանց խո-  
նաւական : Կէսք ցիրեցան 'ի դաշտավայ-  
րին՝ վերակտցու եին պտղոցն աճելու-  
թեան . և կամ զնորափթիթ ծաղիկսն նը-  
կարէին յերփն երփն երանգոց , 'ի շառա-  
գոյն , 'ի ծիրանի և յերկնագոյն . այլ և  
շնչեին 'ի նոսա զըունչ իւրեանց առ 'ի  
բուրել նոցա զհոտ անուշութեան . բա-  
զում ևս այն էր՝ որ թեածէին յազգս

յաղգս դործոց 'ի ծմակս անտառաց : Ի  
բաբախել գեղանշոյլ թեոց նոցա ելանէին  
սողոխք քաղցրաշունչք , որք հեղեկ շըր-  
շէին ընդ վարսագեղ հովանիս , կամքե-  
րէին ախորժաբար զգագաթամբք ծաղ-  
կանց , և երթային ապա զովանալ զա-  
փամբք թիւրաթեք վուակաց , կամ գեղա-  
ծածան լճակաց : Ոմանք ևս 'ի հոգեղի-  
նաց հանգուցեալք 'ի վաստակոց՝ նստէին  
դաս առ դաս ընդ հովանեաւ , երգէին  
յոսկի սաղմոսարան օրհնութիւնս բարձ-  
րելոյն , նուագ անլսելի 'ի լսելիս մահկա-  
նացուաց : Ըատք ևս Ճեմ առնուին 'ի մե-  
րում իսկ 'ի բլի . կամ բաղմէին ընդ աս-  
ոլընջական շքով հովանոցիս , և հայէին 'ի  
մեղ ստէպ երկնային իմն մտերմութեամբ :  
Այլիսկ և իսկ ձգեցաւ զաջօքս վերստին  
բնաւոր իւր առագաստ , և հրաշալին այն  
տեսարան եղե 'ի մէնջ աներևոյթ » :

« Սոքա են՝ ասէր յմեղ հրեշտակն , ո-  
գիք պահապանք աշխարհի : Ի բնութեան  
իրաց անբաւ են գեղեցկութիւնք և սքան-  
չելիք վսեմագոյնք , զոր անհնար է զգայա-  
րանօք ճաշակել մահկանացուաց . բայց  
կամք են արարչին , զի ճաշակեսցէն մտա-  
ւոր եակք զիւրաքանչիւր դեղեցկութիւն

իւրոց արարածոց . և այս զարմանալվք 'ի  
 ձերոց ծածկեալք յաջաց յափշտակումն  
 գործեն և հիացումն անթիւ զարմիցն հո-  
 գեղինաց : Կարգեալ ևն սոքա՝ օժանդա-  
 կել բնութեան 'ի թագուն իւր արուես-  
 տանոց , 'ի յառաջքերութիւն բազմադէմ  
 գործոյից ըստ յաւէժադիր օրինացն աս-  
 տուածեղինաց : Են դարձեալ վերակա-  
 ցուք մարգկան 'ի պաշտպանութիւն և 'ի  
 դիտողութիւն գործոց նոցա , և ստեա 'ի  
 բաց դարձուցանեն 'ի նոցանէ զարկածս  
 չարեաց սպառնացելոց յանգետս : Ընթե-  
 րակայ են յամենայն 'ի շաւիզս կենաց նո-  
 ցա 'ի ծամածուռ երեւալս . և յառ երեսս  
 չարեացն՝ հանեն բարի ինչ յօդուտ նո-  
 ցա . անբարբառ վկայ են սոքա քոյոց  
 առանին զուարձութեանց , և ընկերեն  
 գաղտնածածուկ գործոցդ՝ 'ի ժակիտ հա-  
 ւանութեան , կամ խեթիւ աչաց դժդիմու-  
 թեան : Սոքօք օրհնեսցէ տէր Արտուած  
 զսահմանս լիութեամբ տոհմականաց .  
 սոքօք բազում անգամ ածցէ սովէ չարիս  
 'ի վերայ ազգաց խոտորելոց 'ի նմանէ ,  
 յորժամ հաճեսցի դարձուցանել զնոսա-  
 տու ինքն 'ի ձայն խրատու պատուհա-  
 սից :

« Իբրև կատարեաց Հրեշտակն խօսել  
ընդ մեզ զայս ամենայն՝ գորովական ըն-  
տանութեամբ, եմուտ անդրէն յամագ իւր  
լուսաւոր • և մեք անկաք գետնատարած  
արտասուախառն, լի անձառելի իմն յա-  
փըշտակութեամբ 'ի վերայ խնամոց ան-  
բաւ մարգարիտութեանն, տղայսբանել  
առ յաւիտենականն զմեր առ նա խոստո-  
վանութիւն և զդոհութիւն » :

« Սոյնհետայն շինեցի սեղան՝ ի գլուխ  
բլրոյն, և յայնմհետէ գործ եղե մօր ձե-  
րոյ՝ յօրինել շուրջանակի զնմանութիւն  
ինչ գրախատի 'ի սրբավայր հովանեսջ անդ:  
Զոր միանգամ գտանէր 'ի ծաղկաբեր  
տնկոց 'ի մարգարօտս և յեմակս բլրոյն,  
առեալ տնկէր զայնոսիկ շուրջ զսեղանովն,  
և արբուցանէր ընդ այդն և ընդ երեկս  
յատակաբուզն ջրով աղբերն՝ որ խոխոջէր  
անդէն, ածեալ զնոյն ընդ թիւրաթէք ա-  
ռուակս : « Դուք հոգիք պահապանք որ  
զինեւ թեապարէք, ասէր նա յայնժամ,  
դուք կատարես զիք զիմս ձեռակերտ • ա-  
ռանց ձերոյ սատարութեան՝ ի նանիր Են  
վաստակք ձեռացս : Տուք ծաղկանցս  
փթթել գեղեցկագոյն ևս քան զոր 'ի  
բնի իւրեանց • զի տեղիս սրբեցաւ տեառն

Աստուծոյ » : — Խակ ես , որդեակք իմ ,  
անկեցի յետոյ զայս մեծ շրջանակ ծառոց  
որ պատի զսեղանովս՝ արկեալ զսովաւ  
հովանի նուիրական խաղաղութեան » :

« Անց զմեօք ամառն տօթագին՝ 'ի լի-  
նել մեր զգործովք և զարարովքս . ապա  
և աշունն պսակեալ դուներանգ պտղովք՝  
խոնարհէր յիւր կատարած . հողմք ան-  
համբոյըք փոխանակէին զկնի , և լերինք  
ծածկէին մառախլապատ : Հայիմք սրտցա-  
ւութեամբ 'ի բնութիւն արարածոց այս-  
պէս 'ի սուգ համակեալ , և գիտէաք ոչ  
թէ հարկ էր ոգեսպառ հողոյն յետ վաս-  
տակաբեկն լինելոյ առ 'ի բարեգործել ,  
կազդուրիլ միւսանգամ հանգստեամբ ձը-  
մերայնոյն . զի յառաջ քան զանէծոն՝ էր  
տեսանել զգարուն ծաղկափթիթ , զա-  
մառն և զաշուն պտղաւէտ՝ միմեանց ա-  
ջակցեալ , միօրինակ միշտ գեղածիծաղ ,  
միշտ առընթերակայ : Զայսու ժամանա-  
կաւ սուգ բնութեանն օր քան զօր աճէր .  
գոսանային ծաղիկք 'ի ցօղունս իւրեանց .  
սակաւք միայն գեռ ծաղկէին ուրեք ու-  
րեք 'ի հովանի , և շուրջ զսեղանովն , բայց  
և այնք թաղծեալ երևէին ընդ մօտալուա  
ապականութիւն իւրեանց : Կատաղին ա-

պա հողմք սաստկաշունչք . կապտին 'ի  
 ծառոց գունաթափ սաղարթք վարսիցն .  
 Թօթափին յոստոց խայրիք անագանեալք ,  
 շառաչեն տեղատարափք ընդ անշքեալ  
 դաշտավայրս , և ծածկեն ձիւնաբերք զար-  
 տեան տրամազգեցիկ լերանց : Կամք 'ի  
 զնին աւերածոյ բնութեանս անհանգիստ  
 վարանմամք , գուցէ սկիզբն արարին ա-  
 նէծք աղդել յերկիր զառաջին գործ իւ-  
 րեանց : Եւ զի՞նչ , եթէ կորուսցէ բնու-  
 թիւնս զգեղեցկութիւն՝ որ թողաւ նմին  
 'ի մասնէ : Երկիրս թէ և աղքատ առ-  
 դրախտիւն եղեմական , բայց գոյր նորա  
 ճոխութիւն հերիք , դիւրութիւն և զուար-  
 ճութիւն 'ի մխիթարութիւն աւուրց մե-  
 րոց 'ի կենդանութեանս . սակայն անէծք  
 եթէ այսպէս ծանրասցին 'ի վերայ երկրի ,  
 զիարդ յայնժամ աղքատ՝ զիարդ ցաւա-  
 դին եղիցին աւուրք մեր և կեանիք : Այս-  
 պէս խորհէտք յանձինս , և ապա մխիթա-  
 րէաք զմիմեանս , զամենայն խորհուրդ  
 տատամսութեան 'ի մտաց վտարել , և  
 երկրսպագու երկիւղածութեամք ապաւի-  
 նիլառ տէր : Յայնժամ ապա ամբարեցաք  
 մեզ պաշար պաղոց . չորացուցաք առ  
 հրով զտմենայն զոր հնար եր ապականու-

Ծեան և վտութեան բառնալ 'ի մէնջ .  
 և Ես ամրացուցի զիսրձիթն արագուստ՝  
 յասլահովանալ մեզ 'ի մըրկաց և յանձրե-  
 ւոյ : Իսկ հօտն փոքրիկ զցրտաշունչ ժա-  
 մանակօքն արածէր տիսրագին 'ի վերայ  
 բլոյն՝ խնդրել իւր ճարակ շիւղս դալա-  
 րեաց սկտկելոց յանապատացեալ վայրին :  
 Ստեպ երթայի ինքնին 'ի մարգս և 'ի զառ  
 'ի վերս քաղել վասն նոցա համբար դար-  
 մանոյ 'ի հանգրուանին : Անցանէին ա-  
 ւուրքն այնոքիկ տիսրագին և յուշիկ 'ի  
 փոթորիկս , 'ի տեղ և 'ի տարափ . բայց  
 անագան ուրեմն դառնայ յետս արեգակն  
 կենդանարար . հալածէ 'ի բաց զթուխպս  
 թաղծագին ամառոց . հողմք ջերասիւկք  
 փարատէին 'ի լերանց զթանձրացեալ մա-  
 ռախուղս : Բնութիւնն անգրէն մանկա-  
 ցեալ թուէր իմն ժպտել . զուարթագեղ  
 կանաչութիւն զգեցոյց զերկիր . բազմող-  
 դի նարօտ գունակ գունակ ծաղկանց բող-  
 բոջէր 'ի մարգագետինս և ծիծաղէր զա-  
 րեգակամք . ծառք և թուփք փողփողէին  
 վառ 'ի վառ . խնդութիւն և ցնծութիւն  
 թագաւորէր 'ի վերայ համօրէն բնու-  
 թեան : Այսպէս վերստին երևեցաւ յերկ-  
 րի զուարթարար առաւոտ տարւոյն , դա-

լունն ասեմ ծաղկապտակ : Գեղապահն ձ  
 ևս ծաղկէր ցանկապատն մատողատունկ  
 ծառոց տնկելոց առ յինէն շուրջ զսեղա-  
 նովն . և մայր ձեր տեսաներ անդ նորա-  
 հրաշ իմն բերկրութեամբ՝ բողբոջեալ  
 փթթեալ զիւրաքանչիւր տունկ ծաղ-  
 կանց՝ զոր փոխադրեալն էր 'ի սրբանուեր  
 սահմանի անդ : Ի զուրէ ինձ փորձել, որ-  
 դեակք իմ, առ 'ի կենդանագրել առաջի  
 ձեր զզեզումն սրտիցս, զիարդ անպա-  
 տումցնծութեամբ դիմեցաք յոտս սեղա-  
 նոյն : Արեգակն լուսաւորէր անշաման-  
 դաղ ճառագայթիւք զսրբավայր տեղին .  
 արարածք իւրաքանչիւր երեկին մատու-  
 ցանել տեառն զիւրեանց փառաբանու-  
 թիւն . ծաղիկք ընուին շրջասփիւռ զօդն  
 'ի բուրումն անուշութեան . ծառք երկայ-  
 նէին զսեղանով զտաշտագեղ բարու-  
 նակսն ծաղկաւէտ : Միջառք թևազգե-  
 ցիկք ընդ դալարեօքն իջևանեալք՝ քաղց-  
 րիկ ճոնչէին զիւրեանց ցնծութիւն . և  
 հաւք երդէին անխոնջ 'ի դիտակաց ծա-  
 ռոյն : Ծունը եդաք առ տեղեաւն . արտա-  
 սուք ուրախութեան ճնշեալք յաչաց՝  
 խառնեցան 'ի ցող առաւօտեան իջեալ 'ի  
 վերայ ծաղկանց և դալարեաց . և սրտե-

ուանդն աղօթք մեր բարձրացան Ելին առ  
արարչապետ բնութեան , առ Աստուած  
շնորհաց և բարութեան որ յառ աջօք չա-  
րեաց՝ գիտէ զբարին վերընծիւղել » :

« Սկիզբն արարի յայնժամ գործել 'ի  
բլրի՝ անդ ինչ փոքրիկ , և զպահեստ սեր-  
մանեացն արկանել յերկիր յուռթի , և  
կամ զստղաբեր արմտիս զոր գտի աստ և  
անդ սփիւռ 'ի կողմանսն՝ 'ի բլուր մեր ա-  
ծել անկել : Բազում անգամ բնութիւն ,  
կամ գիպուտած և կամ հանձար մտաց  
մատուցին ինձ գիւտս հնարից 'ի դիւրել  
զիմ վաստակ : Բայց բազում անգամ  
ևս 'ի դերեւ ել այն առ 'ի չգիտելոյ ըզ-  
պատեհն ժամանակին , կամ զտեղին  
գիպան 'ի մշտկութիւն , և կամ 'ի աըն-  
կագործութիւն : Յոլովակի ևս երես-  
կայութիւն իմ ճգնեցաւ սնավաստակ՝ 'ի  
գիւտ դուզնաքեայ հնարից առ 'ի թե-  
թեւութիւն վաստակոցս . և յոլովագոյն  
իսկ լիներ արդեօք նոյնակէս , և ես անձամբ  
զանձն խարեկի , թէ ոչ պահպանողականն  
հրեշտակ հծծէր յունկն իմ յօժանդակու-  
թիւն » :

« Յաւուր միում վաղ քոջ ընդ առա-  
ւոան իբրև հայէի 'ի ներբուստ խրճթին

'ի սեղանն , ահա տեսի զհուր տեառն Աս .  
տուծոյ բորբոքեալ 'ի վերայ նորա՝ պայ-  
ծառանշոյլ յարշալցս անդր , և արեգակն  
ծայրարձակ՝ ոսկեհանանչ գունակեր զըս-  
տեղն ծխոյն՝ օր Ելանէր ծառանայր յօդն .  
և աղաղակեմ . — « Եւա , այսօր է ահա  
օր տօնի՝ մեծի խոստմանն . ահաւասիկ  
հուր տեառն իջեալ 'ի վերայ սեղանոյդ ,  
հասկա վութասցուք անդր : Սուրբ է  
տեառն Աստուծոյ օրս այս . գագարեացի  
արդ ամենայն գործ վաստակոց . Երթքա-  
ղել զգեղեցիկս 'ի ծավկանց՝ ցանել 'ի վե-  
րայ սլատարագի ողջակիզին . խակ ևս Եր-  
թայց զենուլ զմատաղագոյնն 'ի գա-  
ռանցս » :

« Ելի 'ի նոյն , և զենի զգեղեցիկն 'ի  
գառինս , զառաջինն 'ի կենդանիս զոր մա-  
հու սպանի : Զաւակք իմ , զինչ աղիո-  
զորմ տեսարան էր այն յաչս իմ : Կալաւ  
զիս գողումն անհնարին . ձեռք իմ թօշ-  
նեալք անկանէին արգեօք , թէ ոչ սրբու-  
թիւն գործոյն , և հրաման տեառն սկըն-  
դէին զիմ սիրտ . զիա՞րդ անմեղն այն ընդ  
դողդոջուն ձեռամբս՝ ընդ ոգիս ջանայր  
յայնժամ , մայէր , և վասն ոգեսպառ կե-  
նացն նուաղելցս ոգորէր՝ վանեալ ողորմա-

զին աքացեօք և թաթիւք միշտ անզօք ,  
 մինչ հուսկ ուրեմն մնալ նմա անշարժ և  
 սնկենդան յանդիման տչացս : Յայս ահ-  
 սիւ գուշակութիւնք քստմնելիք զիմս դը-  
 րաւեցին ոգի . այլ անդէն անյապաղ հա-  
 նի զսպանդն 'ի վերայ սեղանոյն . Եւա-  
 ցանէր 'ի վերայ զոհին ծաղիկս անուշունս :  
 Հեղաք զանձինս գետնամածեալ առ սե-  
 ղանով ահիւ և պատկառանօք . օրհնու-  
 թիւնք մեր և գոհութիւնք ձենձերեցան  
 ելին 'ի բարձունս առ մեծվայելութիւն  
 աստուածութեանն , որ այսպէս գթասի-  
 րեալ՝ զիսոստմունս իւր յիշեցուցանէր  
 մեզ : Լոռութիւն ինչ պատկառելի՝ շուրջ  
 զմեօք բակ ունէր առհասարակ , որպէս  
 յորժամ հոչակեալ տօնէ երկիր զերեւումն  
 Աստուծոյ . Թոռէր ևս մահկանացու լսե-  
 լեացս լսել իբր 'ի հեռուստ զերգս օրհ-  
 նութեան խմանալեացն ձայնակցելոց մեզ  
 'ի փառաբանութեան : « Սոյնժամայն բոյն  
 ծախիչ եկեր զողջակէղն , և շիջաւ ապա 'ի  
 վերայ սեղանոյն . բուրումն երկնաւոր ե-  
 լից զվայրին զամենայն » :

« Ոչ յետ բազմաց , որդեակք իմ , զինի  
 աւուրս տօնի՝ մեծի քառութեանն , եր-  
 թայի 'ի տարաժամել աւուրն հանդչել

յաշխատութեանց առընթեր սիրեցելոյն  
 խմոյ 'ի բլուրն . զոր խնդրեալ վայրապար  
 'ի խրճիթին և ընդ հովանեաւ հովանոցին ,  
 դաի ասկա զնա կթուցեալ նստեալ առ  
 աղբերաւն , և զքեզ անդրանիկդ իմ որ-  
 դեակ՝ գրկաբարձ 'ի նմա : Երկունք որ-  
 դեծնութեան կալեալ էին զնա մօտ յաղ-  
 բիւր անդր , այն ինչ պատաղեալ էր նո-  
 րա յուշիկ զգործովք իւրովք և զարա-  
 բովք . հեղոյր նա արտասուս խնդութեան  
 'ի վերայքո . և ասկա համբարձեալ զացս  
 իւր առ իս 'ի ժակիտ քաղցր՝ ասէ . « Ող-  
 ջոյն ընդ քեզ , նախահայրդ մարդկան .  
 օգնեաց տէր Աստուած յերկունս իմ . և  
 ծնայ զայս որդի : Յողջունել իմում զատ  
 յետ ծննդեան , անուն կոչեցի ամա՝ կայ-  
 ին ... Ով դու սիրեցեալդ անդրանիկ , ա-  
 սէր նա յայնժամառ քեզ . հայեցաւ տէր  
 աչօք գթութեան 'ի ծնունդս քո . ամե-  
 նայն աւուրք քո որբեսցին յօրհնաբա-  
 նութիւն նորա : Որպէս տկար է մարդ  
 կանանցածին , որպէս անզօր օգնել ան-  
 ձին : Բայց բողբոջեաց ամբարձիր , որ-  
 դեակ իմ , որպէս ծաղիկ նորաբոյս ամ-  
 բառնայ գարնանի . կեանք քո 'ի հոտ ա-  
 նուշից առաջի տեառն » :

« Յայնժամ ես ինքն տուշնկալայ գքեղ,  
 անդրանիկդ իմ, գգուանօք 'ի դիրկս, և  
 արտասուախառն ցնծութեամբ ասեմ.  
 « Ողջոյն ընդ քեղ նախամայրդ աղքի  
 մարդկան. օրհնեալ տէր Աստուած՝ որ  
 օգնեաց յերկունս քո : Ողջոյն ընդ քեղ  
 կային, առաջինդ 'ի կանացածինս եր-  
 կամբք : Ողջոյն ընդ քեղ . մտանես դու  
 առաջին 'ի յայս կեանս՝ երթալ ընդ ա-  
 ռաջ մահուան : Աստուած իմ, հայեաց  
 դու քաղցրութեամբ յերկնից 'ի բարձանց  
 'ի տկար քո յայս արարած . հեղ զառ 'ի  
 քէն օրհնութեանդ զցող քաղցր 'ի վերայ  
 նորաբողբոջ կենաց սորտ : Ո՛րպէս քաղց-  
 րասցի ինձ հրահանգել զոգի սորա մա-  
 տաղ 'ի սքանչելիս քոց շնորհաց : Ընդ ա-  
 ռաւօտս և ընդ երեկոյս վարժեցից զգե-  
 ռաբուսիկ շրթունս նորա 'ի փառաբա-  
 նութիւնս քո : Այս՝ նախամայրդ աղքի  
 մարդկան, այսպէս շառաւիղեսցեն զքե  
 աղդ և ազինք : Միայնիկ էր իբրև զքեղ  
 մրտենիդ այդ, մինչեւ մորչ շառաւիղք  
 պտկեցան զնովաւ 'ի մայրենի բնոյն . քա-  
 նիցս զարդարեաց զնա դարուն գարձա-  
 ւոր, նոյնչափուռճացաւ բացուստ 'ի բաց-  
 բողբոջեցին նոր շառաւիղք շուրջ զառաջ-

նովք մատաղատնկովք . զարդիս մրտե-  
նիդ միայնակ՝ անտառացաւ՚ի փոքրիկ ան-  
տառ բազմաբուրեան , որ շրջասփիւռ  
ձգտեալ տարածի բացական » :

« Այսպէս , սիրելիդ իմ , յայս անուշակ  
տեսիլ քաղցրասցին ցաւոցդ երկունք .  
այսպէս որդիք մեր աճեցեալ զբլութ  
բազմասցին : Տեսցուք յայնժամ 'ի գա-  
գաթանէ սորտ՝ սփիւռ տարածեալ 'ի  
ստորև յընդարձակութեան հովտիա՝ ըզ-  
խաղաղանիստ հիւզս նոցա : Տեսցուք մե-  
զէն զնոսա , եթէ մահ ոչ կանխեսցէ յա-  
փըշտակել զմեզ 'ի միջս նոցա , տեսցուք  
զնոսա որպէս զպարս գործուն մեղուաց  
աջակից վաստակակից միմեանց . ամբա-  
րել 'ի հիւզս իւրեանց զպաշար համբա-  
րոյ , դիւրութիւնս , այլև զամենայն քաղց-  
ցրութիւն կենցաղական : Ի՞ցուք ստէպ 'ի  
բարձանց աստի յայցելութիւն թուանց  
մերոց 'ի խրձիթս իւրեանց , և ընդ պըտ-  
ղալից հովանեօք պատմել նոցա զպանչե-  
լիս բարձրելոյն , քաջալերել զնոսա յաս-  
տուածովաշտութիւն և յառաքինութիւն ,  
խնդակից լինել 'ի խնդութեան նոցա ,  
և միսիթար 'ի վիշտս տրտմութեան : Ի  
դարեւանդաց բլրոյս տեսցուք յայնժամ

բիւր սեղանս ընտանիս ծխեալս շուրջա-  
նակի . և ծուխս ողջակիզացն թանձրասցի  
զբլովմ՝ նուիրական ամսովք ընդ որս  
անցցեն թափ՝ աղօթք մեր սրաեռանգն  
վասն աղդի մարդկան : Եւ յորժամ եկես-  
ցէ հասցէ տարեկան օր քաւութեանն , և  
հուրն Երկնառաք իջցէ 'ի վերայ առաջին  
և ամենասուրբ սեղանոյն , ժողովեսցին նո-  
քա յայնժամ միահամուս 'ի վերայ ըըլ-  
րոյս , և մեք յառաջընթացք 'ի միջի նոցա  
'ի զոհագործութիւն . յորում պահու-  
գետնատարածք կացցեն նոքա յԵրկրպա-  
դութիւն տեառն՝ պարառեալ զմեօք յըն-  
դարձակածիր բոլորակի » :

Այսպէս է , Կային , այսպէս աղաղակե-  
ցի անուշակ իմն հիացմամբ . և մատուցի  
համբոյր այտիցդ՝ գորովախառն ցնծու-  
թեամբ : Յետոյ մայր քո առնու զքեզ 'ի  
գիրկս իւր տկար , որում ձեռնտու եղէ  
կանգնիլ յոսս 'ի դալարեաց , և ածի զնա-  
անաւագեալ յուժոյ 'ի խրճիթ մեր՝ որ  
չեր ինչ հեռի : Ի սուզ ժամանակի եկն կո-  
լուլ և աշխոյժք 'ի կազդուրումն դողարիկ  
անդամոցդ . ծաղը և զուարթութիւն յայ-  
տեին յաջս քո և 'ի գեղ այտիցդ : Ապա-  
քէն հաստատեալ եին բարձք դիրդ ոտիցդ

ուժել կայտուել՝ ի ծաղկանց միջի , և շրբ-  
թունքդ մատաղիկ՝ ի թոթովել զտղայա-  
կան ծնունդս մտացդ , յորժամ ծնաւ  
մայրքո զՄէհալա , որ առկա՝ որդեակ իմ՝  
քեզ հարսնացաւ : Դու յայնժամ ցնծա-  
լից կայտուէիր զնորածինքերքդ , համբու-  
րէիր զնա , և սկսակէիր նորաքաղ ծաղկօք :  
Յետոյ , Աբէլ , մայրքո զքեզ ծնանի . և  
առկա զքեզ՝ Թիրզա զուգակից : Ո՛վ , որ-  
պիսի խնդութիւն զեղոյր զմեօք և յափըշ-  
տակէր , երբ զձեր տեսանէաք խաղս տը-  
զայականս , և զանմեզ հրձուանս . և որ-  
պէս ոգիք ձեր տղայահասակք դամքան  
զդամ արձակեալք փորձէին զիւրեանց  
կորով , և առ փոքր փոքր հասանէին յար-  
բունս աճելութեան ։ :


« Յայնժամ ուշի ուշով հսկէաք առ  
՚ի ձեր մշակութիւն . զբարուց ձեր զհա-  
կամիտութիւն՝ ի բաց տանել յոչ բա-  
րւոյն , որպէս զի բողբոջեսցեն այնք որ-  
պէս գեղեցիկ փունջ դարնանային ծաղ-  
կանց , և կապեալք՝ ի մի՝ բուրեսցեն զա-  
ռաքինութեան զհոտ անուշից : Քանզի ՚ի  
խայտալ ձեր տակաւ տղայօրէն՝ ի վերայ  
ծնդացս՝ ապաքէն տեսանէի , զի մարդ  
մեղսածին՝ ոչ նուազ մշակութեան կարօ-

տանայր, քանի երկիր անիծեալ վասն մեղաց. միայն ընդ արթուն մշակութեամբ վերընծիւղին 'ի նմա ձիրք բնաւորք, և ազնուական յօժարութիւնք: Եւ արդորդեակք իսմ, աճեցայք դուք 'ի չափ կատարման, որպէս աճէ մատաղատունկ'ի ծառ պտղաբեր: Օրհնեալտէր Աստուած, որ այսչափ սքանչացոյց 'ի վերայ մեր ամենեցուն զողորմութիւն իւր և զբարութիւն: Մի հեռասցի երբէք 'ի սրաից ձերոց սէր գորովական առ տէր Աստուած ձեր, և անբիծ առաքինութիւն երկնային՝ բնակեցեն 'ի տունս ձեր միշտ և հանապազ»:

Լռեաց աստանօր նախահայրն 'ի պատմութենէ անցիցն անցելոց: Զոր օրինակ յորժամ խանդակաթ փեսայ նորահասակ՝ առընթեր նստեալ հարսին իւրոյ սիրեցելոյ, յելս արշալուսոյն ունկն զնէ երգոց քաղցրախօս սոխակին, ամենայն ինչ լռէ շուրջանակի: սրտառուչ դայլայլիկքն դաշնակաւորք նոցին ախորժակաց՝ ձնշեն յաչաց նոցա շիթս արտասուաց. սակայն 'ի լռել ևս երգոց, նոքա տակաւին լոիկ ունկնդիր լինին յերկար՝ յակախոս 'ի դիտակ ծառոյն՝ ուր եղանակէր

Երգեցիկ թուչուն, թէպէտ ոչ ևս երգէ  
նա, և այլ թուչունք սկսանին զիւրեանց  
բազմաձայն ճճուիւն։ Ի սոյն տիպ նմա-  
նութեան և 'ի լռելնախահօրն, որդիք նո-  
րա և կողածինն երևէին դեռ յակճիւս՝  
բերանաբաց և ունկնամատոյց։ Այլև այլ  
անցք պատմութեան նորա, զանազանս 'ի  
նոսա ազդէին կիրս։ Եթ զի ճնշէին ար-  
տասուք յաչաց, և շրջէր գոյն դիմաց։ Եթ  
զիցայտէր 'ի նոսա պարզութիւն լրջամփտ  
և ժպիտ անուշակ։ Ընորհս ապա մատու-  
ցին առհասարակ նախահօր մարդկու-  
թեանս արտասուախառն ցնծութեամբ։  
Աւագն Կային ևս շնորհ կալու, բայց ե-  
րեէր դժուարամոք քան զայլսն։ ոչ ար-  
տասուք յաչս, ոչ ժպիտ 'ի շրջունս։

# ՄԱՀ ԱԲԵԼԻ



Ե Ր Գ Ե Ր Ռ Ո Ր Դ

**Յ**այնժամ ելին ամենեքին՝ ի հովանոցէ անտի, և Աբէլ գորովանօք ողջագուրեաց զեղբայր իւր • լուսին համապայծառ լուսատու էր՝ ի դնացս նոցա, և ամոլք իւրաքանչիւր դէմ եղին յիւրեանց տաղաւար : Զուարթացեալ Աբէլի ընդանձկալոյն իւրոյ, ասէ • — « Որպիսի խնդութիւնն զեղու՝ ի սիրտ իմ : Եղբայր իմ . . . բա՛բէ • ոչ ևս է ցասմամբ ընդ իսկամբ նա սիրել զիս : Ո՛հ, արտասուք՝ որ թացին այսօր զՃնօտս նորա որպիս յափշտակեցին զիս խնդութեամբ : Ոչ • ոչ այնպիս տարափ ցօղս զուարթացուցէ զգարուն, որպիս այն արտասուք զիս զուարթացուցին : Ամեհի մըրիկ սրտի նորա հանդարտեաց • անդորրութիւնն և

ուրախութիւն դարձան 'ի մեզ : Աստուած  
լիր՝ որ հսկեցեր անբաւ գլութեամբդ՝ ի  
վերայ ծնողաց մերոց 'ի բնակել նոցա  
միայնակ յընդարձակութեան երկրիս ,  
դու ինքնին սաստեա բազմածուփ կոհա-  
կացն՝ ոչ ևս յուզել զարթնուլ 'ի նմա » :

Թիրզա փարի զսիրելեաւն . խնդութիւն  
անձառ կենդանացուցանէ զբարբառ բե-  
րանոյն . ասէ . — « Վա՞շ , ոչ այնպէս զո-  
վացուցանէ անձրեւ անուշակ զարևակէզ  
դաշտավայր , և ոչ դարձան դարձաւոր  
յետ առաջին տիսուր ձմերայնոյն՝ այնպէս  
ոգենորոգ զուարթացոյց զծնողս մեր միայ-  
նաբնակս յերկրի , որոպէս զուարթացու-  
ցին զիս այս արտասուք , այս դարձ սիրոյ  
մերս հարազատի : Ո՛վ տօնելի ժամ . կայ-  
տառութիւն , և զուարթութիւն դարձան  
'ի ցաւադին երեսս ծնողաց . ուրախութիւն  
և բերկրութիւն ծովացան 'ի սիրտս նոցա :  
Տօնելի ժամ . ընութիւնն թուի ինձ այսօր  
գեղեցկագոյն , և քոյդ լոյս՝ լուսինդ գիշե-  
բավառ , պայծառագոյն ևս » : — Այսպէս  
սրտից նոցա ուրախութիւն 'ի շրթունս  
անդը ձեմ առեալ շրջէր :

Յուղի անկառ և կային առ իւր խրճիթ՝  
միահետ ընդ իւրումն Մեհալայի : Ակնար-

կէր սա խանդաղատաթար՝ի նա , գգուէր  
զաջ նորա առ շրթամբք իւրով ասելով  
երկեղաբար . — « Եւ ո՞ր անժապիտ ծան-  
րութիւն իցէ սյդ՝ սիրելիդ իմ երևեալ՝ի  
տեսիլ դիմացդ : Հանդարտութիւն որ  
դարձաւ՝ի քո սիրտ , ոչ բաւական իցէ  
բերել պարզութիւն յաջս , և զկնճիւն  
լուծանել զՃակատուդ : Դիտեմ զի բնա-  
ւոր ծանրութիւն բուսոյ բարուցդ՝ միշտ  
՚ի չափու կալաւ զիւր խնդութիւն , և ամ-  
փոփեաց զայն՝ի քո սիրտ : Բայց և այնակէս  
սիրեցեալդ իմ , որպիսի խնդութիւն , որ-  
պիսի հաճութիւն յերեսս քո խայտայր ,  
և յաչացդ ցայտէր յընդգրկել քո զհա-  
րազատդ եղբայրաբար : Յայնժամ օրհ-  
նեաց զքեղ յաւիտենականն յաթոռոյ  
իւրմէ , յայնժամ և հրեշտակք թևասպա-  
րիկք՝ արտասուս գողցես հեղին զմեօք առ  
ցնծութեան : Թոյլ տուր անձկալիդ իմ՝  
խանդաղակաթ սիրոյս , թոյլ տուր սրտա-  
ռուս հրճուանացս փարիլ զքեւ » : — Այս-  
պէս ասացեալ փարեցաւ զնովաւ :

Կային գիրկ ընդ խառն եղեալ՝ անդէն  
՚ի վերայ եբեր . — « Ուրախութիւն ձեր  
անչափ՝ կծանէ զիս . արդարեւ կծանէ այն :  
Ոչ ապաքէն դովաւ ինձ՝ի դէմս ածէք

ակն յայտնի . որպէս թէ Կային ուղղեցաւ . յառաջն՝ այր չար էր , ախտակիր և եղբայրատեաց ... Ոչ այդպէս . ոչ ախտակիր էի , և ոչ չար . . . Զի՞նչ քանզայդ ծաղբական , եղբայրատեաց զիս համարել , վասն ոչ անգադար զնովաւ դաշըս գրկածութեամբ և արտասուօք : Իմ չիք ատեցեալ զեղբայր . չիք երբէք . քաւմի լիցի . միայն զի մեղկութիւն նորա կանացի առն անվայել , որով գողանայ յինէն զգորով ծնողացս , այդ է որ զիս դառնացուցանէ . . . այդ միայն : Առ այսոքիւք , Մէհալտ . . . ոչ վայրապար է այն՝ զի անժապիտ խոժոռութիւն կնձռէ զիմ ճակատ : Ո՞ր անհանճարութիւն հօր մերում , միշտ յեղեղել առ մեզ զամօթալի սպատմութիւն զիւրոյ անկման , և զամենայն անցս աղիտից եղելոց անտի : Զի՞նչ հարկ՝ լինել մեզ իրազեկ , և լսել վեր 'ի վայր՝ թէ 'ի սակս իւրոցն յանցանաց և մօր մերոյ կորուսաք զդրախտ ինչ փափկութեան , և թէ նոցին յանցանօք այժմուս թշուառացաք : Եթէ անգէտ էաք այնմիկ , թշուառութիւն մեր լինէր արդեօք դիւրակրելի , և ոչ աշխարեաք ըղկոլուստ զոր յանգէտս կորուսաք » :

Հեղձոյց Մեհալւա 'ի սրախ իւրում ըզ-  
 դառն մօրմօք, և յարտեանաց զարաօսր.  
 Հայեցաւ յերեսս տռնն՝ նշմարել ինչ  
 յաչան առ 'ի համարձակութիւն սպատապ-  
 խանտառուութեան, և ասկա ասէ բանիւք  
 ողոքանաց: — « Մի բարկանար ցանկա-  
 լիդ իմ. ոչ զօրեմ ժոյժ ունել յարտա-  
 սուացս : Մի բարկանար յաղաճել իմում  
 զերեսս քո : Մի ցանկալիդ իմ, մի թո-  
 ղուր ամսկոց թաղծութեան առ 'ի քէն  
 փարատելոց՝ կրկին գումարիլ զանձամբ:  
 Դարձո 'ի հոգւոջդ զանշամանդաղ սպար-  
 զութիւն, և մի տեսաներ հանապաղ թը-  
 շուառութիւնս և եղկութիւնս միայն, ուր  
 չէր արժան տեսանել քեզ՝ բայց անբաւ  
 ողորմութիւնս, և շնորհս ասառւածա-  
 կան : Մի սպախարակեր զհայր մեր սիրե-  
 լի և զմոյր գորովագութ, զի մեզ սպատմեն  
 զսքանչելիս տետոն առ մարդն մեղուցեալ,  
 առ 'ի տնկելոյ 'ի սիրտս մեր երախտագի-  
 տութիւն ջերմեռանդն, և հաստատուն  
 սպաւինութիւն առ նա : Մի աղաճեմ, մի  
 սպախարակեր զնոսաս, զորս ամենայն ար-  
 աօսր արտմութեան՝ ամենայն հեծութիւն  
 'ի վշտամբերութեան երեեալ յանձինս  
 մեր՝ տանջէ անբերելի սրտցառութեամբ:

Մարտիր սիրելիդ իմ, մարտիր ընդ դառնութեանն՝ զի մի անդրէն սողոսկեսցի 'ի սիրտ քո, և մի 'ի խաւար տրտմութեան ընկղմեսցէ զաւուրս քո, և զմեր »: — Առեաց Մեհալա, և արտօսրաթոր աչօքն հայեցաւ 'ի նա խանդաղանօք, և ժպիտ սիրալիր ծաղկեցաւ 'ի տրտմազգեցիկ դէմն նորտ : — « Յաղթեցից այնիմ, ասէ կային, յաղթեցից գառնութեանն՝ որ անդրէն գայ սպրդել մտանել 'ի սիրտ իմ առ իս, սիրեցեալդ իմ. ոչ ևս ընկղմեսցէ այն զաւուրս իմ և զքո 'ի խաւար տըրտմութեան »: — Զբանսն ասաց, և զուարթացոյց զնա :

Ապաքէն 'ի վաղուց հետէ ոդի ինչպըդ ծութեան՝ զոր Անամելէք անուանեն սանդարամեալք, սպասեալ լրտեսէր զգնացս սորա և զզրոյցս : Մի էր սա 'ի դիւաց անտի 'ի յետնորդ գասուէն, այլ յամբարտաւանութեան և 'ի փառատիրութեան՝ ոչ երկրորդ քան զսաւանայ : Բաղում անդամ 'ի սանդարամետս գժոխոց յընկերաց զորս անգոսնէր՝ խոյս տայր 'ի ներքսակողմն երթալ նստել յառանձնութեան : Անդ 'ի մէջ ծծմբահոս գետոցն խոխոջելոց ընդ բոյակէզ յատակ, 'ի մէջ

մառախչակատ քարանձաւացն վիթխա-  
րեաց, ծածկէին գագաթունք սևակատարք  
յամակս մըրկածուփս, մումույր ընդ ա-  
նարժան հանգիստ իւր անգործական :  
Սարսափիելի անդրադարձ՝ յորձեռանդն  
բոցոյն ցոլացելց 'ի գլխոց լերանց 'ի գէմս  
ամպոց, արձակէր շող ինչ աղօտափայլ  
'ի վէրայ խաւարաբորբ ուղւոյն՝ յոր բե-  
րէին գարշապարք իւր թափառականք :

Ի ժամանակի յորում հռչակէր տար-  
տարոս՝ խոռվայոյզ խառնաձայնութեամբ  
զյաղթանակ և զներբողեան զիւրոյ ար-  
քայի, այն ինչ սորա դարձ արարեալ 'ի  
նորաստեղծ հոլագնտոյս՝ պատմէր գոռո-  
զաբար 'ի բարձանց հրեղէն գահոյիցն, որ  
պէս մոլորեցոյց զնախաստեղծոն, և բռնա-  
դատեաց զերկնից միապետ որոտալ շան-  
թել 'ի ճակատ իւրոց նորաստեղծ ձեռա-  
կերտից՝ զդատավճիռ մահուն և զանիծից,  
յայնժամ սևափրփուր թոյն նախանձուն՝  
ուռուցեալ այտնու յախոնդանսն Անամե-  
լէքայ: — « Փառք և պատիւ, ասէ նա ընդ  
անձն, ուրեմն նման միայնոյ, և նոցա՝ որք  
գոռոզաբար նստին բոլորեալ զգահոյիւք  
նորա: Իսկ ինձ մնայցէ աստանդիլ աննը-  
շան անանուն 'ի խաւարշտին խորշ սան-

գարամետաց՝ 'ի յետին խառնիձաղանջ  
սինլքորաց : Ոչ . ոչ այդպէս . հնարեցայց  
շահատակեցայց և ևս , ընդ որ ապշեցին  
յիմարեսցին նոյն իսկ տարտարոսք . և  
յայնժամ սատանայ . . . այո՛ նոյն ինքն  
սատանայ մի իբրև զմիոյ 'ի խաժամուժ  
ամբոխէ դժոխոց՝ մի առնուցու զանուն  
իմ 'ի բերան առանց ակնտծութեան » :

Համակետը՝ 'ի խորհուրդս այսպիսիս՝  
նիւթէր յառանձնութեան անդ՝ համայ-  
նաջինջ ապականութիւն արարածոց , ա-  
զէտս և թշուառութիւնս ազգի մարդկան :  
Եւ արդարեւ յաջողեաց նմին . դժոխոք իսկ  
գլխովին ափշութեամբ յիշատակեցին  
զանուն սորտ : Սա ինքն էր որ 'ի դարու  
յետին դրդուեաց զարքայն ժանտաժուտ  
'ի կոտորած անմեղ մանկանց բեթլէհե-  
մի . սա ինքն դառնաժաղիտ ծաղու 'ի զնին  
եկաց , զիանրդ կատաղէին մարմնազգեցիկ  
չարագեքն 'ի հոյլս աղածրի մանկանցն .  
զիանրդ ջախէին զնոսա որմբ զորմայն ա-  
րիւնաշաղախ , կամ մարդախոշոշ սուսե-  
րաւ յօշոտէին զնոսա 'ի բռնամարտիկ  
գիրկս կողկողագին մարցն : Սոյն սա կայր  
յայնժամ սաւառնաթե 'ի վերայ բարձ-  
բակատոր աշտարակի չուառացելոյ քա-

ղաքին՝ լսել զՃիչ մանկանց կոտորելոց, զողը և զկական մարցն անմիսիթար : Հայէր դժոխային իմն ինծղանօք որպէս դիակունք մատաղք գէշագէշ ծայրատեալք, և լայնապատառ խոցուածովք աղճատեալք՝ դնէին տապաստցիլք ընդցիրս՝ կոխան ընդ արիւնոտ կօշկօք արշաւասոյր դահճացն, և ողորմ հեծէին . և զիարդ մարք նոցա և հարք, քորք և եղբարք լէրդակտուր կականաւ՝ գետնաքարշ թաւալէին՝ ի ճապաղիս անդ անմեղ արեանն ծովացելոյ :

« Ելից, սաէս սա ինքն Անամելէք, ելից ՚ի վեր յերեսս երկրի . տեսից զի՞նչ իցեն սալառնալիքն՝ մահու մեռանիցիս . ելից, և ինձէն մեռուցից » : — Յետ այսորիկ ելսա ընդ դուռն տարտարոսին՝ զհետ երթաւ շաւղաց զոր կոխեալն էր սատանայի ՚ի վաղեմի գիշերին, և ՚ի խոռվայրոյզ թագաւորութեան վհիցն անդնդոց : Որպէս քաջազէն նաւ հենախաղաց՝ որ գերեալ տանի զգերութիւն իւր ընդ անհուն ծովուն սապարէզ, գիշերայն նաւարկէ առաղաստալիր, ելանիէ՝ յափն Եսպերիոյ, անկանի յանկարծուստ զիսաղաղանիստ բնակչօք գեղջուրեմն զորոյ յափշտակէ զկայտառ մանկ

տի . յայնժամ ողբս առնուն կականաւ  
զծովափամբն՝ ծնողք նոցա , քորք և եղ  
բարք , և հարսն անմլսիթար , պշուցեալք  
անթարթ զհետ գերեվարացն հեռացելոց :

Ոչ անտիսլ յօրինակէս՝ և ողին սանդա-  
րամետական ճախրէ երագաթոիչ՝ բայց  
ընդ երկար թարթափամբ 'ի խաւարա-  
կուռ ինքնակալութեան ամայաբնտկ դի-  
շերոյն + մինչեւ անագան ուրեմն նշմարէր  
'ի բացուստ 'ի սահմանագլուխս նորաս-  
տեղծ տիեզերացս զաղօտ փայլումն վեր-  
ջին լուսաւորացն :

Օրինակիմն . որպէս չարագործ ոք՝ որոյ  
մտաբերեալ 'ի սովանութիւն դիշերային՝  
երթալ ընդ խաւար խոր դիշերոյն 'ի քա-  
ղոք ինչ արքունի , ընդ տեսանելն զայն  
բացուստ պայծառացեալ 'ի դիւրի ջահիւք  
անթուելեօք , ահ ընդ ահ սողոսկի սովորի  
անդանօր՝ խուսափեալ 'ի լուսոյ լապտե-  
րաց : Ոչինչ ընդհատ ըմբռնեալ երկիւղիւ  
այսն պիղծ՝ սողոսկի յարամրի 'ի ներքս  
մտանել յերկիր 'ի մէջ տիեզերական արա-  
րածոց : Ոչ ընդերկար եկաց թեատա-  
րած 'ի վերայ հողագնտոյս 'ի խնդիր բնա-  
կութեան մարդոյն . աչք իւր կորովարիր  
նշմարեցին զայն ընդհուպ . խոյանաւ . 'ի

բարձանց՝ ի սառըե՝ ի ծմբկս անտառաց :

« Ահաւասիկ, ասէ նա, ահա երկիր որ՝  
 'ի նմանէն անիծաւ. 'ի սաւառնել իմում  
 տեսի՝ ի բարձուէ զգրախտն՝ պահեալ  
 բոցեղէն սրոյն շուրջանակաւ... գեղեցիկ  
 արդարեւ՝ երկնային մարմանդիցն հանգու-  
 նաւոր. կորուսին նոքա զայն : Բայց և  
 երկիրս՝ չէ ինչ գեհեան : Գուցէ հառաջա-  
 գին խոնարհ պաղատանօք՝ ցածուցին  
 զարամտութիւն բարկութեան նորա, գու-  
 ցէ մարմին նոցա թանձրագոյն՝ նշաւակ է  
 տանջանաց և ցաւոց, առ որս անտեղի-  
 տալի են ոգիք մաքրագոյնք, և <sup>3</sup> մարմինք  
 եթերականք. զի աստ հնար էր ինձ եր-  
 ջանկանալ, թէ ոչ ամենայն ուրեք ինձ  
 զհետ գային դժոխիք.... Տեսանեմ զհրեշ-  
 տակս՝ զի զգնան աստանօր. գուն գոր-  
 ծեացուք խոյս տալ՝ ի տեսոյ նոցա. գու-  
 ցէ արդեօք խոչ եղեցին իմում ձեռնար-  
 կութեան : Անդ՝ ի վերայ բլրին տեսանեմ  
 ահա զգերդաստան մեղաւորաց՝ ի գործ  
 վաստակոց. բայց թշուատութիւն չերկի  
 ինչ՝ ի նոսա. գուցէ մահուամբ ունի այն  
 սկիզբն առնուլ... զշափ առցուք և  
 սպանցուք : Հրապուրեսցուք ևս զնոսա  
 յոճիրս ահազինս... զի որպէս եսս կար-

ծեմ՝ սիրտնոցա ընկալուչէ ամենայն մո-  
 լորութեանց։ Սատանայի յաջողեաց նոյն՝  
 դիւրահնար պատրանոք։ և այն՝ յորժամ-  
 դեռ ևս կատարեալքն էին. զիարդու ոչ զիւ-  
 րագոյն եղեցի ինձ զարդիս, յորժամայն-  
 պիսիք չեն, յորժամ ընդ անիծիւք գրա-  
 ւեցան։ Հրապուրեսցուք զնոսա յանհնա-  
 րին 'ի նախճիրս՝ մինչև քստմնեալ հրեշ-  
 տակաց փախիցեն յերեսաց երկրի, և որ  
 ստեղծն զնոսա ջնջեսցէ կայծակնահար,  
 կամ 'ի թափո դժոխոց սուզեսցէ զնոսա։  
 Յայնժամ մեք կողմնեալք տռ սեւաթոյր  
 գետափամբէք՝ տեսցուք զայն հանդէս։  
 տեսցուք բարձրածիծաղ՝ զիարդ թաւա-  
 լագլոր խաղան 'ի բոյակօհակ ալէգետ  
 տարտարոսին՝ գեղեցիկ բնակիչք նորաս-  
 տեղծ աշխարհի։ Տեսանեմ ես յանդի  
 զոմն՝ որոյ խոժոռ է ճակատ և կնճռեալ.  
 Եթէ զոյ ինձ գուշակել 'ի գծագիր երե-  
 սացն, մեծամեծս դործեցից դովու։ Եր-  
 թայց հետազօտել ոյսժարութիւն բռւ-  
 սոյ բարուց նորա, և զխորհուրդու մտաց ։  
 Այսպէս ասացեալ նորա, թաքթաքուր  
 խորամանկութեամբ շրջէր 'ի մարդկան միւ  
 ջի՝ մտաբերեալ 'ի մոլորումն նոցա և 'ի  
 ստակումն ։

Յայսմ վայրի թևապարեր չարադմն այն  
առընթեր կայենի և իւրոյ ամոլակցի՝  
գաղանալուր ունկնդրութեամբ որ առ  
միմեանս զրուցաց : Այն ինչ մտանէին  
տակաւ 'ի խրճիթ իւրեանց՝ զտեղի առ  
լոիկ, և ունչս արարեալնոցա 'ի թիկանց՝  
երկրորդեաց այսնակատակ ծաղու զա-  
սացեալսն . — «Մի թողուր ամպոց թաղ-  
ծութեան փարատելոց առ 'ի քէն՝ կրկին  
գումարիլ զանձամբ : Մարտիր ընդ դառ-  
նութեանն որ անգրէն սողոսկի «.... Ոչ  
ոչ . եղկելի գու մարտիկ . բարին ոչ բող-  
բոջեսցէ երբէք յանդաստան քո 'ի դժո-  
կամակ , գիտացից ես՝ միշտ ազարել  
զայն : Եւ զամսկ տրամութեան որք փա-  
րատեցան , գումարեցից զնոսա . . . գու-  
մարեցից զգագաթամբ զլեսոյդ՝ այնպէս  
թանձրամած , այնպէս թիսպայորդ , իբրև  
զայնոսիկ՝ որ մածեալ են մշտախաւար  
զկատարօք լերանց սանդարամետականաց :

Զի՞նչ քան զայս վաստակ դիւրաձեռն :  
Դուք քեզէն զանձամբ գումարես զայնո-  
սիկ . ինձ մնաց միայն ձեռն տալ : Զի՞նչ  
այլ ինձ քաղցրագոյն . եղէց քեզ ձեռն  
տու գումարել զայնո 'ի քոյին դլուխ . որ  
պէս զի աղէտք , թշուառութիւնք և չո-

բիք նորագիւտք դեռ ՚ի մահկանացուաց  
անծանօթք՝ ծագեսցին ՚ի նոցունց ՚ի նո-  
սին . և յայնժամ աղջամուղջք մղտագոյն  
ծածկեսցեն զաւուրս ձեր, մղտագոյն իբ-  
ըև զգիշեր անծագելի՝ վերաբազմեալ առ  
դրանդեօք սանդարամետաց » :

Ժամ էր այնուհետեւ ելից ծիրանածայր  
ակնապարար արեուն . վայրք ամենայն  
հնչելին ՚ի դայլայլիկս երգոց և ՚ի հըր-  
ճուանս : Առնու Կային զանօթս իւր ելա-  
նել յանդաստան՝ զոր ողջագուրեալ էր  
Արելի սիրապատար, և կայր ՚ի պատրաս-  
տի հորդան տալ խաշանցն յարօտ ցովա-  
զին : Մեհալս և թիրզա ձեռն ՚ի ձեռն  
երթալ կամէին ՚ի բուրաստան անդր, յո-  
րոյ ՚ի միջակին կառուցեալ էր սեղանն . և  
ահա ելնախամայրն արտաքս ՚ի խրճիթէն՝  
կողկողագին անձամբ և կոծմամբ : Դիմե-  
ցին նոքա՝ լի տագնապաւ և սրտատրոփի,  
սպար առին զնովաւ : — « Զի՞ է մայր իմ . . .  
լամ դու . . . և ընդէր » : — Այսպէս հար-  
ցանէին նոքա . հայեցաւ ՚ի նոսա Եւա  
ցաւագին, և յաւել ՚ի լալ, և ապա հե-  
կեկախառն ձայնիւ ասէր . — « Բարեկ որ-  
դեակք իմ, և ոչ լուայք զդառն հեծու-  
թիւնս որ ելանէին ՚ի խրճիթէ մերմէ :

Խիթք դժնդակք զայս գիշեր կալան զհայր  
 ձեր : Ահա կոռուի նա ընդ ցաւոց՝ որ թափ  
 անցանեն ցուղեղ ոսկերացն . կոռուի ընդ  
 հառաջանացն որ զմոք նորա դժուարա-  
 շունչ՝ հեղձամուղձ առնեն . նահանջել  
 կամի զտմենայն ճիշ առ ՚ի զիս մխիթարե-  
 լց : Ո՞հ , որդեակք իմ . տադնապ և ահա-  
 փետք խաւարին՝ կուտեցան զդլսով մօր  
 ձերոյ . անձն իմ դառնավիշտ ոչ կամի  
 մխիթարիլ : Բազում անդամյորժամ կայ  
 հանդարտիկ՝ և ոչ հառաջէ , երևի խորա-  
 սոյզ՝ ի խորհուրդս մոտաց . և ասկա յոգւոց  
 հանէ տառապագին յանկողնի . քրտունք  
 ցրտագին թանան յայնժամ զիւր ճակատ,  
 և արտասուք ընկրկեալք՝ ուղիսօրեն վիժեն  
 յաջաց նորա : Ո՛ գուշակութիւն սարսա-  
 փելի . . . Ճնշես դու զահաբեկ ոգիս որ-  
 պէս լեան բարձրակարկառ : Հասաւա-  
 տեցէք զիս դստերք իմ , զիս զմշուառա-  
 ցեալ մայր , երթիցուք ՚ի խրճիթն » : —  
 Յենոյր ապա արտասուագին յուս Մեհա-  
 լսյի . ընթացակից ունելով զագաւոր ու-  
 ղեկցութիւն զաւակացն՝ դարձ առներ ՚ի  
 խրճիթ :

Պար առին ցաւապին անձամբ առհա-  
 սարակ զմահճօք նախահօրն , կողմինեալ

էր առ անդորրաւէտ խողալութեամբ .  
 դեմք իւր և շարժուածք յայտ առնեին՝  
 զիարդ ոգի իւր 'ի ծուփս անդ ոգետանց  
 ցաւոց՝ կայր մնայր ինքնատէր և իշխեցող  
 անպարտէլի : Անուշակ իմն ժալիտ յան-  
 ձին բերեալ , և գորովախառն զցաւագնե-  
 լովքն ակնարկեալ ասէր . — Ո՛ սիրա-  
 մառնդք իմ . ձեռն տեառն եհեղ զիսիթցա-  
 ւոց յայս մարմին կտւեղէն՝ կեղեքել զա-  
 զիս . օրհնեալ է տէր՝ որ զամենայնն դար-  
 մանէ իմաստութեամբ : Թերեւս հրամայ-  
 եաց նա ցաւոցս արձակել զկապանս՝ որ  
 կաշկանդեալ ունի զոգիս ընդ մարմնոյս ,  
 և հողն դարձցի յերկիր ուստի առաւն :  
 Հնազանդ եմ ես . մնամ երկրպագու-  
 թեամբ ահագին օրհասական ժամուն .  
 օրհնեցից զտէր կենաց և մահու , մինչեւ  
 ցնդեսցի վոշի իմ . յայնժամ հոգւոյս լու-  
 ծեալ 'ի մարմնոյս զոր ընկճեցին անէծք ,  
 արժանագոյն ևս օրհնեսցէ զնա : Այս  
 Աստուած իմ . դու ինքն շնորհեցեր ոգւոյ  
 մահկանացուաց այսպէս խորհել բարձ-  
 րագոյնս : Արդար և իրաւ . զի ես ինքն  
 եղեց առաջինն 'ի տալ հողոյն զհող իմ .  
 բայց օգնեա ինձ , ամենակալ , տուր պայ-  
 ծուա երանաւէտ յուսոյն մի ստուերա-

Նաև յաչացս երբէք . մի թողօւր զիս տէր ,  
 մի աղաջեմ , յորժամ սարսափելին այն  
 օրհասական ժամ՝ կանգնեսցի ՚ի սնարից  
 իմօց , և արհաւիրք վերջինք դողացուացեն  
 զոսկերս իմ : Մի դու Եւա՝ մի տանջեր  
 զիս . և մի դուք որդեակէք սիրելիք՝ ան-  
 մսիթար ձեր լալեօք : Բարե՛ . . . որպէս  
 ընկղմեալ երկիք ՚ի խորս տրամութեան  
 անբարբառ : Սիրելիք իմ . . . ո՞հ . մի տան-  
 ջէք զիս անմիսիթար ձեր լալեօք : Յերես  
 այս խիթք ցաւոց կարապետ են մահուն ,  
 որ ոտն առ ոտն մերձենսայ առ իս . թերևս  
 տէր Աստուած իմ հաճեսցի ևս ՚ի բաց  
 առնել զայնոսիկ : Բայց և այնալիս պատ-  
 րաստ լերուք մի ընկճել ՚ի սգոյ՝ յորժամ  
 կոչեսցէ նա զոգի իմ ՚ի հողազանգուած  
 մարմնոյս և յաշխարհէ աստի , յորժամ  
 կոչեսցէ զիս ՚ի ձենջ » . . . — Յայս բան  
 ելաց նախահայրն . հայեցաւ լոիկ ակնկա-  
 ռոյց ՚ի մի մի զաւակացն . բայց աչք իւր ար-  
 տաստւալիցք բնեռեցան անթարթափ և  
 յոքնաթախիծ ՚ի նախամայրն Եւա , և ա-  
 պա վերստին դարձեալ ՚ի կարդ բանիցն  
 ասէ . — « Ա՞հ . ապաքէն տեսութիւն ա-  
 ռաջին մահուան՝ սոսկումն է և քստմնելի  
 ականատեսիցդ . բայց ահաւորագոյն ևս

Եղիցի այնում՝ որ նախ առաջին զմահ ձաշակէ : Ինքնին տէր Աստուած օգնական է ձեր . որ ՚ի նեղութեան մերում չեթող զմեզ երբէք , նոյն ոչ թողցէ զիս յահադին ժամուն յայնմիկ : Ելէք այժմ որդեակէ իմ , ելէք արտաքս . յաղօթս կացջիք առ տէր . թերես քուն ինչ քաղցրիկ հանգուսցէ զմարմին իմ ոգեսպառ » :

Լոեաց նախահայրն ազգի մարդկան . որդիք իւր լալագին խոնարհեցան առ ՚ի համբոյր աջոյն թօշնելոյ : — « Այս՝ հայր , գոչեցին նոքա , երթիցուք անկցուք առաջի տեառն պաղատախառն , առաքել՝ ՚ի վերայ քո նինջ քաղցրութեան կազդուրել զոգիս քո : Իցէ թէ լսելի եղիցին աղօթք մեր և մինչը սթափեալ ՚ի քնոյ՝ առցէ տէր ՚ի քէն զիսիթս ցաւոց » :

Ելին որդիքն ՚ի խրճթէն՝ դաշն հեկեկանօք . նախամայրն միայն մնաց առ մահճօքն : — « Կամէի նիրհել , ասէ նախահայրն . ո՞հ , մի լար քաղցրիկ կողակից . ոչ գթաս յիս աճեցուցանել զիմ աղէտ , և խապառ հատանել յաչաց զքուն » : — Եւ ասկա արկեալ զերեսօք զմաշկեղէնն առ ՚ի ծածկել՝ ՚ի կնոջէն զանհարին ցաւոցն երաշխէո՝ որ տագնապէր զնաւ անհան-

պիստ , խօսէր յինքն լռելեայն . — « Դու  
 այն ժամ իցես լի ահիւ և դողութեամբ :  
 Այս՝ այս . որպէս ահագինս զինև ծան-  
 րանաս : Տէր , տէր ամենակալ . մի թո-  
 ղուր զիս զմեղաւորս : Եւ սակայն , որչափ  
 և ահագին իցես , միսիթարութիւն էր ինձ  
 և ոչ փոքր , թէ և ահաւորագոյն ևս լի-  
 նէիր դու , թէ կարողութիւն միայն էր  
 ինձ վասն ամենեցուն մեռանել զմահ ,  
 վասն ամենեցուն 'ի հող լուծանիլ : Բայց  
 ոչ այդպէս . զհետ իմ եկեսցեն նոքա . 'ի  
 վերայ ամենայն կանանցածնաց տարա-  
 ծեսցին երբեմն արհաւիրք քո , և զար-  
 հուրելիդ խաւար : Զի զի՞նչ ծնունդք յե-  
 րանաց աստի՝ բայց մեղաւորք մահկանա-  
 ցուք : Որ յինէն կեանս ընդունի , ընդու-  
 նի և զմահ . բաժանեսցի մահուամբ յա-  
 մենեցունց որք լան զմեօք . բաժանեսցի  
 'ի խանդակաթ սիրելեաց , 'ի գրկաց նոցա՝  
 որք զաստի կենցաղս բիւրուք քաղցրա-  
 ցուցանեն ազնուական բերկրանօք : Եւա՝  
 սիրելիդ կաթոգին . զո՞ր արտասուս ոչ  
 հեղցես դու գետնատարած 'ի հող մարմ-  
 նոյս : Ո՛ աղէխորով տեսիլ զարհօւրելի .  
 ոչ արդեօք զգողանի հարկանիցի յայն-  
 ժամ փոշի իմ անշունչ , յորժամ որբք

անպատճակարք լուցցեն զկորուստ ծնողաց .  
 յորժամ հարք և մարք անօդնականք զիւ-  
 բեանց միածին՝ զալեաց միսիմար , և եղ-  
 բարք զքորս , յորժամ կին գորովական  
 ձշեսցէ առ մարմնով զուգակցին , և խօ-  
 սեցեալն առ գիակամբ խօսնառն իւրոյ :  
 Մի անիծանեք յայնժամ որդեակք իմ ,  
 մի անիծանեք զհողացեալ խաղաղակոյտ  
 ուկերացս : Արդար է յոյժ , զի 'ի մեր-  
 ձենաւ մահուն՝ անանջատ իցեն 'ի նմանէ  
 դող և սարսափ . արդար է յոյժ զգալ 'ի  
 մեզ զբովանդակ ծանրութիւն անիծից 'ի  
 յետին յայնիմ ժամու՝ որ խլեսցէ զմեզ 'ի  
 մեզսակիր կենաց աստի : Մահն բառնայ  
 'ի հոգւոյն զայս խեցեղէն անօթ . զի աղա-  
 տեալ յանիծիցն երջանկասցի , Եթէ  
 մարտեաւ ընդ տկարութեան իւրում և  
 ընդ թերութեանց , և եթէ թեւակոխեաց  
 'ի թոիչս առաքինութեան : Մի անիծա-  
 նեք որդեակք իմ , մի զաջիւնացեալ ըզ-  
 հող մարմնոյս : Ոչ , ոչ . կեանք մեր յաշ-  
 խարհի աստ չեն կեանք , այլ երազ ան-  
 հանգիստ , կամ նորաբոյս պտկունք կե-  
 նացն հանդերձելոց : Տեղի առաք լերինք  
 ահազինք , մի ճմշէք զիս մինչև խսպառ :  
 Այս մեռանիմ ես . . . այլ անդրէն դար-

Ճայց 'ի կեանս . սպասեմ այնմ , զոր օրի-  
նակ հայր գորովագութ՝ որոյ զարթու-  
ցեալնախ առաջին 'ի զուարձալի առաւո-  
տու դարնայնոյն , սպասէ ցելս արևուն  
մինչև մանկունք իւր սիրելիք զարթիցեն  
և վաղեացեն 'ի գիրկ իւր » : — Այսպիսի  
էին խորհուրդք նախահօրն՝ յորժաման-  
կաւ զնովաւ քուն անուշակ՝ դիւրիչ և  
հանգստաարար :

Ի ժամաւ նստեալ նախամօրն ձեռնա-  
մած առընթեր նմին լսյր դառնապէս , և  
մրմնջէր գաշն ձայնիւ առ 'ի զքուն նորա  
ոչ հատանել . — « Ո՞չ . որպէս խոցիմ և  
այրիմ : Ովանէծք անէծք՝ պառւլ մեղաց .  
յիմ վերայ ծանրացո , յիմ վերայ զքո  
բեռն ծանրակիր . հեղ զինև միայն՝ զգառ-  
նութիւն վշտաց կրկին և կրկին : Ամենայն  
ցաւք , աղէտք ամենայն՝ որոց դուք տա-  
նիք որդեակէք իմ , ամենայնք դան առ յի-  
նէն , ամենայն ցաւք և աղէտք որոց դուք  
տանիք՝ հալէն զիս և մաշեն կրկինակի ցա-  
ւովք . ես ինքն մեղայ նախ առաջին : Եթէ  
գու մեռանիցիս ... բարե . որպէս գողամ  
յանձին . զինչ այս սարտափ ցրտագին .  
վերջին արհաւիրք մահուն իցե՞ն արդեօք  
ահեղ քան զայս : Եթէ վասն իմոցս յան-

յանաց մեռցիս դու Աղամ, եթէ մահուն  
վերջին տագնապ անկցի զքե, բարե, մի  
հայիցիս յայնժամյիս խեթիւ աչաց և ընդ  
արհամարհանս + մի յայնժամ անիծա-  
նէք ինձ որդեակէք իմ, մի անիծանէք  
զմայր ձեր թշուառացեալ : Ասլաքէն  
ցայժմ ոչինչ լսելի եղեն նախատինք 'ի  
շրթանցդ + բայց աւազ + ամենայն ձեր հա-  
ռաչանք, ամենայն կաթիլք արտասուաց  
չիցե՞ն այնոքիկ ինձ կակծագին նախատինք:  
Լուր տէր, լուր ամենակալ հառաչագին  
պաղատանաց աղախմնոյդ + բարձ 'ի նմանէ  
զիսիթս ցաւոց + իսկ եթէ այս ցաւք կա-  
րապետ են մահու, և մարմնոյն հարկ՝  
դառնալ 'ի հող, ով սոսկալի յիշմանս, մի  
յայնժամ որոշեսցես զիս 'ի նմանէ + տուր  
ինձ մեռանել ընդ նմա, մեռանել առըն-  
թեր + առ նախ զոգի իմ, զի մի տեսից  
զմահ նորա + ես ինքն մեղայ նախ առա-  
ջին » : — Լռեաց ապա Եւա, և լայր ան-  
միսիթար 'ի կողաց նախահօրն՝ զորով ան-  
կեալ էր թմրութիւն :

Ելեալ էր Կային յանդաստան իւր, և  
արտասուք 'ի ծնօտսն ցամաքեալ + յելա-  
նելն այսպէս խօսէր ընդ անձին . — « Ոչ  
ժուժէի ունել զաչս 'ի լալոյ առ մահճզք

հօր իմոյ . հեծութիւնք իւր և բանիք 'ի խոր  
խոցեցին զսիրտ իմ : Բայց . . . ոչ մեռցի  
նա , յուսամ ես : Տէր Աստուած , տուր  
զի մի մեռցի հայր իմ սիրելի : Այո ,  
ոչ ժուժէի՝ ունել զաջո 'ի լալս . բայց  
լալորպէս զեղբայր իմ զայն ոչ կարեմ ,  
այնպէս կանացօրէն՝ զայն ոչ բաւեմ : Ա  
սիցէն դեռևս՝ թէ իմ վայրադ է բնու-  
թիւն . կամ թէ Աբէլ առաւել սիրիցէ  
զհայր իւր , իբր զի իմ՝ ոչ լսելի եղեն հե-  
կեկանիք որպէս զնորայն : Աիրեմ ես զհայր  
իմ , և սերախւ որպէս սիրէ զնա Աբէլ .  
բայց ոչ զօրեմ հրամայել արտասուացս  
աղբիւրանալ » :

Իսկ Աբէլ լի տրտմութեամբ երթայր  
յարօտս իւր . արտասուք դեռ վտակաւ  
հոսէին յաչաց . անկաւ դեանատարած ,  
և խոնարհեալ զերեսս 'ի ծաղկաւէտ դա-  
լարիսն՝ զոր արտասուօքն ոռոգանէր ,  
այսպէս եկաց յաղօթս առ տէր : — « Օրհ-  
նեմ զքեզ տէր , Երկիր տագանեմ խո-  
նարհեալ անձամբ , որ անբաւ իմաստու-  
թեամբ և բարութեամբ կարգես զընթացս  
կենաց մահկանացուաց : Համարձակիմ  
'ի նեղութեանս մերում կարդալառ քեզ .  
զի դու համարձակեցուցեր լալ մեղուցե-

լոյն առաջի քո . զայս անուշարար միսի-  
 թարութիւն թողեր մեզ՝ ի վիշտս տառա-  
 պահաց : Օրէն ինչ իցէ ժաել առ ՚ի քէն՝  
 փոխել զՃանապարհս իմաստութեանքո՝  
 առ ՚ի լսել զիդձ փափաքման փանաքի  
 որդանն կողկողելոյ : Ճանապարհք քո ի-  
 մաստութեամբ են և բարի , Աստուած  
 իմ . միսիթարութիւն միայն հայցեմ ՚ի  
 քէն և զօրութիւն ՚ի նեղութեանս : Այլ  
 ելթէ իզձք մեր չեն ինչ հակառակ ճանա-  
 պարհաց իմաստութեանդ , պարգևեա մեզ  
 զհայր մեր հասարակաց . . . . պարգևեա  
 մօր մերում զայր իւր , պարգևեա նմա՝ որ  
 անմիսիթար լայ նմին առընթեր , պարգև-  
 եա նմին զնա՝ որ բաժանակիցն էր բարօ-  
 րութեանն և վշտաց , որոյ և կեանք ոգե-  
 խառնեալ միակցեալ են ընդ նորայն :  
 Պարգևեա սրդոցս ցաւագնելոց զհայր մեր  
 պատուական . հեռացո զժամ մահուանն  
 յաւուրս երկայնս : Ակնարկութիւն քո  
 տէր՝ հրաման է այն . ՚ի թարթափել ա-  
 կան՝ հալածեսցին ցաւք դժնդակք . ելցին  
 համբարձցին առ քեզ ՚ի խոնարհ հան-  
 գրուանաց մահկանացուացս՝ ուրախու-  
 թիւն և ցնծութիւն և տղայաշուրթն խոս-  
 տովանութիւն գոհութեան : Ընորհեանը

մին լինել առ մեզ յերկար . որ ետ մեզ  
կենդանութիւն , նոյն պատմեսցէ մեզ ընդ  
ամս բազումն զգթութիւն քո զանբաւ .  
ուսուացէ որդւոց մերոց և գստերաց՝ իւ-  
րոցն մատաղ թոռանց , որոց հազիւ թո-  
թովեն շրթունք : Աս՝ եթէ այս կամք են  
իմաստութեանդ մեռանել նմա . . . . Աս-  
տուած իմ ներեա սրացաւութեանս՝ որ  
տայ ապաբան լեզուիս ոլապաջել աստա-  
նօր , և երիկամանցս զդողանի հարկանիլ:  
թէ հարկ նմա անհրաժեշտ մեռանել , կաց  
նմին առընթեր յայն ժամ սարսափելի ,  
յորում լուծցի քակեսցի յարկ իւր կա-  
ւեղէն : « Երեա յայնժամ Աստուած իմ՝  
ողբարկութեան մերում և կոկծանաց , և  
առաքեա զառ 'ի վերուստ միմիթարու-  
թիւնդ և զզօրութիւնդ 'ի վիշտս տառա-  
պանաց . մի թողուր զմեղ 'ի գառնութեան  
ցաւոցս նկուն լինել ընդ աղետիւք , և  
օրհնեսցուք զիմաստութիւնքո 'ի թշուա-  
ռութեանս անդտմ » :

Այսպիսի եղեն աղօթք Աբելի տարա-  
ծելս յերկիր խորին խոնարհութեամբ ,  
լսէ նա ունաձայն ինչ . բուրմունք գար-  
նանաբեր հոտոց անուշից լցին զվայրն ա-  
մենայն : Անդէն և անդ 'ի վեր ամբառնայ

'ի գետնոյն զդլուխն , և տեսանէ զառա-  
 ջեաւ հրեշտակ զոմն պահապտն երկնա-  
 գեղ վայելըութեամբ , ճակատ նորա սպա-  
 կեալ բոլորիւք վարդից , ժպիտ նորա շը-  
 նորհագեղ որպէս զարշալոյս դարնայնոյ ,  
 որ և բարբառ արձակէր 'ի ձայն քաղցր  
 որպէս զունչ զեփիւոխն . — « Բարեկամ ,  
 լուտ տէր ձայնի խնդրուածաց քոց .  
 հրամայեաց ինձ արկանել զանձամբ մար-  
 մին յօդապատ , առ 'ի մատուցանել ձեզ  
 միսիթար 'ի վիշտս և լինել զօրավիգն : Ի-  
 մաստութիւնն յաւիտենական որ հսկէ  
 անքուն առ բարեկրութիւն ամենայն ա-  
 րարածոց . որ միապէս խնամակալուն է  
 գետնաքարշ սովնոյն , և բոցանիւթ զը-  
 ւարթնոյն , հաճեցաւ բարեգթութեամբ  
 իւրով հրաման տալ երկրի՝ բղխել 'ի ծո-  
 ցոյ իւրմէ գեղս առողջարար 'ի սփոփումն  
 բնակչացն , որոց մարմին՝ առ ժամայս ընդ  
 ցաւովք է գրաւեալ , և 'ի ներքոյ ամենայն  
 վնասագործ ազդմանց , զոր բնութիւն  
 յետ անիծիցն զնոքօք ներգործեաց՝ առ  
 'ի գամքան զքամ ածելոյ զնոսա յապա-  
 կանութիւնն : Բարեկամ , առ զու քեզ  
 զծաղիկսդ և զբոյս բանջարոցս . սոքա են  
 օպտադեղքն . երթ , եռացո զայսոսիկ 'ի

ջուր ականակիտ աղբերն . տուր ախտացելս հօր քում . արբցէ և բժշկեսցի » :

Տուեալ նմա հրեշտակին զծաղիկն և զբանջարսն՝ եղեաներեւյթ : Յապուշհարեալ Աբելի՝ եկաց անշարժ 'ի հիացման . և ապա դոչէ . — « Աստուած իմ , ո՞ւ եմ ես . հող և մոխիր , և մեղուցեալ անձամբ , և դու լսես քաղցրութեամբ իմոցս պաղատանաց : Զիա՞րդ կարողութիւն մահկանացուի՝ գոհանաւալ դքէն . զիա՞րդ նմին հնարաւոր մեծացուցանել արժանապէս զբարութիւնսքո անսահման : Ոչ աէր իմ տէր . տկարանան առ այդ շրթունք մահկանացուք . նոյն իսկ անմահից պարք չեն բաւական յօրհնաբանութիւն » : — Յարուցեալ փութանակի խոյանայ 'ի տաղաւար իւր . ուրախութիւն սրտին թեստայր նմին . սլատրաստէ անժոյժ բաղձմամբ զարբուժն առողջարար : Ընթանայ ապա 'ի խրճիթ հօրն , ուր նստեալ եր նախամայրն առ մահճօքն , և արտասուք 'ի ծնօտս . ուր և կանգուն յոտա թիրզտ և Մեհալա՝ աղլուղջրմ տեսլեամբք առ նովու : Հային զարմացմամբ 'ի Ճեալ նորա , 'ի խնդութիւն և յաշսն փողփողեալս , հային զժապիտ յայտա նորա և 'ի շր-

Թունեսն : Զայն արձակէ Արէլ . — « Սիրելիք իմ . օրհնեցէք զտէր , սըբեցէք յաշաց զարտօսր տրամութեան . լուաւ տէր աղօթից մերոց , և եհաս 'ի թիկունս : Երեւեցաւ ինձ հրեշտակ նորա մինչդեռ յաղօթս կայի 'ի դաշտին . ետ ինձ բանջարս առողջարարս , և պատուիրեաց . « Եռացո զայդ 'ի ջուր յատակ , արբո հօր քում , և ապաքինեսցի » : — Լուան նոքա ըզբանսն . զարմանք կալան զամենեսին , և հնչեցին 'ի շրթանց նոցա գոհութիւնք և փառաբանութիւնք :

Էառ նախահայրն զբաժակն անուշահոտ . յարեաւ նստաւ յանկողնի . գոհացաւ զտեառնէ ջերմաջերմ աստուածպաշտութեամբ . և ասլա կալեալ զձեռանէ որդւոյն մատուցանէր գորովալիր յայտսիւր . սեղմէր գգուէր՝ թանայր զայն արտասուօքն և ասէր . — « Որդեակ իմ . որդեակ սիրուն . օրհնեալ 'ի տեառնէ , յոյր ձեռն առաքեաց ինձ զօդնութիւնիւր , ընդ որոյ անբիծ առաքինութիւն հաճեցաւ տէր , և լուաւ աղօթիցդ գթութեամբ իւրով : Օրհնեալ կըկին , որդեակ իմ՝ օրհնեալ վերստին ։ : — Մատեաւ նոյնապէս և նախամայրն և դստերք իւր .

զիրկս արկին զնովաւ՝ ընդ որոյ ձեռն ա-  
ռաքեաց տէր զօդնութիւն իւր առ նոսա :

Այն ինչ նոքա գիրկընդխառն լինէին  
ընդ Աբելի, ահա դառնոյ Կային յան-  
դոյ, և ասէր ցանձն զՃանապարհայն . —  
« Տանջեն զիս հոգք անհանդիստք . Եր-  
թայց 'ի խրձիթ հօր իմոյ . դուցէ պէտք  
ինչ իցեն իմոց նպաստից . դուցէ մեռանի  
նա . աւազ անձին իմոյ, և ոչ լուսոյց թը-  
շուառացեալս 'ի շրմանց իւրոյ զյետին  
օրհնութիւնն » : — Յայս ստկս փութա-  
ցեալէր նորա յանդաստանացն . յապուշ  
կրթէր 'ի տեսանելն առ տեղեաւ զուրտ-  
խութիւնն մեծ, և զիսանդակաթ դրկա-  
խառնութիւնս . լսէր ևս զօրհնութիւն  
հօրն զորդին : Ընդ տեսանելն զնա Մե-  
հալայի՝ վազեաց ընդ առաջ անկանել ըզ-  
սպարանոցան, և պատմել նմա՝ որպէս ա-  
ռաքեաց տէր զօդնութիւն իւր 'ի ձեռն  
Աբելի : Մատեաւ Կային յանկողինս հօր  
իւրոյ, և համբուրեալ զաջ նորա ասաց .  
— « Ողջոյն ընդ քեզ հայր իմ . օրհնեալ  
տէր՝ որ զքեզ միւսանգամ սլարգեւաց  
մեզ : Բայց հայր իմ, չիցէ քո օրհնու-  
թիւն ինչ և վասն իմ : Օրհնեցէր զնա՝  
յորոյ ձեռն առաքեաց տէր զօդնութիւն

իւր առ քեզ . օրհնեա զիս հայր իմ . ևս  
 եմ անդրանիկ քո » : — Հայեցաւ 'ի նա  
 խանդտկաթ՝ նախահայրն . և սեղմեալ  
 զձեան նորա ասէ . — « Որդեակ իմ Կայ-  
 ին՝ օրհնեալ եղեցիս . . . դու առաջին  
 պատուզ որովայնի իմոյ : Ծնորհք ամենա-  
 կալին իջցեն 'ի վերայ քո . խաղաղութիւն  
 անսպակաս 'ի սրտիդ . և հանգիստ անվըր-  
 դով 'ի հոգւոջ » : — Դարձոյց յետոյ Կայ-  
 ին զերեսս առ եղբայր իւր , և գիրկո արկ  
 զնովաւ . և զիա՞րդ ոչ . ուր ամենեքին կան-  
 խեցին 'ի նոյն լի գորովախառն հրձուա-  
 նօք : Ելանի ապա 'ի տաղաւարեն . խոյս  
 տայ մեկուսանալ 'ի խորշս խաւարչուտ  
 անտառին . եկաց լուռ՝ շաղեալ վարա-  
 կեալ 'ի կնճիւն դառնութեան մաղձին .  
 և զինի գոչեաց . — « Հէ . . . խաղաղու-  
 թիւն . . . հանգիստ անվըրդով 'ի հոգւոջ . . .  
 և զիա՞րդ . որոպէս ստացայց զայդ խաղա-  
 ղութիւն . . . զայդ հանգիստ . . . Ոչ ար-  
 դեօք հարկ եղեւ ինձ աղերսահայց ընդու-  
 նել զօրհնութիւն , որ ինքնաբուղս հոսեր  
 'ի ըրթանցն յօրհնել նորա զեղբայր իմ :  
 Եւ սակայն ես ինքն եմ անդրանիկ . ով  
 գեղեցիկ պատուոյս : Վայ և եղուկ թը-  
 շուառացելումս : Իմ ըարձ նախապատիւ՝

յեղկութեան միայն և յարհամարհութեան : Ի ձեռն նորա առաքեաց տէր զօդ-  
 նութիւն իւր . նմա պակասի և ոչինչ՝ լի-  
 նել միշտ սիրելի քան զիս : Ո՞րպէս արդոյ  
 ունիցին զիս նոքա , զիս զոր տէր անար-  
 դեաց , զոր Հրեշտակը անարգեցին : Չե-  
 րեին նոքա ինձ . արհամարհանօք զանց  
 առնեն զինեւ , ուր ես ոգեսպառ լինիմ 'ի  
 հերկս անդոց , և վիժեն քրտունիք ընդ ե-  
 րեսս արեակէզ . յայնժամ նոքա զանց առ-  
 նեն զինեւ արհամարհանօք երթալ յայ-  
 ցելութիւն նմա՝ որոյ ձեռք գրգասունիք  
 խաղան զծաղկօք . նմա՝ որ կամ ընկողմնի  
 անդործ առ խաշամբըն արօտական , կամ  
 առ կարի գորովանացն կաթեցուցանէ շի-  
 թըս ինչ արտասուաց . իբր զի արեն որ  
 'ի մուտս՝ ծիրանագոյն զամպս ներկանէ .  
 կամ զի տարտփ ցողոյն՝ 'ի նարօտ ծաղ-  
 կանցն գեղեցիկ շողըողէ : Ափառս ինձ ,  
 ափառս որ անդրանիկ ծնայ . զի որպէս  
 տեսանեմս՝ ոչինչ մնաց անդրանիու-  
 թեանս՝ բայց անէծքն միայն , և կամ  
 ծանրագոյն բաժին 'ի բեռանց սորա : Կը-  
 մա ժալտի քաղցրահայեաց բնութիւնն  
 համօքէն . ես միայն ուտեմ զիմ հաց թըր-  
 մաալ քրտամբք երեսաց . ես միայն չուա-

ուացեալ յամենեսին » : — Զայս օրինակ որո՞նքեալ ընդ միտս որո՞նս դառնամաղձս՝ թափառէր աստանդական յանտառին :

Տեղի տայր արեգակն յետկոյս լերանցն կապուտակաց , և ծաւալէր զերեկորին երփն շառագոյն՝ զոսկեձաճանչ ամսղովքն , և զկողմամբք վայրացն . և ասէր յայնժամ նախահայրն . — « Ահա տեղի տայ արեգակն յետկոյս լերանց . Ելից՝ի դաշտ դալարագեղ առաջի խրճիթիս . Ելից մինչդեռ աւուր կայ օրհնել զաէր Աստուած որ օգնեաց ինձ » : — Յարեաւ յանկողնոյն առուգացեալ ուժով , կազդուրեալ՝ի մարմնի . Ել և նախամայրն ընդ դստերացն երթաւ ընդ նմա : Երեկորի արեգակն ծաւալէր սքանչելապէս զվայրօքն ամենայն զիւր ժակիտ գեղածիծաղ . ծունք եղ առ ետեղնախահայրն , և զննեալ շուրջ հիանիշմար աչօք զբնաւ իսկ զվայրն այսգունակ քաղցրաճաճանչ , գոչեաց եռանդնաշարժ զեղմամբ երկիւղած սրտին » . — Աւասիկ եմ ամենակալ տէր , ահաւասիկ յերեսս անկեալ առաջի քո՝ խոստովան լինել անսահման բարութեան քում : Ո՞ւր արդ ցաւք գժնդակք՝ զի՞ Եղի ձեզ : Սասա-

կութիւն ձեր ժամանեաց ցոսկերս իմ՝  
տոչորեաց որպէս հուր զորովայն իմ։ այլ  
՚ի յոյզս անդ խռովութեան՝ հոգի իմ համ-  
բարձ զանձն ՚ի բարձունս, յուսացաւ  
առ տէր : Լուսւ տէր ՚ի բարձանց աղօ-  
թից մերոց, հայեցաւ նա յերկնից յեր-  
կիր, դադարեաց բռնութիւն ցաւոց, դար-  
ձաւ յոսկերս իմ զուարթութիւն և զօ-  
րութիւն : Մահու չէր տակաւին իշխա-  
նութիւն քակել զյարկ հողեղէն . հարկ  
է ինձ տակաւին օրհնել զքեզ ՚ի մահկա-  
նացու մարմնի տատ, զփորձ առնուլ տա-  
կաւ նորանոր սքանչելեաց անբաւ ողոր-  
մութեանդ՝ զորոց ցուցանես զհաւասախս  
առ մարդ հողազանզուած » :

« Օրհնեցից զքեզ Աստուած իմ՝ որոյ  
գթութիւնդ անբաւ . օրհնեցից յելից ցո-  
զատարափ արեսու՝ մինչև ՚ի ծագել դիշե-  
րափայլ լուսնոյն : Ցորչափ ընակէ անձն  
իմ յայս յարկ կաւեղէն, թոթովեսցէ թե-  
րակատար զօրհնութիւնս քո և զխոստո-  
վանութիւնս մինչև քակտեսցի այս յարկ  
կաւեղէն . յայնժամ Աստուած իմ՝ որոյ  
ողորմութիւնդ անչափ, յայնժամ անձն  
մեղուցելոյս ամբարձեալ յաղթողապէս  
գեր ՚ի վերոյ քան զիւր յարկ կաւեղէն՝

կեցցէ Երջանիկ, և տեսցէ զփառս մեծ-  
վայելութեան քում։ Դուք զուարթունք  
հրաբունք՝ հայեցարուք՝ ի խոնարհ յայս  
օթեան մեղաւորաց, ակնարկեսջիք յայս  
օթարան մահուան։ Երկիրս այս (որոյ  
սասանեցան հիմունք, ուստի փախեաւ  
մշտագուարձ դարուն, յորմէ հետէ ան-  
կաւ մարդն մեղուցեալ, յորմէ հետէ  
դարձուցիք՝ ի մէնջ զաչս ձեր), Երկիրս  
այս տեսարան է սքանչելեաց անհուն  
բարութեան իւրոյ, լերուք ականատեսք,  
և աստուածեղին իմն հիացմամբ օրհ-  
նեսջիք զնաւ արժանագոյն ևս՝ յոր չեմք  
բաւական։ Մարդկութիւնս՝ աւաղ, չէ  
ձեռնհաս, բայց հառաջել և եթ, բայց  
թոթովաբանել միայն զիւր հիացումն մը-  
տաց»։

« Ողջոյն քեզ կրկին՝ արև գեղեցիկ,  
ողջոյն վերստին յառաջ քան զքո մուտ։  
Յորժամ ճառագայթք քո առաւօտեան  
շառաւիղեին՝ ի թիկանց մայրիցն, հեծէի  
ևս առ ցաւոց յանկողնի։ յորժամ պայ-  
ծառացուցիննոքա զլսրճիթ իմ՝ ողջունե-  
ցի զքեզ հառաջանօք։ շառաւիղք քո ե-  
րեկորինք արդնշողեն՝ ի թիկանց լերանց,  
ծնկօք կրկնելովք գոհանամ զտեառնէ որ

օգնեաց ինձ , որ օգնեաց յառաջքան զքո  
մտանել : Ողջոյն ընդ ձեզ լերինք բարձ-  
րաբերձք . և ձեզ ողջոյն՝ բլուրք դաշ-  
տասփիւռք . աչք իմ դարձեալ տեսցեն  
զձեր ցոլացումն կարմրագեղ նշուլից ար-  
շալլոց և երեկորին » :

« Ողջոյն ընդ ձեզ թռչունք օրհներ-  
պուք . դայլայլեկք ձեր զուարձացուսցեն  
և ևս զականջս իմ . զարթուսցեն զիս յայ-  
գուէ յօրհնութիւնս բարձրելոյն : Դուք  
աղբիւրք կարկաջասահք ողջոյն և ձեզ .  
հանգիցեն տակաւ կողք իմ զափամբք ձե-  
րով ծաղկաւէտ , երբ խոխոջանք ձեր հե-  
զասահ 'ի վերայ ածցեն զնինջ ոգենորոգ :  
Եւ դուք թաւուաք և անտառք , դուք հո-  
վանոցք տաշտագեղք , ձեմեցից դարձեալ  
ընդ հովանեօբդ . արկջիք միւսանգամ զգա-  
գաթամբ իմով զզովութիւն ձեր հեշտա-  
րար , յորժամ թափառեցայց ընդ նոքօք  
մենաւոր ընկզմեալ 'ի խոկմունս իմանա-  
լեացն : Ողջոյն ընդ քեզ՝ ողջոյն՝ համա-  
տարած ընութիւնդ գեղեցիկ ; բայց 'ի  
քեզ երկիր պագանեմ իմ և քո արտաքի :  
Օրհնեալ տէր օրհնեալ . նա զցաւս իմ  
վերացոյց , նա ձեռնկալու եղեւ խեցւոյս՝  
զի մի անկցի 'ի խորտակումն » :

Այսպէս օրհնէր զամենակալն նախահայր մարդկութեանս . քնութիւնն լոիկ՝ երեւէր յակճիռս և մատղիր յազօթս նորա , և արարածք խնդակիցք ընդ նորայն վերակենցաղել : Արեգակն արձակեր տակաւ աղօտագին՝ զվերջին իւր ճառագոյթս ընդ սաղարթախիտ ծառաստան նորա , և եմուտ զօղել՚ի յետոյս լերանց . ծաղիկք ետուն հեղասիւդ զեփիւսից՝ ըզհոտ անուշիցն բուրել՚ի հոտոտելիս նորա . և թուչունք երդեին զնովաւ քաղցրաւաչ , ոստ 'ի յոստոյ ճախր առեալ կայտուէին :

Մինչ այս մինչ այն՝ եհասս կային և Աբել ընդ հովանեաւ ծառաստանին , և տեսին բերկրապատար ցնծութեամբ ըզհայր իւրեանց սլարդեական առ ուխտ փափաքանացնոցա : Իկատարել աղօթիցն՝ յոտն յառնէ նախահայրն . գիրկս արկանէ կնողն և զաւակացն , արտասուք խընդութեան իջանէին յաչաց նոցա . դարձանէ ապա յիւր տաղաւար : Ասէ Աբել ցկային . — « Եղբայր իմ սիրելի . զո՞ր դոհութիւնս հատուսցուք տեան զի լսելի եղեն աղաչանք մեր , և պարդեաց մեղ զհայր մեր ոկատուական : Ես այժմէն իսկ

յորում ծագէ լուսին՝ Երթամ առ սեղանն իմ մատուցանել տեառն սկստարագ զմատաղագոյնն 'ի գառանց իմոց։ Խցէս և դու Եղբայր 'ի նոյն միտս։ Երթիցէս նոյն պէս զոհել տեառն 'ի վերայ սեղանոյքո»։

Հայեցեալ Կայենի 'ի նա ընդ ակամբ՝ ասէ։ — « Երթամ և ես ։ Երթամ յիմ սեղան մատուցանել տեառն զոր միանդամ աղքատութիւն անդոցս տայ ինձ»։ — Պատասխանի ետ նմա Աբէլ քաղցրութեամբ։ — « Եղբայր իմ։ ոչ համարի տէր ոչ զգառն ողջակիզեալ առաջի նորա, և ոչ զպտուղս անդոց զոր ծախէ բոց։ միայն թէ աստուածպաշտութիւն անստգիւտ՝ վառեալ բորբոքեսցի 'ի սրտի այնը որ մատուցանէն»։

Կրկնեաց Կային։ — « Ճշմարիտ է։ իջէ վաղվաղակի հուր յերկնից ծախել զողջակեղ քո։ զի 'ի ձեռն քո առաքեաց տէր զօգնութիւն իւր, չարար զիս այնմ արժանի, բայց և այնպէս երթայց մատուցանել նմա զիմ պատարագ։ Վառի 'ի սրտի իմում հուր ճշմարիտ երախտագիւտութեան։ Հայր մեր որ պարգևեցաւ մեզ վերստին, պատուական է առ ինեւ՝ որպէս առ քեւ։ Եւ տէր արասցէ ընդ իս ընդ եղ-

կելիս , որպես և հաճոյ է տռաջի տըաց  
իւրոց » :

Անկաւ յայնժամ Աբելգորովագին ըդ  
պարանոցաւ եղբօրն և տսաց . — « Ո՞հ ,  
Եղբայր իմ . և իցէ արժան վարակիլտըրա-  
մութեամբ 'ի սիրտ ընդ այն՝ զի տէր ընդ  
ձեռն իմ օգնեաց : Եթէ գթութիւն նո-  
րա ընդ ձեռն իմ օգնեաց , սովաւ ամենե-  
ցուն օգնեացնա հասարակաբար : Եղբայր  
իմ սիրելի 'ի բաց արա 'ի սրտեդ զտըրա-  
մութիւն . տէր սրտագէտ մեր՝ տեսանէ  
զտըրամութիւնդ անիրաւ , և լաէ ունկն  
նորա զլուելեայն քրթմնջանս : Սիրեա զիս  
որպէս եսս սիրեմ զքեզ : Երթ , մատո  
զզոհ քո . բայց մի ազաքեմ՝ թողցես պըդ-  
ծել ախտաշարժ կրից զտըրութիւն պաշ-  
տամանդ . ընկալցի յայնժամ տէր Ար-  
տուած ախորժ հաճութեամբ զօրհնու-  
թիւնս քո և զգոհութիւն , և օրհնեսցէ  
զքեզ յաթուոցն բարձրութեան » :

Ոչինչ ետ նմա պատասխանի Կային ,  
անց գնաց յանդաստան իւր . իսկ Եղբօրն  
հայեցեալ զհետ նորա ցաւագին անձամբ՝  
չոքաւ յարօտ իւր , այր իւրաքանչիւր առ  
իւր սեղան : Եզեն Աբելզքեղեցիկն 'ի մա-  
տաղ գառանցն . և հան զայն 'ի սեղանն՝ ցա-

Նեալ զեռվաւ ոստո խնկենեաց և ծաղիկս  
անուշունս , և արկ հուր յողջակէղն : Եդ  
ծունը առաջի սեղանոյն եռանդադին պաշ  
տամամբ , և մատոյց տետան անբիծ սըր-  
տիւ զօրհնութիւնս իւր , և զգոհութիւնս:  
Ի սմին վայրի բոց ողջակիզին ելանէր դի-  
զանայր յերկինս ընդ մութ գիշերոյն . և  
սաստեաց տէր հողմոց չշնչել , և վայրին ա-  
մենայն հանդարտէր անմռունչ . վասն զի  
հաճոյ էր նմա պատարադն 'ի հոտ ա-  
նուշից :

Ի նմին գիշերի Կային ևս եդ 'ի սկտղոյ ան-  
դաստանացն 'ի վերայ սեղանոյ իւրոյ . մա-  
տոյց զհուր 'ի զոհսն՝ և անկաւ 'ի ծունկս .  
և ահա նոյնժամայն բոմբիւնք ահեղք և  
սօսափիւն 'ի մացաւսն . մըրիկ հողմոյ  
ցրուեաց շառաչմամբ զգոհն 'ի վերուստ  
սեղանոյն . բոց և ծուխ ծածկեցին շուր-  
ջանակի զթշուառականն : Հարթնու նա  
յետս յետս 'ի սեղանոյն դողմամբ . և ա-  
հա ձայն ինչ ահաւոր 'ի քստմնելի մթան  
գիշերոյն որոտայր առ նա . — « Զի՞ է՝ զի  
դողաս դու . և ընդէր ահափետք 'ի դէմն  
քո : Եթէ գարձցիս 'ի չարեացգ՝ թողից  
քեզ զմեղս քո . ապա թէ ոչ մեղք քո դա-  
տախաղ , և սկատիժք նոցալիցին քեզ բնա-


կակիցք : Զի՞ է՝ զի ատես զեղբայր քո .  
ընդէր հալածես զարդարն՝ որ սիրէն ըզ-  
քեղ, և պատուէ որպէս զանդրանիկ » :

Լռեաց ապա ձայնն . իսկ կային գո-  
զայր սարսափմամբ հեռի ՚ի սեղանոյն .  
Ել դառնալ յետս գիշերայն . հողմն զայ-  
րագին՝ վարէր զհետ նորա զգարշահոտ  
ծուխ զոհին : Սիրտ նորա բաբախէր , և  
քիրտն սկաղեալ ծորէր համակ ընդ մար-  
մինն : Ի սմին վայրի շըջեալ զաչսն ՚ի դաշ-  
տակողմն՝ տեսանէ ՚ի բացուստ զբոց պա-  
տարագի եղբօրն , զի վէտ առ վէտ ծա-  
ծանմամբ՝ ամբառնայր հեղիկ յերկինս ՚ի  
վեր ընդ մութ գիշերոյն : Յայս տեսիլ լի-  
եղեալ յուսահատութեամբ զերեսս ՚ի  
բաց դարձոյց . կրծեն ատամունքն , և շըր-  
թունք գողգոջունք այսպէս կակաղեն . —  
« Ահա նա ... ահա սիրէլին յաչս երկնից՝  
որ մատուցանէ զպատարագ իւր : Վահ .  
հայելոչ ևս ժուժեմ . թէ յաւելից յայն  
ակնարկել , լուցցին դժոխք ՚ի սիրտ իւր,  
և յայնժամ ոչ ևս .... ոչ ևս զօրեցից նա-  
հանջել զբաբախուն շըթունս իմ յանի-  
ծանելոյ զնա : Եկ եկ մահ , եկ ապակա-  
նութիւն դու . ուր զձեղ գտից . եկայք  
առ իս , եկայք առ տառապեալս » :

« Ո՞հ , ո՞հ . հայր իմ , ո՞հ , ահա մեղաց  
քոց պառւղ : Եկից ես , եկից կալ աչացգ  
յանդիման՝ սովին դալկահար յուսահա-  
տութեամբ դիմացս , զի տեսցես սովաւ՝ և զզա-  
ւակի քում զամենայն թշուառութիւն :  
Ոչ , անձն իմ , ոչ . թշուառացիր գու միայ-  
նակ , բայց մի ՚ի հայր քո լինիր այսպէս  
քինախնդիր . սարսափ մահու առցէ զոգի  
նորա , և այն տեսիլ յաւելցէ զիմ աղետ  
թշուառութեան : Այո՝ այո . սրտմտու-  
թիւն տեառն ծանրացեալ է ՚ի վերայ իմ ,  
անէծք նորա և արհամարհութիւն : Ես  
ինքն եմ երեքթշուառեանն յարարածս՝  
որ բնակեալ են յերկրի . գաղանք վայրի ,  
սողունք զեռունք՝ նախանձելի են առ ի-  
նե : Ով Աստուած , Աստուած ողորմու-  
թեան . հնա՞ր ինչ իցէ արդարութեանդ  
ողորմիլ եղկելոյս . մի ևս հեղուը ՚ի վե-  
րայ իմ զբաժակ սրտմտութեան քո , և  
կամ զարձո զիս ՚ի վիհ չքութեան . . .  
Այլ զի՞նչ ասեմ . . . անձն թշուառացեալ  
եղեանաւոր . « Եթէ դարձցիս ՚ի չարեացդ՝  
ասաց ինձ , թողից քեզ զմեզս քո » : Արդ  
ընտրեա զթողութիւն , կամ զթշուառու-  
թիւն . թշուառութիւն անողատում , թը-

շուառութիւն յաւիտենից : Այս մեղայ .  
մեղք իմ և անօրէնութիւնք՝ ես ինձէն  
խոստովանիմ, բարձրացան քան զգուխ  
իմ. վրէժինդրութիւն բոլոքէն առ 'ի քէն  
Աստուած արդարութեան . և զիարդ  
վրէժինդրութիւն քո՝ արդար ամենայ-  
նիւ : Որչափ հեռանայ մարդ 'ի ձանա-  
պարհացն անբծութեան և բարութեան ,  
նոյնչափ և թշուառանայ . որով և այսչափ  
թշուառացեալ է անձն իմ : Օն անդր . ա-  
ռից դարձայց 'ի ձանապարհաց իմոց չա-  
րաց . բարձ Աստուած յաչաց քոց զանօ-  
րէնութիւնս իմ զեռնացեալ որ զինէն  
դատախաղեն : Ողորմեաց Աստուած , ո-  
զորմեա ինձ . թե թեացո զբեռն թշուա-  
ռութեանս , և կամ . . . դարձո զիս 'ի  
չիք » :

# ՄԱՀ ԱԲԵԼԻ



Ե Ր Գ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

**Թ**եռ իջանէին տարափք գիշերային  
ցողցն . լուէին դեռ 'ի բոյնս օդականիքն 'ի  
քուն , և դեռ տարածեալ էր գիշեր սևա-  
թոյր յընդարձակութեան հովտին , և ա-  
զօտ աշալուրջք հազիւ սալիտակացու-  
ցեալ զարտեան լերինն , յորժամ ել մեկ-  
նեցաւ Կային 'ի տաղաւարէն՝ մածեալ  
մակարդեալ 'ի մաղձ դառնութեան : Ոչ  
գիտելով Մեհալայի թէ լուէր նա զհէծու-  
թիւն իւր , լացեալ էր 'ի վերայ նորա զգե-  
շերն ողջոյն բազկատարած յաղօթս : Խակ  
նորա թարթափեալ աստանդական մոըն-  
շէր յանձին . ձայն իւր գոռայր 'ի խոր  
և 'ի միայնիկ հանդարտութեան անդ ա-  
շալըջոյն՝ օրինակ իմն որպէս որոտումն  
ինչ բացական . — « Ո՛վ գիշեր ատելի ,

այսպէս կաղկանձեր նա , զի՞նչ երեսյթք  
սոսկալիք զինեւ . արհաւիրք 'ի վերայ ար-  
հաւրաց : Երբ երեակայութիւն իմ հան-  
դարտ , փարատէին և ցնորիք անրջականք .  
Եկն զաջօք նիրհ հանգստեան , և ահա հե-  
կեկանիք նորա և ողբք զարթուցին զիս 'ի  
քնոյ : Ո'վ աղետիցս . ոչ զարթեայց ես  
ուրեմն , բայց յանմխիթար դառնութիւն  
միայն . սա ոչ թողու ինձ և ոչ վայրիկ մի  
հանգստեան : Զո՞ ողբայիր Մեհալա ,  
բայց զիս միայն . և սակայն գեռ չդիտես՝  
զի մերժեցաւ զոհ իմ : Այդ արտասուք ,  
այդ հառաջանք քո և հեկեկանիք հեղձա-  
մղձուկ զիս առնեն . հանգուրժել ոչ զօ-  
րեմ . արդէն կանխեցին յափշտակեցին յի-  
նէն զհանգիստ տուընջեան որ լուսանայ :  
Ամենեցուն երեսք՝ ծաղկեալք միշտ զուար-  
ճութեամբ , և հաճք յամենայն 'ի դործս ,  
ևս և 'ի մանունս զոր առնէ եղբայր իմ ,  
ուր սեամաղձ տրտմութիւն ամենայն ու-  
րեք զիս հալածէ : Միրեմ զքեզ Մեհալա ,  
սիրեմ զքեզ քան զանձն . բայց առխմէ՛  
դու ինքն դառնութեամբ լցեր զստկաւիկ  
ժամսն՝ որ մնային առ իմ հանգիստ » :

Զկայ առնու ընդ թաւացեալ մացա-  
ռօքն առ ստորոտով քարտժայոի ուրեք ,

և առէ . — « Աստ ո՛քուն անուշակ , աստ  
մի անխօսյեր յինէն զշնորհս քո՝ զքաղցրու-  
թիւն քո . այր մի տառապեալ եմ ես :  
Տաժանեալ յոդիս ապաստան՝ սպասէի  
քեզ՝ի խրճիթի խմում , և հազիւ տարա-  
ծեալ . քո զդրդիչ թևսդ զարտեանամբքս ,  
և ահա զարթոյց զիս ձայն ինչ աւաղա-  
կան : Աստ ապաքէն ոչ ոք ամբոխեսցէ  
զիս հանգիստ . սակայն թէ ընութիւնք  
անշունք՝ ոչ դաշնաւորեսցին հալածել  
զիս և՝ի ժամ հանգստեան : Թող ինձ , եր-  
կիր , որ անկեալ ընդ խիստ անիծիւք պա-  
հանջես վաստակս ոդետանջս՝ երկարել  
զկեանս առ՝ի յերկարել զիս թշուառու-  
թիւն . . . թող ինձ վայրիկ մի անդորր  
հանգստեան՝ի վաստակոց աստի » : —  
Զայս ասացեալ ընկողմնեցաւ՝ի վերայ  
անուշահոտ դալարեացն . ոչ յապաղեաց  
և քուն , առժամայն տարածեաց զնովաւ  
զթևս իւր զսեափետուր :

Զէետ երթայր Անամելէք շնուզաց նո-  
րա գաղտագողի . եկաց առընթեր նմին և  
առէ . — « Պատեալ է ահա քուն թանձ-  
րութեան զդորա զարտեանամբք . կողմնե-  
ցայց և ես առ նովաւ . զկամա իմ կատա-  
րեսցեն անուրջք ուրուականիք՝ ամբոխել

ցնորիւք զերեակայութիւննորա և զիսելս :  
 Եկայք անուրջք խօլականիք՝ ձեռն տուք  
 ինձ . Թափեցէք զձեր զամենայն ճիգն .  
 Ժողովեցէք 'ի մի զամենայն ցնորս՝ յուզել  
 փոթորկել 'ի սիրտ նորա զնախանձ չա-  
 րաժանի , զսրամառութիւն և զվրէժ կո-  
 տաղի , և զամենայն չարատանջ կիրս 'ի  
 ծուփս ահեղ խոռվութեան » : — Այս-  
 պէս ասացեալ այսն սլիղձ՝ դճեալ նստի  
 առընթեր նորա : Եւ ահա բոմբիւնիք ա-  
 հագինք 'ի կատար քարանձաւին , և հողմ  
 ահեղագոչ շարժէր զմացառն գլխովին ,  
 և ծեծէր զկուածոյ խոռվոսիս հերաց Կայե-  
 նի ընդ Ճակատ նորա և զայտիւք : Բայց  
 'ի զուր գոչեցին մացառքն . 'ի զուր խոռ-  
 պոպիք նորա կուածոյք բաղլսեցին զայտս  
 նորա և զՃակատ . ծանրացեալ էր քուն  
 ծանրագանգաղ 'ի վերայ արտեանաց  
 նորա :

Տեսանէր յանուրջս դաշտավայր լայ-  
 նատարած , յորում ցիր և ցան հիւղք բա-  
 զումք՝ աղքատաց գծուծ բնակարանիք :  
 Որդիք իւր և թոռունիք սփուեալք յերեսս  
 դաշտին՝ առ ոչինչ գրէին 'ի հասարակ ա-  
 ւուր զտօթ արեւուն , որ արձակէր զփա-  
 զաղիչ Ճառագայթսն 'ի թիսացեալ պարա-

նոցս նոցս : Բառզմավաստակ քրտամբք՝  
 էր զի հնձեին զիւրեանց ազազուն հուն-  
 ձըս , և էր զի բրեին զերկիր կորդացեալ  
 'ի վար նորոց սերմանեաց : Կէսք միջովք  
 չափ կքեալ՝ քանցեին յանգոց արիւնուա-  
 ձեռամբք զգաժանաբոյս սատասկս , որոց  
 սողոսկեալ զարմտեօք՝ ծծեին անյադ ըզ-  
 հիւթն անդարար , մինչդեռ կանայք նո-  
 ցա 'ի խրճիթս գաղարականք՝ հպատա-  
 կեին առանին գործոց , և 'ի հանգերձել  
 զաղքատին կերակրիկն : Եղիել որդի իւր  
 անդրանիկ զոր 'ի յանուրջոն ծանեաւքաջ  
 'ի դիմացն և 'ի շարժուածոցն , գայր անդ  
 շալակեալ զթիկամբք բեռն ծանրակիր .  
 բարձք ոտիցն գանդաշէին . քիրտն և ա-  
 պաժոյժ և որտմութիւնն 'ի գէմնն , և  
 ինքն ճմլեալ վշատեալ : Հառաշէր 'ի խո-  
 րոց սրտէ . — « Զիարդ թշուառ իցեն  
 կեանքս , որպէս լի վշտիւք և տառապա-  
 նօք : Զիարդ անողորմ ծանրացան անէծք  
 'ի վերայ որդւոցն կայենի : Որ արար զաշ-  
 խարհս , մի արդեօք յետ անիծից տարա-  
 գրեաց զամենեսին յաչաց իւրոց . և կամ  
 անէծք գուցէ հարին միայն զծնունդս անդ-  
 րանկին : Անդ 'ի մարգագեանի՛ ուր բը-  
 նակեն որդիքն Աբելի . յորմէ վտարեցին

Դմեզ՝ չթողեալք մեզ այլ օժևան՝ բայց  
 զայս անապատ խոպանացեալ. անդ՝ ուր  
 հանգչին նոքա ընդ գրգասուն հովանեաւ՝  
 բնութիւնն երեխ զվայելութիւն իւր բը-  
 նաւ՝ նուիրեալ միայն մեղկասիրտ վատո-  
 թեան նոցա • ամենայն միսիթարութիւնք  
 աղցաւոր կենացս, բոլոր բոլորովին հեշտա-  
 լի գրգանք՝ պահեալ են 'ի վայելս փափ-  
 կասիրացն այնոցիկ. չքաւորութիւն միայն  
 և աշխատանք բաժին տուան չուառացե-  
 լոցս » : — Յայս բան ճմլեալ ճնշեալ  
 միշտ Եղիկի ընդ բեռամբն որ 'ի թիկունս,  
 դանդաչէր ծանրաքայլառ իւր խրճիթ :

Ետես ապա Կային յանուրջան՝ բացա-  
 գոյն մարմանդ ինչ ծաղկաւէտ • յորում  
 աղբերակունք ականակիտք սահեին՝ սո-  
 զոսկէին՝ բազմապտոյտ ճախր առեալք  
 ընդ նսեմաստուեր հովանեօք անտառաց  
 կամարացելոց • էր զի դնային խոխոջա-  
 ձայն 'ի քերելն առ կանաչագեղ հովանո-  
 ցօք • և էր զի ընդ մէջ երկուստեք եր-  
 կայնաշար ծառոց վարսաւորաց, 'ի ջենջ  
 հայելով հեղասահ ալեաց նոցա յառէին  
 հայէին ծաղկունք և ծառք՝ զփողփողուն  
 զգեղ իւրեանց երփներանդ • և էր զի սա-  
 հեալք ծաղկածիր ափամբք՝ երթային ա-

ւարտէին նոքա 'ի լիք խաղաղական և հովանաւոր : Աստ 'ի հեղասաղարթ անտառ կիտրոնեաց՝ խողային զեփիւոք դովարաբք անդ ծառաստան թզենեաց տարածանէր զհովանի իւր լայնասաղարթ 'ի վերայ ծաղկանց փթթելոց :

Ոչ այսպէս գեղեցիկ էր<sup>9</sup> Տեմպէ , և ոչ գնիդոն , ուր համբառնայր 'ի վերայ սըրբատաշ սեանց կձեից տաճար Աստղկան , ուր թագաւորէր երբեմն առասպելեալն ասառւածուհի՝ իւրովքն համախումբ պաշտօնէիւք : Խաշնիք լուսակիզն թափառէին 'ի բարձրացեալ արօտո՝ խուզել արածել զծաղիկ բաղմաբուրեան , մինչդեռ փափկասուն հովիւն ծաղկապսակ եղանակէ խանդաղատապոյն 'ի լուր սիրուհւոյն , որոյ կողմնեալ յանհոգս ընդհովանեան՝ զականէր 'ի նա ծայրիւ աշացն : Անդ պատանիք նորահասք՝ գեղեցիկք որպէս<sup>10</sup> զԱկրս , և պատանուհիք դեռափափթիթք չքնաղք որպէս<sup>11</sup> զԸնորհս տաւտղէին 'ի մի ընդ բարձրակամար ձողաբարձիւն : Յայնժամ անուշարար ըմպելիք փրփրադէղ ցայտէին 'ի բարձուէ 'ի բաժակս ցանկալիս , և պառողք ուկեգոյնք շողողէին 'ի սեղան ծաղկառաջի որպացն Արեց :

սփիւռ՝ յորում պահու հնչելին աստի և  
անտի քաղցրավի քնարը և սրինդք :

Յառնէր ապա 'ի մէջ երախանին երի-  
տասարդ ոմն , և ասէր առ խրախնանա-  
կիցս . — « Ողջ կացնելք սիրելիք իմ , ողջ  
ընդ յամայր ամս . ունկն գիք բանից ի-  
մոց : Ապաքէն բարեհամբոյր է առ մեզ  
բնութիւն , և ժողովեաց 'ի մի դամենայն  
դրդանս իւր շուրջ զբնակութեամբ մե-  
րով , բայց և սյնալէս պահանջէ առ 'ի  
մէնջ գարմանս և վաստակս . դարմանք և  
վաստակք կարի տաժանականք վասն մեր  
նուիրելոցս յայլ պարտպմունս քաղց-  
րագոյնս : Յաւալի է ձեռաց սօվորելոց  
առ զարկ փափկիկ աղեաց սաղմօսարա-  
նին՝ հերկել զերկիր . դլուխք գեղագան-  
գուրք՝ որք զօր տմենայն հանգչին ընդ զո-  
վագին հովանեաւ՝ բոլորիւք վարդից սկ-  
սակեալք , ոչ հանգուրժեն առ տապ ա-  
րեւուն : Սիրելիք իմ , խորհուրդ մի տսեմ  
ձեզ , զոր ազդումն կարծեմ <sup>12</sup> պահպա-  
նովական հրեշտակիս : Ընդ առնուլ մը-  
թութեան գիշերոյն՝ Ելցուք յարտորայսն՝  
ուր ժողովքն են արտավարաց . և յոր-  
ժամ յոդնեալք յաշխատութենէ տուըն-  
ջեան՝ զքնով անկանին թմրեալք՝ դիմես .

ցուք՝ ի խրձիթս նոցա • կապեալս վարես-  
ցուք զնոսա՝ ի յարկս մեր, զի արք նոցա  
մշակեսցեն ծառայտբար զմեր անդաս-  
տան • իսկ կանայք և գտտերք կացցեն՝ ի  
սպաս աղախնութեան՝ ո՞ տիկնայք մեր և  
օրիորդք,՝ ի սենեակս ձեր : Բայց դարձեալ  
ասեմ՝ զիշեր ընտրեսցուք : Արաւելումք  
արդարե քան զնոսա՝ ի թիւ համարոյ,  
սակայն լաւ ևս է խոյս տալ՝ ի վտանգա-  
ւոր մարտից » :

Զայս օրինակ խօսեցաւ երիտասարդն  
այն, և բազմութիւն ժողվոյն ծափս և  
հարնմին՝ ի ձայն ցնծութեան : Եւ ահա  
՝ ինմին երազի երեւութանայր աչացն կայե-  
նի՝ գիշեր աղջամղջին • յորում խառնա-  
ձայն ամբառնայր աղաղակ զարհուրա-  
նաց, կոծոյ, և գոչեւն յաղթանակի՝ ի  
խրձթաց անտի, որոց հրձիգ լեալ բարձ-  
րացուցանէին զմրբիկ բոցոյն • շառագ-  
նեալ էր գիշերն առհասարակ բացուստ՝ ի  
բաց, և կոհակք բացական վտակին՝ շո-  
ղային բոցափայլ զկարմրացեալ ափամբք:  
Առ լսու հրայրեցին՝ աւսանէր նա զորդիս  
իւր կապեալս ձեռակապօք, զկանայս նո-  
ցա և զմատաղերամ մանկունս, որպէս  
հօրանս խաշանց բառաչողաց՝ վարեալս  
առաջի որդւոցն Աբելի :

Այսպիսի եղեն անուրջքն կայենի , և  
դողայր տակաւին 'ի քնել իւրում , յոր-  
ժամ Աբէլ՝ որ նշմարեալն էր զնա ընդ  
մացառօքն առ ոտամբք քարաժայոին , մեր-  
ձեցաւ առ նա . և արկեալ զնովաւ աչս լի  
խանդաղատանօք՝ հծծէր դաշն ձայնիւ .  
— «Ո՞ տայր ինձ , եղբայր իմ , զարթնուլ  
քեզ վազվազակի , զի սիրտ իմ սիրազա-  
տար յայտնէր զիւր առ քեզ զիսանդ , և  
բազուկք զքե փարէին լի անձկանօք :  
Բայց ոչ . լուցէք վայր մի իղձք անժոյժք .  
լուցէք և դուք զեփիւռք անտառիս . մի  
և դուք թռչունքդ երգէք 'ի մօտոյ , դու-  
ցէ մերժեսցի 'ի նմանէ քունն կենդանա-  
րար . թերևս անդամք իւր տաժանաբեկք՝  
պէտս ունին նորայն կազդուրիչ զօրու-  
թեան : Բայց . . . որպէս դնի այլագու-  
նեալ . . . անհանգիստ . . . սրտմտութիւն  
նկարեալ 'ի ճակաան : Ո՞հ . ընդէր խոռ-  
վէք զսա երազք զարհուրատեակք :  
Թողէք խաղաղիկ զոգի սորա . եկայք 'ի  
սմա պատկերք հեշտալիք՝ քաղցր առտնին  
դործոց և գորովական ախորժմանց , և  
ամենայնի որ գեղեցիկն է 'ի մարդումս ,  
և հաճելի 'ի համօրէն բնութեան . լցէք  
զերեակայութիւն սորա անպղտոր զմայլ-

։ ԺԱՆՈՒԱՐ ԱՐԴՅՈՒՆ ՎԵՐԱԿՐՈ

մամբք և բերկը անօք , որպէս զախւ ինչ  
դարնայնոյ , զի խայտացէ 'ի գէմս սորա  
զուարթութիւն գեղածիծաղ . և 'ի զարթ-  
նուլ իւրում ելցեն օրհնութիւնք 'ի շըր-  
թանց սորա » : — Յայս բան ակնկառոյց  
եղեւ յեղբայր իւր գորտվագութ սիրով ,  
և անհանգիստ ակնկալութեամբ :

Օրինակ իմն , առիւծ թաւամազ նըն-  
ջեալ առ ստամբ քարտնձաւի 'ի հովա-  
նուոջ , որ ահիւ սառուցանէ զուղեոր սըր-  
տատրոփ , և բաշք մահացանք գիղացեալք  
զգլխովն 'ի քուն , հարկեցուցանեն զնա՝  
դաղտագողի խօսորիլ առ նովաւ բացա-  
գոյն , յանկարծ իմն եթէ հարցէ զնա կու-  
րեվէր՝ երեքթևեանն սրամթոիչ 'ի զիստ  
իւր , 'ի նոյն և ոսանու տհեղագոչ՝ խընդ-  
րել կատաղութեամբ զիւր ախոյեան .  
զիշատէ նա զմանուել անմեզ՝ որ ոչ հեռի  
անտի խաղացէ ընդ ծաղկանց 'ի դալա-  
րւոջ : Ոչ աննման յօրինակէս՝ յանկարծօ-  
րէն յեղակարծումն ընդոստ 'ի քնոյն լինի  
կային . աչք հրացայտք՝ դէմք գունա-  
տեալք՝ երախոք փրփրեալք սրտմտութիւն  
կատաղի դարեալ 'ի ճակատն : Ամպրոպ  
ինչ բարկութեան թխալանայր զնովաւ՝  
պատրաստ 'ի շանթել , դոփեաց նա ո-

տիւքն ընդ գետին՝ և մանձեաց . — «Պատառեաց Երկիր՝ սկստառեաց . կուլ զիս, ընկլո յանդունդս քո : Եղուկ . ովլ տեսիլ աղետալի , եղուկ և զաւակ իմ : Բայց ոչ . ոչ ևս սկստառեացիս . 'ի զուր ժախմ : Արէժինդիրն ամենակալ արգելցէ քեզ զայն . հարկ է ինձ չուառանալ . և 'ի լրումն ահադին աղետիցս՝ վերացոյց զվարագոյրն երևեցուցանել ինձ զխորս ապագայիցն հանդերձելոց : Անիծեալ օրն , անիծեալ ժամն՝ յորում մայր իմ ծնաւ զիս երկնեաց : Որ ինչ 'ի նմա բոյսք՝ ապականեացին բնաւք . որ սերմանեն 'ի նմա , կորիցեն վաստակք նորա , և սերմանիքն՝ հոգմավորք . որ անցցէ առնովաւ ճանապարհորդ՝ քստմնեացին ոսկերք նորա » :

Զայս օրինակ անէծս արձակէր Եղկելին , յորժամ Արէլ այլագունեալ որպէս գերեզմանական զոք՝ մատչի մօտ գողդու ջաքայլ , և բեկրեկ գելու զխօսսն ասելով . — «Եղբայր իմ . . . բայց ոչ . . . Տէր իմ և Աստուած . . . դողամ յանձին . . . ոմն յապատամբիցն անարգելոց՝ զորս շանթ յաւիտենականին գահավիժեաց 'ի բարձանց երկնից , կերպարանեալ ընդ խարս

զախար նորա՝ հայհոյէ . . . ուր ես եղբայր  
իմ։ Ո՞հ ո՞հ . փախիր անձն իմ . . . ուր ես  
եղբայր իմ՝ զի օրհնեցից զքեզ» :

« Աւասիկ է նա , գոչեաց կային որո-  
տաձայն . աւասիկ , դու զուարթերեսդ՝  
արտասուաթորդ առ խնդութեան , դու  
սիրելիդ յափառենական վրիժառուին և  
համօրէն բնութեանս . դու՝ որոյ ծնունդք  
իժակորիւնքլիցին երբեմն երջանկացեալք  
միայնակ յաշխարհի աստ . բայց . . . և ըն-  
դէր ոչ : Արժան իսկ էր նախամօրս երկ-  
նել զոմն՝ որ ծնանէր՝ ի ոկտս օրհնեալ  
ժողովրդեանն ստրուկս սպասահարկուս՝  
գրասաս բեռնակիրս , զի մի ազգն օրհ-  
նեալ զմարմին իւր փափկանուէր կթուցէ  
խստամբեր տշխատութեամբ : Վահ .  
դժոխք զլխովին բորբոքին յանձն իմ,  
տանջանք իւր ամենայն՝ զոյդ ընդ նմին » :

« Կային եղբայր իմ , ասէր Արէլ . նը-  
կարեալ՝ ի դէման ապշութիւն , վարանք  
և սէր գորովական . . . եղբայր իմ . զի՞նչ  
երազ սոսկալի խոռվեցոյց զտնձնքո : Եկի  
ես սիրեցեալդ իմ ընդ արշալոյս առաւո-  
տուս խնդրել զքեզ , փարիլ զքե , և ընդ  
ծագելոյ տունջեանս օրհնել զքեզ : Այլ  
որ մըլիկ յուզէ զսիրտ քո . որպէս ձա-

խողակի ընդունիս զիմ սէր խանդակաթ :  
 Ե՞րբ ծագեսցեն . . . աւազ՝, Ե՞րբ աւուրք  
 բարեբաստիկք՝ աւուրք հեշտալիք, յորս  
 տնկեսցի 'ի մեզ խաղաղութիւն, և ան-  
 վիշտ անվրդով սէր՝ դարձեալ բողբոջես-  
 ցեն 'ի հոգւոջ մերում զքաղցր հանդիսա-  
 և զզուարթամիտ խնդութիւն . այն ա-  
 ւուրք՝ զորոց զհետ հայր մեր վատագին  
 և մայր գորովաղետ յոգւոց ելանեն այն-  
 չափ տարփմամբ : Կային, կային, ո՞ր-  
 պէս զայրագնեալ՝ առ ոտն հարկանես  
 զիսնդութիւնն որով զմեզ պատրեցեր,  
 յորժամ ևս ինքն արբեալ նովաւ՝ լացի 'ի  
 գիրկս քո : Այս արդեօք յանցեայ առ քեզ,  
 եղբայր իմ, մի արդեօք յանդետս յան-  
 ցեայ ինչ յետոյ . . . ասա աղաչեմ . . .  
 երդմնեցուցանեմ զքեզ՝ հանդարտեա 'ի  
 յուզմանցդ . ներեա ինձ . թոյլ արա  
 գիրկս արկանել զքե » :

Յասել իւրում զվերջին բանքս՝ մերձե-  
 ցաւ աղերսալից փարիլ զծնկովք եղբօրն .  
 բայց կային՝ հարթնու ընդ կրունկն : —  
 « Այ օձ, դոչէր գիւտագին . . . դալարիլ  
 կամիս զոտիւքս » — Անդէն առ ետեղ  
 յափշտակեալ դազանաբար զմահակ ըս-  
 տուար, եհար շեշտակի ընդ գլուխն Աբե-

լի , և օդ շառաչեաց : Անկաւ անմեղն առ  
ոտիւք նորա , և սկաւառակ գլխոյն ջախ-  
ջախեալ . դարձոյց միւսանդամ առ եղ-  
բայր իւր զաղուական հայեցուածնն ,  
նկարեալ էր ներողութիւն յընդարմա-  
ցեալ աչս նորա , և մեռաւ . արիւն նորա  
վարդագեղ՝ հոսեաց ընդ հոպոպիս խար-  
տէշ գիսակացն՝ առ աթուր մարդախոշոց  
գաղանին :

Առ այս տեսիլ սոսկալի՝ ափշեցաւ թըմ-  
րեցաւ արձանացաւ կային . դալուկին մա-  
հու հարկանէր ՚ի նմա . քիրտն ցաւագին  
ընթանայր ընդ դողդոջուն անդամնն : Ե-  
ղե ականատես վերջին ջղաձիգ գելմանց  
մահացելոյն , և ծուխ ջերաջերմ արեանն  
որ հոսէր գունդագունդ՝ ելանէր մինչեւ ՚ի  
ոնդունս եղեռնաւորին : — « Աֆիծեալ  
հարուած , գոչեաց ՚նա : Եղբայր իմ . . .  
զարթիր . . . զարթիր եղբայր իմ . . . Ո՛ր-  
պէս դէմք նորա գեղնեալք . . . . ո՞րպէս  
աչք կարկամեալք . . . զիա՞րդ գլուխն ա-  
րեամք ոզողեալք . . . . Ո՛վ թշուառացե-  
լոյս . . . ո՞չ . զի՞նչ է զոր այժմէն յանձին  
զգամ . . . արհաւիրք սանդարամեատա-  
կանք » :

Կաղկանձէր թշուառականն զայս օրի-

Դակ • ընկեց կատաղութեամբ 'ի բայց ըզ-  
մահակն արիւնաշտղախ • և բռնցի անխնայ  
զճակատ իւր կռվիէր : Խոնարհեալ ասդա  
զդիակամբն յարուցանել կամէր 'ի գետ-  
նոյն : — « Աքէլ . . . եղբայր իմ, զար-  
թիր . . . Աքէլ : Ո՞չ . . . Երկունք դժոխոց  
սկաշարեցին զինեւ . . . որպէս գլուխ իւր ա-  
րիւնաթաթախ՝ կորացեալ . . . որպէս թալ-  
կացեալ նուաղեալ . . . մեռաւ . . . ովտագ-  
նառ դժոխային . . . մեռաւ նա յաւե-  
տեան : Փախեայց ես : Փութացարուք  
ծունկք կթուցեալք » : — Այսպէս մորն  
չէր ահեղ, և գաղթէր 'ի խարձս մօտա-  
լուտ մացառաց :

Նստեալ էր առ դիակամբն՝ յաղթական  
մոլորեցուցիչն . ել կանգնեցաւ խրոխտա-  
սկանծ իմն խնծղանօք . կանգնեցաւ 'ի  
մարմին իւր , և յիրան երկնադեղսոսակա-  
վիթխար . այսպէս բարձրանայ սեատե-  
սակ զարհուրելի սիւն ծխոյն ամբարձե-  
լոյ 'ի հրձիգ միայնաւոր խրճթէ , որոյ բը-  
նակիչք մշակիցեն հանգարատութեամբ  
յանդի , 'ի ժամանակի յորում բոցն ձա-  
րակիչ ծախիցէ զնոցա զառտնին կարա-  
սիս , զամենայն զնոցա շնառկան փարթա-  
մութիւնո : Ըստ այսին յարացուցի ել

կանգնեցաւ Անամելէք . և դհետ վրախու-  
 ցելոյն աչս արձակեր դժոխային իմն ծա-  
 ղու . և ապա 'ի դին ակնարկեալ գոչէր . —  
 « Վաշ . զի՞նչ քաղցր տեսարան . ո՛ արիւն  
 մեղաւորաց զոր արբ երկիր անիծապարտ:  
 Զոււարձութիւն այդպիսի՝ իմ չէր ճա-  
 շակեալ բնաւ յերկնային կարկաջասահ  
 տղբերացն , յառաջ քան զմեր անտի դա-  
 հավիժումն որոտաձայն շանթիւն : Ոչ  
 այսպէս քաղցրալուր հնչեցին յունկն իմ  
 տաւիզք սաղմոսանուագ <sup>15</sup> սերովբէից ,  
 որպէս կերկերաձայն այս հանտիւն , յե-  
 տին այս հառաջանք մահացելոյս : Չնաշ-  
 խարհիկ դու բնակիչ նորաստեղծ ախեղե-  
 րաց , ով դու հրաշակերտ վերջին արուեստ  
 արարչական ձեռացն՝ որպէս ծաղածա-  
 նակ դնիս աստ գիտապաստ : Արի Երի-  
 տասարդ գեղեցիկ . արի Հրեշտակաց բա-  
 րեկամ . մի այդպէս սլվերդ 'ի սարկա-  
 վայել պաշտօն ծնրադիր երկրպագու-  
 թեանդ . . . Եւ սակայն չխըսի բնաւ . եղ-  
 բայր իւր գլխովին զգետնեաց զնա անո-  
 ղորմ : Ճարտարութեամբ այսպիսեաւ  
 հանգիսացայց բարձր 'ի դուկ 'ի խումբա-  
 խաւարարդել խուժանին . Ճարտարու-  
 թեամբ ընդ որնախանձեսցի և բելիար . . .

Ժամը է արդ դառնալ առ պատուանդան  
սանդարամետական գահօյիցն . ո՞րպէս  
քաղցրասցի լսել ինձ զիմ ներբողանի  
ծափահար դումամբք : Անդ մինչդեռ  
գմբէթք անդնդոց կրկնեսցեն զարձա-  
դանդ ծափահարութեանց , նազեցից ես  
սիգաճեմ յաղթական , 'ի խռան անդ շե-  
ջելափառ ամբոխին , զորս ոչինչ շահա-  
տակութիւն պանծալի՝ դեռ ազնուականս  
գործեաց » :

Յամբարտաւան իւրումն յաղթանա-  
կի՝ կամեցաւ այսն պիղծ միւսանդամ յա-  
ռիլ վայրակնել՚ի դիակն անկելըն . բայց  
սոսկալի ձառադիմութիւնք յուսահա-  
տութեան՝ ցրուեցին անդէն և անդ յե-  
րեսաց զծաղըն հեգնական , և զբարձրայօն  
յաւակնութիւն զ՚ի ձակատ նորա դրոշ-  
մեալ : Պատուէր հրամանի ետ բարձրեալն  
գրաւել պատել զնա՝ սանդարամետական  
արհաւրացն . և ծովլ ինչ աննջանաց յոր-  
դեաց զնովաւ պարանոցաթաղ : Անէծ նա  
յայնժամ զժամամ իւրոյ եղելութեան , ա-  
նէծ զլի տանջանօք զյաւիտեանն և եղի  
փախստական :

Ի սմին պահու հոնախիւն մեռելըն , և  
վերջին իւր թառաչ ելեալ ելին տռաջի

աթոռոյ ամենալուր դատաւորին , և բո-  
 վոքեին վրէժիսնդրութիւն 'ի յաւիտենա-  
 կան արդարութենիէ : Կսելի եղե որոտումն  
 'ի տեղոջն երեքսրբեան + 14 լուցին քը-  
 նարքն ոսկի և ալէլուն յաւիտենական :  
 Երիցս գոռաց որոտումն ընդ բարձրակա-  
 մար դմբեթաւն երկնից , և լուաց . և ա-  
 սկա բարբառ բարձրելոյն հնչեցեալ յար-  
 ծաթափայլ ամոլոյն՝ որ զաթոռուովն ոլա-  
 տէր , կոչեաց յանուանէ Հրեշտակապետ  
 զոմն : Յառաջ մատչի հոգին լուսեղեն  
 թևասքօղեալ զերեսս լուսափետուր թե-  
 ւոքն , առ որ ասէր ամենակալն . — « Աւա-  
 սիկ որսացաւ մահ զառաջին որս իւր 'ի  
 զարմէ մահկանացուաց . կարգեալ է իմ  
 զքեզ 'ի սլաշտօն սրբութեան , ժողովել  
 յայսմ հետէ զոգիս արդարոց : Ես ինք-  
 նին խօսեցայ ընդ հոգւոյ Աբելի 'ի ժամ  
 անկման նորաւ . այսուհետեւ դու կաց-  
 ցես ընդ աջմէ արդարոյն՝ զոր ընդարմա-  
 ցուցանէ սառնասառոյց քիրան մահու :  
 Յորժամ ընդհատի ձայն օրհասականին ,  
 յորժամ սկառի զնովաւ մահու վերջին  
 տագնասդ , միսիթար մասս ոգւոյն ոգորե-  
 լոյ ընդ մահուն . ցածո 'ի նմա զսարսափ  
 յաղագո գնացիցն անցելոց . դարձո զուս

նորա յարդարութենէ իմմէ յողօրմութիւն՝ որոյ չեք ստհման. քաղցրացո նման երանութեանն յուսով անջատիլ'ի մարմնոյ, և մեռցի : Երթ'ի բնակարան մահկանացուաց ընդ առաջ հոգւոյ եղբայրազլաւ մեռելոյն. և դու Միքայէլ թեակից լեր նմին գումել զանէծս իմ առ եղբայրապապանն » : — Այն ինչ կատարէր գատավճիռ յաւխտենականին, երիցս թնդեցին բարձրակամարքն երկնից 'ի ձայն ահեղ որոտմանն : Յական թօթափել սլոցան չըեշտակաղետքն սաւառնաթեկ' ընդ անմռունչ դասս երկնային զինուորութեանց, և խոյացեալսրաթռիչ ընդ ինքնաբաց դրունս երկնային արքունեաց, անցին քերեցին առ անհամար բազմութեամբ արեգականց և <sup>15</sup> աշխարհաց, և իջին յերկիր մահկանացուաց :

Անդէն վաղվաղակի կոչէ չըեշտակ մահառն զոգի Աբելի յարիւնաթաթաւտազլաւարէ մարմնոյն. յառաջ մատչի նա, և ժողիտ երկնային զերեսօք նորա : Ոգեղէն մասունք <sup>16</sup> նօսրագոյնիք մարմնոց նիւթականաց՝ զհետ երթայիննորա, և խառնեալք 'ի բազմաբուրեան շոգիս՝ զորքագցրասիւդ զեփիւսք կապտէին 'ի ծաղ-

կանց փթթելոց ամենայն ուրեք՝ ուր դե-  
մքը նշուլագեղ պայծառութիւն հրեշտա-  
կին, սլատէին զհոգովի կերպացեալ'ի  
մարմին ինչ Եթերական։ Ետես հոգին՝  
անձաշակ իմն ցնծութեամբ զհրեշտակ  
տեառն զի սպասէր նմին։

Մատեաւ զուարթունն, և մարդասի-  
րութիւն երկնային 'ի դէմսն ճառագայ-  
թէր։ — « Ողջոյն ընդ քեզ, ասէր, եր-  
ջանիկ դու՝ ճողոսքրեալ'ի հողաղանգուած  
մարմնոյդ։ ընկալ զիմ գրկախառնու-  
թիւն։ Որպէս բարեբաստ զանձն համա-  
րիմ։ ինձ վիճակեցաւ առաջին՝ մուծա-  
նել զքեզ յերանութիւն։ բիւրք բիւրոց  
քեզ ակն ունին անդանոր։ Երանի արդա-  
րոյդ։ ուրախութիւն յաւիտենական, ե-  
րանութիւն անսպատում և տեսութիւն ե-  
րեսացն Աստուծոյ քեզ պարգևին'ի տրի-  
տուր առաքինութեան։ Ուրախ լեռ։  
զիրկս տրկ զինեւ առաջինդ յերջանիկս՝ որ  
մերկացար'ի քէն զծածկոյթ հողեղէն ։  
« Դիրկս արկանեմ զքեզ բարեկամդ  
երկնային, զիրկս արկանեմ, գոչեաց հո-  
գին Աբելի։ և տսկա պակասեաց ձայն,  
զմայլեալ յափշտակիչ զմայլումն երա-  
նութեան։ — « Ո՛վ անձառ երանու-

թեանս . . . կրկնեաց յետոյ ձայնն . յուր-  
 ժամ հոգի իմ դեռ փակեալ 'ի հողեղէն  
 մարմնի ճեմեր առանձինն՝ առ նշողեւք  
 գիշերածագ լուսիոյն , ճաշակեի զբաղց-  
 ըութիւն ամենալայր Աստուծոյն իմոյ  
 և զամենայն գեղեցկութիւն առաքինու-  
 թեան , և փղձկեր սիրտ իմ երանութեամբ  
 առլցեալ . սակայն ամենայնն ոչ այլ ինչ  
 էր . բայց ազօտ արշալոյս երանութեան  
 յորում զարդիս վայելեմ : Բարեկ . զիարդ  
 'ի ժամուս հեշտանամ անչափ 'ի բերկ-  
 ըութիւն առաքինութեան , զիարդ 'ի մօ-  
 տոյ նկատեալ զանձառութիւն աստուա-  
 ծեղէն բարութեանցն : Ո՛վ . զի՞նչ խոր-  
 հուրդք նորք ելանեն 'ի միաս իմ . . . հեշ-  
 տալիք որպես զգարուն , ոլայծառք որպես  
 զարեգակն : Բարեկամ իմ , գիրկս արկա-  
 նեմ զքե . իմ է անվախճան յաւիտեանն .  
 իմ է օրհնել զնա մշտամառնչ որ վար-  
 ձատրէն յաւեժ անձառ երանութեամբ  
 զնա , որ սիրէն զգեղեցիկն և զբարին » :  
 Զայս օրինակ զբանիւք անկանէին եր-  
 ջանիկքն այնոքիկ , և սէր նոցին զեղանէր  
 'ի հոգեգորով գրկածութիւնս : — « Եկ  
 բարեկամ իմ , առէ հրեշտակն , եկ՝ ոլա-  
 ցիր զհետ իմ . թող զերկիր . զի՞նչ մնան

Քեզ աստ սիրելի՝ բայց սիրաք առաքինիք։  
դայցեն և նոքա ղհետքու այլ ևս ամք ինչ  
համառօտք՝ դայցեն և նոքա։ Ալոցիր յեր-  
կինս 'ի վեր 'ի հոգեհամբոյր գրկախառ-  
նութիւնն երջանկաւէտ բարեկամացն՝ եր-  
դել ընդնոստ զյաւիտենից փառաբանու-  
թիւն»։

«Գամ զկնի թեոցդ բարեկամդ երկ-  
նային, պատասխանի ետ հոգի արդա-  
րոյն . . . ովուղևք փափկութեան և եր-  
ջանկութեան յոր մտանեմս։ Մնացէք  
բարեաւ սիրելիք իմ զոր 'ի ստորև թո-  
ղում յերկրի։ Յորժամ եկեսցեն լցցին  
ամք կենացդ։ յորժամ հասցէ ժամ օր-  
հատին, յորժամ գու բարեկամդ իմ եր-  
թիցես ընդ առաջ օրհասականացն, և ևս  
մատեայց առաջի աթոռոյ բարձրելոյն  
սլաղատել զթեակիցն լինել քեզ, զի տե-  
սից անձառելի ցնծութեամբ զվերաթեել  
ոգւոց նոցա 'ի կառոյ աստի յօթեանս ե-  
րանութեան։ Եւ զքեզ թիրզա անձկալիդ  
քան զամենայն, տեսից և զքեզ յետ լա-  
լս քո յերկար 'ի վերայ իմոց ոսկերաց,  
յորժամ մանկիկ մեր գեռախօսիկ՝ քո պէս  
առաքինասցիընդ գաստիարակութեամբդ  
տեսից և զքեզ մահանալ։ Ո՞րպէս յափըշ

տակեսցի անձն իմ, յորժամ Ելեալ յըն-  
դարմացեալ մարմնոյդ ճախրեսցես մօտ  
իմ 'ի հոգեզուարձ ցնծութիւն » :

Այսպէս բարբառէր Աբէլ 'ի թոփս  
իւր ընդ զուարթնոյն յերկրէ յերկինս .  
բայց հայեցուած իւր դեռ աստանդա-  
կան 'ի վերայ խրճթացն՝ անկաւ ըստ դի-  
ուաց 'ի վերայ եղբօրն : Յուսահատութիւն  
մեծեղեռն ապիրատութեանն գծագրեալ  
էր 'ի վերայ երեսաց նորա . ձեռք իւր մա-  
ծեալք զգլսովին . աչք վայրենահայեացք  
յերկինս 'ի վեր : Ժամ 'ի ժամ կոծէր  
բանցի զմեծահառաչ կուրծս իւր 'ի հա-  
րուածս մեծամեծս . լի առա ոգետանջ  
յաւսահատութեամբ զգետնեաց զանձն 'ի  
թաւաթուփս , և հողաթաւալ 'ի նմին լի-  
նէր : Փղձկեցան աչք երանելոյն յարտա-  
սուս կարեկցութեան . դարձոյց 'ի նոյն  
զգորովաշարժ զհայեցուած իւր յաղեռ-  
զորմ տեսարանէ անտի . և ոչինչ այլ ե-  
տես՝ բայց գունդագունդ բազմութիւն ըն-  
թացակից հրեշտակաց : Պաշտպանողա-  
կան հրեշտակք դաւառին ցնծութեամբ  
մեծաւ թետկից 'ի վերելս նոցա լինէին  
յայնկոյս առհմանաց վերնագաւառի օ-  
դոյս : Անդ աստուածայինն առլցեալք

սիրով՝ դիրկս արկեն Երկուց Երկնաշու  
ուղևորացն . և ինքեանք զտեղի առեալ՚ի  
թևս կարմրերփեան ամպոց՝ Երգովք  
միայն օրհնութեան ուղեկից լինէին՚ի  
թոփչու նոցա ընդ խորութիւն եթերին :  
Սրինդք քաղցրանուադք և սաղմոսարանք  
արծաթալարք՝ ձայնակից լինէին յերգս  
նոցա , զոր դասադաս Էղանակէին նոքա՚ի  
ձայն քաղցր օրինակ զայս :

« Համբառնայ նորեկ Երկնաքաղաքա-  
ցին , համբառնայ յերկինս : Գեղեցիկ է  
նա , գեղեցիկ որպէս զգարուն յեկառո-  
րիլնորա յերկիր՝ պար առեալ բերկրալի  
պարզութեամբ և զուարթարար հեշտու-  
թեամբ : Ցնծացէք ընդ առաջ նմին առ-  
տեղք համասփիւռք յանվայրափակ հաս-  
տատութեանն , ցնծացէք խնդակիցք Երկ-  
րի՝ ձերում զուգականի : Ո՛րպէս գեղա-  
զարդ շքեղացաւ սա՝ թէուքտ և անիծա-  
պարտ . բայց սնոյց՚ի հողս իւրմէ Երկ-  
նաքաղաքացի զոմն : Որպիսի պայծառու-  
թիւնս ինչ կենդանագոյն՝ ծիծաղի՚ի մար-  
դագետինս իւր , բլուրք իւր ցոլանան  
պայծառագոյն » :

« Համբառնայ նորեկ Երկնաքաղաքա-

ցին, համբառնայ յերկինս : Դասք օրհներգուք սպասեն նմա առ բարաւորօքն երկնից . հային 'ի նա , տեսանեն զառաջինն 'ի մարդկային զարմէ՝ որ յերկրէ յերկինս վերանայ . փարին զնովաւ , պըսակեն զնա անթարշամբ վարդիւք : Ո՞վ զիարդ երջանկասցի անձն նորա յորժամձեմ առցէ 'ի մարմանդս երկնից , յորժամընդ խնկահոտ հովանոցք մշտադալար կանաչութեան պարակից լիցի հոգեղինացն 'ի փառաբանել զնա , որ մի միայն աղբիւրն է անձառ երանութեանս » :

« Ո՞վօր տօնելի . վաղուց զքեզ հաջակեցաք . տօնեցաք զքեզ երգօք օրհնութեան , յորժամ հոգի մանկանս<sup>17</sup> էջ յերկնից 'ի մարմին նորա տիրել նին : Տեսաք մէք , զիարդ առաքինութիւն ամենայն առէր 'ի նմա պայծառափայլ որպէս շուշան փթթեալ գարնանի » :

« Յաներևոյթս ընկերէաք քեզ , հոգիդ առաքինասէր , զօրհանասպազ զքեւ թեապարեալ . տեսաք մէք՝ ո՞վ անուշակ բերկրանացս , զննեցաք զամենայն ուղղութիւնս քո , զամենայն իղձ փափաքանացդ , տեսաք զամենայն արտասուս՝ զոր առա-

քինութիւն քո յաշացդ ճնշեցուցանէր :  
Արդ ճախրեցէք ընդ առաջ նորա դասք  
հոգեղինացդ , գիրկս նմին տարածեցէք ,  
պսակեսջիք զնա 'ի վարդ երկնափթիթ .  
Համբառնայ յերկինս ազատացեալ 'ի հո-  
ղազանգուած մարմնոյն » :

« Ահա նշխարք մարմնոյն անկեալ կան  
յորսայս , անկեալ որպէս ծաղիկ թառամ :  
Դու երկիր՝ ընկալ մայրօրինակ զհող դո-  
րա , բուսուսցէ դա առ իւրաքանչիւր գա-  
րուն՝ ծաղիկս բազմաբուրեան : Ո՞վ օր  
աօնելի . տօնեսցուք զքեզ յերգս օրհ-  
նութեան , տօնեսցուք 'ի տարեկան գար-  
նայնոյն , տօնեսցուք զօրդ՝ յորում առա-  
ջին արդարն վերացաւ յերկրէ » :

Ի կատարիլ երգոցն՝ իջին նոքա յերկիր  
վայրաբերեալք 'ի թևս լուսաթոյր ամ-  
սլոցն :

Յածէր թափառէր կային 'ի մերձա-  
ւոր անտառին . յուսահատութիւն վա-  
րանէր զնա աստանգական : Փախչել կա-  
մէր , այլորպէս . թշուառութիւն իւր զնա  
հալածէր : Զոր օրինակ ճանապարհորդ՝  
զոր հալածէ քստմինելի շնմամբ վիշապ զայ-  
րագին , զուր փախչինա , 'ի զուր ոգորի ընդ  
մահաշունչ դազանին , գալարի պնդասլինդ

զմիջովք նորա և զուլամբռ . իւ ճաղոպրես  
 ցի եղկելին . միէ սա զօլաք ժանեացն  
 յուժգնապիրկ 'ի լանջան կարկամեալ , 'ի  
 սիրտ անդր ժայթքէ զիւր մահաթոյն :  
 — « Ո' տայր ինձ , աղաղակէր Կային , ոչ  
 ևս ունել ակներև միշտ զարիւնաշաղախ  
 զալատկերն . փախչիմ , և արիւն նորա ըզ-  
 հետ իմ խոխոջէ , զհետ գարշապարացա :  
 Յո՞ փախեայց ես , յո՞ թաքեայց եղկելիս :  
 Տեսանեմ ահա զվերջին իւր առ իս հայե-  
 ցուած . . . տեսիւլ ողորմ . զի՞նչ գործեցի  
 զայս : Ո'վ ոճիր ահագին , տանջես զիս  
 քան զգեհեան . . . Սատակել ինդրեցի  
 զաատակիչս զաւակի իմոյ յառաջ քան  
 զծնունդս նոցա . . . Այլ զի՞նչ կառաչիւն  
 լի յանտառիս իբրև զհեծութիւն առն՝  
 որ յոգիս տպաստան : Երթայք 'ի բաց  
 ոտք իմ դողդոջունք . 'ի բաց յարենէ աս-  
 տի՝ որ զհետ իմ խոխոջէ . Երթայք 'ի  
 զարհուրատեսակ մահասահման վայրէս :  
 Զգեսջիք զիս ընդ քարշ ծունկք իմ դան-  
 դաչուալք՝ յարիւն շաղախեալք հարազա-  
 տիս . ընդ քարշ . . . մինչ 'ի թափիս դժո-  
 խոց » : — Այսպէս գոչեաց , և կամէր  
 դառնալ 'ի փախուստ :

Եւ ահա ամագ լրթագոյն էջ ահագին

Հայթմամբ առ ոսս նորա : — « Կային,  
ուր է եղբայր քո , շառաչեաց յամպոյն  
ձայն ինչ ահեղ : — Զգիտեմ , պատաս-  
խանի ետ Կային կակազելով . չգիտեմ եղ-  
կելս . . . . միթէ պահապան իցեմ եղ-  
բօրն իմոյ » : Եւ անդէն պակուցեալսար-  
տեաւ յետս ընդդէմ . կալաւ զնա խռովու-  
թիւն ահհնարին , և դալուկն մահահան-  
դոյն : Յայսմ վայրի որոտաց ամսն , ցայ-  
տեաց հուր ծախիչ , եկեր լափեաց զգեղ  
զալար , զթուփս շուրջանակի . և 'ի միջոց  
ամսոյն ել եկաց հրեշտակ տեառն : Ճա-  
կատ նորա սպառնայր զդատակնիք բարձ-  
րելոյն . յաջու ձեռին փայլատակէր շանթ-  
եռասայրի , զահեակ իւր ձգէր վերամբարձ  
'ի վերայ կորաքամակ եղեռնաւորին՝ որ ըզ-  
դողանի հարկանէր . բարբառ արձակեաց  
և որոտաց միւսանգամ . — « Արձանացիր ,  
սարսափեաց և լուր զանէծս քո : Զի՞նչ  
գործեցէր զայդ՝ այսպէս ասէ տէր . դո-  
չումն արեան եղբօր քո բողքէ առ իս  
յերկրէ . և արդ անիծեալ լիջիր դու 'ի վե-  
րայ երկրի՝ որ եբաց զբերան իւր ընդու-  
նել զարիւն եղբօր . քո 'ի ձեռաց . քոց : Գոր-  
ծեսցէս զերկիր , և ոչ յաւելցի տալ քեզ  
զզօրութիւն իւր . երերեալ և տատանեալ

եղիցիս զամենային աւուրս քոյ 'ի վերայ  
Երկրի » :

Սարսափի ինչ անհնարին , և տագնապ  
դժոխային կալան զժանդագործն՝ որ զո-  
փայր առ ա՛ի գլխակոր և Երկրապիշ:  
Կայր նա ապուշ ապաբան , որպէս կայ  
աստօւածուրաց ամբարիշան , յորժամ 'ի  
սաստ ահեղ դատաստանացն դզորդէ Աս-  
տուած զհաստառութիւնն Երկրի , յոր-  
ժամ հիմն 'ի վեր տապալինն կամմարք տա-  
ճարացն սղծելոց , և ապարանք մեղաւո-  
րաց անդնդասոյզ կորնչին . յորժամ յաղ-  
մըկի անդ խառնաշփոթ բնութեան հնչէ  
'ի լսելիս իւր յամենուստ՝ ճիչ և կանչիւնն  
մեռելոց , և 'ի լայնապատառ յատակաց  
Երկրի բարձրանան շուրջ զիւրեւ ամսլք  
լրթագոյնք , և բոցք մրրկեալք : Այսդու-  
նակ դողացեալ դանդաչէր գեղեւէր եղբայ-  
րասպանն . տագնապեալ նոյնաբար , ա-  
պաձային և այլագունեալ որպէս օրհասա-  
կան . փորձ փորձէր բարբառել , բայց  
շրթունք բաբախունք տկարանային առ 'ի  
զբանսն յօդէլ . պապաջէր , և չիշխէր  
զաշս 'ի վեր համբառնալ : — « Մեծ է  
յոյժ ասէ . . . բարէ . . . մեծ է յոյժ  
անօրէնութիւնն իմ , մեծ և անթողլի յա-

ւիտեան։ Անիծեր զիս այսօր՝ ի վերայ  
երկրի, և ես... բարե, յերեսաց քոց յո՞  
թաքեսցց։ Լինիցիմ երերեալ և տատա-  
նեալ, և միշտ փախստական։ Ո՛ տայր  
ինձ, թէ ամենայն որ դատնիցէ զիս՝ ըս-  
տանցէ զամբարշտեալս»։

« Ոչ այդպէս, ասաց բարբառն որո-  
տաձայն։ ամենայն որ սպանանէ զքեզ,  
եօթն վրէժս լուծցէ։ տագնաալ մշտա-  
տանջ և խայթոցք մտաց խոցուալչք նշա-  
նեսցին՝ ի դէմս քո և՝ ի դնացս։ ամենայն  
որ անցցէ առ քե՝ առասցէ։ — Ահա  
կային եղբայրասպան։ — և զարհուրեալ  
փախիցէ ի հետոցդ զոր կոխեսցեն գար-  
շապարք քո թափառականք»։ Այս-  
պէս գուժեաց զուարթունն զսաստ անի-  
ծիցն, և եզե աներեսոյթ։ Թօթափեցան  
կայծակունք ահեղասաստք ի ծոցոյ ամ-  
պոյն որ վերանայր։ և փոթորիկ շըջանա-  
պտոյտ խորտակեալ զմայրիս մօտաւոր  
անտառացն՝ գոշեաց ահեղաձայն, որպէս  
զգուիւն ինսասապարտին յուսահատելց՝ ի  
փորձ գառնակախտ տանջանարանաց։

Արձանացեալէր ի ժամուն կային ան-  
շարժ։ անյուսութիւն յաչս նորա։ և  
հողմք ամեհիք շուրջ տատանէին զգիզա-

ցեալ հերս դիսախոխ գագաթանն . Եկաց  
 մնաց առ ետեղ՝ անբան ընդարմացեալ  
 յերկար . և ապա վայրենահայեաց եր-  
 կիւղիւ համբարձեալ զաշսն ծածկեալս 'ի  
 թաւամազ յօնիցն՝ զայս օրինակ բողոքէ  
 դողդոչոտ շրթամբք : — « Զմէ՛ ոչ չքա-  
 ցոյց զիս նա . առ իմէ՛ ոչ սպառսպոռո  
 ջնջեաց , մինչև չմնալոյ այշ՝ հետոցս ընդ  
 արեգակամբ : Եւ կամ . . . հիմ ոչ կայ-  
 ծակունիք հարին զիս . . . Է՛ր ոչ խորա-  
 սուզեաց յանդունդս : Այլնա կամի պա-  
 հել զիս անվախճան 'ի տանջանս : Ահա-  
 ւասիկ ես ինքն . . . անիծապարտ առ ա-  
 մենայն արարածոց . տիեզերաց քստմնելի  
 . . . քստմնելի ինձ իսկ գլխովին . . . Ո՛հ ,  
 այժմէն տադնապիմյանձին . այժմէն տադ-  
 նապիմ 'ի ձենջ գառնահամբոյր ընկերա-  
 կիցք ապկիրատութեանս , դուք երաշխէպք  
 դժոխային , յուսահատութիւն և խիղճ խո-  
 ցոտիչ , որք որոշեալ զիս յԱստուծոյ և 'ի  
 մարդկանէ՝ հալածեսնիք յաւիտեան դժո-  
 խատանջ : Ո՛հ . զի՞նչ այն զոր զգամյան-  
 ձին . . . : Անիծեալ դու բազուկ կարկա-  
 ռեալ որ համբարձեր զմահակն 'ի սպանդ-  
 իցիւ՝ գօսացեալէիր 'ի մարմնի որպիս ոստ  
 'ի ծառի : Անիծեալ ժամն՝ յորում երազ

դժոխային զիս դաւաճանեաց . քանիցս և  
դարձցիս դու՝ ողբասցէ երկիր . . . : Ո՛վ  
բնութիւն, բնութիւն . զի՞ յասլաղես ցու-  
ցանել զահագին նշանս՝ զքո որ առ իս  
նողկանաց : Անիծեալ դու յամենայնի  
ուր և փոխեցից զքայլ ոտիցս : Եւ դու  
ուր ես, ճիւաղսանդարամետական, յորմէ  
եկին յիս ցնորքն անրջականք . ուր դու,  
զի նզովս 'ի քեզ արձակեցից : Դարձա՞ր  
արդեօք անդրէն 'ի դժոխս . վաշ թէ՝  
կրէիր անտանօր անվախճան զոր ինչ 'ի  
ժամուս կրեմ յանձին . յանէծս քան  
զայդ ցաւագին՝ չեք եղկելոյս անիծանել  
զքեզ, . . . : Այո . ահա տեսանեմ զնա  
անդ . . . ահա մըրիկ բոցոյ ելանէ 'ի դժո-  
խոց . որպէս դեք վաշ վաշ կարգան, վե-  
րակնեն յիս դառնածաղը խնծղանօք : Ո՛հ,  
ո՛հ . ծիծաղեսջիք զեղկելեաւս ոդիք դա-  
տապարտք : Եւ կամ . . . . թէ կայցէ 'ի  
ձեզ դեռ մասն կարեկցութեան՝ Ըրուք  
կարեկից . ոչ ոք 'ի ձէնջ կրէ 'ի տարտա-  
րոսիդ զոր եսն կրեմ յանձին » :

Յետ բանիցս այսոցիկ գնայր Կային  
դեղեւեալ ոտիւք առ բուն ինչ ծառոյ ըդ-  
գեանելու . նստաւ 'ի վերայնուաղ անձամբ  
և անմոռնչ : Ընկղմեալ խոր 'ի յոյզս

խորհրդոց, և ապա զբողանի հարեալ գո-  
չեաց. — « Եւ ո՞իցէ որ մօտ առ իս կոըն-  
չէ . . . այս ձայն է սպանդին . ո՞հ, լսեմ  
զհոնտիւննորա, լսեմ զկարկաջումն զա-  
րեանն : Ո՞վ եղբայր իմ . . . եղբայր . գը-  
թացեալ 'ի տանջանս իմ անպատմելի՝ մի  
ևս հալածեր զեղկելիս » : — « Սստաւ միւս  
անդամ՝ արձակեալ թառաջու 'ի խորոց  
սրաէ, կթուցեալ իսպառ և անբարբառ :

Ելանէր 'ի խորճթէն 'ի սմին պահու նա-  
խահայրն մտրդկութեանս, առ որ և կո-  
ղակիցն ընկերացեալ ասէր . — « Զիարդ  
գեղեցիկ ճառագայթէ արեգակն յելս իւր  
առաւօտուց ընդ առաջ մեր . ո՞րպէս ա-  
նօսր շամանդաղ ոսկեճաճանչ՝ պատի  
շուրջ զբացական դաշտավայրօք որք ցո-  
լացեալ փողփողեն : Երթիցուք յառաջ  
ընդ այս կողմն գեղեցիկ՝ զոտս 'ի բոյս  
հարկանել 'ի ցօղի, մինչև ժամ աշխատա-  
նաց կոչեսցէ զիս 'ի տաղաւար, և զքեզ  
յարտավար : Զիարդ, փարելիդ անձին ի-  
մոյ, գեղեցիկ է երկիր և ընդ անիծիւք .  
թէսլէտ գեղ սորա առ եղեմական դրախ-  
ախ զոր կորուսաք, բա՛րէ իմովս պա-  
տուիրանաղանցութեամբ, այնովիսի էր՝  
որպիսի էր քոյդ յաւուրս անմեղութեան

առ գեղով հրեշտակաց որ իջանէին առ  
մեզ յայցելութիւն։ Տես սիրելիդ՝ ո՞ր  
պէս զուարձանան արտրտծք ամենայն .  
ո՞րպէս երգք նոցա լսելի լինին յամենայն  
անտառաց՝ յամենայն 'ի բլոց . ո՞րպէս ա  
նասունք ընտանիք խայտան առ խրճիթաւս  
յայգորել զնառագայթս արեւուն , 'ի ձայն  
բերկրանաց , կամ 'ի կայտիո զուարիթա-  
բար » :

Պատասխանի ետնախահայրն . — «Այս  
Եւս , գեղեցիկ է երկիր . թէպէտ և անի-  
ծեալ բայց և այնպէս բերէ յինքեան ա-  
մենայն ուրեք զանջնջելին հետս անսահ-  
ման բարութեան առ մեզ , թէ և ողբա-  
լի անկմամբս և ահագին ապերախտու-  
թեամբ՝ անարժանս կացուցաք զանձինս  
վայելել 'ի բարութիւնն յայն և յողորմու-  
թիւն . այս՝ բարերար է տէր ամենակալ և  
ողորմած . ոչ լեզու մեր տկար զօրէ 'ի  
բան բերել , և ոչ միտք 'ի խորհել : Սիրե-  
ցեալդ իմ , եկ երթիցուք 'ի ծաղկաւէտ  
գաշտորայսն՝ ուր արածին խաշինք Աբե-  
լի 'ի ցոլի . թէրեւս գտցուք զորդեակ մեր  
աստուածասէր՝ Երգել անդ նոր ինչ օրհ-  
ներդ 'ի բարեբանութիւն արարչին » :

« Անսա սիրելիդ իմ , ասէ նախամայրն ,

յայտնել քեզ խորհուրդ ինչ՝ որ եկն 'ի  
միտս ընդ արևագալն : Եղի 'ի կողովի ասս  
որ 'ի ձեռին իմում՝ պաշար , զբնափր ըն-  
տիրս , ոլաղատիտս 'ի թզոց , չամիչս ա-  
նուշակս . և ասեմ , երթայց յագարակ առ  
անդրանիկ իմ Կային՝ տանելնմա 'ի պըտ-  
զոցս , կազդուրել զափրտ նորա , յորժամ  
յետ աշխատանացն հանդիցէ ընդ հովա-  
նեաւ միոյ 'ի ծառոցն : Զի քաղցր է ինձ  
ցանկալիդ իմ , ամենայն վաստակ , և ամե-  
նայն ոտնփոխ՝ առ 'ի փարաաել 'ի մտաց  
նորա զայս տիսրազգեաց խորհուրդ՝ թէ  
մէք չսիրիցեմք զնա » :

« Ո՛րուես մայրախնամ գութք սրտիդ՝  
արթուն են , սիրելիդ Եւա , ասաց նախա-  
հայրն . շնորհ ունիմ իմաստուն խորհըր-  
դոցդ . օն , երթիցուք առ Կային , զի մի  
ասասցէ զմէնջ՝ զԱբէլ միայն սիրեն .  
թերես 'ի պարզութեան գեղեցիկ առաւո-  
տուս՝ զափրտ նոցտ գտցուք դիւրապատ-  
րաստ յընդունելութիւն խանդաղատա-  
նաց » : — Զբանսն ասացեալ՝ ձեպին  
յընթացս , Եւա կողով 'ի ձեռին . յառաջ  
խաղային յանդաստան անդր ձեռն 'ի  
ձեռն և զուդահետ : — « Զիարդ բարե-  
բաստիկ լինիցիմք , ասեին նոքա , և երա-

դեին, Եթէ 'ի գեղեցկութեան առաւօտուս՝ յորում բնութիւնն զուարթագեղ՝ զարթուցանէ զամենայն ազնուական ախորժակ, գացուք զսիրտ նորա դիւրապատրաստ առ գորով խանդաղանաց » :

Ելանիէնն նոքա 'ի թիկանց կուսէ մացառաց ինչ, և նախ Եւա ասէ . — « Ո՞ւ է անկեալն անդ . . . ասաց, և յետս հարթեաւ սոսկմամբ . . . Ագամ . . . զո՞տեսանեմտարածեալ անդէն . . . չէ դա անկեալ ըստ հաճոյս առ 'ի հանգիստ . Երեսք նորա յորսայս ընդ դետին . . . ուկեհեր խոպուպիքդ՝ Աբելին են . . . Ագամ, ո՞հ, ընդէր զգողանի հարկանիմ . . . Աբել, Աբէլ. զարթիր որդեակ իմ. դարձո առիս զդէմս քո շնորհագեղ՝ լի որդիական գորովանօք : Զարթիր սիրելիդ որդեակ . ո՞հ, թափեա զայդ քուն անհանգիստ » : — Յայս բան մօտ եղեն նոքա և ետ : — « Զի՞նչ տեսանեմ ես, աղաղակեաց նախահայրն, և սարաեաւ դողմամբ : Աբիւն . . . արիւն հոսէ 'ի ճակառյն . . . ովողեալէ նովիմբ և գլուխն : — « Աբէլ, որդեակ իմ սիրուն » . — Վայեաց նախամայրն . 'ի վեր էառ զբաղուկ նորա կարկամեալ. և անդէն կիսամեռ այլաղու-

նեալ յետս ընդդէմ կործանեցաւ զսրբ-  
տատրովի լանջօքն Աղամայ :

Երկոքին ևս էին ապաբանիք առ յետին  
զարհուրանաց, յորժամ Կային մօլո-  
րեալ թափառէր յուսահատ յանտառին,  
և յանգետս մօտ էանց առ կողմամբ մե-  
ռելցն . ետես զդիակն , և զնովաւ զհայրն  
ահաբեկ անշարժ որպէս զարձան, զմայրն  
դալկահար յեցեալ զդողդոջուն լանջօքն ,  
և գոչեաց . — « Ես ինքնին սպանի զնա .  
դողացարուք շանթահար 'ի ձայնէս . ես  
ինքնին սպանի : Անիծեալ լիցի ժամն՝  
յորում ծնար գու զիս 'ի կնոջէդ . անիւ-  
ծեալ ժամն՝ յորում կին գու՝ երկնեցեր  
զիս : Ես ինքնին սպանի զնա » : — Կըրկ-  
նեաց միւսանդամ, և դարձաւ 'ի փա-  
խուստ :

Օրինակ իմն . որպէս ամոլք ինչ սիրե-  
լեաց՝ զորս յօդեաց 'ի մի համաբարոյ աղ-  
նուռութիւն իւրեանց, թէ նստեալ առ  
միմեամիք , յարիցէ ամսլրոտ սևաթոյր ,  
կանգնին յաղօթս ձեռնամած . բայց շանթ  
կայծականն հեղձուցեալ զնոսա, կան ան-  
կենդանիք յեցեալք զմիմեամիք , այլ երկնին  
կենդանիք շնչաւորք : Այսպիսաբար կայ-  
ին մնային նոքա յերկար արձանեացեալք՝

այլագունեալք և անշարժք դլսովին, թէ  
ոչ դողումն, անդամոց միայն՝ սարսէր  
զնոսա :

Ի մահառիթ թմրութենէս սթափեցաւ  
Ադամ նախ առաջին. և բեկբեկէ չնչա-  
խառն : — « Ո՞ւր իցեմ. ո՞րպէս դողան ե-  
րիկամունք... Աստուած իմ, Աստուած...  
ահա դնի դիամապաստ. աւաղ եղկելոյս .  
աւաղ հօրս թշուառացելոյ. ահափետք  
յաւելուն զահափետս իմ. եղբայր իւր  
է որ սպան զնա. ինքնին գոչեաց զայն.  
անէծ զմեզ և փախեաւ . . . : Սարսափ  
սոսկալի, սարսափ ցրտասառոյց՝ սառու-  
ցանէ զանձն իմ. որ զիսն անէծ՝ որդի իմ  
է. որ լուղի տատ դիաթաւաւ յարիւն  
իւր՝ նոյնալէս իմ որդի : Եղուկ չուառա-  
կանիս. զո՞ր աղէտս, զո՞ր վեշտս ձգեցի  
յանձն իմ և 'ի զաւակ : Արէլ, Արէլ . . .  
և դու Եւա ո՞չ զարթնուս զգալ ցաւոցդ  
միւսանգամ : Մեռա՞ր դու 'ի դիրկս իմ.  
Էս միայն ուրեմն . . . . Էս հիքացեալս, ես  
'ի թշուառութեանս մնացից միայնակ . . .  
Սակայն Աստուած իմ... օրհնեմ զքեզ...  
այլ ահա սարսուռ մահուն ճարակի յե-  
րակս իմ մինչ 'ի սիրտ բարախուն . . .  
Աչք իմ նուաղին . . . . ո՞հ . և դու յա-

սպաղե՞ս, ո մահ . Եկ, Եկ հարկանել զիս այ-  
նուիկ որ ահաւորագոյնն է 'ի քեզ . զի  
յապաղես . . . Աստուած իմ . . . Աբէլ  
. . . որդեակ իմ . . . ազնուագոյնդ յոր-  
դիս » : — Ալաղակէր այսպէս աղխողորմ .  
հայէր միւսանգամ զդիակամբն և լայր . և  
քիրան մահու ընդ արտասուս խառնէր .  
յաւել արպա 'ի բանս ողբոցն . — « Զար-  
թեա՞ր դու Եւա . ո՞հ . զարթեա՞ր կրկին 'ի  
տեսիլ ցաւոց անբերելեաց . աչք քո բա-  
ցա՞ն վերստին : Զե՞նչ հայեցուած արտա-  
սուաթոր՝ սիրելիդ իմ վշտակից » :

« Ադամ . . . ասէ նախամայրն կիսա-  
հագադ ձայնիւ . . . ոչ . ոչ ևս լսի յունկն  
իմ որոտումն անիծասաստ գոչմանն : Ա-  
նէծ նա զմեզ . անէծ սպանողն : Բարէ .  
զիս անիծեա , զիս միայն՝ եղբայրասպան  
գու : Ես թշուառականս , ես մեղայ առա-  
ջին . . . Աբէլ , որդեակ սիրով սիրե-  
ցեալ » : — Յայս բան անկաւ նախամայրն  
'ի գրկացն Ադամայ զմարմնով մեռելոյն :  
— « Որդեակ իմ . որդեակ սիրելի . աղա-  
ղակէր . հեկեկայր առ ցուրտ դիակն : Տէր  
Աստուած . աչք իւր կարկամք ոչ ևս առ իս  
դառնան : Որդեակ իմ . զարթիր որդեակ  
իմ . 'ի զուր կոչեմ . բարէ , 'ի զուր կոչեմ

զիս : Մեռաւ նա : Ահաւադիկ մահն . այս  
իսկ է մահն անխճապարտ՝ որ մեղ սպառ-  
նացաւ յետ յանցուածոցս : Եւ ես... ով  
անսպատում կտտանացս . դողան ոսկեթք  
իմ, ես ինքն մեղայ նախ առաջին : Փեսայդ  
իմ, փեսայդ սպատուական, ամենայն շեթք  
արտասուացդ՝ կշտամբանք են ինձ ահա-  
դին . մեղար դու առ յինէն սպատրեալ:  
Յինէն խնդրեա . . . յինէն զարիւն որ-  
դւոյդ՝ հայրդ գերարտօսրալից . յինէն  
զեղբայր ձեր մանկունք թշուառացեալք:  
Զես անէծ, զիս միայն՝ եղբայրասպան  
դու . խնայեա 'ի հայր քո . ես մեղայ ա-  
ռաջին : Որդեակ իմ, որդեակ արդար,  
զինէն ամբաստանէ այս արիւն, զիս ըզ-  
մայրդ թշուառացեալ» : — Այսպէս կոծս  
առնոյր և աշխարեր, և արտասուք վտա-  
կահոսք զդիտակն առոգանէին :

Հայեցեալ նախահօրն 'ի կին իւր ցա-  
ւագին աչօք՝ ասէ . — « Ո՞հ . Եւա . որ-  
պէս տանջես դու զիս : Երդմնեցուցա-  
նեմ զքեզ, Եւա, 'ի ցաւս մեր . երդ-  
մնեցուցանեմ զքեզ 'ի սէր մեր, կողա-  
կիցդ իմ . ըսեա 'ի նախատանացդ որով  
նախատես զքեզ՝ զոր սիրեմն գորովանօք,  
դոքա կտտեն զիս . դոքա յանչափս մոր-

մոքեցուցանեն : Երկոքին ևս մեղաք . կը-  
թեմք զմեղաց զդառն պտուղս . բայց և  
այնովէս հայի Աստուած 'ի բարձանց 'ի  
մեր տառապալանս : Այս Աստուած իմ . . .  
ներես մեզ կարդալ առ քեզ 'ի նեղու-  
թեանս յանիծապարտ երկրէ ասաի :  
Զմեղաւորն ոչ խսպառ 'ի չիք գարձուցեր .  
կենդանի եմք Եւա . մեռանի հողմարմնոյս  
միայն , կենդանի է հոգին . թէ առաքի-  
նացաւն՝ մնան նմա վարձք յաւիտենից :  
Ապաքէն միսիթարութիւն էր այս . . . մը-  
խիթարութիւն մեծ . բայց աւազ . սպա-  
նաւ յեղբօրէն . . . տէր իմ և Աստուած ,  
եղբայր իւր է՝ որ սպան զնա » :

« Այս որդեակ իմ սիրուն , գոչեաց  
նախամայրն , և արտասուք յորդեցին գե-  
տօրէն . եթաց քեզ սոսկալին մահ զգուռն  
ելից 'ի տառապանաց կենցաղոյս . ոչ ար-  
դեօք աշխարեսցուք զելս քո : Մնացուք  
մէք աստ 'ի վիշտս տառապանաց : Ո՛րպէս  
դնի տապաստ դիակն արիւնաշաղախ : Ե-  
ղուկ . քաղցրիկ այն ժողիտ որդիական սի-  
րոյն՝ տեղի ետ յայտիցն թարշամելոց .  
համակ կապուտակեալ , թաթաւեալ յա-  
րիւն իւրական . շրթունք ոչ ևս բարբա-  
ռեսցին առ իս զհրեշտակականն բարբառ .

իսկ ականազեք իւր այս ընդարմացեալք ,  
ով աղետիցս , ոչ այլ բղխեսցեն արտա-  
սուս ցնծութեան օրսկէս երբեմն բղխեին ,  
՚ի տեսանելն զիմ առ նա զսէր , զիմ զո-  
րով անձառ , և զիմ խնդութիւն ընդ ա-  
ռաքինութիւն նորա : Յո՞ր անդունդս ցա-  
ւոց ընկղմեցաք : Ո՞ւ մեղք , դժնդակ մեղք .  
որպէս սոսկալի է տեսիլ կերպարանացդ ...  
սոսկալի միշտ և յարաժամ : Ես քո մայր՝  
Աբէլ , քո ծնող ողբալի ... զքոյդ երկնե-  
ցի զսպանող : Աբէլ , Աբէլ , սիրելիդ  
իմ » : — Այսպէս կողկողեալ՝ գլորեցաւ  
ողօրմագին զդիակնացեալ մարմնովն ,  
թալկացեալ համբացեալ ընդերկար :

Յայնժամ իզեալնախահօրն զսյս արխ-  
րագին լուութիւն յոդւոց ելանէր ՚ի խո-  
րոց սրտէ . — « Վայ զինեւ • զիարդ կամա  
ընկեցիկ լքեալ յէից քնաւից • որպէս ա-  
մենայն որ շուրջ զինեւ՝ անապատ է , որ-  
պէս սդալից : Սուդ անհնարին , սուդ ա-  
հաւոր սկաշարեալ է զբնութիւնն առհա-  
սարակ : Բա՛ըէ . մեռաւ նա • մեռաւ որ  
միսիթարութեամբ լնոյր զկեանս իմ , ա-  
նուշակ ըերկրանօք և բարեյոյս ակնկալու-  
թեամբք : Անկտւ ամենայնն , անկաւ հաս-  
տարանն իմոյ ակնկալութեան : Դու Ա-

բէլ, սիրելիդ քան զամենային, մեռար  
դու. և իցէ ճշմարիտ. և դու կային. . .  
ոհ, դողան ոսկերք իմ, ճիւաղ փախստա-  
կան, արհաւիրք բնութեան: Բարե. Աս-  
տուած իմ՝ որ զմեր տեսանես զաղետս,  
ներեա Աստուած իմ, ներեա անմիսիթար  
ցաւոցս՝ եթէ կոծամք, եթէ ընդ քարշ  
բերիմք՝ ի հող իբրև զսովունս երկրի. և  
զի՞նչ այլ իցեմք առաջիքո՝ մեզուցեալքս,  
եթէ ընդ քարշ բերիմք՝ ի հող որպէս զսո-  
վունս՝ զորոց զկէս մարմնոց ճմլեաց ան-  
ցաւորն ընդ քարամէ»: — Զայս օրինակ  
ովբայր նախահայրն:

Ի կատարել բանիցս եկաց մնաց նա  
անշարժ այլագունեալև համրեալ՝ որպէս  
մահարձան ինչ անմիսիթարութեան՝ կանգ-  
նեալ՝ ի վերայ մամուսմած և նոճիապատ  
շիրմի յամայութեան: Դարձոյց զգլուխ  
իւր առ տիսրագին տեսարանն: ոչ այլ ինչ  
տեսանէր՝ բայց լուռութիւն, տագնակ ա-  
հագին, արհաւիրք սոսկալի թագաւո-  
րեալ զնովաւ շուրջանակի: Ծանրաքայ-  
լեալ ասկա դողդոջուն ոտիւք առ նախա-  
մայրն, ձգեաց զկթոտ ձեռն նորա՝ ի դիա-  
կանէն, սեղմեալ զայն կաթոգին զսանջօք,  
և խոնարհեալ յերեսս նորա ասեր: —

« Զարթիր Եւա , սիրելիդ կողակից , զար-  
թիր հարսն սիրելի : Համբարձ զաքս քո ,  
համբարձ առ իս յարտասուաթուրմ գիա-  
կանէդ . մի զանձնդ ցաւօք վտանգեր :  
Միթէ ցաւ քո հեղձուցանէ զամենայն առ  
իս զխանդ սիրոյ , զամենայն յիշատակ առ  
այր քո : Ո՞հ , համբարձ զաքս քո առ իս .  
համբարձ հարսն ցանկալի : Արժան և  
ստուգասլէս յանձին բերել մեզ զմահուն  
սարսափ անասելի . արժան զամենայն ա-  
ղէտս՝ զմերոյ անկման զաշխարելի արդա-  
սիս . բայց բերիլ անմլսիթար ընդ քարշ՝ ի  
գետին , յանցանիք են , մեղք են : Ստգիւտ  
արկանեմք գովաւ զյաւիտենական արդա-  
րութեամբ իրեւ պատուհասեալս անխը-  
նայ : Աթափեաց , Եւա , իցաւոց յուսահա-  
տութեանդ , գուցէ ողորմութիւնն , ան-  
սպառ խցցէ՝ ի չարժանեացս զմիսիթարու-  
թեան իւրոյ զաղբիւրս » : — Առ այս ձայն  
Ադամայ շրջեալնախամօրն զաքս իւր՝ ի մե-  
ռելոյն , ելաց նախառ Ադամ , և առա առ  
երկինս . — « Աստուած իմ , ասէր , ներեա  
վշտահար աղախնոյդ . ներեա փեսայդ իմ ,  
անձկալիդ իմ : Մորմոք սրտիս՝ անսպատ-  
մելի . և սակայն սիրես գու զիս տակաւին ,  
զիս . . . զիշտասապարտ աղետիցս , եղբայ-

բասովանութեանդ , և արեանս այսմիկ հեղոյ : Ադամ , [թոյլտուր ինձ լալ՝ի վերայ ձեռինդքո , 'ի վերայ դիտկանս այսմիկ , [թոյլտուր խառնել զարտասուս իմը ընդ արեան դորա ճապաղիս » : — Զբանսն ասաց , և զարտասուաթոր երեսսն սեղմեաց 'ի վերայ ձեռինն Ադամայ :

Լային նորա այստէս , և կոծէին զանձինս ամոլքն երկոքին յեցեալք զմիմեամբք , յորժամ կերպարան ինչ փայլակնացայտ անցեալ ընդ դաշտավայրն գոյր մատչեր առ նոսա : Ծաղիկք անուշտհօտք երագափթիթք՝ նշանակէին զթեթեակոխ հետս գարշապարաց նորա . Ճակատ իւր արփիտհրաշ աւետարանէր ըդխաղաղութիւն , և բարեկամութիւն արգահատիչ արտափայլէր 'ի նշուլագեղ բիբս աչաց նորա , և գեղ երկնային 'ի ծիրշը թանգն , և 'ի շնորհս այտից նորա : Պատմուժանս սպիտակ՝ լուսափառ քան զարծաթափայլ ամազս բոլորեալս զդիշերավառ լուսաւորաւն՝ խաղայր ծածանէր փողփողուն թռուցիկ պատուածովքն 'ի նըբին իրան նորա վայելքահասակ : Գալով գոյր և մերձենայր կերպարանն երկնային կենդանացուցեալ զիւրե շուրջանակի ըզ-

կանաչութիւն վայրացն ամենայն : — « Եւ  
ասէ նախահայրն , համբարձ 'ի վեր  
զարտօսրալից տչսքո . լուս 'ի հառաջա-  
նացդ . տես զերկնաւորդ կերպարան մեր-  
ձենալ տռ մեղ . աես զիարդ հեզահամ-  
բոյր , զիարդ միսիթար դիմօք յառաջ մատ-  
չել : Այժմէն ծագեաց միսիթարութիւն 'ի  
խաւար ցաւոց իմոց : Մի լար Եւա . արի  
երթիցուք ընդ առաջ երկնաւորին » : —  
Յեցաւ նախամայրն 'ի վերայ ասն իւրոյ ,  
և ահա Եկաց հրեշտակ տեառն առաջի  
նոցա :

Ակնկառոյց եղե սա առ վայր մի գորո-  
վանոք 'ի վերայ նախամեռիկ արդարոյն .  
բայց 'ի նոյն դարձոյց զաչս՝ երկնային  
խանդաղանօք 'ի վերայ նախահօրն և կը-  
նոյն հաստատելոյ յեց 'ի նա : Պայծա-  
ռութիւն նորա եհեղ զնոքօք լոյս զր-  
ւարթարար . և ապա բարբառ արձակեաց  
'ի ձայն քաղցրութեան . — « Օրհնեալ  
դուք՝ որ լայք աստանօր առ մարմնով  
որդւոյդ ձերոյ . օրհնեալ կրկին : Առաքե-  
ցայ յամենակալէն այցելու ձեղ 'ի վիշտա :  
Ի դասս հրեշտակաց՝ որք զօրհանապազ  
թեապարեն զմահկանացուօքդ յաշխարհի  
աստ , ոչ ոք սիրեաց զորդեակ ձերքան

զիս խանգաղաղատագոյն : Առ նմա թեածէի  
 հանապաղ յորժամ հրաման ինչ բարձ-  
 րելըն ոչ այլուր մեկնէր զիս 'ի նմանէ :  
 Բազում անգամ յորժամ առաքինու-  
 թիւննորա՝ աստուածային իմն շարժմամբ  
 'ի բարձրագոյնան թեակոխէր , և լուծա-  
 նէր յարտօսր ուրախութեան , կտմյերգս  
 օրհնութեան , զոր թեապարիկ հրեշ-  
 տակք յեղյեղէին 'ի նուագս իւրեանց ,  
 ևս էի առ նմա պատշաճեալ՝ որ մրմնջէի  
 յունին նորա խորհուրդս հրեշտակա-  
 կանս , որպէս զիարդ կարող էր տանելո-  
 գի տաղաւարեալ 'ի հողապատեան մարմ-  
 նի : Մի լայք անմիսիթար , որպէս իսպառ  
 զնա կորուսեալ . սուգ անմիսիթար չեն  
 վայել անմահական հոգւոյ : Մահ ոչ այլ  
 ինչներդործեաց , բայց քակել զհոդի 'ի  
 մարմնոյն վայրաքարշ կապանաց . ազատ  
 է 'ի ժամանս և անխռով առաքինութիւն  
 նորա , բանն և հետաքնին իմաստասի-  
 րութիւն իւր : Երջանկութիւն նորա 'ի  
 վեր է քան զամենայն միտս կապեալ դեռ  
 'ի մարմնի . գասակից է հրեշտակաց և  
 աստուածամերձ : Լայքէք զնա , սիրելիք .  
 բայց մի անմիսիթար . բաժանումն ձեր՝  
 առօրեայ է . եկեսցէ մահ ընդ հուպ առ

նուլ և զձեզ՝ թէպէտ ընդ այլ և այլ կեր-  
պարանօք • սակայն իբրև բարեպարիշտք  
ընկալվեք զստ միշտ որպէս բարեկամ՝ զոք  
զ՝ ի վաղուց սպասեալ: Ադամ, այսպէս  
պատռւիրէ յաւիտենականն • տուր հողոց  
զապականացուդ մարմին, փորեա գու գե-  
րեզման, թաղեսջիր զայդ ընդ հողով»:

Այսպիսի եղեն սպատգամք զուարթ-  
նոյն • ակնարկեաց 'ի նոսա միւսանգամ  
երկնային խանդաղատանօք • և հայեցուած  
իւր կորզեաց 'ի օրաից նոցա զանչափու-  
թիւն թաղծութեանն: Ատպէս զուար-  
թացուցանէ զիսնջուղեառ՝ արբումն զո-  
վարար ականակիտ խոխոջանաց աղբեր,  
յորժամ յետ երկարահետ ընթացից 'ի  
խորշակահար աւազուտս անապատին,  
մերձ է 'ի նուաղիւառ տապոյ պատպակիչ  
ծարաւոյն • բայց իբրև տեսանէ անտելըն-  
կալ զաղբերակն՝ որոյ սառնորակ ալեք  
խոխոջեն քաղցրակարկաչ ընդ առաջ նո-  
րա, հանգչի առ ափամբն, ոդի առնու-  
և զուարթանայ • որոյ կարկաչահոս գնացք  
առնուն ապա տանին զնա 'ի վայր ինչ  
զուարժալի, ուր խայտայ ընութիւնն բո-  
լորամասն վայելըութեամբք, մինչև ժողո-  
վել զնա անդ՝ բարեհամբոյր տանու-

տեառն ընդ ասսկն ջական հովանեան՝ 'ի  
վայելս առատ մարդասիրութեան :


«Քաջալերեալ նախահօրն յոգի իւր  
բարձրագոյն իմաստիւք, հայեցաւ 'ի պայ-  
ծառութիւն անդր Հրեշտակին որ վերա-  
նայր 'ի նոցանէ . ձայն արձակէր զկնի .  
— «Օրհնեմք զքեղ, բարեկամդ երկնա-  
ւոր : Աստուած իմ. որպէս զի մեծ է ա-  
նոխակալութիւն քո, հայիս դու 'ի խո-  
նարհ 'ի նեղութեան մերում, և պատուի-  
րես Հրեշտակաց միսիթարել զմեզ : Եւ  
զիա՞րդ . սողեսցո՞ւք գետնաբարչ յանյոյս  
վհատութեան իրեւ զանարդեալսն յոր-  
ժամ լի եմք աստուածութեամբդ ամենայն  
ուրեք, յորժամ ակնարկես 'ի մեզ քաղց-  
րութեամբ յաթուոցդ բարձրութեան .  
յորժամ զմեօք թևացեալ Հրեշտակըն՝  
առ քեզ համբառնան զմեր հեծութիւնն :  
Միթե արժան իցէ հոգւոյս ցաւագնիլ  
անմիսիթար, որ անմահականն է, և դէմ  
եդեալ առ սնվախճան երանութիւնն .  
արժան ինչ իցէ սգալանմիսիթար յաղագս  
վատալիցն լինելոյ իւրումն համաւօտ ուղե-  
ւորութեան : Ասլաքէն պարտապան եմք  
արտասուաց 'ի վերայ որդեկիս մերոյ եր-  
ջանկի . զրկեցաք 'ի դրկածութեանց նո-

բա յաստի կեանս . բայց առաւելագոյն  
արտասուաց և աղօթից պարտապան էմք  
՚ի վերայ ամբարշտելըն : Աստուած իմ .  
որպէս ցնծասցէ անձն իմ , թէ ոչ խսպառ  
յերեսացդ մերժեսցես զնա : Բարէ . ա-  
ռաջին է նա ելեալ յերանաց իմոց . առա-  
ջին՝ զոր երկնեաց Եւա : Բայց Եւա , ե-  
թէ անձանձրոյթ կարգասցուք առ տէր  
վասն նորա , զիարդ իցէ մեզ երկմտիլ ընդ  
գթութիւն տեառն : Արդարեւ անարժան  
զանձինս առնէաք ովորմութեան շնոր-  
հացն որով չեթող զմեղուցեալքս , որով  
ետ մեզ զիսոստումն աւետեացն անձտ-  
ոից , յորժամ ահիւ և դողութեամբ ակն  
ունէաք . . . ով աղետիցս , ոչ շնորհաց ո-  
վորմութեան , այլ յաւիտենիցն գատաս-  
տանաց : Հանգա Եւա , մի յապաղեսցուք  
հնազանդել հրամանաց վեհին . տարայց  
զզիակնս ՚ի իրջիթ մեր , և անդ տաց հո-  
դոյ զհող երանելոյս » :

« Յանկալիդ իմ , ասէ նախամայրն ,  
զիւր եղեւ սրտի իմոյ ՚ի ցաւոց աստի .  
պնդեցից զանձն բարձրագոյն միմիթարու-  
թեամբս , և ՚ի զօրագոյն առաքինութիւն  
քո հաստատեցից զակարութիւն իմ , որ-  
պէս բաղեղն տկար սկնդի հաստատի ՚ի

ծառ հաստաբուն » : — Խոնարհեալ ա-  
պա նախահօրն՝ բառնայ զթիկամբք զդին  
արիւնաթաթաւ , հեծէր ընդ ցաւագին  
բեռամբն . հեկեկայր և վշտալին նախա-  
մայր ընդ աջմէ նորա . և այսպէս դէմ ե-  
ղին աղեռղորմ 'ի խրճիթ իւրեանց :

# ՄԱՀ ԱԲԵԼԻ



Ե Ր Գ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

**Յ**ետ թեթև քնոյ ինչ ամբոխելոյ ան-  
դոհական երազովք՝ երաց Թիրզա զաշս  
առ լոյս տունջեան։ ընդոստ լինի խուճա-  
պաւ՝ի մորթապատ անկողնոյն։ Այսպէս  
յառնէ ընդոստ՝ ահաբեկ ձանապարհորդ,  
որոյ վաստակեալ գոլով՝ի ձանապարհէն՝  
ընկողմնեալ կայցէ՝ի փապարս քարան-  
ձաւին, յորժամ Հրեշտակ իւր բարե-  
րար՝ աղդեսցէ նմա՝ի տեսիլ ահեղ անքջոց  
զ՝ի բարձուէ կործանումն քարանձաւին  
՝ի վերայ գլխոյ նորա, խոյս տայ անտի  
մազապուր գողալով։ Փլուզեալ քանդի  
քարանձաւն։ ինդրէ նա զուղեկից իւ-  
րումն տաժանտքայլ ձանապարհորդու-  
թեան, և չե ևս գիտէ զՃմլիլ սորա ընդ  
փլատակաւ քարանձաւին։ Ոչ աննմանա-

դոյն յօրինակէս գողացը տառապեալն թիր-  
 զա , և ասէր . — « Զի՞նչ ցնորք զարհու-  
 թելիք անցին ընդ իս յանուրջո . զի՞նչ առ-  
 աջօք սլատկերք խաւարայինք զորոց չգի-  
 տեմ զանուն : Շնորհք քեզ՝ սիրելիդ  
 պայծառութիւն տունջեան . դու փարա-  
 տեցեր 'ի տեսոյ աշացս զայնոսիկ : Ող-  
 ջոյն ընդ ձեզ ծաղիկք շրջասփիւռք՝ իմոյս  
 ձեռաց վաստակք ախորժելիք . առաւօ-  
 տեան ձեր բուրմունք ազգի ազգիք՝ դան  
 լրջացուցանել զիսելաց իմոց ցնորումն գի-  
 շերական : Եւ դուք զուարթարար բնակք  
 օդոցս , զիարդ բերկրալի հնչէ երգդ վա-  
 ղորդեան . եղէց ձեզ ձայնակից . օրհնու-  
 թիւնք իմ և գոհութիւնք ելցեն շնչեսցեն  
 'ի խորոց սրտիս՝ ընդ գոհութեան կենդա-  
 նանորոգ համօրէն բնութեանս : Օրհնես-  
 ցէ զքեզ անձն իմ՝ արարիչ իմ և պահա-  
 պան բարեխնամ . խոսառվան եղիցի քեզ  
 խոնարհութեամբ : Ակն քո ամենատես  
 և օրհնառաք հսկէ անքուն 'ի վերայ մեր՝  
 յորժամ գիշեր և քուն զմեօք պատին :  
 Ո՞հ... օրհնութիւնք իմ և գոհութիւնք եւ-  
 ցեն եռանդագին ընդ գոհութեան կենդա-  
 նանորոգ համօրէն բնութեանս » : — Յոյս  
 բան ելանէ նա 'ի տաղաւարէն 'ի ծաղկոց

իւր գեռափիթիթ, յորմէ սիւկք առաւօտեան յափշտակելին զառաջին բուրմունս զուարթարար անուշից հասուցանել 'ի հոտոտելիս նորա : — « Բայց, յարէ 'ի բանան, առիմէ ապա այս անձկութիւնն ոգոյ, սիրտ իմ գողայ տակաւին : Զի՞նչ այս արհաւիրք անսովոր : Զի՞նչ կոչեցից անգիտանամ : Ահագինք որպէս զամալը ուալս լեռնաձև կուտակեալք զերկինիւք . առ տես սոցա համրացեալ լուէ ձայն ու բախութեան, և դաշտորայք ահարեկք խիթան ընդ մրրիկ ահեղասաստ : Ո՞ւր ես Աբէլ . եղբայր իմ . . . . սրտի իմոյ հատոր սիրելի . փութամ անկանել 'ի գիրկոքո, 'ի խաւարային հոգոց հալտծեալ, որպէս փութայ ուղևոր մոլորեալ գիշերի 'ի մենաւոր անտառ թանձրախիտ, յորժամ ահափեռք տագնապիչք թոխւս տան ոտից նորա ընթանալեաց » : — Յասել իւրում զայսոսիկ՝ զընթացսն երագէր, և ահա ընդ առաջ գայր նմին Մեհալա 'ի տաղաւարէն : — « Ո՞վ երքոյր իմ սիրելի, գոչեաց առ նա . ո՞ւր փութաս . ո՞ւր շտապաւ . և ընդէ՞ր գլուխ այդպէս գիսարձակ, յորում ոչինչ ծաղիկ առաւօտեան առ 'ի զարդ » :

« Փութամ, ասէ Թիրղա , փութամ՝ ի գիրկս սիրելոյն իմօյ . արհաւիրք ան-  
կիրթք տառապեցուցին զիս՝ ի քուն ,  
այժմ իսկ տափնապեն զսիրտ . սկարզու-  
թիւն առաւօտուս ոչ փարատեաց յինէն  
զայնոսիկ . փութամ արդ առ սիրելին իմ:  
Զոր ոչն փարատեցոյց առաւօտ ծաղկա-  
փթիթ գարնայնոյն , և ոչ զուարթերես  
բնութիւն համօրէն , փարատեացէ զայն՝  
զիրկ սիրելոյն իմօյ » :

Առ որ յոգւոց հանեալ կնոջն Կայենի՝  
ասէ . — « Աւազ . ես զիմ միսիթար յո՞  
դաից . երանի քեզ . բոյր իմ . ինձ այդ չիք  
ուստեք . բայց՝ ի հայր իմ սիրապատար ,  
ի մայր գորովական , և՝ ի քեզ Թիրղա , և  
ի փեսայդ սիրելի : Այս . միայն՝ ի ձեր  
լսելիս հեղում զհոգս հալողականս՝ զոր  
դեգութիւն Կայենի բարդէ զինև : Ո՞՛ .  
գեղեցիկ բնութիւնն չազդէ՝ ի նմա՝ բայց  
սևամաղձ միայն . վաստակք զոր խնդրեն  
անդք իւր՝ ի պտղածնութիւն՝ բեռն են  
նմա անբերելի . սակայն որ տանջէն զիս ,  
բարէ , է ատելութիւն իւր և ոխ առ եղ-  
բայր իւր բարէ համբոյր » :

Սկսաւ լալ Մեհալա . և քոյր իւր գո-  
րովասիրտ՝ գիրկս զնովաւ ածեալ , և ըդ-

լիճ լուսոյն արտասուօք լցեալ՝ ասէ . —  
 « Քոյր իմ սիրամնունդ . այդ յիշատակ  
 որպիսի դառն արտասուս աղբիւրացու-  
 ցանէ առն իմում , և ինձ իսկ գլխովին՝ ի  
 դիշերայն տքնութեանս : Մէք յայնժամ  
 բազկատարած կամք յաղօթս առ ամե-  
 նակալն : Իցէ թէ մի միայն նշոյլ բարու-  
 թեան նորա փարատէր զմղտապատ ամպս  
 'ի սրտէ անտի . ուր աճէ որոմն ատելի՝  
 տռաքինութեան հեղձուցիչ : Ծաղկեսցի  
 յայնժամ վերստին զտաղաւարօքս հան-  
 գիստ քաղցր . և թախիծք ոչ ևս երեեսցին  
 յերեսս հօր մերոյ սիրելոյ և գորովա-  
 գութ մօր » :

Կրկնեաց առ նա Մէհալա արտասուա-  
 խառն . — « Ո՞հ . այդ խակ՝ իմ աղօթք ,  
 իմ ուխտ սրտի : Բարէ . թիրզա , քանիցս  
 պատահէ ինձ անցուցանել զհասարակ դի-  
 շերացս յողբա անմռունչս՝ բազկատարած  
 յաղօթս վասն նորա . բայց ըստ դիպաց՝  
 թէ սուղ ինչ բարձրասցի ձայն աղօթիցս ,  
 կամ լալիք , կամ հեկեկանք՝ մինչև զարթ-  
 նուլնմտ առընթել իմ , յայնժամ բար-  
 բառ իւր շանթընկեց ահիւ պակուցեալ  
 հարթուցանէ զիս , կշտամբեալ իբրև խա-  
 փանիչ հագստեան քնոյն , որ մնաց ինձ

ասէ՞ մի միայն բարեմասնութիւն 'ի թը-  
 շուառութեանս՝ թողեալ 'ի վրէժինդիր  
 դատաւորէ 'ի վերայ անիծակուռ երկրիս :  
 Ո՛վեղեախս՝ թիրզա՝ այս խմ աղերս ար-  
 տօսրահառաց, երբ նստիմ 'ի խրճթի  
 յառանին 'ի գործս . տղայք խմ անմեղք  
 լսն զինև տեսեալք զկոծ, և զդերար-  
 տօսր . հարցանեն զիս 'ի լեզու թոթով  
 տղայական փաղաքշանօք, մայրիկ զի լաս .  
 զի տրտմեալես..... Ո՛հ . թիրզա՝ խամրիմ  
 թարշամիմ առ ցաւոցս, որպէս թարշամի  
 ծաղիկ՝ յորմէ գողանան տնկախիտ մացառք  
 ստուերարկուք զցողն զովտրար, և զա-  
 րեւուն զջերմ ճառագայթ : Լուր . սյսօր  
 իսկ յելանելն 'ի խրճթէն վաղայարոյց  
 քան զարշալոյսն, վայ զինև..... իբր ա-  
 հարկու էր նա, սեամաղձ իւր ոչ երբէք  
 այնպէս երեւեալ էր 'ի դէմսն՝ որպէս 'ի  
 ժամուն . սրտմտութիւն կատաղութեան  
 կայծակունս թօթափէր յաչացն ընդ հո-  
 վանեաւ վայրակախ յօնիցն թաւացելոց :  
 Յանցանելն ընդ սեամս դրանց՝ լսէի 'ի  
 լուր ականջացս, և քստմնէի յանձին .  
 նզովէր անիծիւք զժամ ծննդեան իւրոյ .  
 այսպէս ողջունէր նա զարշալոյսն գեղե-  
 ցիկ : Ճշմարիտ է թիրզա . քո իսկ լեալէ

ստէպ ականատես . առաքինութիւնն իւր՝  
Է զի փարատէ 'ի մասնէ զայս խաւար  
Խորհրդոց , և գառնայ 'ի հոգւոջ սլարզու-  
թիւնն ինչ . յայնժամ լայ՝ արտասուէ նա ,  
Խնդրէ թողութիւն որովք զմեզն գառնա-  
ցոյց : Այլաւազը . ծածկի նոյնհետայն այս  
լոյս . զոր օրինակ 'ի թխալամած աւուրս  
ձմերայնոյն , այն ինչ երեեալ գեղեցկա-  
ճանանչ արեւուն , և ահա անդէն միւս-  
անդամ կարկատին ամպք տիսրագինք ,  
և ծածկեն զայն յաչաց : Բայց 'ի վախ-  
ճանի՝ թիրզու , մի վերջասցուք 'ի վերայ  
այսր ամենայնի յառ Աստուած պաղա-  
տանացն . յոյս անպակաս տածեմ 'ի  
սրաի . 'ի վախճանի՝ սլարզութիւն գար-  
նայնոյս խսպառ փարատեսցէ 'ի նմա զա-  
մենայն » :

Մինչդեռ խօսէր Մեհալս , յանկարծ  
թիրզայի հատաւ գոյն երեսաց . շական-  
ջէր զականջան 'ի կողաց մացառացն . —  
« Զբնչ ձայն կոծոյ լսեմ 'ի միջոյ ծա-  
ռոցս , ասաց նա , և սկսաւ գողալ . . . .  
իմ չեք լուեալ երբէք սուդ այդպիսի ,  
քոյր իմ . . . լսի սա 'ի միջոյ ծառոցս . . . .  
Մեհալս , բարէ . . . . ձայն ողբոցս գալով  
գայ և մերձի . . . Աստուած իմ . . . » :

Յայս յետին բարբառ հատկլեալ՝ անկանի  
թիրզա նուաղեալ՝ ի վերայ բազկաց քեռն  
իւրոյ :

Ելանէր արտաքս նախահայրն ծան  
բաքայլ դողդոջուն՝ յետուստ ծառատըն.  
կոցն, բարձեալ՝ ի թիկնամէջս զցաւա-  
գին բեռն՝ զորդւոյն զմարմին . մօտ նմին  
և յեց՝ ի նաքայլէր նախամայրն գլխար-  
կեալ. էր զի՝ համբառնայր զգէմսն թօշ  
նեալ յանբերելի ցաւոց, և հայէր կող-  
կողմամբ՝ ի դիակն արիւնոտ. էր զի՝ սքօ-  
ղէր զայն արտասուաթուրմ զիսակօքն :

Հարեալ թիրզայի՝ ի դալուկն մահա-  
տեսիլ՝ կայր մնայր անշարժ՝ ի վերայ բազ-  
կաց քեռն իւրոյ Մեհալայի. սորա ևս  
թալացեալ նոյնպէս՝ անկաւ ընդ բեռամբ  
զոր կրէր, ոչ բաւելով դողդոչոտ բար-  
ձիցն կթուցելոց՝ ի վեր ունել զքոյր իւր :  
Զոր օրինակ երեք ոմանք ընկերակիցք՝  
սեռն սիրով խանդակաթ սիրելիք, յոր-  
ժամ՝ ի գեղեցիկ երեկոյի ամարայնոյն՝  
ձեռն՝ ի ձեռն ելանեն յոսկեհատիկ ան-  
դաստանս յաւուրս հնձոց, թէ յանկարծ  
ուրեմն անկցի յերկնից՝ շանթ փայլական  
առ ոտիւք նոցա, երեքին ևս սասանեալ  
առ ետեղ՝ զգեանին ահաբեկք . այլ եթէ

Երկուք՝ ՚ի նոցանեւ սթափիեսցին գողմամբ  
 ՚ի շրտմանէն, և տեսցեն զերորդն ա-  
 ձիւնացեալ յանդիման իւրեանց, չար ևս  
 պակուցեալ գլորին յերկիր միւսանգամ:  
 Այսպիսի եղեւ սթափումն ահաբեկու-  
 թեան քերցն երկոցուն՝ յորժամ բացին  
 զայս ՚ի տեսանել զդի եղբօր իւրեանց:  
 Տարածեալ էր զայն նախահօրն ՚ի վերայ  
 դալար խոտոյն, և պինդ ունէր զլալագին  
 կողակից իւր միշտ գայթ՝ ՚ի գայթին՝ չան-  
 կանել՝ ՚ի գետին: — «Ո՞ւր իցեմ ես, գո-  
 չեաց թիրզա. Աստուած իմ, ուր իցեմ...  
 ո՞րպէս գնի նա դիտապատ... Աբէլ.  
 ով. ընդէր բնաւ ինձ զարթնուլ.... ա-  
 տելի լոյս.... ո՞հ, վայ թշուառացե-  
 լոյս.... Մեհալա. Եղուկ զինեւ. աւաղ-  
 կարդացէք եղկելոյս: Աւաղ. ահա գնի  
 նա դիտապատ, անշնչացեալ: Ո՞ տեսիլ  
 աղետալի. հարեր զանձն իմ փայլակնա-  
 հար.... Ատելի լոյս. և ընդէր բնաւ ինձ  
 զարթնուլ»:

« Թիրզա.... գոչեաց Մեհալա ՚ի ձայն  
 բեկբեկ. ո՞հ.... մի զանձն հարկաներ.  
 մի վհատիր աղետագոյն յիշատակօք. և  
 զիս.... հարկանէ շանթահար՝ այդ տե-  
 սիլ.... Ո՞հ, թիրզա, զլորիս դու միւս-

անդամ . . . Զարթիր աղաջեմ Թիրզա .  
մօտ Երթիցուք . գեռ հաւաստեաւ չեմք .  
իրագէտ թշուառութեանս . չէ նա մե-  
ռեալ . . . մօտ Երթիցուք . ձայնքո , դըր-  
կածութիւնք քո զարթուսցեն զնա » :

Այսպէս բարբառէին քորքն ամոլա-  
կիցք , և զմիմեանց ունէին անզօր և  
դողդողմամբ ճգճգէին զիրեարս դայթ  
'ի դայթ մինչ 'ի դիակն մեռելոյն : —  
« Հայր իմ , և մայր իմ . ո՞հ . որպէս կան  
անդ , և քամին արտասուօք . . . դողան  
ոսկերք իմ » — զայս օրինակ բեկբեկէր  
Թիրզա , և 'ի լինելն առ դիակամբ աղա-  
ղակեաց . . . « Աբէլ . . . Աբէլ . . . ցան-  
կալիդ իմ . . . ո՛ բարեբաստութիւն իմ ,  
լոյս աչաց և ամենայն ինչ . . . զարթիր . . .  
Ո՛վ յետին աղետիս . դու ոչ զարթնուս :  
Աբէլ . . . լուր լալագին գոչմանս . լուր  
աղաջեմ գոչման հարսինդ » : — Եւ ապա  
հոսեալ զանձն 'ի վերայ դիականն՝ փա-  
րիլ կամեր զնովաւ , այլ անդէն ահաբե-  
կեալ շրտեաւ ընդ կրունկն՝ ճիչ բար-  
ձեալ . ետես զվիրաբերանն , և զարիւնն 'ի  
ճակատին : Գլորեցաւ յերկիր անբան՝  
անշարժ որպէս զմեռեալ , դալկացեալ  
սառուցեալ որպէս զկիճ անկենդան . աչք

նորա մեծաբացք և անթարթք՝ լի յետին  
յուսահատութեամբ։ Հայր և Սեհալա առ  
ընթեր նմին . ձեռնամած յերկինս համ-  
բանայր զաջ իւր զարտօսրաբուղին՝ զոր  
պահ ընդ պահ իջուցանէր լալ 'ի վերայ  
դիականն :

Յոգի հարաւ նախահայրն 'ի ցաւս  
դստերտցն . արտասուէր , և հայթայ-  
թանս արդահատանաց հնարէր նոցա :  
— « Սիրելիք իմ , տսէր , Սեհալա , և դու-  
թիրզա , հայր ձեր թշուառացեալ աղաչէ  
լուէլ 'ի կոծոյդ . մի լայք անմիսիթար :  
Ունկն դիք դստերք իմ : Ես և մայր ձեր  
իբրև կոծէաք յուսակտուր առ դիտկամբս  
այսուիկ , եկն առ մեզ Հրեշտակ տեառն  
երկնագեղ վայելքութեամբ , պատգամա-  
ւորեալաստուածային միոիթարութեամբ։  
Մի լայք , տսէ , անմիսիթար , մի լայք ան-  
յոյս , որպէս իսպառ զնա կորուսեալ :  
Տուր հողաց զհողն՝ որ աման եղեւ հոգւոյն .  
իսկ հոգի իւր արձակեցաւ 'ի կառանաց  
մարմնոյն . երջանկութիւննորա 'ի վեր է  
քան զամենայն միտս կապեալ դեռ 'ի  
մարմնի . անջատումն ձեր առ 'ի նմանէ՝  
սուզ է և համառօտ . զի և դուք երջան-  
կասջիք ընդ նմա երջանկութիւն՝ որ 'ի

վեր է քանի զամենային միտս դեռ կաշկան-  
գեալ'ի հող մարմնոյն : Մի աղաջեմ դըս-  
տերք իմ անարդեք զյուղարկաւորու-  
թիւն երանելոյս անմիսիթար կոծովք » :

Մինչդեռ արձանացեալ կայր Թիրզա  
միշտ անշարժ և ապաձայն , կին Կայենի  
ձեռս 'ի դլուխ բողոքէր զմօրմոք իւր զայս  
օրինակ . — « Թող հայր իմ, թող լալ  
մեզ . զինչ տեսիլ աղիողորմ քան զայս  
դիակն յորսայս . դու ովլմիսիթարութիւն  
մեր , ցնծութիւն մեր՝ Աբէլ . սիրտ մեր  
հերձանի 'ի ցաւոց . գնացեր թողէր զմեզ .  
դործ մեր քաղցրագոյն եղիցի ողբալ ըզ-  
քեզ , ողբալ մինչև ցօր մահուան մերոյ :  
Ապաքէն հասեր վերնում երանութեան ,  
ոյր ակնկալութիւն աղբիւրացոյց այն-  
չափ յաչացդ վտակս սուրբ արտասուաց ,  
որոյ ակնկալութիւն և յիս այսօր աղբիւ-  
րացուցանէ արտասուաս : Ո՛հ անհանդուր-  
ժելի ցաւոցս . արտասուեմք զկորուստ  
քո , արտասուեմք 'ի ստուեր մահուա-  
յոր պանդխախիմք : Գնացեր թողէր զմեզ .  
դործ մեր քաղցրագոյն եղիցի ողբալ  
զքեզ , ողբալ մինչև 'ի ցանկալի օր մա-  
հուան մերոյ : Կային Կային , ուր էիր  
յորժամ մեռաւ քո եղբայր : Ո՛հ . դո-

նեայ գիրկս տրկանէիր զնովաւ եղբայրական խանդաղատանօք . գէթ յայնժամ հայցէիր յօրհասականէն զօրհնութիւն իւր , որպիսի գորովանօք փարէր նա զքել բազկօքն նուազելովք , և օրհնէր զքեզ շրթամբք թալկացելովք . որպիսի քաղցր միմիթարութիւն , քանի հոգենորոգ գիւր սրտի լինէր քեզ այն առ յասպայս ... Բայց ... Աստուած իմ... զի՞ է , մայր իմ... զի՞նչ նոր ցաւ նուազեցուցանէ զքեզ ... երեխս գողալ առ սոսկման ... Հայր իմ... զի՞նչ ահաբեկութիւն զդիմօքդ երեեալ : Գուշակութիւն ահաբեկու : Ո՞ւր է նա , հայր իմ... գիտիցես ինչ մայր իմ : Ո՞ւր է կային , ուր է այրն իմ » :

Գլխովին սրտաթափեալ նախամօքն գոչեաց . — « Ո' գիտէ , ցո՞ր վայր հալածէ զնաւ վրէժինդրութիւնն աստուածային : Ո՛վ տէր Աստուած..... թշուաւականն այն ... նա ինքն ... Բայց զի՞ է ինձ ասել . գողամ առ քստմնելին յիշատակ : Զիս տանջեա , զիսմ սիրտ միայն տոչորեա որպէս զգեհեան . ո՛ յիշատակ քստմնելի : Ո՛վ վատաբախտիկ մօրս . և ընդէր ... » :

Գումարեալ սասանեալ Մէհալայի՝ ա-  
զաղակեաց . — « Թող , մայր իմ . թող  
ճայթել յիմ դլուխ միայն , 'ի դլուխ իմ  
զշանթ կայծականդ զոր որոտաս : Այս .  
այժմէն իսկ շանթահար ՚ի խորհրդոցս  
լինիմ : Հայր իմ . . . մայր իմ , մի այլ խը-  
նայեսնիք յիս : Միթէ կային զսա . . . ա-  
սացէք աղաչեմ » — « Կա սպան զսա՝ Մէ-  
հալս , Թիրզա՝ նա սպան զսա » — գո-  
չեաց նախամայրն , և անշափութիւն ցա-  
ւոցն եհատ ՚ի նմանէ զբարբառ ձայնին :

Սարսեաց գողացաւ կին կայենի , լե-  
զուն ՚ի քիմս կցեցաւ , աչք սպաղեալք ոչ  
ծորէին արտասուս . քրտունք ցրտագինք  
հոսէին ընդ ճակատն , և շրթունք գու-  
նատեալք բարախէին . ձայն եբարձ ա-  
պա . — « Կա սպան զԱբէլ . այր իմ  
կային սպան զեղբայր իւր : Ոճի՛ր քըստ-  
միելի . . . Ո՞ւր ևս եղբայրասպան գու .  
ուր արդեօք . . . յո՞ հալածէ զքեղ նախ-  
ճիր քո . . . Եհա՞ն արդեօք կայծակն աս-  
տուածային . . . եհա՞ն ՚ի քէն զվրէժ եղ-  
բօր քո : Թերևս բարձար իսկ յաշխարհէ ,  
անձն թշուառացեալ . եթէ կացցես ևս  
տակաւին , ուր իցես այժմ . յո՞ր կողմն  
արդեօք վտարանդէ զքեղ յուսահատու-

թիւն քո վարատական » : — Այսպէս  
կոծայր Մեհալա , և զվարսս փետէր ըզ-  
դլսոյն :

« Եղբայրասպան դու , գոչեր և Թիր-  
դա . ո՞հ . . . զիարդ իշխեաց հարկանել  
զառաքինին զայն և զբարեբարոյն . որ  
անտարակոյս և ընդ մահացու հարուա-  
ծովն հայեցեալէ 'ի նա սիրապատար ա-  
չօքն : Ո՞հ , Կային . անիծեալ . . . անի-  
ծեալ լիջեր դու . . . Թիրզա մի անիծա-  
ներ նմա , դոչեաց Մեհալա . մի անիծա-  
ներ քոյր իմ . Եղբայր է քո , և իմ փեսայ .  
մի աղաջեմ . այլ աղօթեսցուք վասն մե-  
զուցելոյն : Գիտեմ հաստատութեամբ ,  
զի յանկանիլ առաքինւոյն արիւնաթա-  
թախ 'ի գետին , ակնարկեալէ 'ի նա կա-  
րեկցաբար , օրհնեալ ևս զնա . և այժմ  
բարեխօսէ իսկ վասն նորա տուաջի աթո-  
ռոյ յաւիտենականին : Ելցեն յերկինս  
աղօթք երկրաբարշեցս ընդ աղօթից երա-  
նելոյն : Մի անիծաներ նմա Թիրզա , մի  
անիծաներ Եղբօր քում » :

« Ո՞ւր յափշտակեաց զիս սաստկու-  
թիւն աղետիցս , կրկնեաց Թիրզա . ոչ ա-  
նիծեցի զնա , Մեհալա , ոչ անիծի զեղկե-  
լին » : — Յայս բարբառ անկաւ 'ի վերայ

դիականներ . Համբուրէր աղէտիւ զայտս  
նորա զարեամբ թաթաւեալս , և զպա-  
ղեալ շրթունսն կապուտակեալս . Եկաց  
մնաց անդ հարուստ մի՝ ընկլմեալ յան-  
դունդս ցաւոց անմառունչ ամեննեին . և ա-  
պա դարձուցեալ զդէմս բանին՝ հեկեկայր  
հատկլեալ շնչով : — « Ո՞հ . զիսարդ յան-  
կանել քում չեղե ինձ ողջունել դար-  
ձեալ զշրթունս քո զայլագունեալ , լսել  
միւսանգամ 'ի շրթանցդ զվերջին սիրոյդ  
բարբառ . որով և աչք քո կիսամեռք յիս  
յառեին միւսանգամ . թերես . . . և ո՛  
տայր , փչեի զոդի իմ անդէն 'ի քում յե-  
տին սիրելութեան . . . Ո՞րպէս այժմ ան-  
կեալ դնէի յորսայս դիակնացեալ անկեն-  
դան՝ առ դիակամբդ . այլ աւազ , կամ  
մնամ կենդանի՝ ցաւոց անբաւից ճարակ :  
Որ ինչ միանգամ գեղեցիկն էր ինձ ,  
յայսմհետէ զցաւս իմ յաճախեսցեն : Հո-  
վանոցք սաղարթագեղք՝ ինձ այժմ ատե-  
լիք , յորժամ հարցցեն զիս՝ ձեր հովանիք ,  
ուր է որ երբեմն ընդ մերովք կամարօք  
զուարճանայր ընդ քեզ : Հարցցեն և ա-  
ռուակք կարկաջասահք՝ ուր իցէ նա : Ո՛  
անտերունչ սկնդկիս . . . ոչ այլ մնայ ինձ  
առնել , բայց ընդ ձերով հովանեաւ և առ

ափամբքդ զիմ աղետ յայտմէետէ միայն  
 աշխարել : Եթող սա զիս յաւիտեան .  
 բարեէ , եթող յաւիտեան : Ողբումն  
 ինձ և աշխարումն . . . . տեսից հանա-  
 պազորդ զսա . զայս բիբ անշարժ և խա-  
 ւարեալ , զայս դալուկն մահատիալ , և ըգ-  
 քեղ արիւն լըթագոյն՝ մածեալ 'ի ճա-  
 կան և յայտն այլագունեալ : Ո՛վ աղե-  
 տիցս . բղխեցէք արտասուք իմ , բղխե-  
 ցէք անհատաբար 'ի վերայ մարմնոյդ  
 թարշամելոյ : Ո՛հ . . . էր սա արդարեւ գե-  
 ղեցիկ բնակարան ազնուական ոգւոյն , որ  
 խոնարհէր պատուասիրել զիս իւրոյին  
 ընտանութեամբ . որպէս հրաշափառ  
 փայլէր առաքինութիւն նորա ակներե 'ի  
 սրտացուցիչ գեղեցկութեանն . որպէս  
 փայլէր քաղցրահայեաց 'ի բիբս նորա ,  
 զիարդ ժպտէր այն զայտիւք նորա և  
 զըթամբք : Մեկնեցաւ այժմ 'ի մարմնոյ  
 ասաի՝ սուրբն , երջանիկն , գեր 'ի վերոյն  
 մահկանացուացս կենցաղակցութեան , և  
 մանաւանդ ընդ տառապելոյ աղախնոյս :  
 Ո՛վ աղետիցս . բղխեցէք արտասուք իմ ,  
 բղխեցէք անհատաբար 'ի վերայ մարմնոյդ  
 թարշամելոյ , մինչև հոգի իմ անձնատո-  
 չոր փութասցի զհետ՝ խառնել աստ ընդ  
 սորայս զիւր զհող <sup>1)</sup> :

Այսպէս կական բարձեալ աշխարհէր  
Թիրզա՝ յարտասուս ցնդեալ զգիակամը  
անձկալւոյն : Տեսանէր նախամայրն զջայլ  
և զկոծ դստերացն , ևս քան զես խար-  
շատեալ աղէկտուր լինէր : — « Դստերք  
իմ , աղաղակէր նա , մօրմոք ձեր զիարդ  
մօրմոք զսիրտ իմ ցաւած • զիարդ ընդ  
աղէտադ աղէխարշիմ : Բա՛քէ • լալիք ձեր՝  
ինձ կշտամբանք կարեվէրը ... ինձ որ  
մռւծի յաշխարհ զմեղս զանէծս և զմահ .  
ներեսջիք որդեակք իմ , ներեսջիք չուա-  
ռացելոյս , ներեսջիք մօր ձերում՝ որ եր-  
կամբք ծնայ զձեզ » : — Իբրև զայս ա-  
սաց , փարեցան դստերքն գորովալի  
զծնկովք նորա , և աղաղակէն . — « Լոեա ,  
մայր մեր , լոեա վասն երկանցդ որով  
զմեզ ծնար , ՚ի կշտամբանաց այտի որով  
զանձն կշտամբես , մի նորանորս յաւե-  
լուր ՚ի վիշտս մեր : Լոեա աղացեմք որ  
ցաւովք զմեզ երկնեցեր ... մի կշտամ-  
բանս անուանէր զարտասուս մեր և զհա-  
ռաչանս : Թէ ձեռնհաս էաք՝ ո՛ տայր  
մեզ , հրաման տալ ցաւոցս , ոչինչ հա-  
ռաչանք ելանէին ՚ի սրտից , ոչինչ արտա-  
սուք յարտեանաց : Բայց զիարդ ձեռըն-  
հասք զգէմ ունել զբնութեան , զիարդ

զիսանդակաթ սիրոյն . սոքա ձնշեն 'ի  
մէնջ զարտասուս գառնութեան » :

Մինչդեռ այսպէս փարեալք՝ ունեին  
նոքա զծնգաց մօրն , և վերակնեին 'ի նա  
դորովաղէտք արտօսրալից աչօք , սկսաւ  
նախահայրն բարբառ արձակել . — « Սի-  
րելիք իմ , մի այլ յասլաղեսցուք ժամա-  
վաճառ 'ի կատարումն հրամանաց բարձ-  
րելոյն . տացուք 'ի մայրենի ծոց հողոյն ,  
տացուք զայս մարմին՝ զմերոց արտա-  
սուաց և զողբոց առիթ : Ժամանակն որ  
զամենայն բժշկէ , և բանն յաղթական  
դիւրեսցեն ցաւոցս , և յայնժամ ցաւս ե-  
ղեցի իւրե զանձուկ հարսին փափաքա-  
նաց յօրն ցանկալի դարձուցիչ նմին 'ի  
գիրկ անձկալոյն . . . Տուր ուրեմն հո-  
ղոյն , ասաց Թիրզա , և լալագին հայե-  
ցեալ 'ի նա՝ յաւել . « Բայց թոյլ տուր ,  
հայր իմ , լացից միւսանգամ 'ի վերայ նո-  
րա , և ապա տուր զնա հողոյն » : —  
Զբանսն ասացեալ հոսեաց անկաւ բաղ-  
կատարած 'ի վերայ դիականն :

Այն ինչ փորեր նախահայրն փոս 'ի  
դետնի , և փոքր մի 'ի բացէ կայր նախա-  
հայրն և Մեհալա յարտասուս , ահա ե-  
լեալք 'ի խրձթէն գային ձեռն 'ի ձեռն

մանկիկք մատաղք Կայենի , և դողալով  
մերձենային յայն ողօրմ տեսարան : —  
— « Սիրելիդ իմ Յոսիա , գոչեաց Եղիել  
շիկահեր • զի՞նչ ձայնս ողբոց լսեմ : Մա-  
տիցուք այլ յառաջ . . . . վայ . զի՞նչ տե-  
սանեմ . Է նոյն ինքն Աբել . . . որպէս դնի  
տապաստ • որպէս դեղնեալ . հերք նորա  
որպէս արիւնտշաղախ • այնպէս եղբայր  
իմ , այնպէս դնի տապաստ՝ որպէս գառն  
զենեալ 'ի պատարագ » : — Առ որ կըսերն  
Յոսիա . — « Սիրեցեալդ Եղիել , տես  
տես , որպէս լայ Թիրզա 'ի վերայ նորա .  
և նորա աչք անթարթափք ոչ հային 'ի  
սա : Եկ մեկնեսցուք աստի • գողամ ես .  
այս տեսիլ զարհուրեցուցանէ զիս • փու-  
թացուք առ մայր մեր . . . և նա լայ ան-  
դէն » : — Փութացեալ յայնժամ տղայոցն  
առ մայր իւրեանց՝ մատչին մօտ լանջ  
առ լանջ • հարցանեն ցաւագին : — « Մայ-  
րիկ , զի՞ լայք առ հասարակ • ընդէր Աբել  
գետնատարած որպէս զգառն ողջակի-  
զին » :

Գիրկս արկեալ Մեհալայի զաղայովքն՝  
և հայեցեալ ընդ նոսա արտասուագին՝  
ասէ . — « Որդեակք իմ սիրունք , եհան  
մահ զհոգի նորա յերկը աստի , և տա-

բաւ յերկինս առ Հըրեշտակս 'ի խնդութիւն յաւիտենից » : — Ո՞չ ևս զարթիցէ ուրեմն , կրկնեաց Եղիշլ , և ելաց բարձրաձիչ . ո՞չ ևս զարթիցէ նա՝ որ սիրելն զմեզ գորովանօք , որ ուսուցանէր մեզ երգս օրհնութեան դեղեցիկս . . . լուար Յոսիա . որ բարձեալ ունէր զմեզ 'ի վերայ ծնգացն դէմ առ դէմ , դգուէր , և խօսէր մեզ զԱստուծոյ՝ զՀըրեշտակաց , և զոքանչելեաց բնութեան , ո՞չ ևս զարթիցէ : Ո՞չ . ո՞րպէս լացցէ հայր մեր 'ի դառնաւալ իւրում յանդոյ » : — Այսպէս թութովեալ անմեզ մանկաւոյն՝ ճչեին արտասուօք , և կողկողագին զարհուրանօք պատառէին զանձինս 'ի պատուածս քղանեցից մօր իւրեանց :

Կատարեաց նախահայրն զփոս գերեզմանին . — « Զարթիր Թիրզա , զարթիր սիրելիդ , մի այլ յասկաղեսցուք զՀողդտաւՀողոյ . տէր Աստուած պատուիրեաց մեզ . գուստը իմ Թիրզա՝ մի այլ յասկաղեսցուք » : — Զայս օրինակ գոչեր՝ նախահայրն . և մատուցեալառ Թիրզա՝ կալաւ զձեռանէն հայրագորով սիրով : Զարթեաւ Թիրզա՝ որ այնպէս անշունջ անկետ գնէր 'ի վերայ դիականն , յափշտա-

կեալ հոգւոմն 'ի հիացումն ինչ մտաց .  
զարթեաւ յաստուածային տեսլենէն՝ և  
ձայն եբարձ . — « Այս . տեսի զնա .  
գայր առ իս երկնային պայծառութեամբ .  
զիարդ հրաշափառ . տեսի զերանելին . . . .  
թիրզա մի լար , ասաց ցիս . մի լար . եր-  
ջանիկ եմ ես . եկեսցես ընդ հուստ առ իս  
յերկինս , ուր մահ ոչ ևս մեկնեացէ զմեզ  
'ի միմեանց : Եւ եղե նա աներեսոյթ՝  
ժպտեալառ իս ժպիտ ինչ աստուածային .  
և ճառագայթք երկնայինք դրոշմէին յօդն  
զկնիք հետոց լուսասփիւռ գարշապա-  
րացն » :

Այսպէս ասաց թիրզա , և միմիթարու-  
թիւն ինչ գերաշխարհիկ ճառագայթեաց  
'ի գէմս նորա : — « Թաղեա , հայր իմ , ա-  
սէ նա , թաղեա զհողդ 'ի հող » : — Եւ  
ապա յարուցեալ եկաց առ մօրն , և առ  
քերբն . երեքին ևս սքօղեցին զերեսս իւ-  
րեանց հոպոպեօք գիսարձակ հերացն ,  
մինչև նախահօրն գիտապատիկ տրարեալ  
մաշկեկաւ զմարմին արդարոյն՝ իջոց լո-  
լագին 'ի գուք , և ծածկեաց հողով : —  
« Եկայք այժմ , ասէ , հարսնդ սիրելի ,  
և որդեակք իմ սիրեցեալք , եկայք երկիր  
պազցուք բարձրելոյն՝ գետնատարածք

յաղօթս առաջի հանգստարանիս » : —  
Ծունը եղին ամենեքին զգերեզմանաւն .  
'ի դուժս անկան և տղայքն Եղիէլ և  
Յոսիա յաջմէ և յահեկէ մօր իւրեանց .  
յայնժամ նախահայրն մարդկութեանս  
այսպէս յաղօթս Եկաց ձեռնամած զլան-  
չօք :

« Ո' որ բնակեալդ ես յերկինս 'ի բար-  
ձունս Աստուած արարիւ , յաւիտենա-  
կան արդարութիւն , անսահման բարու-  
թիւն : Անկեալկամք առաջի քո՝ առ շեր-  
մաւ նախամեռիկ ապականացուիս՝ գետ-  
նաքարշ մեղուցեալքս , և առ քեզ կար-  
դամք : Ելցեն աղօթք մեր յերկինս . հայ-  
եաց 'ի մեզ մարդասիրութեամք՝ խոնարհ  
յայս հովիտ մահուան 'ի բնակութիւն մե-  
ղաւորաց : Մեծ են անօրէնութիւնք մեր ,  
մեծ յոյժ . այլ բարութիւնդ յաւիտե-  
նական՝ անբաւ 'ի մեծութեան : Զի՞նչ  
եմք առաջի քո պղծեալքս և շաղախեալքս .  
սակայն չդարձուցանես 'ի մէնջ զերեսս 'ի  
բաց : Հեծեմք աւասիկ 'ի թշուառու-  
թեանս զոր անձամք յանձինս ձգեցաք .  
և դու 'ի բարձանց ակնարկես յայն բա-  
րեգթութեամք : Թողուս մեզ կարդալառ  
քեզ , զմեղուցեալքս ոչ անտես արարեր » :

«Օրհնեալ դու յաւիտեան որ բնակեալդ ես 'ի բարձունս երկնից : Զքեզօրհնէ ոչ գարուն միայն զուարթարար , ոչ պարզութիւն երկնից միայն զքեզպատմէ , այլև կայծակն որոտընդոստ 'ի լրթադոյն արձակեալ ամսղոց : Զքեզպատմէ մըրիկահեղագոչ ձայնատու յերկիր՝ ամսղրոպաց և երկնասահան անձրեաց : Օրհնեն զքեզ և հրճուանք զուարթացելոց , և լալիւնք ցաւագնելոց : Տեսաք զծնունդ մեղաց զսոսկալին մահ . եկն եմուտ նազարհուրատեսակ 'ի խրճիթս մեր : ՈՃիր ահագին , և զիարդ ոչ մանչեաց յայնժամ երկիր , և ոչ մըրիկք գումարեցան 'ի վերայ նորա , ոճիր քստմնելի զձեռանէ առեալնորա ած առ մեզ . առաջինն ելեալ յերանաց իմոց .... սարսուեն ոսկերք իմ և երիկամունք , մատնեաց զեղբայր իւր 'ի ժանիս մահուն : Մի՛ Աստուած ողորմութեան , մի դարձուցաներ զերեսս քոյ յինէն , եթէ կարդալ առ քեզ ժտիցիսմ վասն նորա : Մի՛ մինչեւ իսպառ ընկենուր զնա յերեսացդ՝ բարութիւն յաւիտեանական : Ակնարկեա գթութեամբ 'ի մեղուցեալն , գողալ յանօրէնութենէն զոր անօրինեաց , խոնարհել առաջի քո 'ի հող և

'ի մոխիլը , լալ հեծել , խնդրել անդադար զթողութիւն : Եւ յորժամ կարդացէ առ քեզ անլուելի , և սիրտ նորա խոցեսցի կարեվէր ընդ ոճիրն ահագին , հեղ յայն ժամ Աստուած իմ շիթս միսիթարութեան 'ի թշուատութեան նորա : Աստուած իմ , Աստուած ողորմութեան , մի մերժեր զակազատանս ծառայի քո զոր ժըտիմ առ քեզ պազատել » :

« Փորեցի գերեզման , արկի հող արատառաւաթուրմ 'ի վերայ մարմնոյ նախավախճան որդւոյս . լուր ազօթից մերոց մացեն այնք 'ի տաճար սուրբ քո՝ համբարձեալ 'ի գերեզմանէ աստի առաջին ապականացուիս : Լուր մեզ տէր , լուր մեզ տէր Աստուած մեր՝ 'ի լալ մերում առաջի քո վասն անդրանկին մերոյ , մի թողուր կորնչել նմա 'ի սրտմտութիւն բարկութեան քո տէր : Լուր մեզ՝ յարտասուելն առ քեզ 'ի տքնութեան զհասարակ գիշերաւ , յարտասուելն առ քեզ յելս և 'ի մուտս արեգական : Բայց և այնպէս բարերջանիկ եմք Աստուած իմ , բարերջանիկք . փառաբանութիւն քեզ , փառաբանութիւնք յաւիտեան , որ ընկալար առ քեզ զհոգի հանգուցելոյս :

Էշտու մահ զառաջին զոհ իւր . զհետ եր  
թիցուք սմա և մեք զերերաց զկնի 'ի  
գուբն խաւարային , զհետ երթիցուք  
նմին 'ի յաւիտենականն օթեան : Դու  
Աստուած իմ , որոյ ակնարկիք հաստա-  
տեցին զերկինս երկնից , և բան բերա-  
նոյդ զերկիր . անցցեն և երկինք , անցցէ  
և Երկիր , և դու կաս մնաս յաւի-  
տեան » :

« Կեամք 'ի հող հողեղէնքս , և մերս  
հող լուծցի 'ի փոշի , դու մնաս անյեղլի  
յաւիտեան : Ժողովես դու առ քեզ յեր-  
կինս 'ի վեր զամենեսին զմեզ , զապաշսա-  
րող մեղուցեալն , և զբարեպարիշտն , որ  
դիշերահոս արտասուօքն ողբայ ընդ այն՝  
զի առաքինութիւն իւր չէ փափաքանացն  
զուգական դեռ ընդ ախտիւք անկեալ  
մարդկային տկարութեան . դու զերկա-  
քանչիւր ժողովես առ քեզ 'ի հողոյ աս-  
տի՝ խնդալ յաւիտեան , լինել մաքուր և  
անախտական զօրէն հրեշտակաց : Վասն  
զի . . . ովանձառ խոստմանցն աւետեաց .  
« Զաւակ կնոջն ջաղխեսցէ զգլուխ օ-  
ձին » :

« Թինգս առեալ ցնծասցէ երկիր . փա-  
ռաբանեսցեն զնա արարածք ամենայն .

օրհնեացուք զտէր՝ նաև յորժամ աջ իւր  
 շանթեսցէ 'ի դլուխ մեր հարուածս ա-  
 ղետից : Անկաւ մարդն , 'ի կոր կործա-  
 նեցաւ յաստիճանին բարձրութենէ յոր  
 եգաւ . այլ երանի՛ մեզ . ոչ յաւիտեան  
 մերժեաց զնա Աստուած . և բարութիւն  
 նորա ակնարկէ 'ի մեզ՝ 'ի դատել իւր 'ի  
 դատողական իսկ 'ի բեմին : Անկաւ նա՝  
 զոր ստեղծ Աստուած այնպէս երջանիկ .  
 և յանկմանն եկաց մեղուցեալն ահիւ և  
 դողութեամբ , և գլխարկեալ ամօթա-  
 պարտ՝ ակն ունէր յետին տագնապաւ՝  
 աստուածասաստ անիծից և յաւիտենից  
 դատապարտութեան . զի բմ իմիք մնայր  
 նմա ակնկալել : Այլ ով սքանչելեացս .  
 արարածք ամենայն տօնեն զխորհուրդն  
 մեծ . « Ճաղխեսցէ նա զգլուխ օձին ։  
 Խորհուրդ մեծ և բարձր՝ աստուածայինն  
 պարածածկեալ ամսովք մթութեան ,  
 աննկատելիդ յեղելոցս աչաց , դու մեծ  
 հաշտարար մեղուցելոյն ընդ Աստուծոյ ։»  
 « Զի՞ ապա հեծեմք ընդ հողեղեն յար-  
 կաւս՝ ախտակիր արտասուօք . այնու զի՝  
 յերազի կենցաղըս՝ երբ բերկրիմք , և երբ  
 թաղծիմք , մինչև յօրն յայն՝ յորում  
 մահ ոտն առ ոտն մերձեցեալ՝ զարթուս-

ցէ զհոգին 'ի մեղսամակարդ հովեցէն  
 բանտեն , և արձակեսցէ զնա 'ի կապա-  
 նաց արժանապատիմ անիծիցն : Ելանէ  
 յայնժամ հոգին 'ի կաւակերտ բանտեն՝  
 յորում ոչն մոռացաւ զազնուականու-  
 թիւն բնութեանն , և սիրեաց զԱստուած՝  
 որ վառէրն զնա 'ի սէր իւր՝ սքանչելեացն  
 անիբաւութեամբ , և բարութեամբ ան-  
 սահմանելեաւ : Ո՞վ հրաշիցս . տեսանեմ  
 ահա զերանաւէտ զհանդերձեալսն , տե-  
 սանեմ զորս մահ յերկրէ յերկինս վերա-  
 բերեաց , զաւակ՝ որոյ ոչ գոյ թիւ : ՎՃիտ  
 պայծառ որսկէս զբոց՝ զոր լուցանեն .  
 զուարթունք 'ի վերայ սեղանոյ առաջի ե-  
 րեսաց յաւխտենականին : Պարակից են  
 նոքա հոգեղինացն , վերերդել երդս օրհ-  
 նութեան անըւելի՝ առ պատուանդանաւ  
 փայլակնացայտ աթոռոյն : Ո՞վ . զի եղե  
 ընդ իս . որսկէս անձն իմ դեր 'ի վերոյ  
 համբառնայ , համբարձումն՝ ինձ անծա-  
 նօթ ցայսօր : Օրհնութիւն քեզ . . . օրհ-  
 նութիւն՝ բարութիւնդ անսահման , սա  
 քեզ տղայաբանէ միայն 'ի բան թերակա-  
 տար շրթանց : Ընկղմեալ է անձն իմ 'ի  
 հիացումն աստուածային . և թէ սլասցի  
 խորախորհուրդ ևս՝ քան զառաջինն 'ի

նահապետութիւնս իմանալեացն , ոչ բաւեսցէ զայն՝ ի բան բերել . այլ տղայաբանել միայն . . . . յանձին միայն զգալ զնոյն » :

Առեաց նախահայրն , և եկաց հարուստ մի՝ ի խորին լոռութեան . և որք ընդ նմայն՝ ի գուշա էին առ գերեզմանաւն՝ կացին նոյնապէս լոիկ անմռունչ : Բնութիւնն համօրէն որպէս թէ ափշեալ պակուցեալ ընդ այն՝ պահէր զնոյն խոր լոռութիւն , և ՚ի պայծառ պարզութեան երկնից՝ ոչ մի ամպոց դոյզն նշմարանիք :

Եկն եհաս երեկոյն , ընդ նմա և ըստ ուերք զովագին , և հանգիստ անդորր . բայց կայենի վարեալ յուզեալ անհանգիստ՝ ՚ի տագնաալ արհաւրաց և ՚ի մըտրակ խղճին՝ յանապատս ամայիս թափ առեալ աստանդէր : Վաստակեալ ապա ուրեմն՝ նստաւ դէմյանդիման լուսնոյն որ ծագէր՝ ի ժամուն . հնչեցուցանէր զբարբառ իւր ահեղագոչ՝ ՚ի լոռութեան անդ երեկորին : — « Անդ , ասէ , ՚ի թիկանց արջնաթոյր լերինդ՝ ելանէ ահա լուսին լուսապատար , և լուղի՝ ի նսեմաստուեր հաստատութեանն . ծաւալէ համասփիւռ զՃառագայթս իւր և զքաղցը

անգորբութիւն . ամենայն ինչ՝ հանգիստ  
շնչէ և բերկրութիւն ընդ գեղեցիկ դմբե-  
թաւս աստեղազարդ : Մարդն՝ ոչ ևս .  
կոծ և աղաղակ ելանեն յերկինս 'ի տա-  
ղաւարաց աստի : Ե՛ս ինքն եղեռնաւորս ,  
Ես ինքն մուծի զայս կոծ անմխիթար 'ի  
տաղաւարս նոցա : Զինէն ըովոքեն յեր-  
կինս այս հառաջանք , այս կառաջիւնք տա-  
ռապելոց՝ որք ամբառնան 'ի նոցանէ ընդ  
օդդ գիշերական :

Այսօր . . . լուսրուք աստեղք երկ-  
նից , լուր և դու լուսին , այլագունեաց և  
ծածկեսջիր զդէմսդ : Օրս այս . . . անի-  
ծեալ որ ինձ ծագեաց , 'ի սմա արք եր-  
կիր զոր դուն լուսաւորես՝ զառաջին ա-  
րիւն մարդկային : Ե՛ս ինքն եղկելիս՝ որ  
դողամ աստէն՝ Ես ինքն արբուցի նմին  
զայն արիւն . . . զարիւն իմոյ հարազատի :  
Մի այլ ծագեք յիս աստեղք բարերարք .  
մի այլ ծագեք 'ի վերայ անդաստանաց  
զոր գործեմ , կողմանն յոր բնակեմ . ըս-  
պանի զեղբայր իմ : Պատեա զինե աւզա-  
մուղթանձրամած , ծածկեա զիս յաչաց  
էիցս համայն : Փախեայց ընդ ամրածա-  
ծուկ քօղովդ , փախեայց ընդ իմում  
թշուառութեան յանջրզիս՝ զորոյ և ոչ մի

գարշապար կոխեալ իցէ զթարշամ գա-  
լարիս : Բնակեցայց 'ի քարանձաւս ժայ-  
ռից , ուստի ջուր ինչ ժահահոտ կաթես-  
ցէ ոլոռն ոլոռն 'ի ձև արտասուաց 'ի խորս  
անդ Ճախճախուա կայանից՝ զաղրաթորմի  
զեանոց քսամնելեաց , ուր մացառք վայ-  
րենացեալք խաւարաբորբք՝ հաւուց շաղ-  
ղակերաց ապաւէնք՝ դողասցին 'ի վե-  
րուստ յաչացս զերկինից տեսարան . անդ  
կոծեցայց , անդ կաղկանձեցից երկրա-  
քարշ հողաթաւալ : Եւ յորժամ քուն  
սեափետուր սաւառնեալ զաչօքս՝ ածցէ  
զինե զիսուսն անընոց խօլականաց , երեսու-  
թասցի առաջի աչացս սպատկեր նորա ո-  
զորմ . սկաւառակ գլխոյն ջախջախեալ ,  
և խոպոպիք արիւնակայլակ » :

Այսպէս դողայր կային , և այսպէս  
աշխարհէր 'ի մթան դիշերոյն . լռեաց յե-  
տոյ ժամս ձիգս՝ խորասուզեալ յան-  
գունդս իւրոյ թշուառութեան : Հաւն դի-  
շերակարկաչ՝ սոսկացեալ 'ի սգաւոր վայ-  
ոց աստի՝ զիւրսն լռեցուցանէր . ոչինչ  
լսելի լինէր 'ի ախրագին սահմանսն յայ-  
նոսիկ , բայց խարշափ աղօտաալուր , և սօ-  
սաւիւն : Կոյենի աչս զվայրօք յածեալ  
ահ ընդ ահ , վերստին առնոյր զթել

բանիցն : — « Ողբացեք ինձ թլուրք , ասէ .  
ողբացեք անտառք որ զինեւ . մեծ է թը-  
շուառութիւն իմ , մեծ , անպատճում . այո՝  
արժանի է կարեկցութեան անձն թշուա-  
ռացեալ : Ողբա զիմս աղետ բնութիւնդ  
գեղեցիկ , այլ վասն իմ ոչ ևս , աւաղ , ոչ  
ևս գեղեցիկ : Ողբացեք զիս արարածք ա-  
մենայն՝ վկայք գործոց բարւոյն Աստու-  
ծոյ , բայց վասն իմ ոչ ևս բարի . չունի  
բարերարել առ իս վրէժխնդիրն յաւիտե-  
նական » :

Յայս բարբառ գարձեալ լռեաց , և ա-  
պա հառաջեաց վերստին . — « Գեթ  
այժմ , ասէ , փողձկիմ յարտօսք՝ զոր յա-  
ռաջն չեի կարող . ահա բղխեն արտա-  
սուք , վկայք սկատուականիք՝ ցաւոցս մեղ-  
մելոյ . վայրիկ մի յառաջ յուսահատու-  
թիւն 'ի սրտիս , 'ի ժամուս ցաւ սկալի և  
ողբական : Ո՞չ . բղխեցեք արտասուք իմ .  
ընկալ զայս՝ երկիր , որ ընկալարդ զա-  
րիւն եղբօր իմոյ : Անիծեալ եմ ես 'ի վե-  
րայ երեսաց քոց . բայց . . . ընկալ մտա-  
դիւր զարտասուս իմ զոր բղխեն ցաւք  
դառնագինք . . . բայց . . . զինչ խոր-  
հուրդք ելանեն ընդ միտս իմ . . . և ես  
աղբիւրացուցանեն այնոքիկ զարտասուս

իմ։ Այս կամիմ . . . մինչդեռ գիշեր մա-  
ծեալ է զինեւ, կամիմ զնալ ընդ քարշ  
՚ի խրձիթս տառապելոցն, տեսանել զնո-  
սա միւս ևս, և օրհնել միւսանգամ . . .  
Օրհնել զնոսա . . . Ի՞ս ինքնին . . . Առցեն  
հողմք զայրագինք՝ ցնդեսցեն 'ի շրթանցս  
զայն օրհնութիւն ապախտ : Չիք թշուա-  
ռացելցս՝ չեք այլ օրհնել զնոսա : Բայց և  
այնպէս երթայց, երթայց, օրհնեցից և  
լացից . և ապա . . . ովազետիցս . և ապա  
փախեայց հեռի 'ի նոցանէ անդարձ յա-  
ւիտեան : Փախեայց 'ի քէն Մեհալս,  
փախեայց հեռի յորդեկաց մերոց, և այն՝  
յաւիտեան » : — Աստ ոչ ևս ժուժեցին  
աղիք նորա . լռեաց, և ոտք նորա ընթա-  
նային 'ի խրձիթն կոյս, և դառն արտա-  
սուօքն ոռոգանէր զամայի շաւիղսն՝ ընդ  
որս անցաննէր :

Ետես 'ի հեռաստանէ հովանոց ինչ դա-  
լարազցեստ՝ ձեռատունկ Աբելի 'ի բարձ-  
րիկ զառ 'ի վայրի բարձրաւանդակի միոջ-  
այս տեսիլ ած 'ի լիշտատկ իւր զասելն  
Աբելի 'ի ժամանակի՝ յորում զայն արն-  
կէր . — « Աճեցիք մատաղատունկիքդ,  
բարձրացարուք հեղասաղարթ հովանիք  
զովարարք . թոռունք մեր անապանք նըս-

տեալք աստ 'ի հովի՝ այր ցընկեր պատ-  
մեսցեն . աստ յղացաւ նախամայր մեր  
զանդրանիկ իւր , աստ զառաջինն՝ ար-  
տասուօք գրկեաց զնա 'ի վերայ երկրի ,  
զնա՝ որ առաջին միսթարութիւն եղե  
մենակեաց աւուրցն զոր յերկրի անցոյց :  
Կա ինքն՝ անուն կոչեաց նմա կային . կո-  
րանայր զնովաւ անսպատում ցնծու-  
թեամբ , համբուրեր և ասէր . « Ստացայ  
զքեզ մարդ՝ Աստուծով » :

Դարձոյց Եղբայրասպանն զերեսս 'ի  
բաց 'ի խանդաղատիչ տեսարանէ անտի .  
Քրառունք մահացու ծորեին ընդ ճակատ  
նորա , և խարիսխք բարձիցն դողդոջելոց՝  
հազիւ բարձեալ բերեին զնա : Ոչինչ  
ընդհատ 'ի սմանէ դողայր ապաքէն յան-  
ցանել իւրում առ դամբարանաւ հօրն՝  
որդի հայրասպան , որ 'ի դառնալ ալեոր  
ծնողին յանդոյ սովալլուկ և վաստակա-  
բեկ , խառնեալ իցէ թոյն մահու 'ի կե-  
րակուր նորա . յորժամ յանցանել նորա  
հալածեն զնա շրշիւնք , և հոտք անուշից  
բոլորից ծաղկանց՝ զոր քորք իւր բարե-  
պարիշտք կախեցին զափորով դամբարա-  
նին : Անց Կային՝ լի դողմամբ առ դալա-  
րազքեաս հօվանոցաւս , երթալով եր-

թայր , և մերձենայր 'ի խրճիթան : 1 ու-  
սին գիշերավառ ծաւալէր ընդ անտառա-  
խիտ սատս ծառոցն զլոյս իւր դալկահար  
'ի վերայ նոցա , և լուսւթիւն ինչ ահար-  
կու գրաւեալունէր զամենայն : Աչս ար-  
ձակեաց 'ի վերայ այնոցիկ և ելաց . համ-  
բարձ յերկինս զձեռս իւր , և եկաց ան-  
բարբառ ընդերկար . կակիծ անթարդմա-  
նելի հեղձամղձուկ ունէր զսիրա նորա , և  
մնաց այնպէս ահաբեկ 'ի սդաւոր լուս-  
թեան :

« Զինչ արտմութիւն խոր , ասաց դաշն  
ձայնիւ , հանգուցեալ է աստանօր . բայց  
այս մրմունջք ... ուստի գան ... չից նու-  
սոքա արդեօք հառաջանք . ոչ ողբք իցեն  
դիշերային անքուն տիսրանաց՝ որք լսելի  
լինին 'ի խրճթաց աստի ... Աւասիկ ող-  
բալիդ գերդաստան ... աւասիկ դողայ  
աստ 'ի մլթան հալածեալ 'ի դժոխոց նա՝  
որ սդով ելից զառւն ձեր ... նա ... (ա-  
ւաղ անիծապարտ եղկելոյս) , որ վտա-  
րեաց 'ի ձէնջ զլսազաղութիւն և զամե-  
նայն զառանին բերկրանս : Եւ գեռ իշ-  
խեմ բնաւ շնչել զօդ զհառաջանօք առ-  
լցեալ ողբարկուացն՝ զոր ես ինքն թշուա-  
ռայուցի . իշխեմ բնաւ կոխել զսահման

նուիրեալ անմիտիթար տրտմութեան ա-  
 ռաքինեաց , որ և յոդոց հանեն 'ի վերայ  
 խոյս ապիրատութեան . . . Փախիր անձն  
 իմ՝ փախիր . մի պղծեր զտեղիդ սրբու-  
 թեան . . . Այո . . . փախեայց թշուտուա-  
 ցեալս . տեսցեն միայն զձեղ դամ մի՝ աչք  
 իմ կկոցեալք . թոյլ տուք ինձ , թոյլ  
 տուք եղկելոյս հեղուլ և ևս զձեօք՝ կտ-  
 թիլս միայն դառն արտասուաց , համբառ-  
 նալ աստանօր դամ մի յերկինս՝ զարիւ-  
 նաթաթախ ձեռս իմ օրհնել զձեղ , և ա-  
 պա փախեայց յանդարձ օտարութիւն :  
 Օրհնեալ եղիջիք , օրհնեալ . . . դուք . . .  
 տւաղ թշուտառցելցոս . փոքր միւս ևս՝  
 պղծեալ էր իմ զսուրբ և զպատուական  
 անուանան՝ որովք անուանեն զմիմեանս  
 կցորդեալքն՝ 'ի մարդկութեանս սրբա-  
 նուէր կապանօք արեան : Օրհնեալ դուք  
 կրկին , օրհնեալ վերստին : Ո՛ տայր՝ ա-  
 մենայն ցաւոց ընդ մթութեան գիշերոյս  
 տեղի տալ 'ի ձէնջ , և յաւելուլ յիմ  
 ցաւ՝ անանջատ ինձ ուղեկից 'ի վերայ ե-  
 րեսաց երկրի զոր անիծիւք լցի : Ո՛ տայր  
 մօռանալ ձեղ յաւեժ զնա՝ որոյ պատկեր  
 տանջանք են ձեղ , մօռանալ զիս յաւե-  
 տեան : Ո՛վ փափաք քստմնելի՝ զոր յե-

տին թշուառութիւն իմ տայ փափաքել  
անձին » :

Ի բարբառել կայենի զայսոսիկ՝ զտեղե  
առեալ կայր 'ի մթան, լայր և համբառ  
նայր յերկինս զգողդոջուն ձեռս իւր . և  
ահա լուաւ ոտնաձայն ուրուք՝ որ դնայր  
յուշիկ 'ի ժամ գիշերոյն : Սարսափ սառ  
նասպոյց իրը զմահուն՝ կալաւ զանձն  
նորա . զգողանի հարկանէր, կամէր փախ  
չել բայց ոչ զօրէր . անկաւ կթուցեալ 'ի  
մէջ թփոցն թաւացելոց :

Թիրզա 'ի ցաւագին գիշերիս՝ որ առաջին էր իւրոյ այրութեան, ոչ գտեալ  
հանգիստ յամայացեալ առադաստին՝ և  
թող զայն, և ել արտաքս արտասուալից :  
Կստաւ 'ի ցողագին դալարւոյ 'ի կողաց  
գերեզմանին . և ապա ձեռնամած հայէր  
յաստեղանշոյլ երկինս՝ անիքթիթ ակամք .  
անկաւ յետոյ 'ի վերայ գերեզմանին, և  
արտասուք իւր ոռոգանէին զհող նորա :  
— « Աստ, տոէ հեկեկանօք, . . . աստ  
հանգչի հանգիստ իմ, բերկըռութիւն իմ .  
աստ ընդ հողովս՝ որ ծծէ զիմ արտա-  
սուս : Բա՛բէ . չեք ուրեմն վասն իմ ոչ  
այլ հանգիստ, ոչ սփոփումն 'ի սդաւոր  
ժամս գիշերոյն : Ո՛հ . բղխեցէք արտա-

սուք իմ՝ բղխեցէք, դուք ցաւագին մլսիւ-  
 թարութիւն անձինա՝ յորժամ հեղից ըզ-  
 ձեղ ընդ ժամա ձիգս տունջեան ՚ի վերայ  
 շերմի սորա, յորժամ հեծեծեցից զկի-  
 շերս ողջոյն յայսմ տիսուր լոռութեան մա-  
 հու : Այս . . . անձկալիդ իմ, տեսի ըզ-  
 քեղ ապաքէն յերկնային պայծառու-  
 թեան . զիարդ հրաշափառ էր տեսիլդ .  
 բայց աւազ . . . ոչ վասն այսր լացից ար-  
 դեօք զկորուստ քո : Բարձար յինէն մին-  
 չե իսպառ, բարձար յինէն ՚ի կենցա-  
 ղումն՝ որ լին է վշտք, բարձար իսպառ  
 . . . Կայի պարտասեալառ որորաննաւ ան-  
 գին, առհաւասաչէի սիրոյ մերոյ, լայի  
 պարտասեալ . և ահա նինջ անուշակ եկն  
 կափոյց զարտեանունս նորա . բարձէ .  
 Ժպտի անմեղն և ՚ի ժամ քնոյն՝ դեռ ան-  
 գէտ աղէտից մահկանացուացս, ոչ գիտէ  
 զկորուստ զոր կորոյս : Ի զուր արկի  
 զանձն իմ՝ ՚ի տախտ առագաստին՝ որ ա-  
 մային է այժմիկ . ՚ի զուր կոչեցի զքուն .  
 բարձէ . տիսուր միայնութիւն, ողետանջ  
 անհանգստութիւն վոխանակեցին անտա-  
 նօր յաւէժ, ուր ընկերականն գութ խան-  
 դակալմ, և անուշակ հանդիսա ընակէին  
 ՚ի ծոցքո, յափշտակեցաւ յինէն յաւէժ

այն ամենայն յընթացս աղցալից կենցազոյս : Ազլէտ անբերելի . յափշտակեաց յինէն եղբայր իմ զայն ամենայն . . . ուր իցէ նա . . . ուր եղկելին այն . յո՞ր վայր տանջեն զնա իւր ոձիրք : Աստուած իմ . . . յաւիտենական բարութիւն . մի ընդ վայր հարկաներ զլալահառաց աղերս աղախնոյդ՝ զոր առանց լքանելոյ աղերսեցից թողուլնմա . մի ընդ վայր հարկաներ զայն , յորժամ ապաշաւեալ հող՚ի գլուխ լիցի , յորժամ լացցէ առաջի քո , և կողկողեսցի առ 'ի քէն զողորմութիւն » :

Յայն բան մղձկեցուցին զձայն նորաբազմահառաց հեկեկանք . և առա ակընկառոյց յերկինս՝ դարձեալ բարբառեր . « Ո՛վ . քանիցս անդամ . . . քանիցս՝ լուսին բարեհամբոյր , քանիցս եղեր անմառնչ վկայ մերում խանդակաթ դորովանաց , յորժամ բաղուկ՚ի բազուկ ճեմս առեալ գնայաք միայնիկ՚ի լոյս ջահիցդ վառելոց . յորժամ մեղբակաթ շրթունք իւր սուրբք ուսուցանէին ինձ զցանկալին առաքինութիւն , քանիցս եղեր դու վկայ : Այժմ գնի աստէն մարմին իւր ապականացու , զորոյ լուսաւորէ զբերեզման՝ լոյս քո տիսրագին . աստ գնի ընդաւազեալ քաղց-

բիե միսիթարութիւն ամենալաւ հօր ,  
 և դորովագութ մօր . աստ բա՛թէ , աստ  
 իմ անդին կենակից » : — Լոեաց ապա  
 յերկար՝ թաղեալ 'ի խոր տրտմութեան .  
 և ածեալ զթաղծադին աչսն զանշունջ  
 զկողմամբ ամենայն՝ աղաղակեաց դար-  
 ձեալ . — « Զիարդ պայծառ շողովէ հո-  
 վանոցդ զոր տեսանեմ 'ի բացուստ .  
 զիարդ պայծառ քան զամենայն վայրս :  
 Խորհուրդք սուրբք և բարձունք Ելանեն  
 համբառնան 'ի խորոց աստի թշուառու-  
 թեանս՝ յոր կամս ընկլուզեալ . խոր-  
 հուրդք պայծառք որպէս զքեզ , լուսին ,  
 յելս քո 'ի դիշերային աղջութեանց . որ-  
 պէս պայծառ ճառագայթէ անդ հովա-  
 նոյն՝ յորում , ով Աբէլ , առ իս կացեալ  
 'ի լոյս արեւուն խօնարհելոյ 'ի մուտս ,  
 « Զի՞նչ երջանկութիւն իցէ առաքինա-  
 նալ , ասէիր ցիս խանդակաթ արտասուօք .  
 զի՞նչ երջանկութիւն սիրել զնա՝ որ աղ-  
 բիւրն է գեղեցկութեանս ամենայնի : Որ-  
 պիսի երանութիւն . յորժամ գործք մեր  
 և գնացք՝ հաճելլիք յաչս ականատես  
 հրեշտակաց որ միշտ կան զմեօք . որ հեշ-  
 տութիւն հաւասար բերկրութեան յան-  
 դիմանութեանն Աստուծոյ յարարածս՝

որ լի են գեղեցկութեամբք . ո՞ր զուար-  
 ձութիւնք իբրև զառաքինութեանն՝ զորս  
 բերեն 'ի մեզ այս արտասուք անուշակք :  
 Որ այսովէսն անցուցանէ զաւուրս իւր ,  
 նմա մահ չէ ինչ ահարկու թէ և զար-  
 հուրելի է . քանզի գիտեմք , ո՞վ անձառ  
 պարդեացս մարդոյն մեղուցելոյ , արձա-  
 կելնմա 'ի մարմնոյն զանմահ հոգին՝ առ  
 'ի վերանալ յերկինս յանվախճան երա-  
 նութիւն : Թիրզա , ասէիր դու ցիս՝ և  
 խանդաղատէիր սրտակաթ . եթէ ես ելից  
 նախ առաջին 'ի հողոյ մարմնոյս , երջան-  
 կացայց յառաջ քան զքեզ . մի լար յայն-  
 ժամ յերկար 'ի վերայ հողոյս : Զինչ  
 լից ժամանակակից կենացդ՝ չափեալ  
 քեզ յարաբչն առ յաւիտենիւն՝ յորում  
 հանդիպեսցուք միմեանց լինել երանակից  
 անկիտ անզրաւ : Յանկալիդ իմ , ասէի և  
 ես հոգիադրկեալ , զնոյն արասջիր և դու :  
 Մահ եթէ կանիսեսցէ յափշտակել զիս 'ի  
 մարմնոյս յառաջ քան զքեզ , մի և դու  
 լացցես երկար 'ի վերայ հողոյս : Հանդի-  
 պեսցուք միմեանց յետ գերեզմանացս՝ լի-  
 նել երանակից անկիտ յաւիտեան . . . » :  
 « Եւ արդ անձն իմ , մի գաւնար ընկըդ  
 միլ 'ի արտամութիւն անմիտիթար : Արի

զգեցիր զանձամբ զանվկանդ մխիթարու-  
 թիւն . խորհեաց յանմահութիւն քո . և  
 դարձուցեալ զաչս յաղետալի սպոյդ՝ ամ-  
 բարձ յերանութիւն յաւիտենից , որ 'ի  
 մօտիլ իւրում 'ի բաց փարատէ զնսեմաս-  
 տուեր և զյեղեղուկ տեսիլս աստի կեն-  
 ցաղոյս : Եթէ կորնչէր հոգի և ընդ  
 մարմնոյն ցնդէր 'ի փոշի , որալէս հնար  
 մխիթարել զանձն . ապաքէն լայի յայն-  
 ժամ 'անմխիթար 'ի վերայ գերեզմանի.քո ,  
 և չքութիւն խնդրէի անձին . բայց ան-  
 մահ է սա . ոչ . մի վատութեամբ ընկճես-  
 ցի սա ընդ ցաւովք : Դուք զուարթունք  
 երկնից որ այժմ 'ի թես թեթևս՝ անմը-  
 ռունչ զինև սաւառնէք , դուք հաստատէ-  
 ցէք զսա , մի վհատութեամբ ընդ ցա-  
 ւովք ընկճեսցի . անմահ է սա իբրև ըզ-  
 ձեզ : Եւ սակայն բղիսեն արտասուք իմ  
 տակաւին : Այս՝ այս , բղիսեսջեք . նուի-  
 րեմ զձեզ հողոյ փեսային իմոյ . կանխեաց  
 նա քան զիս 'ի ժառանգութիւն յաւիտե-  
 նիցն երանութեան . . . Ի վերայ գերեզ-  
 մանի քո անձկալիդ իմ , ( այլ ահա յոր-  
 դեն վերստին արտասուք . . . . անձն իմ  
 մի գառնար ընկղմիլ 'ի տրտմութիւն ան-  
 մխիթար ) . կամլում 'ի վերայ գերեզմանի

քո անկել հովանոց վարսաւոր . հեղից և  
ևս կաթս ինչ արտասուաց վերայ հովսդ :  
Ընդ հովանեաւ սորտ անցուցից զկենաց  
իմոց զգեղեցկագոյն ժամ , և յափշտա-  
կութեամբք աստուածայնովք եղեց բարձ-  
րահայեաց 'ի յաւիտենիցն երանութիւն  
անկէտ » :

Այսպէս ասացեալ յարեաւ 'ի գետ-  
նոյն . ել եկաց 'ի վերայ գերեզմանին , և  
ապա հառաջեաց կրկին . — « Ապաքէն  
դիւրանայր սովաւ ցաւոց սրտիս , բայց  
աւազլ . այլ մորմոք սրտառուչ յոգի հար-  
կանէ զանձն իմ . Եղբայր իւր սպան զսա:  
Ամենակալ Տէր , աղաղակեաց նա , և ան-  
կաւ 'ի ծունկս . լուր տէր , լուր պաղա-  
տանաց աղախնոյդ . թող մեղուցելցն ,  
թող աղաջեմ : Զայս առ քեզ պաղատե-  
ցայց յեւ գիշերավար աստեղն , զայս՝ 'ի  
ծագել ծայրակարմիր արշալուսոյն » :

Դողայր յայնիժամ կային 'ի թաւուաս  
մացառացն՝ վարակեալ յուսահատու-  
թեամբ . — « Փախիր 'ի բաց , ասէր  
ցանձն , փախիր ժանստաժուտ դու 'ի  
սուրբ տեսարանացս . փախիր ... Եղնւկ  
չուառականիս . և առ իմբէ չեմ կարող ...  
Ո՞հ . մի զրոհ տայք յիմ վերայ դուք ...

դուք Ճիւաղք դժոխաղնեայք , մի կաշ  
 կանդէք զստս իմ 'ի փախուստ . . . թո-  
 ղէք ինձ . . . թողէք փախչել . . . Ճիւաղք  
 դժոխաղնեայք . . . թողէք փախչել 'ի  
 սուրբ տեսարանաց աստի . . . Փախչել ոչ  
 կարեմ . . . աւազ թշուառացելոս : Ո՞ր-  
 պէս կոծի նա անմիսիթար , և ես փախ-  
 չել ոչ կարեմ . . . Այլ ահա լուեաց նա 'ի  
 կոծոյն . . . Ո՞վ առաքինութիւն առաքի  
 նութիւն : Բա՛թէ , զո՞ր յոյս՝ զո՞ր միսիթա-  
 րութիւն կորուսի յաւիտեան . յիմում  
 թշուառութեան չիք և յոյս սփոփանաց  
 անգամ , և ոչ յուսոյ նշմարանք . . . Տե-  
 սանեմ արդ , տեսանեմ քանիիօն իմ աղէտ  
 անհնարին . ո՞ . զի՞նչ տանջանք իցեն այս ,  
 տանջանք նոր և անանուն : Ո՞վ դժոխք  
 դժոխք , չիք 'ի խաւարի անդնդոցդ տան-  
 ջանք քանի զայս զարհուրագին . . . Ազօթէ  
 նա . . . բա՛թէ , աղօթէ վասնիմ . . . վասն իմ  
 ապիրատիս . . . և դու թիրզա չատես զիս , ոչ  
 նզովես զեղկելիս : Ո՞վ անսպատռում անյիւ-  
 շաճարութեան . ո՞ , զիարդ տագնապիմ ,  
 զիարդ առ լուսով առաքինութեանս :  
 Թշուառութիւն իմ երեսութանայ ինձ  
 զարհուրագոյն ես , խաւարակուու , արջ-  
 նաթոյր քան զանյատակ խորափիտ 'ի

մուտս գեհենոյն . ոճիր յանցանացս՝ անողորմագոյն ևս կեղեքէ զսիրտ իմ , և տայ ձաշակել զտանջանս սանդարամետականս . . . Եւ դու աղօթես վասն իմ թիրզա.... և ոչ սարսափես յուխտիցդ յանդընութենէ : Ո՛չ , ոչ . անհնար է Աստուծոյ լսել այնամ . արդար է Աստուծուած . . . Ահա մեկնի 'ի գերեզմանէ առնն սպանելս . . . Ո՛հ . յանդգնեցայց արդեօք չուառականս բերիլ ընդ քարշ 'ի վերայ շաւզաց նորա՝ ոռոգանել զհետս գարշապարացն՝ արտասուօք դառն ցաւոց սրտիս : Ո՛չ , ոչ . . . տեղի տուր սոսկմամբ . բլուրն այն լուսաւորեալ 'ի լուսնոյն՝ գերեզմանն է նորա . տեղի տուր 'ի սրբավայր սահմանացս . փախիր ամբարիշտ դու » :

Զբանան ասաց , և սարսուեալ թիկունս գարձոյց : Գնայր փախստական , այլ 'ի նոյն զկայ առեալ եկաց ապաձայն՝ մածեալ ընդ միմեանս զարտասութուրմ զձեռսն . ձայն եբարձ միւսանդամ . — « Ո՛վ աղետիցս . չեմ կարող . փախչել չեմ կարող : Եւ ո՞րսէս կարելի . ոհ Մեհալա , ոհ որդեակք իմ . և ո՞րսէս փախեայց 'ի ձէնջ մինչև իսպառ , և ոչնախ միւսանդամ լալ առաջի ձեր զաղէտս իմ ,

և ոչ հողաթաւալ լինել առաջի ձեր, և  
մանաւանդ՝ քո առաջի Մէհալա, թերես  
աչք քո հեղցեն յիմ վերայ շիթս կա-  
րեկցութեան. թերես՝ ի մեկնիլ իմում  
և օրհնեսցես զիս . . . բարեկ . զի՞նչ ասեմ  
.... Անէծ զիս Աստուած, և ես օրհնու-  
թեանդ փափաքեմ: Ատեա զիս . անէծս  
ցաւագին զկնի արձակեա . ոճիրք իմ ար-  
ժանի են ամենայնի: Յայնժամ փախեայց  
ասկա ծանրաբեռնեալ անիծիւք քո, և ա-  
նիծիւք յամենայն արարածոց: Տադնապ  
յետին, տագնապ դժոխային . չեմ կարող  
փախչել, չեմ կարող: Սիրելիդ զուգակից,  
մանկիկք սիրասնունդք, եկից առ ձեզ,  
եկից ողբաւ զթշուառութիւն իմ առաջի  
ձեր, հողաթաւալ լինել առաջի ձեր . և  
ասկա փախեայց, այո՝ փախեայց ան-  
շուշտ»: — Այսպէս ասացեալ, անց կա-  
յին բացագոյն՝ ի գերեզմանէն՝ դէմ եղեալ  
՝ ի խրձիթ իւր . քայլէր, և առ ամենայն  
ոտնփոխ կասէր տարտամ, դողայր անբար-  
բառ . մինչև եկն եհաս առաջի խրձթին դող-  
դոջաքայլ: Եկաց առ ետեղ հարուստ մի՝ ի  
դողման՝ դիմօքն այլագունեալ որպէս օր-  
հասական . և անագան ուրեմն իշխեաց  
անցանել ընդ սեամս դրանն վարանա-  
միտ, և դայթ՝ ի դայթ դանդաշեալ:

Կստեալ էր Մեհալա 'ի ներքսակող մանն առ դալկացեալ լուսով լուսնոյն, որոյ երեսք դալկագոյն ևս էին քան զայսը տօտեղ ամալովք թաղանդապատելց . արտասուէր նա , աշխարէր զանձն անմիսի թար 'ի վերայ մենաւոր անկողնոյն , և տղայք իւր մնչեալ հեկեկային զիւրե : Ի տես առն իւրոյ՝ ճիշ եբարձ սաստիկ , և անկաւ նուաղեալ 'ի վերայ խշտեաց իւրոց . դիմեցին տղայքն լալտգին , աղաղակ բարձին սգալի առ ոտիւք նորա : — « Հայրիկ , բարեկ . հայրիկ , գոչեին նոքա . միսի թարեա , միսիթարեա զմայր մեր վշտահար . չպիտեմք զի՞նչ աղետք արամութեան մտին 'ի խրճիթս մեր . . . հայր իմ , բարովեկիր 'ի տուն . . . հայրիկ զի՞ այսպէս անագանեցար դառնալ առ մեզ » :

Զայս օրինակ թոթովէին մանկունքն անմեղ , և կախէին զպարանոցէ հօր իւրեանց . գանդաչէր նա 'ի միջի նոցա բանդագուշեալ , և արտասուք իւր սորեին 'ի վերայ զլսոց նոցա : Մղձուկ սրտին առ անհնարին ցաւոց՝ կապեաց կաշկանդեաց զլեզուն . անկաւ 'ի գետին առ ոտս կնոշն . բարձրացուցին մանկունք զնովաւ զկանչիւն իւրեանց : Խելաբերեալ Մեհալայի՝

Ետես որպէս այր իւր թաւալէր զանձն  
ընդ գետին առ ոտիւք իւրովք , և արտա-  
սուօք զհողն թանայր : — « Ո՞վ Կային  
Կային » — գոչեաց նա , և կական բար-  
ձեալ լայր աղփողորմ . փետէր խզէր ըզ-  
հերս դլսոյն : — « Մեհալա , ասէ ցնա  
Կային՝ հատկլեալ՚ի բարբառ ողորմադին ,  
ներեա ինձ , ներեա թէ յանդգնիմ թշուա-  
ռացեալս , արիւնահեղս եղբօր իմոյ և քո ,  
թէ յանդգնիմ լալ միւսանդամ առաջի քո ,  
հողաթաւալ սողոսկիլ առաջի գարշապա-  
րացդ ոտից : Տուր աղերսեմ զայս յետին  
միսիթարութիւն , զյետինն յիմում թը-  
շուառութեան՝ ում չիք զուգական : Ո՞հ .  
մի անիծաներ ինձ Մեհալա , թէ յանդըգ-  
նիմ հողաթաւալ սողոսկիլ առ ոտիւքդ :  
Փախչիմ ահա , փախչիմ ՚ի հեռաստան  
յանապատ տեղիս , անիծեալ յԱստու-  
ծոյ , հալածեալ չարալլուկ : Մի զիս ա-  
նիծաներ , զիս զայր քո երեքթշուա-  
ռեան » :

« Կային Կային , գոչեաց Մեհալա դառ-  
նակսկիծ . սպանող դու ամենալաւ եղ-  
բօր . դու այր իմ : Թշուառական դու ,  
զինչ դործեցեր դու զայդ » : — Պատաս-  
խանի ետ նմա Կային , ակնարկեալ ՚ի նա

տեղաբկումն ցաւադին՝ յայտարար ան  
պատում դառնութեան որ ՚ի սրտին տան-  
ջանաց : — « Անիծեալ ժամն այն՝ յորում  
երազ ինչ գժոխային խարեաց զիս : Բա՛  
բէ . ապրեցուցանել կամեցայ զլալադին  
տղայքս ՚ի թշուառութեանց հանդերձե-  
լոց , և սպանի զնա . անիծեալ ժամն այն ,  
և սպանի զեղբայր ամենալաւ : Եւ այժմ  
ով աղետիցս . այս ոճիր քստմնելի խեղ-  
դէ կիս յաւիտեան , կատամահ առնէ դը-  
ժոխատանջ : Մոռա զիս , Մեհալա , մոռա  
զայր քո . խնայեա միայն , հարսն իմ , խը-  
նայեա զեղուդ յանիծից . և այժմ փախ-  
չիմ ահա ՚ի քէն յաւիտեան . փախչիմ  
յաւիտեան և ՚ի ձէնջ որդեակը իմ , ա-  
նիծեալ յԱստուծոյ » :

Ճիչ բարձեալ տղայոց կողկողէին զնո-  
վաւ , և անմեղ գաստակօքն ծեծէին զգե-  
զագանգուր դլուխս իւրեանց . անկաւ և  
Մեհալա զլանջօք առնն , և ասաց արտա-  
սուագին զնովաւ . — « Ընկալ զայս ար-  
տասուս , ընկալ զկարեկցութեան իմոյ  
զհաւաստիս . փախչէլ կամիս , Այշին , և  
որսպէս . փախչէլ բացական յանապատ  
աշխարհիս : Եղուկ զիս . և զիարդ բնակե-  
ցայց ՚ի խրձնթիս , ՚ի ժամանակի յորում

դու անտերունից մենացեալ յանապատս՝  
հաշեսցիս անմիմիթար : Ոչ, ոչ . . . Կային,  
ոչ . ընդ քեզ փախեայց և ես , քո առըն-  
թեր . որպէս թողից զքեզ յանապատս  
անօդնական : Ո՞ր հոգք դժնդակք ոչ զիս  
տառապեցուսցեն : Ամենայն ձայն տիրա-  
կան՝ զոր լուայց հնչեցեալ զինև յարա-  
րածս , զարհուրեցուսցեն զիս ոգետանջ  
անձկութեամբք . ասացից՝ թերես նա  
ինքն իցէ , թերես հեծէ անտանօր 'ի ասպ-  
նապ մահու անօդնական » :

Այսպէս ասաց Մեհալա . հայեցաւ 'ի  
նա կային . խռովեցաւ ոգի իւր յափշու-  
թիւն նոր , և գոչեաց . — « Տէր Աս-  
տուած . . . զինչէ զոր լսեմս . . . այդքո՞  
ձայն իցէ , Մեհալա . . . այս . . . ոչ երազ  
է զոր տեսանեմս . . . դու ինքն ես . . .  
քո ձայն է . . . Ասոււած իմ . որպիսի  
բանիք միմիթալիք : Ոչ , ոչ Մեհալա . շատ  
է եղիկելոյս՝ թէ չառես զիս , թէ չանի-  
ծանես : Ո՞վ կին դու առաքինի , ընդէր  
իցէ քեզ պատժակից լինել անհնարին ե-  
զեանութեանս . ո՞հ . կաց մնա դու աստէն  
յօթեանս արդարոց՝ ուր ընականոյ օրհ-  
նութիւն . ոչ , ոչ բնաւ . չէ պարտ թը-  
շուառանալ քեզ ընդ իս : Մոռա զըուա-

ռացեալս , զանիծեալս յամենայն արա-  
րածոց , որում չեք ուրեք տեղի հանգըս-  
տեան . մոռա զըուառացեալս , բայց միայն  
մի անիծաներ ։ :

« Ոչ կային , ոչ . դաղթեցից ընդ քեզ ,  
կրկնեաց նմա Մեհալա . ելից զհետ քո  
որդւովք մերով յանասլատս արտմակից  
լինել քեզ , բաժանակից աղետիցդ , թե-  
րես դիւրեսցին քեզ այնոքիկ : Խառնեցից  
զարտասուս իմյարտասուս ապաշխարու-  
թեան քո , եղէց առընթեր . և աղօթք իմ  
ընդ քոյն ելցեն առ Աստուած , և տղայք  
մեր անմեղք ծունը դիցեն զմեօք՝ թոթո-  
վել զվասն քո պաղատանս յունին ամե-  
նալուր : Չանարգէ Աստուած զապաշխա-  
րութիւն մեղուցելցյն . ընդ քեզ պաղա-  
տեցայց , կային : Լացցուք անդադար , ա-  
զօթեսցուք անդադար առաջի տեառն ,  
մինչև ծագեսցի նշոյլ միմիթարութեան 'ի  
ներողամիտ դատաւորէն՝ զուարթացու-  
ցանել զսիրտ քաջայոյս . . . Յուսա առ  
Աստուած , կային . լու նա ձայնի աղաւա-  
նաց մեղուցելցյն՝ որ ապաշխարէ . ։ :

« Ով դու , գոչեաց կային . զի՞նչ քեզ  
անուն կոչեցից . . . հրեշտակ ես դու-  
սուրք . . . զի՞նչ միմիթարութիւն 'ի բա-

Նիցդ ծագեաց 'ի խաւար մտացս : Մէհա-  
լա՝ հարսն իմ պատուական . այս՝ իշխեմ  
այժմ, իշխեմ գիրկս արկանել զքէ : Բա-  
րէ . զիա՞րդ չեմ բաւական յայտնել առ-  
քել որ 'ի սրտիս կրին շարժուածք :  
Խանդաղատ գրկածութիւնք, և ամենայն  
արտասուք իմ չեն բաւական առ այն » :  
Յայս բան վարեցաւ սերտ զնովաւ՝ նո-  
րատեսիլ կաթոգին ըլձմամք . ոչ բաւեր  
անձն նորա 'ի ցուցակութիւնն ածել նմին  
ոչ զիւր երախտագիտութիւն , ոչ զիերա  
զոր 'ի սրտին : Թողեալ ապա զզուգա-  
կեցն՝ գիրկս արկաներ 'ի համբոյր ար-  
դայոցն . դառնայր նոյնհետայն առ Մէ-  
հալա՝ նավին անձկանօք :

Յայնմ վայրի՝ կինն գորովասիրտ ջըն-  
ջեաց զարտասուս իւր , պատրաստեցաւ  
'ի չու անծանօթ . էառ զմանկագոյնն 'ի  
տղայոց 'ի գիրկս , աջովն կալեալ զձախմէ  
առնն . միւսն գնայր ընդ աջմէ հօրն . իսկ  
Եղիէլ , և Յոսիս սրբեալք զարտօսր յայ-  
տիցն կարմրացելոց՝ գնային զուարթա-  
գին առաջինոցա : Ելին 'ի խրճիթէն . հայե-  
ցաւ Մէհալա միւսանգամ շուրջ զնովաւ  
լալագին , և ասէր . — « Օրհնեալ դուք  
յերկնից՝ հայր իմ և մայր , զոր եսն թռ-

զում, օրհնեալք 'ի տեառնէ . դարձայց  
ընդ հուսկ 'ի տեղւոջէն՝ ուր շինեացուք  
զմեր խրճիթ, հայցել զձեր օրհնութիւն  
վասն իմ և վասն իմոյ կայենի՝ որ ժտէ  
զթողութիւն » : — Զտեղի էտո անդէն,  
նայեցաւ կրկին 'ի խրճիթսն, և ելաց որ-  
պէս վարանակամ. բայց 'ի սմին սպահու  
հարաւ 'ի հոտոտելիս նոցա համասփիւռ  
բուրումն ինչ անուշից որպէս զծաղկանց  
դարնայնոյն : Զայն ինչ քաղցրաբարբառ  
լսելի եղե յաներեսոյթս . — « Ե՛րթ ասէ,  
կին մեծանձն . Ես ինքնին զգացուցից մօր  
քում՝ զուարժալի տեսլեամբ երազոց ըզ-  
քո զարիական մեծանձնութիւն, և զմեկ-  
նիւ ընդ առնդ ասլաշարողի, առ 'ի հայ-  
ցելմիայն վասն նորա շնորհս քաւութեան  
յամենակալ դատաւորէն » :

Այսպէս երթային նոքա առ լուսով  
համապայծառ լումնոյն, աչս ածեալ ըս-  
տէալ 'ի թիկունս 'ի տաղաւարսն՝ զոր թո-  
ղուին, և յառաջ խաղային 'ի ներքս 'ի  
սպահմանս ամայիս, ուր չերկեր տակաւ  
կնիք հետոց մահկանացուաց :



## ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

1 « **Գեղջկականդ սրինգ» . Հովուականն եղէգնափող . Պատաւ : Սովաւ ակնարկէ Կեսնէր զտուարածական քերթուածս իւր , կամ զհովուերգութիւնս . յորս նախ առաջին հանդիսացաւ արձակ , բայց ներդաշնակաւոր բանիւք 'ի լեզու գերմանական , նկարագրել գեղեցիկ ըգբարս , զառաքինութիւնս և զանմեղութիւն գեղջկական և հովուական կենցաղոյն :**

2 « **Եկ առ իս մուսայդ» . Ի Հոմերոսէ և այսր , սովորեցին բանաստեղծք յոյնք և լատինք , զորոց զհետ չոքան ապա և խտալացիք և այլք , 'ի սկիզբն քերթուածոց առնել զկոչումն մուսայից յօդնութիւնիւրեանց : Մուսայիւք՝ որպէս յայտէ , նշանակին յառասպելս հեթանոսականս՝ ինն աստուածուհիք գիտութեանց և ազատական արհեստից : Յառաջիկայ քերթուածս կեսնէրի , մուսայիւ , կամ գերաշխարհիկ ոգւով իմանամք անձնաւորեալ զբանաստեղծական աշխոյժս , այսինքն էլլու , որ կարևորն է յեռանդնուշարժ ճահագլութիւնս քերթողականս .**

զի առանց այսր՝ անհնար է տողել ինչ  
վայելուչ և ոգեշարժ :

3 « Սրբազանն յափշտակութիւն » .  
Բանաստեղծական մոլութիւն , կամ աշ-  
խոյժք , այսինքն եւն . որով վառեալ ե-  
րեակայութեանն՝ ամբառնայ անդր քան  
զսովորականն չափ բնութեան , և որպէս  
թէ 'ի բարձունս վերաթեւ . կամ թէ ա-  
սել , այլ յայլմէ եղեալ փոխակերպի 'ի  
նոր մարդ . զորոյ է տեսանել զփորձ նաև  
առ մեօք . յորժամսիրան վառի 'ի կրից ,  
և բորբոքին միտք և երեակայութիւն , լ-  
զուն բարբառի յայնժամ նորս ըստ ոչ  
սովորութեան :

4 « Ժամբ խաղաղականիք » . Որպէս  
սովորութիւն է բանաստեղծից և նկար-  
չաց զամենայն ինչ ևս և զանշունչս՝ կեղ-  
ծեօք մարմնացուցանել , անձնաւորեցին  
և զժամն աւուրն 'ի չքնաղ օրիորդս ըն-  
թացակիցս արշալուսոյն , զար դուստր կո-  
չեն արեւու և լուսնոյ . և դշխոյ դոլով  
տուրնջեանն նորածնելոյ , նկարի քրքմա-  
հանդերձ նստեալ 'ի վարդագոյն կառա :

5 « Ընդ թիրզայի սիրելոյ » Սուրբ  
դիրք արարածապատումք 'ի կարգելն  
զծնունդս նախաստեղծիցն , զկայենի  
միայն զանդրանկանն պատմեն զսերունդ .  
իսկ յաղադս Աբելի՝ որ երկրորդն է յոր-  
դիս նոցա , ոչինչ յիշատակեն ունել կին

և զաւակ . ստեղծայնը չէ ինչ օտար՝ ստեղծա-  
բանութիւնն կեսների զի և Գալմէթի մե-  
ծանուն մեկնչի գրոց՝ ոչ անհաւանելի եւ-  
րեեցաւ ունել Աբելի կին և զաւակ . իբր  
զի անցեալ գոլով նորա զհարիւրամե-  
նիւք , որովհետեւ սպանաւ յամի աշխար-  
հի իբր 150 . յորում ամի փոխանակ նո-  
րա ծնաւ Սէթ , ոչ թուի հաւանելի ընդ-  
այնչափ ամս մնալ նմա անզաւակ , յո-  
րում ժամանակի հրաման բազմանալոյ  
ի վերայ կայր : Այն զի՝ սպաշտոն հովու-  
ութեան նորա ցուցանէ՝ թէ տանուտէր  
էր . թող զայն , զի էր նորա և առանձին  
սեղան զոհագործութեան , յորմէ յայտ  
է ոչ ևս բնտկել նմա 'ի տան Ագամայ , և  
ոչ իսկ նուազ էր նա քան զկային , որոյ  
դոյր տուն առանձին , և երկիր և ստա-  
ցուածք : Քերթող մեր՝ ստեղծանէ զա-  
նուանս կանանց՝ երկուց եղբարցն . զԱ-  
բելի զիին՝ կոչելով Թիրզա , և զկայենին՝  
Մեհալա . որք և էին քորք նոցա . իբր զի  
երկու միայն գոլով նախածնողաց անհը-  
նար էր 'ի սկզբան անդ բազմասերութեան  
մարդկանն՝ այլազգաբար աճումն առնուլ  
զաւակի նոցա , բայց միայն ամումնու-  
թեամբ եղբարց ընդ քերց :

6 Տես 'ի վերոյ զծանօթութիւնն 5 :

7 « Յափն Եսսլերիոյ » . Յայտ անուն կո-  
չին իտուլիա և Սպանիա . և առ 'ի խտիք

առաջինն կոչի ԱՃ Եսոյերիա , և Երկրորդն  
Աւրջին Եսոյերիա . յանունն Եսպերոսի ար-  
քայի , որոյ հալածեալ յԱտլասայ Եղբօ-  
րէ իւրմէ՝ ամրացաւ յԻտալիա : Կոչի սա  
Եսպերիա , և յանունն Երեկոյեան կամ  
գիշերավար աստեղն , որ առ Յոյնս ասի  
Էսֆեռիա , արևմուտք անուանելով զԻտա-  
լիա վասն 'ի մտից կալոյ յունաստանի . որ-  
պէս և իտալացիք՝ նմին իրի Եսպերիա ,  
կամ արևմուտք կոչեն զԱպանիա :

8 « Ոգիք մաքրագոյնք և մարմինք ե-  
թերականք » . Հրեշտակք , որպէս և  
գեք՝ են պարզ էակք կամ բնութիւնք  
անմարմինք : Յերևելոյ նոցա մարմնաւոր  
կերպարանօք , չիք ընծայել նոցա մարմին  
եթերական , այսինքն ամենասուրբ , կամ  
օդեղէն . վասն որոյ բանք կեսների են  
միայն 'ի բանաստեղծական միտս :

9 « Տեմպէ և Գնիգոն » . Տեմպէ են  
յուռթի և գեղեցիկ հովիտք Թեսսաղիոյ  
յունաստանի , ուսոգեալք 'ի վտակաց գե-  
տոյն Պենէոսի : Իսկ Գնիգոն , կամ Կնի-  
գոն , էր երևելի քաղաք Իկարիոյ , մեծա-  
նուն յաղադս մեհենի Աստղկանն , և ար-  
ձանի նորա , զոր քաջն դրօշեաց Պրասսի-  
տեղէս արձանագործ յոյն :

10 « Գեղեցիկք որպէս զԱէրս » . Ի հե-  
թանոսական գիցաբաննութեան Աէրն՝ մա-  
նուկ էր հրաշտագեղ , որդի Աստղկան . զոր  
Լատինք կոչեն և Գուգիա :

41 « Զքնազք որպէս զշնորհս » . Նորհէ  
ըստ առասպելեաց են աստուածուհիք գե-  
ղեցկութեան . 'ի Յունաց Խարբիդէս կոչին ,  
այս է՝ Խարբինեան , իսկ առ Լատինս՝ իրա-  
տիէ , որ է Նորհէ : Դստելք էին սոքա Ա-  
րամազգայ և Եւրինոմեայ : Երեք էին  
թուով . Եւփրոսինէ , Թալլիա և Ագլայա .  
զորս նկարեն միշտ զուարթագէմս , և  
ձեռն 'ի ձեռն : Իբր 'ի բազումս ընկերեն  
Աստղիան :

42 « Պահպանողական Հրեշտակիս » .  
Առ 'ի հաւանական գործելց Կայենի  
զանրջական ցնորսն զիւականս 'ի վնասա-  
րարութիւն զարմին Արելի , 'ի ներքս մու-  
ծանէ քերթողն զայս չար խրատառու-  
թիւն , որպէս թէ թելազրեալ յազդմա-  
նէ պահպանական Հրեշտակին :

43 « Սաղմոսանուագ սերովբէից » .  
Դիւական զուարթութիւն արդարե , ոչ  
վնասել միայն , այլ ընդ վնասագործու-  
թիւնն հեշտանալ ես . բերկրութիւն է  
յուսահատ սրտի դատապարտելց , և  
անդարձ յամառելց 'ի չարիս , զուարթա-  
նալ հեծութեամբ վշտագնելոցն՝ զորս ա-  
տեայ , և նախամեծար ընտրել զայն քան  
զլուր Հրեշտակական երգոցն՝ յորմէ վրե-  
պէաց անյօյս 'ի ստանալ միւսանգամ :

44 « Լուեցին քնարքն ոսկի , և ալելուն  
յաւիտենական » . Բանաստեղծօրէն ձեռ-

ցուցանէ զբանն , առ ՚ի ցոյց քստմնելի  
եղբայրասպան ասկիրատութեանն . ապա  
թէ ոչ զյաւիտենական Երջանկութիւնն ե-  
րանելեացն ոչինչ այլայլեն , կամ ընդհա-  
տեն աղէտք և ոճիրք Երկրաքարշ մահկա-  
նացուացս :

45 « Առ անհամար բազմութեամք ա-  
րեգականց և աշխարհաց » . Իմա աստե-  
ղաց , զորս բազումք յերեելի աստղաբաշ-  
խից համարին որպէս արեգակունս :

46 « Ոգեզէն մասունք նօսրագոյնք  
մարմնոց նիւթականաց » . Իմա զնրբա-  
գոյն օդանման մասունս , որովհետակք  
աննիւթք կերպարանեալ երբեմն ՚ի մար-  
մին , իջանեն առ մարդիկ ՚ի պատգամա-  
ւորութիւն :

47 « Հոգի մանկանս էջ յերկնից ՚ի  
մարմին նորա տիրել նմին » . Այս ասա-  
ցած բանաստեղծօրէն միայն արդարանայ ,  
և ոչ ՚ի ձիշտ միտս : Զի ստեղծումն հո-  
գւոց մարդկան՝ լինի առ յԱստուծոյ իսկ  
և իսկ ՚ի կազմիլ անդ մարմնոցն , և ոչ թէ  
յառաջ ժամանակաւ ստեղծեալք՝ ամփո-  
փին յերկինս , կամ այլուր , և ապա ի-  
ջանեն ՚ի մարմինս հոգեսորել զայնոսիկ ,  
որպէս եգ անընդունելի կարծիք ոմանց  
յառաջնոցն :

Կոյնապէս ասելն կեսների յաղագս հո-  
գւոյնի Աբելի ելանել յերկինս , պա-

բակցիւ ընդ հրեշտակս , կամ տեսանել  
զԱստուած , և երջանկանալ , ոչ է ճշգե-  
լի : Յուցանէ միայն զաղատութիւն նորա  
'ի վտաց և 'ի կրից աղցաւոր կենցաղոյս .  
և կամ թէ բանաստեղծօրէն կանխէ նկա-  
րել զոււ վերելից նորա յերկինս , որ ինչ  
լինելոցն էր առ յապայ , վասն զի յառաջ  
քան զմահ և զյարութիւն փրկչին , աղ-  
խեալ էին դրունք երկինից , զոր երաց խաչ  
նորա պատուական : Յայսպիսի բանաս-  
տեղծական միտս երդի ՚ի շարակնոցին  
վասն անմեղ մանկանցն բեթղեհէմի .  
« Եւ հոգիք սուրբ մանկանցն որպէս զե-  
րամս աղաւնեաց թուուցեալք ՚ի յերկինս ,  
և դասեալք ընդ զուարթունս երկինից » :  
Զորմէ տես 'ի լուծման նորին . երես 558 :

Զոր կոր ըստմիտ պղուա խողովաս ով  
ապահով պահանձնած առաջ և մահուածան կ  
առաջ ըստմիտ պղուա ով ո՛ ըմբռիտմա՞

Հայոց մայուս պատմուա միջաւի

# ԵՐԳԻ ՏԱՊԱՆՆ ԱԲԵԼԻ

Ի ԹԱՐԳՄԱՆ ՀԵՆ

Գիտեմ, Աբել, լացին հերեք  
Ծընողք ըզքոյդ ոսկերոտիք .  
Եւ Թիրզայիդ որչափ շունչ էր,  
Ըզքոյդ տապան թացին լալեք :

Բայց և ընկալ ախորժաբար  
Ըզքերթողիդ տըխուր քընար,  
Զոր ըզնոճեաց սըգատերև  
Աստ առկախեմ յիմ մըխիթար :

Զոր եսն հիւսեմ ընդ փունջ ծաղկանց  
Առ սափորով սուրբ ոսկերաց,  
Ի մահարձան և զայս հագներդ  
Քանդակեցից 'ի ցող աչաց :

Ուսցին սոխակք զայս գեղգեղել,  
Ուսցին զեփիւռք ըզաոյն հընչել.  
Եւ որ անցցէ առ քոյդ շերիմ,  
Խոնարհեսցի զիմ տաղ սերտել :

Կախավըկայդ անմեղութեան ,  
Փրկչին իմոյ տիալ և արձան .  
Ըզքո ծնողաց թէ և անսպարտ ,  
Լուծեր նախկին ըզվոէժ մահուան :

Խառնեաց նախանձ՝ սուրբ քո զարիւն  
Յողջակիզեդ անբիծ աճիւն .  
Բայց ոչ զօրեաց ջնջել յերկրէ  
Զարդարն անուն՝ շըքեղ փայլիւն :

Որ ոք ըզքոյդ կարդայ եղեր ,  
Քո պէս բերցէ սիրտ անեպեր .  
Տեսցէ զանմեղդ՝ անձըն ցաւած ,  
Չիք երջանիկ յերկրի օրեր :

Մանուկ անբիծ թէ խուզարկու  
Ի տես մատչի սըրբոյդ մահու ,  
Ուսցի ըզքոյդ յանձըն անկել  
Աստուածատեն չ սիրտ սիրարկու :

Թէ արտասուեն ծընողք դժբախտ  
Զոր կորուսին մանկիկ անախտ ,  
Նախածնողաց լալոնք ըզքեւ  
Բուժէ զնոցա զաշացըն ախտ :

Հարսըն պարկեշտ թէ առ շիրիմ  
Զիւրն հեկեկայ ըղմըտերիմ ,  
Ըղթիրզային լացցէ նըւագ ,  
Բայց լի անմահ յուսով կամիմ :

Նախանձաբեկ միտք ախտակիր  
Թէ զկայենին ունի բասիր ,  
Զարհուրեսցի , նախանձ դժնեայ  
Յի՞նչ ոչ դըւեաց ըղնա յոճիր :

Բայց ՚ի նորայն մի մոլեսցի ,  
Յանյուսութեան ախտ լքենի .  
Քաղցըր լըսէ ունկն աստուածեան ,  
Զայլից խոնարհ զըղջականի :

Եւ ուր փախչիս դահիճ կային ,  
Խիղճ և Աստուած ըղիւտ պընդին .  
Փախչել կամիս առ յԱստուծոյ ,  
Օ՛ն առ Աստուած փախիր կըրկին :

Լուր գու ձայնին զոր Մեհալա  
Յունկըն քոյին լալով կարդայ .  
Չեք մեղք անթող , քաղցըր և Աբէլ ,  
Իւր իսկ արիւն քեզ պաշտպան կայ :

Երիտասարդ՝ կամ ալնոր  
Թէ զիմ կարդայ ըղնըւագ նոր ,  
Եւ վայեսցէ՝ թէ չեմ Աբէլ ,  
Խորասուղեալ չարեաց ՚ի խոր ,

Գէթ ասասցէ թէ չեմ անմեղ ,  
Զանմեղութիւն գիտեմ շըքեղ .  
Եւ ըղիսիղճ սուրբ՝ միշտ ցանկալի ,  
Ինձ կայենին ցուցցէ երկեղ :

Եւ այս խղճի բարբառ անկեղծ .  
Միշտ Աբէլի՝ ներբող անեղծ .  
Քան ըղնիազ ողքերդութիւն ,  
Զոր քերթողիս հանձար ըստեղծ :







